

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



**ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ
90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

ԵՐԵՎԱՆ
2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ 90-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱԵԱՐ

195



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

195

ԵՐԵՎԱՆ – 2019

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

COLLECTION OF THE CONFERENCE PAPERS DEDICATED TO THE
90TH ANNIVERSARY OF ACADEMICIAN
VLADIMIR BARKHUDARYAN

YEREVAN– 2019

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

СБОРНИК ДОКЛАДОВ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ,
ПОСВЯЩЕННОЙ 90-ЛЕТИЮ АКАДЕМИКА
ВЛАДИМИРА БАРХУДАРЯНА

ЕРЕВАН – 2019

ՀՏԴ 93/94:06

ԳՄԴ 63.3

Բ 358

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

**Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան
Կազմողներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան,
բ.գ.թ. Արծվի Բախչինյան
Էլիզաբեթ Թաջիրյան**

Բ 358 - Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու.- Եր.:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019. – 333 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2017 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը:

Նախատեսված է Հայոց պատմության հարցերով հետաքրքրվող և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 93/94:06

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-85-5

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2019

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՏԷՐ ԼԵՒՈՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԷՔԻԵԱՆ

Հատորիս պատուական ընթերցողները, որոնց այսօրուան սերունդին մեծ մասը, կը խորհիմ, ունեցած է հրճուանքն ու պատիւը անձամբ ծանօթացած, յերես մտերմութիւնը վայելած ըլլալու հոգելոյս բարեկամին, ընկերոջ, երեց եղբօր, գիտնականին, որ էր՝ տողերս ստորագրողիս համար՝ Ակադեմիկոս Պրոֆ. Վլատիմիր Բարխուդարեանը, որու անթառամ յիշատակին նուիրուած է յօդուածներու այս ժողովածոն, հաճին թոյլատրել, որ խօսքս սկսիմ, գայն ուղղելով իրեն՝ Վալողիային, համարելով թէ մինչ գրի կ'առնեմ այս տողերը, գոգցես զանոնք կարդայի իր ներկայութեան: Վստահ եմ, թէ պիտի ըսէր՝ «Լեւոն ջան, դու չափազանցում ես»: Իսկ ես պիտի պատասխանէի՝ «Չէ՛, Վալողիա, չեմ չափազանցեր, իրականութիւնը կը պատմեմ», քանի որ ամէն ասում, խորքին մէջ, պատում է, պատում՝ ժամանակի անկանգառ սահանքին ընդմէջէն, որու վառշիացող անսահման հատիկները կրնան դրուագել կամ ոչ՝ անհետող անցեալին կերպարը, ըստ հազարումէկ գործօններու զուգակցութեան, որոնց միջեւ առաջին տեղը կը գրաւէ, առանց դոյզն վարանումի, մարդը և իր գործը: Այսպէս կը պատգամէր արդարեւ՝ «Մարդու գործն է միշտ անմահ», ժողովուրդին անգուգական իմաստութեան մեծ պատմիչը, Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան, որու պաշտամունքն ունէր Մեծ Լոռեցուն հոգեծառանգ լոռեցին՝ Վալողիա Բարխուդարեան:

Յաւէտ երախտապարտ պիտի մնամ հասարակաց և վաղեմի բարեկամ Մուրադ Հասրաթեանին, որու կը պարտիմ ծանօթութիւնս Վալդդիայի հետ: Հեռաւոր 1987 թուականի աշունն էր, երբ՝ այլեւս կանոնակարգ դարձած սովորութեան մը համաձայն՝ կը գտնուէի Երեւան: Շատ արագ գոյացաւ մեր միջեւ խոր համախոհութիւն մը, պատմութեան հայեացքէն մինչեւ մարդկային իրականութեան այլագունակ երեսակներուն ընդնշմարումը, մինչեւ այն ինչ որ կրնանք կոչել «աշխարհահայեացք» (Weltanschauung)՝ թէ՛ մեր ազգը, թէ՛ մարդկութիւնը և թէ՛ առհասարակ «աշխարհ»ի իրականութիւնը շահագրգռող բազում հարցերու շուրջ: Մեր ծանօթութեան առաջին տարիներուն, Արցախի հարցադրումը կը ներգրաւէր մեր զրոյցներուն գրեթէ բովանդակ ծիրը: Երկուքս ալ կը նշմարէինք, յիշաւի անկար ու անճար, պատմութիւն կոչուող այդ ամեհի ոյժին ընդոստիչ զօրութիւնը, զոր մեծագոյն հանճարներ բանաձեւած են, թէկուզ տարբեր, նոյնիսկ ներհակ դիտանկիւններէ, որպէս «դիալեկտիկա», որպէս տրամասութիւն: Մէկէ աւելի անգամներ պատմած է ինձի՝ այդ օրերուն Լուկիանովի հետ իր երկար հանդիպումը, իրենց զուգարդի զրոյցը՝ որպէս «գիտութեան դոկտորներ»: Պահեր էին դրանք, որոնք համարեա ամէնուն կը ներշնչէին յոյսեր, շատերուն համար՝ անվարանօրէն, անվիճարկօրէն: Վալդդիան, ինձ ծանօթորոշ կշռի տէր անձերուն միջեւ քիչերէն էր, շատ քիչերէն, որ կը սկսէին տակաւ գիտակցիլ ոտից կռուան տարածքին երերուն հանգամանքին:

Երրորդ Հանրապետութեան սկզբնական հանգրուաններուն, ան յաճախ մօտ կը յայտնուէր, միշտ չափաւորապէս և քննաբանօրէն միանգամայն, Հանրապետութեան առաջին Նախա-

գահին ընտրանքներուն: Կը յիշեմ 1996-ի Նախագահական ընտրութիւններուն նախօրեակ երեկոն: Հրապարակին վրայ Շամիրամի օրհորդները պարախաղ կը սարքէին: Վալոդիայի հետ կանգներ էինք բեմահարթակին վրայ: Երկուքս ալ անձկանօք կը սպասէինք՝ որ Նախագահը խօսք առնէր մուրը չկոխած: Վալոդիայի մէկ երկու թելադրանքները պատկան անձերու մնացին ամուլ, ո՛չ միայն, այլ՝ «Դու գործիդ նայիր»ի վերաբերումը զգալի էր: Հունկ, երբ սկսաւ Նախագահը խօսիլ, մթնշաղի աղօտ լոյսը կ'անհետէր արդէն և հրապարակը կ'իսո՞վ դատարկուած էր...

Հանրապետութեան սուաջին տարիներուն, ուժգնօրէն ծեծուած հարց մըն էր՝ ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայի ճակատագիրը: Օր մը, նոյնպէս հանգուցեալ մեծ գիտնականի և հաւասարապէս մեծ բարեկամի մը հետ կը բարձրանայի Ակադեմիայի աւագ սանդուղէն: Կը մտնենք ըսի իրեն, լոյսի տաճարը: Իր պատասխանը եղաւ պարզ ու կտրուկ՝ «Սա լոյսի տաճար չէ, սիրելի Լեւոն, սա խաւարի տուն է, պէտք է քանդել դա»: «Քանդել» փոխանակ բարելաւելու, բարեկարգելու, բարենորոգելու, այդ տարիներու տիրող տրամադրութիւնն էր, թէպէտէ ո՛չ միշտ բացայատօրէն բանաձեւուած, բայց՝ գործնականին մէջ՝ լռելեայն, ենթագիտակից լոգունգի կարգ անցած: Սա պարզ պատճառով, որ դա «կոմունիստներ»ի կառոյց էր և չունէր համապատասխանը արեւմտեան, «քաղաքակիրթ» աշխարհում: Օր մը նմանախօս այլ բարեկամի մը պիտի ըսէի՝ ինչո՞ւ չքանդել նաեւ Մատենադարանը, քանի որ այդ ալ կոմունիստների կառոյց է և չունի համապատասխանը Արեւմուտքում: Վալոդիան ըրաւ իր կարելին, ինչ որ կարելի էր տուեալ պայմաններում, մարտեաւ իր բարւոք պայքարը, որպէսզի Ակադեմիան չփակուէր: Բնականաբար, իր յառա-

ջացած տարիքը, մանաւանդ իր կողքին երիտասարդ ոյժերու պակասը, քաղաքական աննպաստ պայմանները և, հուսկ՝ բայց ո՛չ նուազ՝ միջոցներու սակաւութիւնը, մանաւանդ թէ գրեթէ չգոյութիւնը, չարտօնեցին, որ իր և սակաւաթիւ զինակիցներուն պայքարը կարենար ներդնել Ակադեմիայի լրիւ վերակազմաւորման համար անհրաժեշտ նախադրեալները:

Այստեղ յատկապէս չեմ անդրադառնար Ակադ. Բարխուդարեանի զիտական վաստակին վրայ, քանի որ ասիկա առարկայ պիտի հանդիսանայ, ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն, այս հաստորին մէջ լոյս տեսնող ուսումնասիրութիւններէն շատերուն:

Բայց պիտի չուզէի այս տողերը փակել առանց ակնարկելու գոնէ՝ Վալոդիա մարդը, անոր նկարագիրը, վարքագիծը յատկանշող որոշ կէտերու, վերաբերումներու, որոնք ներշնչած, կողմնորոշած են անոր գործունէութիւնը, յատկապէս՝ ակադեմական վարիչի:

Ասոնց կարգին իբրեւ առաջնահերթը պիտի մատնանշէի անոր ուղղամտութիւնը, ինքն իրեն և իր սկզբունքներուն, անշեղ, բացարձակ հաւատարմութիւնը, ինչ որ չի նշանակեր բացարձակապէս առաձգականութենէ զուրկ, բթամիտ, երկրաչափական հետեւողականութիւն՝ տուեալ, իրաւ. կամ կարծեցեալ սկզբունքերու: Ինչ որ ամենէն աւելի հիացումս խլած է Վալոդիայի անձին մէջ՝ իր բացառիկ ձիրքն էր՝ հասկնալու մարդիկը, գրեթէ ձեռքերով շօշափելու իւրաքանչիւրին անկրկնելի, անփոխարինելի ինքնութիւնը, առանց երբեք աստիճանային կամ դասակարգային խտրութեան, աչառութեան և որ ի կարգին: Այս կէտին մէջ մանաւանդ ան կը հանդիսանար հոգեժառանգը Մեծ Լոռեցուն, որմէ

յաճախ կը մեջբերէր, կ'արտասանէր տողեր, եւս աւելի համեմե-
լով իր արդէն քաղցրահոս զրոյցը: Իր դուռը բաց եղաւ միշտ բոլո-
րին: Իր գրասենեակին մէջ կտրելի էր ծանօթանալ՝ ինչպէս ամե-
նէն ականաւոր գիտնականին կամ ակադեմիկոսին, նաեւ ամե-
նահամեստ բանուորին կամ գեղջուկին: Այս պարագան եղած է
նաեւ, յատկապէս, այդ գրասենեակին՝ ինծի համար ամենէն հա-
ճելի, ամենէն յանկուցիչ, ամենէն հմայիչ երեւոյթներէն մէկը:

Վալտդիա էր նաեւ մեծ հայերեսաւոր մը: Նա անշեղօքէն,
անսակարկօքէն սիրեց իր ժողովուրդը, այս մարզին մէջ ալ հե-
տեւելով՝ Լոռուայ լեռնաշխարհի իր մեծ բարեկամ Պոէտին: Բայց,
ինչպէս ամէն իրաւ հայրենասէր, իսկապէս նուիրեալ մարդ, ինքն
իրեն չարտօնեց, երբէ՞ք, պոռոտ ազգայնամոլութիւնները, սնամեջ
հոետորաբանութիւնները, ո՞չ միայն ամուլ՝ այլ և քանդիչ, մեռու-
ցիչ, ինքնաթիրախ ծայրայեղութիւնները: Օրինակ մը միայն նշե-
լու համար այստեղ, այս ուղղութեամբ իր տարած՝ նաեւ պայքար-
ներէն, յիշենք իր դիրքորոշումը և վաստակը վահան կազմելու
համար՝ Ռիչըրտ Յովհաննէսեանի նման վիթարի պատմաբանի
մը դէմ յերիւրուած զրպարտութիւններուն և սաղորուած յարձա-
կումներուն:

Մէկ խօսքով մեծ ընկեր ու բարեկամ, ինձ համար երեց եղ-
բայր Վալտդիան, Ակադեմիկոս Պրոֆեսոր Վլադիմիր Բարխու-
դարեանը, եղաւ իսկական ուսուցիչ մը, բառին բուն իմաստով
«մաէստրո» մը, մերս հայկաբանութեամբ՝ բառին արմատական
առումով «վարպետ, վարդապետ» մը, ամենուս և բոլորին համար:
Տոդերս գրողն ալ կեանքի մեծ դասեր առած է իրմէ:

Թող հանգչի՝ յաւէտ արդարներու քունով Տիրոջ լոյսերուն
մէջ:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆԻ ԾՆԱԴԱՎԱՅՐ ԱՂՔՅՈՐՓԻ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՑ¹

ԱՐՄԵՆ ԱՄԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Աղբյուրփի (Ախբյուրփի, Ախբյուրփու, Աղբյուրփու, Կամրջա-
գեղ) հայաբնակ գյուղը Վրաստանի հանրապետության Քվեմո
Քարթլիի մարզի Մաոնեուլի շրջանում է, Մաոնեուլի քաղաքից
մոտ 30 կմ հարավ, Վիրահայոց լեռների հյուսիսահայաց լանջե-
րին, Լավվար լեռան (2543 մ) հյուսիսային կողմում, Աղբյուրփի
(Բոլնիս) գետի (սկիզբ է առնում Լավվարից) ափին, ծովի մակար-
դակից 1019 մ բարձրության վրա:

Աղբյուրփին հին հայկական բնակավայր է, որը նախկի-
նում Հայոց Գուգարք աշխարհի Բոլնոփոր գավառում էր²: Գյուղը
խորհրդային առաջին տարիներին Հայաստանի հանրապե-
տության կազմում էր, և միայն 1930-ական թթ. սկզբին, Անդրֆե-
դերացիայի փոքր նախագահության վրաց-ադրբեջանական դե-
կավարության որոշմամբ, հարևան Չանախչի հայաբնակ գյուղի
հետ միասին տրվել է Վրաստանի հանրապետությանը:

Գյուղի դիրքը գեղեցիկ է, շրջակայքը անտառապատ:
Խորհրդային տարիներին գյուղացիների հիմնական զբաղմունքը
անասնապահություն, դաշտավարություն և բանջարաբուծու-

¹ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբե-
րի 22-ին Աղբյուրփի գյուղում: Մահացել է 2017 թ. մարտի 23-ին: Ներկայումս
գյուղում բնակվում են Բարխուդարյան տոհմի ներկայացուցիչներ:

² Աղբյուրփի անունով գյուղեր են եղել նաև Մյունիքում, Արցախում և Արևմտյան
Հայաստանի Վանի շրջանում:

թյունն էր: Ունի միջնակարգ դպրոց, հիվանդանոց, ակումբ-գրադարան: Պահպանվել է գյուղի քարաշեն Սուրբ Գեորգ եկեղեցին¹:

1841 թ. գյուղն ունեցել է 18 տուն ծուխ², 1856 թ.³ 120 (61 ար., 59 իգ.)⁴, 1857 թ.⁵ 122⁴, 1884 թ.⁶ 320 (200 ար., 120 իգ.)⁵, 1389 թ.⁶ 641 (Խոխմել գյուղի հետ միասին, 405 ար., 236 իգ.)⁶, 1894 թ.⁷ 75 տուն (Խոխմել գյուղի հետ միասին)⁷, 1905 թ.⁸ 430 (260 ար., 170 իգ.)⁸, 1906 թ.⁹ 274 (145 ար., 129 իգ.)⁹, 2002 թ.¹⁰ 742 (հիմնականում հայ, 352 ար., 390 իգ.), 2014 թ.¹⁰ 610 (286 ար., 324 իգ.) հայ բնակիչ:

1876 թ. ուն «Ա. Ն.» ճամփորդել է Գուգարաց աշխարհում և իր տպավորությունները տպագրել «Փորձ» հանդեսում: Նա գրել է, որ «...բառական է Թիֆլիզից դուրս գալ, Կոդայով ուղևորովի դեպի Շուլավեր, Պրեզենտ, Աղբորփի (Կարմնջագեղ), ... բառական է այսքանը տեսնել, իմանալու համար, որ տպաւորութեանց մեծ աղբիւր կգտնի ճանապարհորդը: Շուլավերը, Աղբորփին, Բայդարը... Հայոց գիւղեր են»¹⁰: Միաժամանակ հեղինակը մանրամասն անդրադարձել է Աղբորփի գյուղին. «Մտեք, օրինակ, Աղբորփի - տեղի դիրքը շատ զմայելի է, բայց հողը, երկիրը այնքան փոքր է, որ խեղճ գիւղացին հազիւ օրական պարէնը կարողանում է հա-

¹ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 204:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 48, մաս 1:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 103:

⁴ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 16:

⁵ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2941, թ. 69, 71:

⁶ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 87:

⁷ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, մաս 2, թ. 143:

⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, մաս 1, թ. 11:

⁹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 10:

¹⁰ Փորձ, 1876, № 2, էջ 424:

նել գետնից. ուստի նորա կենցաղավարութիւնը ողորմելի կթուի
 ամեն մի անցորդի համար»: Հեղինակը նաև գովերգել է աղքատ-
 փեցիների քաջությունը. «Մենք մեր ճանապարհորդութիւնից
 առաջ երևակայել անգամ չէինք կարող տեսնելու մի հայ գիւղացի
 առողջ դասողութեամբ և ծանրութեամբ խորհող, երբէք չէինք
 կարող հաւատալ, թէ հայ գիւղացին հրացան կամ սուր ունի կամ
 կարող է բանեցնել նորան մեծ քաջութեամբ (օրինակ՝ Աղբօրփե-
 ցիք ընդէմ թուրք փախստական աւագակների) մենք չգիտէինք,
 որ հայ գիւղացին գիտէ ձի նստել և մեծ քաջութեամբ պատերազ-
 մել ձիու վերայ հեծած (օրինակ Շուլավերցիք) իւրեան անդադար
 անհանգստացնող աւագակների դէմ. մենք շատ բան չգիտէինք -
 այժմ մենք մեր աչքով տեսանք այդ ամենը և հայ գիւղացին մեր
 հայաջքում խիստ բարձրացաւ և իւրեան քաջ նախնեաց եթէ ոչ
 իսկական պատկերը յիշեցրեց մեզ, որ անմահ երանելի պատմա-
 գիրքը աւանդել են գոնեա մենք տեսանք, որ հայի գլխում կայ
 խելք, կայ հասկացողութիւն, հայի սրտում կայ ջութիւն: Կայ այս
 բոլորը, բայց չկայ հող, ուստի չկայ հարստութիւն... Աղբօրփի
 գիւղի հայը մի խիստ համակրական տիպ է և արժանի է, որ մի օր
 իւր բոլոր պարզ յատկութիւններով մի պատուական և փորձառու
 գրչի շնորհիւ, հանրածանօթ դառնայ ամեն մի հայի: Եւ կարող է
 արդեօք այլ կերպ լինել, երբ նոյն իսկ բնութիւնը Աղբօրփին զար-
 դարել է զմայելի անտառով և սառնորակ աղբիւրներով: Այդ ան-
 տառների միջից բարձրանում է Լալվար սարը, որ ըստ կարծեաց
 գիւղացւոց, ամենաբարձր սարն է աշխարհիս երեսին: «Ջարմա-
 նալի սար է էս Լալվարը, ասում էր մեր ուղեցոյց գիւղացի Վար-
 դան պատանեակը, ուր երթաս-կերնայ. սրանից բարձր սար
 չկայ»: Կարող է այլապէս լինել, երբ ամեն կիւրակի և տօն օրերը

բոլոր գիւղը, երիտասարդք և աղջկունք, գբօսնելու են գնում իւրեանց աննման անտառը և տերևախիտ ծառերի մէջ, զովացնում են իւրեանց ծաբաւը Գերեզմանաքարի և Դիզաքարի անմահական աղբիւրների ջրով...»¹:



Աղքթօրփի

1884 թ. հունիսին գյուղի մասին գրվել է. «Շուկաւերից 25 վերստ հեռու Աղքթօրփու արքունական գիւղն է հայաբնակ, որի կէս ճանապարհի վերայ գտնուում է Օփրէդ յունաբնակ գիւղն, անտառապատ ձորակի մէջ: Աղքթօրփիի բնակիչները 50 տուն են, որոնք յայտնի են իրանց քաջութեամբ, այնպէս որ ոչ մի աւագակային յարձակումն տեղի չունի նոցա վերայ: Գիւղի առաջով անցնում է փոքրիկ վտակ, որ իջնում է Լալուարի ստորոտից և ունի իւր մէջ կարմրախայտ ձկներ, շէնը շրջապատուած է անտառով, օդն ընտիր, բայց ջուրն ոչ այնքան առողջարար, որովհետև անցնում է հանքային լեռների միջից. կայ այստեղ մի եկեղեցի հասարակ քարաշէն և մթին: Գիւղիցս երեք վերստ հեռու անտառապատ

¹ Նույն տեղում, էջ 425:

խոր ծորի մէջ կայ մի վանք փառաոր, շէնքը խաչաձև, արտաքուստ սրբատաշ քարով և ներքուստ աղիւսակերտ, չորս սիւնաւոր. ունի կաթողիկէ գեղեցկաձև, կոփածոյ քարից¹: Թէ կաթողիկէի և թէ տաճարի լուսամտոնների և դռների արտաքին շրջանակները զարդարուած են զարմանալի նրբաքանդակ վայելուչ նկարներով, որոնք նրբութեան կողմից բաւական նմանում են Բոլնիսի Ծուրորտաւշէն վանքի նկարներին: Սեղանի աջ և ձախ կողմերում կան երկու խորաններ, որոնցից մէկի միջով մի անցք հանում է դէպի տանիքը, սեղանը հայկական ձևից խախտել են և տաճարի վերայ գտնուած արձանագրութիւններն, ինչպէս ասում են, ջնջել քերել են, դռանից է, երևի, որ ոչ մի գրի հետք չկարողացանք գտնել: Տաճարի հիւսիսակողմը փոքր ինչ անջատ կան երկու մատուռների աւերակներ, իսկ արևմտեան դրան առաջ գաւիթ թաղակապ: Մենաստանս գտնուում է այժմ վրացի իշխան Իվանէ Մելիքովի կալուածքում, շրջապատուած է եղել ընդարձակ քարաշէն պարսպով, այժմ կիսակործան, պարսպի մէջ հարաւակողմն է հանգստարան: Օվրէդ գիւղի յոյները մի տարի առաջ տաճարին կից շինուածներից քանդել տարել են սրբատաշ քարեր իրանց եկեղեցւոյ շինութեան համար: Այս մենաստանը շատ մօտիկ է Լալուարին և կարող է համարուել նորա ստորոտում: Այդ լեռան ամենաբարձր գագաթի վերայ, մեզ պատմեցին, կայ մի ուխտատեղի ս. Սարգիս անունով, մի քանի ժողոված քարերից կազմած, այստեղ գնում են ուխտ Վարդավառի օրը Բորչալուի հայերն, յոյներն և թուրքերն»²:

1885 թ. «Նոր-Դար»-ում գյուղի մասին, գրվել է, որ գտնվում է մի քանի վերստ հեռու Չանախչի գյուղից, անտառի

¹ Խոսքը հանրահայտ Խուճապի վանքի (13-րդ դար) մասին է:

² «Արձագանք», Թիֆլիս, 1884, № 42, էջ 614:

մեջ: Բաղկացած է զուտ հայերից 30-35 տուն, ունեն բահանա և եկեղեցի: Զբաղվում են երկրագործությամբ: Աղքատիեցիները հայտնի են իբրև լավ որսորդներ. նրանք քաջ են և բարձրահասակ: Գյուղն ունի նսեմաստվեր և վիթխարի ծառերով հարուստ անտառներ, որոնք լի են վայրի պտուղներով և վայրի կենդանիներով: Համարյա ամեն գյուղացի որսորդ է. արջ, վայրի խոզ, և այլ զագաններ սպանելը նրանց համար սովորական բան է: Թեև ջուրը առատ է, բայց այնքան էլ առողջարար չէ: Գյուղը գտնվում է լեռան ստորոտում. քանի գյուղացիները շատանում են, անտառները կտրատելով դեպի լեռն են բարձրանում: Ինչպես Չանախչին, այնպես էլ այս գյուղը պատկանում են իշխանագն կոմս Լոռու-Մելիքյանին»¹:

Սուրբ Գեորգ եկեղեցին - հիմնադրման ստույգ թիվը հայտնի չէ: Ենթադրվում է, որ փայտաշեն եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի առաջին քառորդում, իսկ 1857թ.² այն վերափոխվել է քարաշեն շինության:

Եկեղեցին հիշատակվում է 1837 թ. սկսած³: 1856 թ., ըստ Սոմխեթի վիճակի գործակալ Հովհաննես քին. Արարատյանի կազմած վիճակագրական տեղեկության, գյուղն ունեցել է փայտաշեն ծխական եկեղեցի⁴ 35 ուրբլի մայր գումարով⁵: Հաջորդ տարի, ըստ նույն գործակալ կազմած տեղեկության՝ գյուղում, արդեն գործել է քարաշեն ծխական եկեղեցին⁶:

¹ «Նոր-Դար», Թիֆլիս, 1885, նոյեմբերի 30, № 204:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 450, թ. 46, բնագիր, ձեռագիր:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 103:

⁴ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 16:

1890 թ. Շուլավերի գործակալը կազմել է վիճակի եկեղեցիների հավելյալ և պակասեալ զարդերի և անօթների ցուցակը, որտեղ նշվել է, որ Սուրբ Գեորգ եկեղեցին ունի հավելյալ մեկ Ավետարան¹՝ գնված եկեղեցական արդյունքից: Եկեղեցուց ոչինչ չի պակասել²: Նույն թվականի մեկ ուրիշ վավերագրում նույնպես նշվել է, որ եկեղեցու բոլոր զարդերն ու անոթները տեղում են³:

1913 թ. մայիսի 14-ին Շուլավերի գործակալ Սահակ քահանան գրել է կոնսիստորիային. «Ի հետևումն հոգևոր Ատենիդ հրամանի անցեալ ապրիլի 29-ից № 1949, սորա հետ պատիւ ունեն մատուցանել դմին տեղեկութիւններ՝ Շուլաւերու վիճակի եկեղեցիների շարժական և անշարժ գոյքերի մասին: Շուլաւերու վիճակում չկան վանքեր, մենաստաններ և ո՛չ վանքական արդիւնաբեր կալուածք: Եկեղեցիների շարժական գոյքն կազմում են դրամական հաշիւներն, դրամական եկամուտներ ունեն Շուլաւեր գիւղի երկու եկեղեցիները, Աղբորփի և Դամիա միատրեալ գիւղօրէից եկեղեցիները, իսկ մնացած եկեղեցիները չունեն դրամական հաշիւներ»: Նշվել է, որ Աղբորփի գյուղի եկեղեցին ունի 100 ռուբլի գումար՝ երեցփոխանի մոտ⁴:

Քահանաներ – 1837 թ., ըստ Սոմխեթի գործակալ Հարություն վարդապետ Մանուչարյանի ներկայացրած տեղեկագրի՝ գյուղի Սուրբ Գեորգ եկեղեցում քահանայագործել է Մարգարե քին. Տեր-Ղազարյանը⁴: Նա ծնվել է 1791 թ., քահանա է ձեռնադր-

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2966, թ. 11 շրջ.-12, բնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 150, թ. 38, բնագիր, ձեռագիր:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3221, թ. 75, բնագիր, ձեռագիր:

⁴ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 450, թ. 46, բնագիր, ձեռագիր:

վել 1831թ. հոկտեմբերի 7-ին: Նրա որդին՝ Ղազարը ծնվել է 1834 թ.¹: Մարգար քահանան հիշվում է նաև 1841 թ.²: 1856 թ. եկեղեցում գործել են 1 քահանա և 1 ստորին) եկեղեցական պաշտոնյա³: 1857 թ. եկեղեցում գործել են 1 սրբազնագործ քահանա և 2 ստորին եկեղեցական պաշտոնյա⁴: 1876 թ. հիշվում է ծերունի Տեր Վարդան քահանան⁵: 1884 թ. եկեղեցում քահանայագործել է Սկրտիչ քին. Տեր-Վարդանյանը: Գործել է 1 ստորին եկեղեցական պաշտոնյա⁶:

1889 թ. հուլիսի 6-ին Շուլավերի գործակալ Մովսես քին. Տեր-Գրիգորյանը Վիրահայոց կոնսիստորիային ներկայացրել է, որ Աղքյորփի գյուղի Սուրբ Գեորգ եկեղեցին ունի 1 քահանա, 1 ստորին եկեղեցական սպասավոր⁷:

1894 թ. Աղքյորփի և Խոխմել գյուղերում քահանայագործել է Սկրտիչ քին. Տեր-Վարդանյան Տեր-Եղիազարյանցը: Նա ծնվել է 1824 թ., սարկավագության աստիճան ստացել է 1859 թ. մարտի 7-ին, իսկ քահանայություն՝ 1860 թ. հունվարի 17-ին: Նրա զավակներն են՝ Վահանը – ծնված 1859 թ. հունվարի 26-ին, Մարթան – 1862 թ. մարտի 29-ին, Երինազը – 1864 թ. հուլիսի 19-ին, Աբգարը – 1872 թ. մարտի 29-ին, Արամը – 1878 թ. հոկտեմբերի 28-ին և Աստղիկը – 1885թ. հոկտեմբերի 1-ին⁸:

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48, մաս 1:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48, մաս 1:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 103:

⁴ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 16:

⁵ Փորձ, 1876, № 2, էջ 425:

⁶ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2941, թ. 69, 71:

⁷ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 87:

⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, մաս 2, թ. 143:



Աղբյուրփի. Մբ Աստվածածին մատուռ

1899 թ. օգոստոսի 13-ին Վահան քին. Տեր-Վարդանյանցը խնդրագիր է ուղղել Վիրահայոց կոնսիստորիային. «Մտադիր լինելով զքեռորդին իմ տանել ի Տփլիս և յանձնել ի Ներսիսեան Հոգևոր դպրոցն՝ այսու ամենախոնարհաբար խնդրեմ զվեցօրեայ արձակուրդ ի Տփլիս»¹: Օգոստոսի 15-ին Շուլավերի գործակալ

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 249, թ. 82, բնագիր, ձեռագիր:



Սահակ քին. Իսահակեանցը կոնսիստորիային գրել է. «Ընդ սմին, պատիւ ունիմ ամենախոնարհաբար առաջի առնել հոգևոր Ատենիդ ի տնօրէնութիւն՝ զյայտարարութիւն Վահան քահանայի Տէր-Վարդանեանց Աղբօրփի գեղջ, որով խնդրէ զվեցօրեայ արձակուրդ ի Տփլիս»¹:

Վահան քահանան 1900 թ. յունիսի 17-ին ստորագրությամբ ստացական է տվել Վիրահայոց կոնսիստորիային, որ Աղբօրփի և Խոխմեղ գյուղերի եկեղեցիների համար ստացել է 4 հատ փրկչական փոքրադիր պատկեր²:

1908 թ. սեպտեմբերի 17-ին Վիրահայոց կոնսիստորիան հայտարարությամբ դիմել է Վիրահայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթուկյանցին. «Ըստ մակագրական առաջադրութեան Ձերդ Բարձր Սրբազնութեան ի 19-ն օգոստոսի տարւոյս թ. 608, կոնսիստորիայս պատուիրեաց գործակալին Շուլաւերի մատուցանել սմին զհամաձայնութեան թուղթ ժողովրդեան Ալքեորփի գեղջ, վասն տեղափոխութեան անտի Վահան քահանայի Տէր-Վարդանեանց ի Շուլաւեր: Ի կատարումն որոյ ընկալեալ եղեն յԱտենիս յայտարարութիւն նոյն գործակալին ի 5-ն այսր սեպտեմբերի թ. 166 և խնդիր նոյն իսկ Վահան քահանայի հանդերձ երկոքումքք վկայականոք, զորս ընդ զործոյն կոնսիստորիայս խոնարհաբար մատուցանէ ընդ սմին ի տնօրէնութիւն Բարձր Սրբազնութեան Ձերոյ»³:

1908 թ. հոկտեմբերի 10-ին Շուլավերի գործակալ Սահակ քին. Իսահակյանը Վիրահայոց թեմի առաջնորդին գրել է. «Ի հետևումն առաջադրութեան Բարձր Սրբազնութեան Ձերում ի 23-

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 249, թ. 81, բնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3075, թ. 3, բնագիր, ձեռագիր:

³ ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 350, թ. 33, բնագիր, ձեռագիր:

էն սեպտեմբերի տարւոյս հմր. 725, ի 26-ն նոյն ամսոյ, ես գրութեամբ հմր. 178, յայտնեալ եմ ծխականաց Աղքեորփի գեղջ ընտրել ինքեանց զքահանայ կամ քահանայացու ի սակս տեղափոխութեան ի գեղջէն Վահան քահանայ Տէր-Վարդանեանց, այլ առ այդ չունիմ տակաւին զպատասխանի: Մակայն քանի մի աւուրբք յառաջ քան զհրաման Բարձր Սրբազնութեանդ՝ զալով ի Շուլաւեր տասն անձինք ի պատուաւոր ծխականաց Աղքեորփի գեղջ, խնդրեցին ժամանակաւորապէս յանձնել նոցա ի հովութիւն Վարդան քահանայի Սիմոնեան Խոժոռնի գեղջ, և ես կատարեցի ըստ խնդրանաց նոցա զառանձին տնօրէնութիւն դորին, իսկ ժողովուրդք Աղքեորփի գեղջ մնան ի ծանր տարակուսանս վասն սեպիական քահանայի և Վարդան քահ. Սիմոնեանց կարի դժուարութեամբ յանձն առնու զհովութիւն ժողովրդեանն, նախ վասն հեռաւորութեան տեղոյն և բ. բազմութեան զիւղօրէիցն, գտանեցելոց ընդ հովութեամբ նորա»¹:

Նոյն գործակալը թեմի առաջնորդին գրել է նաև 1908 թ. հոկտեմբերի 25-ին. «Ի հետևումն առաջադրութեան Բարձր Սրբազնութեան Ձերում ի 15-էն հոկտեմբերի հմր. 840, ես գրութեամբ ի 13-էն հոկտեմբերի հմր. 205, զհովութիւն ծխաց Վահան քահանայի Տէր-Վարդանեանց Աղքեորփի գեղջ ժամանակաւորապէս յանձնեալ եմ Վարդան քահանայի Սիմոնեան, և կրկին գրութեամբ ի նոյն թ. հմր. 206, առաջարկեցի ժողովրդեան Աղքեորփի գեղջ ընտրել ինքեան քահանայ, ի տեղի Վահան քահ. Տէր-Վարդանեանց: Որպէս լուսոյ ի զիւղականաց Աղքեորփի գեղջ հասարակութիւնն որոնէ ինքեան զհաստատուն քահանայ, թեկնածուք առ այժմ են երկու քահանայք - Արիստակէս քահա-

¹ ՀԱԱ. ֆ. 35, ց. 1, գ. 350, թ. 37, բնագիր, ձեռագիր:

նայն Եզանեան և նորընծայ քահանայն Տէր Եղիշէ՝ որդին Սարգիս քահանայի Լեջան գեղջ: Ի մօտակայ ատուրս գուցէ յաջողեսցի ընտրութիւն միոյն ի նոցունց ընդ ձեռն հոգևոր իշխանութեան: Ամենախոնարհաբար պարտք համարիմ խնդրել զկարգադրութիւն Բարձր Սրբազնութեան Ձերում, ըստ կարելոյն փութացուցանել զգործ տեղափոխութեան Վահան քահ. Տէր-Վարդանեանց ի Սուրբ Աստուածածին եկեղեցին տեղոյս ի հովվութիւն ծխոցն, վասն զի Ղազար քահ. Տէր-Գրիգորեանց, գոլով վատառողջ՝ կարի դժուարութեամբ միայնակ կատարէ զԺամերգութիւն և զօրակալութիւն պատարագի յեկեղեցւոջ՝ գրեթէ առանց ստորին եկեղեցական պաշտօնէից, զորմէ յիշեալ քահանայն քանիցս ծանուցեալ է ինձ»¹:

1911 թ. ապրիլին գյուղում ժամանակավոր քահանայագործել է Արսէն քին. Տէր-Մովսիսյանը²: Նույն տարվա հունիսի վերջին Աղբյուրփի գյուղի համար քահանա է ձեռնադրվել Փիրթիքան³ գյուղի բնակիչ Արամ Մանուկյանը: Այս մասին Վիրահայոց կոնսիստորիայում լսել են. «Սուրբ Էջմիածնի Սինոդի այս տարուայ յունիսի թ. 1475 հրամանը, որ այսպէս է. "Սինոդումս լսեցին զեկուցում Ալեքսանդրապոլի գաւառի Փիրթիքեան գիւղի բնակիչ Արամ Մանուկեանին Բորչալուի գաւառի Աղբեօրփի գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին: Հրամայեցին. թոյլ տալ Վրաստանի հայոց կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ալեքսանդրապոլի գաւառի Փիրթիքեան գիւղի բնակիչ Արամ Տէր-Յարութիւնեան Մանուկեանցին և առաջադրել Տ. Եփրեմ

¹ ՀԱՍ., ֆ. 35, ց. 1, գ. 350, թ. 35, բնագիր, ձեռագիր:

² ՀԱՍ., ֆ. 53, ց. 1, գ. 387, մաս 1, թ. 103, բնագիր, ձեռագիր:

³ Ներկայիս Թալինի տարածաշրջանի Ծաղկասար գյուղն է:

եպիսկոպոսին ձեռնադրել նորան քահանայ Բորչալուի գաւառի Աղբօրփի գիւղի համար, տալով այդ մասին տեղեկութիւն Տփլիսի տեղական բրիգադայի պետին: Ընծայացուի վկայականները վերադարձնել կոնսիստորիա¹: Հրամայեցին. ընդունել ընծայացու Արամ Տէր-Յարութիւնեանին հոգևոր կոչման մեջ և այս մասին յայտնել Աղբօրփի ժողովրդեան Շուլաւերի գործակալի միջոցաւ. վերադարձնելով վկայագրերը²:

1912 թ. Աղբօրփի և Խոխմելի գյուղերի ծխատերն է եղել Վահսն քին. Տէր-Սկրտչյան Տէր-Վարդանյանցը: Նա ծնվել է 1861 թ., հոգևորականության դասի մեջ է մտել 1895 թ. սեպտեմբերի 21-ին: Միաժամանակ հանդիսացել է նաև Շուլավերի եկեղեցիների բարեկարգիչը²:

Երեցփոխներ և պատվիրակներ – 1906 թ. հուլիսի 9-ին Աղբօրփի գյուղի հասարակությունը համախոսական թերթ է ուղղել Վիրահայոց կոնսիստորիային. «Մեք ներքոյ սորին ստորագրողք Աղբօրբու Սուրբ Գեորգ եկեղեցւոյ ծխականներս համաձայն առաջադրութեան Նորին Բարձր Արքայութեան թեմակալ առաջնորդի հայոց Վրաստանի և Իմերեթի ի 23-ն յունիսի № 802 և ըստ առաջարկութեան գործակալին Շուլաւերու վիճակի ի 9-էն յուլիսի 1906 ամի ընդհանուր ժողովով ընտրեցինք մեր հասարակութեան միջից Արշակն Յովհաննիսեան Բարխուդարեանց, Ռուբէն պատուիրակ եկեղեցական ծխական ընտրութիւնների Սանսաւր. Կիւղում, ուր միւս պատուիրակների հետ խորհրդակցութեամբ պէտք ունեւորենք մեր հոգևորականութեան, ներկայ լինելու

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2302, թ. 194, բնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 872, թ. 8 շրջ.:

պատգամաւորների ընդհանուր համագումարին, առ որ ստորագրեմք:

Եղիազար Զաւախեան, Տիգրան Ռեւազեանց, Ավետիք Զաղացպանեանց, Սէրգոյ Աթաբէգեանց, Արսէն Ռեւազեանց, Բաղալ Հայրապետեանց, Զաքար Աւագեանց, Սարգիս Հայրապետեանց, Մէլիք Աւագեանց, Ասատուր Ամիրխանեանց, Ասատուր Պապիկեանց, Զաքար Աթաբէգեանց, Մէխակ Գասպարեանց, Պէտրէ Յուցրուկեանց, Յարութիւն Խուրոյեանց, Ասլան Գասպարեանց, Վարդան Գուրքիւնեանց, Շամիր Յուցրուկեանց (վերոյ գրեալ տասն և եօթն անձանց խնդրանօք գրեցի), Յոսէփ Բազազեանց, Խաչատուր Մկրտումեանց, Ղազար Աթաբէգեանց, Ղազար Աւագեանց, Մէլիք Բազազեանց, Եզոր Աթաբէգեանց, Մոսի Աթաբէգեանց, Մէսրոպ Ռեվազեանց, Սարգիս Աւագեանց, Անդրեաս Ռեվազեանց, Զաքար Զիջեանց, Գիգոլ Բարխուդարեանց, Խաչատուր Հայրապետեանց, Գէորգ Բարխուդարեանց, Սարգիս Խեչումեանց, Վարդան Օլբիւնեանց, Գէորգ Ալիխանեանց, Մէխակ Գասպարեանց, Բեգլար Գասպարեանց, Նէրսէս Ամիրխանեանց, Մէլիք Ամիրխանեանց, Ենօք Աւագեանց, (քսան և մէկ անձանց խնդրանօք գրեցի), Խաչատուր Շահինեանց, Սիմօն Մաթևոսեանց, Արշակ Բազազեանց, Արշակ Աթաբէգեանց, Ատիկօ Բազազեանց, Ասատուր Ավագեանց, Արութիւն Ավագեանց, Արէլ Թանդարեանց, Գրիգոր Զաղացպանեան, Աղամ Բազազեանց, Արշակ Բազազեանց, Կոստանդ Բարխուդարեանց, Միխակ Մարտիրոսեանց, Կարապետ Գասպարեանց (տասն և երեք խնդրանօք ձեռք գրեցի), Խաչատուր Օլբիւնեանց, Ավետիք Շահվերդով:

Ուղիղ է, որ ստորագրեալ յիսուն և վեց անձինք իմ ներկայութեամբ ստորագրեցին, ուստի վաւերացուցանում եմ արքունական կնքամբ. Օփրէթու շինական դատարանի դատաւոր Սարգիս Պետրոսեան Մկրտումեանց, 1906 ամի 9-ն յուլիսի, Աղբօրքի»¹: Կարծում ենք, որ Արշակ Բարխուդարյանը եկեղեցու երեցփոխանն էր: 1910 թ. հունիսի 17-ին եկեղեցին ունեցել է 100 ռուբլի դրամագլուխ, որը պահվել է երեցփոխան Զաքարիա Ավագանցի մոտ²:

1911 թ. ապրիլի 28-ին գյուղի ծխականները ընտրողական թերթ են ներկայացրել կոնսիստորիային. «Մենք ի ներքոյ ստորագրեալքս Աղբօրքի գիւղի ծխականներս թեմին վիճակային կոնսիստորիայի սրբազան նախագահող Տէր Եփրեմ եպիսկոպոսի № 319 հրամանի համաձայն, նախագահութեամբ մեր ծխատէր Արսէն քահանայ Տէր-Մովսիսեանցի, ձայների առաւելութեամբ ընտրեցինք երկու ներկայացուցիչներ, այն է՝ Զաքար Աւագեանց և Ոսկան Յուցրուկեանց, որոնք գնալով Շուլաւեր այնտեղի մերձակա գիւղերի միւս ներկայացուցիչների հետ միասին, սոյն տարւա մայիսի ութին, կիւրակի օրը ժամի տասին Շուլաւեր դպրոցի դահլիճում, պիտի ընտրեն երկու երեցփոխան, պատուիրակներ, մասնակցելու Տիխիսու առաջնորդարանի սոյն տարւա հոկտեմբերի 9-ին ամենահայոց սրբազնագոյն հայրապետի ընտրութեան պատգամաւորական ժողովին:

Աղբօրքի գիւղի ժամանակաւոր ծխատէր Արսէն քահանայ Տէր-Մովսիսեանց և կնքեմ եկեղեցական կնքոյ»³:

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 356, թ. 25 և շրջ., բնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3220, թ. 17, բնագիր, ձեռագիր:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 387, մաս 1, թ. 103, բնագիր, ձեռագիր:

1912 թ. հունվարի 11-ին Վիրահայոց կոնսիստորիայում լսել են. «Շուլաւերի գործակալի 2 ամսոյս թ. 3 յայտարարութիւնը, որի հետ մտուցանելով Աղքորփի գիւղի ժողովրդոց համախառնական թուղթը, որով ընտրել են երեսփոխանի պաշտօնով Եղիազար Ջաւախեանցին: Հրամայեցին. հաստատել Եղիազար Ջաւախեանցին երեսփոխանի պաշտօնով Աղքորփի գիւղի եկեղեցու համար երեք տարի ժամանակով, որի մասին ծանուցանել Շուլաւերի գործակալին պատուիրելով յանձնել նոր երեսփոխանին եկեղեցու բոլոր հաշիւը, կալուածը և գոյքը օրինաւոր ցուցակով, որի մի օրինակը մատուցանել Ատենիս: Իսկ հաշուետեսների հաստատութեան համար խոնարհաբար դիմել գեր. կառավարչին թեմիս, մատուցանելով համախօսականի պատճէնը»¹: Սակայն ինչ-ինչ պատճառներով նույն տարվա մայիսին եկեղեցու ծխականները ընտրել են նոր երեցփոխան՝ Սարգիս Բարխուդարյանին: Այդ մասին մայիսի 16-ին Վիրահայոց կոնսիստորիայում լսել են. «Շուլաւերի գործակալի 5-ն մայիսի տարւոյս թ. 135 յայտարարութիւնը, որի հետ մատուցանելով Աղքորփի գիւղի ժողովրդոց համախօսական թուղթը, որով ընտրել են երեսփոխանի պաշտօնով Սարգիս Բարխուդարեանցին: Հրամայեցին. հաստատել Սարգիս Բարխուդարեանցին երեսփոխանի պաշտօնով Աղքորփի գիւղի եկեղեցու համար երեք տարի ժամանակով, որի մասին ծանուցանել Շուլաւերի գործակալին պատուիրելով՝ յանձնել նոր երեսփոխանին եկեղեցու բոլոր հաշիւը, կալուածը և գոյքը օրինաւոր ցուցակով, որի մի օրինակը մատուցանել Ատենիս»²:

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2303, թ. 3, քնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2306, թ. 12, քնագիր, ձեռագիր:

Եկեղեցական-ծխական դպրոց - 1876 թ. ունի ճամփորդ *Փորձ* հանդեսում գրել է, որ գյուղը ուսումնարան չունի և «...միայն մեր գնալուց մի քանի շաբաթ առաջ զաւառապետը հրամանագրել էր, որ ուսումնարանի համար մի շինություն կառուցանեն: Այս իրողությունը խիստ անախորժ տպաւորութիւն գործեց մեզ վերայ, մանաւանդ երբ այս հանգամանքը պատմող գիւղացի երիտասարդ Յակովբը ասելացրեց, որ Աղբօրփու Տէր Վարդան ծերունի քահանան ինքը հարուստ է, ունի 60 հազար ռուբլի փող (որ գուցէ չափազանցութիւն է) և միանգամայն անհող է: ... Իրա տղէն Թիֆլիզ հայի ուսումնարան է դրկել, ամսէն 7 մանէթ է տալիս, մեզ համար փիքը չի անում...»¹:

Գյուղի հին միդասյան արական ծխական դպրոցը Վեհափառ հայրապետի կոնդակով բացվել է 1890 թ.²: Դեռևս 1889թ. հուլիսին վկայություն կա եկեղեցուն կից ուսումնարանի նորակառույց շինության մասին³:

1890 թ. նոյեմբերի 7-ին հայոց եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Եղիշե քին. Գեղամյանցը Վիրահայոց թեմի առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսին գրել է. «Վահան Տէր-Մկրտչեան Տէր-Վարդանեանց ի պատճառս հիւանդութեան՝ ելեալ յերրորդ դասարանէ Ներսիսեան դպրանոցի, ի վարչութենէ որոյ ստացեալ է զվկայագիր գրեալ ի 23-ն յունիսի 1888 ամի № 513, և գնացեալ ի հայրենի գիւղն իւր Աղբօրփի՝ ցարդ սպասաւորէ տեղական եկեղեցւոյն առ ոտս ծերունի հօրն իւրոյ բարեկրօն

¹ Փորձ, 1876, № 2, էջ 425:

² Մ. Խուրդյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 526: Տե՛ս նաև Արարատ, 1890, № 10, էջ 583:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 87:

Մկրտիչ քահանայի Տեր-Վարդանեանց: Ի բանալն իմ յայսմ ամի զեկեղեցական ծխական դպրոց մի ի յիշատակեալ գեղջն և չգտեալ զյարմարաւոր ուսուցիչ՝ պաշտօնյայց յանձնեցի ժամանակաւորապէս վերոյիշեալ Վահանայ Տեր-Վարդանեանց, զոր գիղականք կամին տալ ձեռնադրել ի քահանայ ի տեղի ծերացեալ հօրն և ոյր վասն գրագրութիւնք գոն ի թեմական Ատենի վիճակիս: Յայտարարեալ զայսմանէ Ձերումդ Բարձր Սրբազնութեան, խոնարհաբար խնդրեմ միջնորդել ուր հարկն է, զի թոյլատրեսցի Վահանայ Տեր-Վարդանեանց վարել յայսմ ամի զյանձնեալն նմա և պաշտօն ուսուցչի»¹:

1891-92 ուսումնական տարում արական միղասյան դպրոցում դասավանդել է Վահան Տեր-Վարդանյանը²:

Ներկայումս գյուղի միջնակարգ դպրոցում, որը գործում է 1948 թ.-ից, սովորում է 140 սւշակերտ, դասավանդում է 21 ուսուցիչ:

**PAGES FROM THE HISTORY OF AGHKYORPI VILLAGE,
THE BIRTHPLACE OF VLADIMIR BARKHUDARYAN, THE
ACADEMICIAN**

(Summary)

ARMEN ASATRYAN

The Armenian village of Aghkyorpi is in Marneuli district of Kvemo Kartli region, Georgia, about 30 km to the south from the city of Marneuli, on the northern side of Lalvar Mountain. The location of the village is picturesque, and it is surrounded by woodland. It has a

¹ ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 44, թ. 134, բնագիր, ձեռագիր:

² ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 44, թ. 192 շրջ., բնագիր, ձեռագիր:

secondary school, a hospital, a club and a library. St. Gevorg Church built of stone is still preserved.

The village is an ancient Armenian settlement which used to be part of Armenian Gugark in the province of Boghnozor. In the early Soviet times the settlement was part of the Republic of Armenia. At the beginning of the 1930s, according to the decision of the Georgian-Azerbaijani minor authority of the Transcaucasian SFSR, along with the neighboring Armenian village of Chanakhchi, it was given to the Republic of Georgia. These Armenian villages have been severely suffering because of Stalin's illegal design of that part of the border.

Vladimir Barkhudaryan, academician of the Academy of Sciences, was born in the village of Aghikyorpi on September 22, 1927. He died on March 23, 2017. Currently, there are representatives of the Barkhudaryan family living in the village.

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴ
ՇԻՐՎԱՆԻ ԵՎ ԱՊՇԵՐՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

պ.գ.դ, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հետխորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության և նոր թափ ստացած պատմաշինարարության պայմաններում ադրբեջանցի պատմաբանները անցնել են լայնածավալ տեղեկատվական հարձակման, որն էլ ավելի մեծ հետևողականությամբ սկսեց իրականացվել Ադրբեջանի անկախացումից հետո: Ինչպես իրավամբ գրում է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը. «Անկախության հռչակումից հետո՝ ալիյան իշխանության անմիջական ուղղորդմամբ, ադրբեջանական պատմագրությունը հայտնվեց ամեն մի գիտական վերահսկողությունից դուրս և իր անսահման երևակայությամբ գերազանցեց անգամ թուրքական պատմագրությանը»¹:

Ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը (Զ. Բունիաթով, Ֆ. Մամեդովա և ուրիշներ), Բուն Աղվանքի և Շիրվանի պատմությանը նվիրված աշխատություններում արհեստածին «ադրբեջանցի ժողովրդի» պատմությունը հնացնելու մտասնեռումով «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջա-

¹ Մելքոնյան Ա., Պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական պատմագրության մեթոդաբանական հիմքը: Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության: Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ (4-6 մայիսի), Երևան, 2011, էջ 13:

նական ուսսա» փնտրելու նպատակով շարունակաբար փորձել է յուրացնել Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը: Մինչդեռ, հայ և օտարալեզու բազմաթիվ սկզբնաղբյուրները հավաստում են, որ Կուրի ձախափնյակում XX դարի երկրորդ տասնամյակի վերջում ի հայտ եկած «Աղբբեջան»¹

¹ Արևելյան Այսրկովկասում երբևէ գոյություն չի ունեցել «Աղբբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: Արտ. Արբելյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Աղբբեջան եւ ատրբեջանցի անունով երկնի ու ժողովուրդ գոյութիւն չունէին պատերազմից (իմա՝ Առաջին աշխարհամարտից - Գ. Ս.) առաջ: Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն «Արեւելեան: Անդրկովկաս», «Բագուի նահանգ» և այլն, փոխարինելով նույնանուն խանութիւններին՝ պարսկական տիրապետութեան տակ: Այդ երկրամասի մեծամասնութիւն կազմող ցեղն էլ հին վիճակագրութիւններում թաթար եւ կամ պարզապէս մահմեդական յորջորջումով էր յայտնի» (Աբելեան Արտ., Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», Պոսթրն, 1928, 2 տարի, մայիս, N 7, էջ 135): 1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո, երբ կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը (նախագահ՝ Մամեդ էմին Ռասուլզադե) երիտթուրքերի թելադրանքով մայիսի 28-ին թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետության» ստեղծումը, նպատակ ունենալով նույն անվան միջոցով հավակնել Իրանի հյուսիս-արևմտյան պատմական Ատրպատական-Ազարբայջան երկրամասին, հակառակ Իրանի բողոքների այն հորջորջվեց «Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» (հետագայում՝ Աղբբեջանական ԽՍՀ, ներկայումս՝ Աղբբեջանական Հանրապետություն): Մանրամասն տե՛ս *Бартольд В., Место прикаспийских областей в истории мусульман-ского мира, Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, с. 703; Էնաեթոյլա Ռէզա, Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա), Երևան, 1994, էջ 151-152; Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, Cambridge University Press, 1985, p. 129; Ասատրյան Գ., Գեորգյան Ն., Աղբբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990; Galichian R., The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, revised and expanded edition), London/Yerevan, 2010, p. 35; Խակվարյան Կ., «Աղբբեջան» աշխարհագրական հասկացության սահմանումները օսմանյան քարտեզներում, հանրագիտարանային նշանակության հրատարակություններում և դասալրբերում, «Վեմ», Երևան, 2012, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 4 (40), էջ 145-160):*

անվամբ արհեստածին պետությունում անդրալթայան տափաստաններից ներխուժած թյուրք-օղուզական ցեղերի հետևորդները՝ 1930-ական թվականների վերջերից «աղբբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարները «ինքնահաստատվել» են տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուղիներ, թաթեր, լեզգիներ և այլն) դեմ վարած ցեղասպան քաղաքականության, ուժացման, քաղաքակրթական արժեքների կողոպտման ու ոչնչացման միջոցով:

...

Վաղ ժամանակներից Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ է գտնվել Կուր գետով սահմանակից Բուն Աղվանք երկրի հետ¹: Պատմական հսկաստի հիշատակությունները վկայում են, որ Կուրի ձախափնյակի տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել են ոչ միայն աղվաններ², այլև որոշակի

¹ Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և աղբբեջան հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Акопян А. А.**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987; **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), Երևան, 2006; **Վարդանյան Ա.**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013:

² Ըստ Ստրաբոնի՝ Բուն Աղվանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր (տե՛ս **Страбон**, *География*, пер., статья и комментарии Г. А. Страбановского, Москва, 1964, кн. XI, гл. IV, § 6, с. 476). Բուն Աղվանքի թագավորության գոյության ընթացքում (մ. թ. ա. I - մ. թ. V դդ.) նրա կազմի մեջ մտած ցեղերի էթնոհամախմբման գործընթացի թուլության հետևանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում այդպես էլ չձևավորվեց «աղվան» էթնոս՝ միասնական լեզվով, մշակությամբ, ինքնագիտակցությամբ և, հետևաբար, ինքնանվանմամբ: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Акопян А. А.**, *Албания-Алуанк*, с. 148, 273; **Акопян А. А.**, **Мурадян П. М.**, **Юзбашян К. Н.**, *К изучению истории Кавказской Албании* (По поводу книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании» (III в. до н. э. - VIII н. э.)), **ՊԲՀ**, Երևան, 1987, N 3, էջ 189; **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), էջ 84:

հայկական էթնիկ տարր¹, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային և քաղաքական զարգացումներում: X դարի վերջերից Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի էր Շիրվան անունով²: Միքայել Չամչյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»³:

Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ հայերը՝ մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն⁴: Հր. Աճառյանի

¹ Տե՛ս Գալստյան Հ., Հակոբյան Ա., Էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2003, էջ 91-92):

² IX դ. վերջերին, երբ արաբական խալիֆայության թուլացման պայմաններում Բուն Աղվանքի մի շարք մարզեր դարձան ինքնուրույն, Շիրվանի մարզի ամիրան X դ. գրավեց հարևան մարզերը և իշխանության սահմանները հասցրեց Դերբենդից հարավ ընկած ծովափնյա շրջաններ՝ ընդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի, ներառելով Խրսանի, Լայզանի և մյուս մարզերը (տե՛ս *Минорский В., История Ширвана и Дербента X-XI вв.*, Москва, 1963, с. 85, 106-119, տե՛ս նաև Փափազյան Հ., Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (Խաւ. գիտ.), Երևան, 1953, N 5, էջ 80, 86):

³ Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ, Երևան, 1984 (հավելված), էջ 131:

⁴ Կուրի ձախափնյակում հայաբնակ գյուղերի մշակութակերտ գործունեության անվիճելի վկայություններն են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված բազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիչի Սբ. Եղիշա Առաքյալ, Ճալեթի Սբ. Աստվածածին, Սաղիանի Սբ. Ստեփաննոս Նախավկա, Մեյսարիի Սբ. Աստվածածին) և մատուռները, հնավայրերի հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հա-

բնորոշմամբ՝ «Աղուանից երկրին մեջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղատրուած երկրին մեջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...»¹: Կուրի ձախափնյակում և մերձկասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմության փաստի առնչությամբ Սիմեոն Ա. Երևանցի պատմագիր կաթողիկոսն իր հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ»²:

ըուստ են Նիժ, Վարդաշեն, Ճալէթ, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդար, Մաղիան, Մատրասա և այլ գյուղերի գերեզմանատները (տե՛ս **Կարապետյան Ա.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997): Պատմական բացառիկ արժեք ունեն նաև երկրամասի տասնյակ գրչօջախներում (Բարու, Շամախի, Մաղիան, Մեյսարի, Ճալէթ, Մատրասա և այլն) XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (Ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, Ճաշոցներ, եկեղեցական-ծիսական այլ ժողովածոներ՝ մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն) (տե՛ս **Եզանյան Օ.**, Մեսրոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1970, N Ա, էջ 45-48, տե՛ս նաև **Խույնի՝ Աշխատութիւններ**: Հրատարակութեան պատրաստեց **Գ. Տէր-Վարդանեան**, Երևան, 2014, էջ 72-75): Երկրամասի գրչության կենտրոններում ոչ միայն ընդօրինակվել են մատյաններ, այլև գրատներում պահվել, կորստից փրկվել և մեզ են հասել այլ վայրերում (Մպախան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթան, Նոր Զուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա և այլն) XIV-XIX դդ. ընթացքում, նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաքանակ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանվում է Մաշտոցյան Մատենադարանում և Նոր Զուղայի Սր. Ամենափրկիչ վանքի գրատանը (տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախու հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղեցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», 2005, N ԺԲ, էջ 67-73):

¹ **Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

² Դիւան Հայոց պատմութեան, Գ զիւրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց **Գիւտ քահանայ Աղանեան**, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

Շիրվանում հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական և քաղաքական խիստ ազդեցութեան տակ»¹: Երկրամասում հայերի տեղաբնակ լինելը փաստում են նաև օտար աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գազեմեյստերի տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուղիները»²: Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում Կուրից մինչև Կասպից ծով, բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի³:

Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում: Ազաթանգեղոսի հաղորդմամբ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քա-

¹ Լ [Լեոն], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28:

² Гасе́мейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сборник газеты Кавказ), изд. О. Н. Константиновым, первое полугодие 1847 года, Тифлис, 1847, с. 58 (բնագրում՝ «Из всего населения бывшей Каспийской области одни Армяне... могут доказать первобытность свою»).

³ Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼԶԳ, Երևան, 1989, N 2, էջ 57:

րոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...»¹: Պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղվանքի և Վիրքի համար եպիսկոպոս կարգված² Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի երեց որդի Գրիգորիսը, որը Մասքթաց հեթանոս Սասեսան թագավորի հրամանով նահատակվել է Դերբենդից հարավ³ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյա դաշտում (ներկայիս Խաչմասի շրջանում): Գրիգորիսի նահատակությունը, Բ. Հարությունյանի ճշգրտմամբ, թվագրվում է Տրդատ III-ի վախճանին հաջորդող պահով՝ 330-331 թթ.⁴:

Նահատակված սբ. Գրիգորիսի նշխարները նրա աշակերտները բերում և ամփոփում են Արցախում՝ Ամարասի վանքում⁵: Բուն Աղվանքում ձևավորված եկեղեցին, ընդունելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերակայությունը, վարչականորեն և դավանաբանական առումով նրա մասն էր կազմում⁶:

¹ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփլիս, 1909, էջ 439:

² Տե՛ս Բարությունյան Բ., Մագքթաց Սանեսան թագավորի արշավանքը, ԼՀԳ, Երևան, 1981, N 6, էջ 76-77

³ Գրիգորիսի քարոզչական գործունեության մասին մանրամասն տե՛ս Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանեանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասեանի, Երևան, 1987, էջ 26; Օրմանեան Մ., Ազգայատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, § 99, էջ 138-139; Мурадян П., Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, с. 5-20; Акопян А., Албания-Алуанк, с. 124-145; Սվազյան Հ., Աղվանից կաթողիկոս Սանուկ Գրիգորիս, «Էջմիածին», 2003, N 2, էջ 39-46:

⁴ Տե՛ս ԱԿՕԲՅԱՆ Ա., Ալբանիա-Ալուանк, с. 137, տե՛ս նաև Հակոբյան Ար., Արևելյան Այսրկովկասում հայկական և իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (մի խմբի ձևավորման օրինակով), «Մերձավոր Արևելք», պր. Ա, Երևան, 2002, էջ 33:

Բուն Աղվանքում գրի, լուսավորության ու քրիստոնեության հետագա տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի կրթալուսավորական գործունեության հետ, որը Հայաստանում նորաստեղծ գրի ամրապնդումը և լուսավորական գործը հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո V դ. սկզբներին նույն առաքելությամբ անցել է Բուն Աղվանք և Եսվաղեն թագավորի, Երեմիա եպիսկոպոսի ու Բենիամին երեցի օգնությամբ տարածել իր ստեղծած աղվաներեն գիրը¹:

Հայկական քաղաքակրթական ոլորտում գտնվող Կուրի ձախափնյակի քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչության առկայության և Հայ Առաքելական Եկեղեցու քրիստոնեական ավանդույթների պահպանման վկայությունն են մատենադրական աղբյուրներում V դարից հիշատակվող Կապաղակի, Բաղասականի, Հաշուի, Յրիի, Բախաղատի և Շալիի եպիսկոպոսական թեմերը², որոնց հենքի վրա X դ. վերջերին XI դ. սկզբներին Աղուանից

¹ Կարյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 70; Ալինեան Ն., Ս. Մաշտոց վարդապետ. Կեանքն եւ գործունեութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 295-319; Աճառյան Հ., Հայոց գրերը: Խմբագրութեամբ՝ Է. Աղայանի, Երևան, 1984, էջ 213-220, 677-686; Абрамян А., Дешифровка надписей Кавказских армян, Ереван, 1964, с. 73; Յակոբեան Ա., Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղևորութեան ժամանակը եւ խնդիրները, – Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.), Զեկուցումների ժողովածո, Երեւան, 2006, էջ 122-131:

² Տե՛ս Կարյուն, էջ 70, 72, տե՛ս նաև Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Մարգսեանի, Երևան, 1991, էջ 340, տե՛ս նաև Մովսէս Կաղանկատացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 89, 122, 346:

կաթողիկոսության ենթակայությամբ կազմավորվել են Շամախիի (Շիրվանի) և Շաքիի հայոց թեմերը¹: Աղուանից կաթողիկոսությունը (XIV դարի վերջերից - XV դարի սկզբներից *Գանձասար* անվամբ)² Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքո համարվում էր նրա նվիրապետական աթոռներից մեկը, իսկ կաթողիկոսները ձեռնադրվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից³: Միմեռն Ա Երևանցի կաթողիկոսի վկայությամբ՝ «...զի յորքան ժամանակս Կաթողիկոսքն Հայոց նստեին յերկիրս Հայոց ի բնիկ և ի սեպհական յաթոռն Լուսավորչին, Կաթողիկոսքն Աղուանից միշտ ընդ ձեռամբ սոցին են լեալք, և հրամանաւ սոցին են ձեռնադրեցեալք»⁴: Ինչպես նշում է պ.գ.դ. Է. Դանիելյանը. «Հայ Առաքելական Եկեղեցու աւանդոյթների վրայ հիմնուած «Աղուանից» հայրապետութիւնը հայոց դաւանաբանութեան հետեւորդն էր: Հայկական ծագմամբ «Աղուանք» անուանումը, յետագայում եկեղեցական իմաստ

¹ Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, ՀՊՃՀ (տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2005, N 3, էջ 870-873:

² Տե՛ս Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, տե՛ս նաև Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 168:

³ Տե՛ս Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1911, էջ 162, տե՛ս նաև Ուլուքաբջան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 119, տե՛ս նաև Դանիելյան Է., Գանձասարի պատմութիւն, Երևան, 2005, էջ 47:

⁴ Ջամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնավց որպիսութեանց Մրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Միմեռնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 77:

ստանալով, հայկական աղբիւրներում սկսեց կիրառուել նաեւ Ար-
ցախ եւ Ուտիք նահանգների թեմերի առումով¹:

Այն, որ վաղ միջնադարից մինչն Հայոց թագավորության
անկումը (428 թ.) Աղվանից թագավորությունը որոշ ընդհատումնե-
րով գտնվում էր հայկական թագավորության քաղաքական և մշա-
կութային ազդեցության ներքո, խոսուն վկայությանն ենք հանդի-
պում Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում.
«Սկիզբն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրբ Լուսավորիչն Հա-
յոց... զսուրբն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածիս դիցուք զլուխ
զլուսստորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւա-
տակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք,
հայերէնախօսք յուրվք էին. թագաւորքն՝ հնազանդք՝ թագաւորացն
հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի
սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառու-
թեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին
լինել յիշատակ երկուց ազգացս»²: Հայր Ներսէս Ակինյանի դիտար-
կմամբ՝ «...Աղուանից աշխարհը ոչ միայն ... Մեծ Հայաստանի
հովանւոյն տակ ապրած էր եւ անոր մշակոյթով սնած, այլ եւ...
կրօնքով եղբայրացած... թէպէտ յետոյ քաղաքականապէս անկէ
բաժանուած, բայց եղած է... անոր հետ դաշնակից եւ
դրացիութեամբ»³:

¹ Դանիէեան Է., Գանձասարի վանքը, Երեւան, 2009, էջ 16-17:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 192:

³ Ակինեան Ն., նշվ. աշխ., էջ 315:

Վերադառնանք, սակայն, մեր բուն նյութին: Այսպես պատմագրական աղբյուրները փաստում են, որ Կուրի ձախափնյակի քաղաքակրթական զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է Մեծ Հայքի հյուսիս-արևելյան՝ Արցախ և Ուտիք նահանգներից: Արցախ աշխարհից հայոց ազդեցությունը Բուն Աղվանքի էթնոքաղաքական զարգացումներում ուժեղացավ հատկապես Վաչագան Բարեպաշտ թագավորի երկարատև ու արդյունավետ իշխանության (485-523 թթ.)¹ շրջանում, որն արքայաբար իշխեց «Արցախայ ամուր աշխարհին» և «ի Կամբէճս և յԱղուանս»²: Աղբյուրների հաղորդած տեղեկությունները վկայում են, որ Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ թագավորական ամառանոց Աղվենում V դարի վերջին կամ VI դարի սկզբին (ըստ Ա. Հակոբյանի՝ 515 թ.)³ հրավիրված եկեղեցական ժողովին Արցախի և Ուտիքի աշխարհիկ և հոգևոր առաջնորդներից բացի մասնակցում էին նաև Կուրի ձախափնյակի Կապաղակի և Յրիի եպիսկոպոսական թեմերի ներկայացուցիչները. «...Մանասէ՝ Կապաղակայ եպիսկոպոս... Շմաւոն՝ Յրոյ քորեպիսկոպոս...»⁴:

¹ Տե՛ս Յակոբեան Ա., Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVI, Երևան, 2008, էջ 72-88:

² Կաղանկատուացի, էջ 47, 50, տե՛ս նաև Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, 141-142, տե՛ս նաև Դանիելեան Է., Գանձասարի պատմություն, էջ 43:

³ Մանրամասն տե՛ս Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 178: Վաչագան Աղուանից արքայ, Մահմադարություն կանոնական եղևալ ի ժողովոյն, որ յԱղուենն եղև, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Անթիյիլաս, 2004, էջ 127-140:

⁴ Կաղանկատուացի, էջ 89-90:

Պատմական մի ավանդության համաձայն՝ Վաչագան Բարեպաշտը, երբ 500 թ. Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Բագավան գավառն իբրև օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ձմեռանոցն էր, իսկ Շամախին՝ ամառանոցը¹։ Հայր Սուրբիաս Էփրեկյանն այդ մասին գրում է. «Այս կրակոտ երկիրը, Քրիստոսի 500 թուին... Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմեռոցը Բագուն էր, իսկ ամառանոցը Շամախին»²։

Վաչագան Բարեպաշտը պատմության մեջ թողել է ազգանվեր ու եկեղեցասեր գործչի բարի համբավ։ Նրա հայրենասիրական և աստվածահաճո գործունեությունը գովեստով է ներկայացվում Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում. «Սա եղև դուտն լուսոյ աստուածագիտութեան և բազմազան բարեաց օրինակ երջանիկս այս»³։ Քանի որ Կաղանկատվացու երկը պարունակում է նաև Կուրի ձախսափնյակում Վաչագան թագավորի ունեցած ազդեցության և ծավալած գործունեության վերաբերյալ ձևավորված տեղեկություններ՝ «...կարգէր տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և երիցունս, և հայեցողս. և ի Կամբէճս և յԱղուանս գնոյն հրաման սաստից կարգեալ հաստատէր...»⁴, ապա դրանից կարելի է եզրակացնել, որ Վաչագան թագավորի՝ քրիստոնեության ամրապնդման նպատակով ծավալած եկեղեցաշէն գործունեությունը տարածվել է քնդհուպ մինչև Ապշերոնյան թերակղզի՝ արքունի

¹ Տե՛ս Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, կազմեց Առաքելեան Հ., Թիֆլիս, 1915, էջ 199։

² Էփրեկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 362։

³ Կաղանկատուացի, էջ 83։

⁴ Նույն տեղում, էջ 50։

ձմեռանոց¹: Այդ է վկայում նրա կողմից 500 թ. Բաքվի բերդի ներսի Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման փաստը²: Ավանդության համաձայն՝ «...Վաչագան բարեպաշտ թագաւորն... յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին և ուխտատեղին է սուրբ Աստուածածնայ եկեղեցին...»³: Հայկական եկեղեցու գոյությունն իսկ կարելի է գորեղ ապացույց համարել՝ վաղ միջնադարյան Բաքվում հայ համայնքի գոյության մասին: Արևելագետ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Բ. Միլլերը թաթերի, այդ թվում նաև հայ-թաթերի պատմությունն ուսումնասիրելու նպատակով 1928 թ. գիտական հետազոտություններ իրականացնելով Ապշերոնի թերակղզում, գրում է, որ այդտեղ «նախկին-

¹ Տե՛ս Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, գիրք Ա, էջ 362, տե՛ս նաև Հանրամատչելի հանրագիտական բառարան, հ. Ա, էջ 199:

² Եկեղեցին գտնվում էր քաղաքի հին թաղում, բերդի ստորոտում, «Կույսի աշտարակի» մերձակայքում՝ հայկական քարավանատան կից: Աղյբեջանում տարիներ ի վեր պետական մակարդակով իրականացված հայկական հուշարձանների ոչնչացման և հակահայկական քաղաքականության հետևանքով 1992 թ. եկեղեցին բարբարոսաբար պայթեցվել է աղբեջանական խումանի կողմից: Եվրոպացի լրագրող Թոմաս դե Վաալը վկայում է. «...հին քաղաքում՝ Կույս Մարիամ մատուռի տեղում, այսօր դատարկ ու ամայի տարածք է 1992 թվականին՝ Ղարաբաղյան պատերազմի ամենաթեժ ժամանակաշրջանում, Բաքվում աշխատած դիվանագետներից մեկի խոսքերով, ինքն ականատես է եղել, թե ինչպես էր գետնին հավասարեցվում մատուռը» (Թոմաս դե Վաալ, Մև Այգի: Հայաստանն ու Աղբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 155): Բաղված եկեղեցու տեղում կառուցվել է թեյարան (տե՛ս Մտեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ. 8, Երևան, 2007, էջ 153):

³ Մմբատեանց Ս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միս վանօրէից եւ ուխտատեղաց, եւս եւ քաղաքացւ եւ գիւղօրից, որք ի Շամախայ թեմի, Տփլիսի, 1896, էջ 373: Հմմ. Ֆիզիրական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի, կազմեց Աւետիք Տէր-Յակոբեան, Թիֆլիս, 1914 (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 98-99:

նում չդուրս գալու է ունեցել Քայսիդուն (Qaisidun) հին քաղաքը, որը հավանաբար եղել է հայկական»¹:

XVIII դ. վերջերին Կուրի ձախափնյակի տեղաբնակ հայության թիվը զգալի չափով ավելացավ Արցախից կատարված արտագաղթների հետևանքով: Իրանի Աղա Մուհամմադ շահի՝ 1795 և 1797 թթ. արշավանքների ու ավարառությունների հետևանքով, երբ լիովին քայքայվեց Արցախի տնտեսությունը, արշավանքների պատճառած չարիքներին միանում են նաև սովն ու համաճարակները: Հուսահատության եզրին հասած արցախահայերի մի մասը բռնեց գաղթի ճանապարհը՝ հանգրվանելով Շիրվանում, Վրաստանում և Ռուսաստանում²: Սկզբնաղբյուրներում Շիրվան տեղափոխված հայերի թիվը նշված է 8-12.000 ծուխ³: Մակար եպս. Բարխուտարյանցն անդրադառնալով Արցախից տեղի ունեցած գաղթին, ցավով գրել է. «Ցրուած եւ գերուած հայեր... միլիօնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած:... դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Զաւէ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շաքի եւ Շամախի, մի մասն

¹ Миллер В., Таты, и их расселение и говоры (материалы и вопросы), «Известия общества исследования и изучения Азербайджана», N 8, вып. VII, Баку, 1929, с. 13.

² Տե՛ս Լեւոն, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, Երևան, 1973, էջ 405, տե՛ս նաև Դաճճի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 291-292:

³ Տե՛ս Լեւոն, Հայոց պատմություն, հ. Դ, Երևան, 1984, էջ 252, տե՛ս նաև Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242:

Կախեթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա»¹: Այս դեպքերն իրենց արձագանքն են գտել նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Հովսեփյանց) «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկում, ուր հեղինակը գրում է. «Երեք տարի Ղարաբաղում երկնային ու երկրային աղետի՝ [երաշտի] հետևանքով անբերրիություն ու սով էր: Այնտեղի բնակչության մեծ մասը իր օրվա հացն ապահովելու համար ցրվել էր Շաքիի, Շիրվանի, Ղարադաղի և [հարևան] մյուս երկրները»²: Հաստատվելով Շիրվանում, արցախահայերը համալրել են հնաբնակ հայերի թիվը՝ երկրամասում հետզհետե կազմավորելով սովոր բնակչությամբ հայաբնակ գոտի: Եսայի Հասան-Ջալալյանցը հավաստում է. «Եւ երկիրն էր (իմա՝ Շիրվանը - Գ. Ս.) բարելի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղակայսն. և թէ այլ ազգօք...»³:

Զգալի թվով հայ բնակչություն էր կենտրոնացված Շաքի (Նուխի) և Շամախի քաղաքներում ու շրջակա հայկական գյուղերում: Հայկական հոծ ներկայությունն այդ տարածքում այնքան որոշակի էր, որ XIX դարասկզբին երկրամասում շրջագայած Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին Շիրվանից մինչև Դերբենդ ու Կասպից ծով ձգվող տարածքը համարել է Հայաստան. «...Դար-

¹ Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ Ը:

² Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Զ. Կոստիկյանի, Երևան, 2000, էջ 73:

³ Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմություն համառոտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 26:

բանոյ քաղաք է ի Հայաստան ի եզրը Կասպի ծովու... Շիրուսն է լայնատարած աշխարհ մի ի մայրաքաղաքացն Հայոց և ունի բազում գեղօրեաքս... Յելլից վերկալով առ Շաքի. սայ ևս է ի ի ներքոյ լեառն Կովկասայ, որ գոյ ի մէջ Հայաստան աշխարհումն...»¹: Հատկանշական է, որ 1828 թվականին, երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած ծրագրով հայկական թագավորության սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ մարգեր,- ասված էր ծրագրում,- ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարգերը՝ Էջմիածնի նախագահ վանքով, կազմում են Հայաստանի վաղեմի թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»²:

Շիրվանում հաստատված արցախահայերն իրենց համար բնակության նոր վայրեր ընտրեցին նախկինում հայաբնակ և այժմ դատարկված կամ մասամբ բնակեցված գյուղերը, որտեղ, գրեթե առանց բացառության, պահպանվել էին բնիկ հայերից մնացած բազմաթիվ եկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: Գյուղերի մի մասը վերականգնվեց նույն տեղում և շատ դեպքերում նույն անվան տակ շարունակեց պահպանել իր գոյությունը³: Արցախահայերը Շաքի-Շիրվան գոտում հիմնադրեցին շուրջ հարյուր գյուղ⁴: Երախ-

¹ Տե՛ր Բաղդասար Գասպարյան **Շուշեցի**, Ծաղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Զորայան, ԲՄ, Երևան, 1969, N 9, էջ 292-294:

² Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայրենական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 308:

³ Տե՛ս Գարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 4:

⁴ Տե՛ս Գարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 12:

տաշատ գիտնական Մակար եպս. Բարխուտարյանցը 1890 թ. կեսերին ճանապարհորդելով Կուրի ձախափնյակում, իր այցելած յուրաքանչյուր բնակավայրի համար նշում է այն վայրերը, որտեղից եկել ու այդտեղ են հանգրվանել արցախահայերը¹: Վերաբնակիչները հիմնականում Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա և Դիզակ գավառներից էին²:

Արցախցիներն իրենց գործիմացության և անսպառ եռանդի շնորհիվ էապես նպաստում են երկրամասի զարգացմանը՝ առևտրատնտեսական ու կրթամշակութային կյանքի բարգավաճմանը: Նրանց ջանքերով նորահիմն գյուղերում հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցվեցին կամ վերա-

¹ Ինչպես, օրինակ, Շամախու գավառի Բիլիստան գյուղում հաստատվել են Վարանդա գավառից, Դարա-Քարքանջում՝ Օամձոր, Տոր, Թաղլար և Ճարտար գյուղերից, Դվարիշենում և Թալիշում՝ Դիզակ և Վարանդա գավառներից, Ղաջարում՝ Վարանդայից, Միրիշենում՝ Միրիշեն, Հաղրուք և Շոշ գյուղերից, Նորշենում՝ Վարանդայից, Փախրաբուշում՝ Տոլ և Օամձոր գյուղերից, Քոհլուձում՝ Վարանդա գավառի Ավետարանց, Ծովատեղ, Մամնա և Հարար գյուղերից: Գյոթչայի գավառում հաստատվել են՝ Ագայիշեն գյուղում՝ Խաչեն, Ջրաբերդ և Վարանդա գավառներից, Աղբուլաղում՝ Շոշ, Ավետարանց, Հաղրուք և Զանգեզուր գավառի Խնձորեսկ գյուղերից, Ավանաշենում՝ Դիզակի, Վարանդայի գավառներից և Խաչենի Դաշբուլաղ գյուղից, Գանձակում՝ Դիզակ և Վարանդա գավառների՝ Հաղրուք, Թաղլար, Ճարտար և այլ գյուղերից, Գիրքում՝ Տոլ, Գիշի, Թաղավարդ և Թաղլար գյուղերից, Դայմաղաղում՝ Մուշկալատ գյուղից, Թուրիշենում՝ Դիզակ, Վարանդա և Ջրաբերդ գավառներից, Ղալակայում՝ Խաչեն և Ջրաբերդ գավառներից, Շուքուրչիում՝ Խաչեն գավառի Բալուջա, Դաշբուլաղ, Խանձք և Ղշլաղ գյուղերից, Ռուշանաշենում՝ Խաչեն և Վարանդա գավառների Խանձք և Գիշի գյուղերից, Վանքում՝ Վարանդա գավառի Աշան, Նինկի, Ճարտար, և Խաչեն գավառի Վանք գյուղերից ու Ջրաբերդ գավառից, Քեշխուրդում՝ Դիզակ և Վարանդա գավառների Հաղրուք, Տոլ, Թաղլար, Ճարտար, Ավետարանց և Շոշ գյուղերից: Նուխիի գավառի Սոկուրթլու գյուղում հաստատվել են Խաչեն գավառից և այլն (տե՛ս Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և նորացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 177-207):

² Տե՛ս նույն տեղում, էջ 89-134:

կանգնվեցին եկեղեցիներ, մատուռներ, բացվեցին եկեղեցական-
ծխական դպրոցներ և այլն:

Արցախահայերը էական փոփոխություններ առաջացրին
երկրամասի հայաբնակ գոտու ազգագրական պատկերում: Ինչ-
պես, օրինակ, տեղայնացվեցին արցախյան գորգագործական
մշակույթի ավանդույթները¹: Արցախցիների հաստատումից հե-
տո Շիրվանում աստիճանաբար սկսում է գերակշռել Արցախի
բարբառը: Ըստ Մակար եպս. Բաբխուսարյանցի՝ «Բնիկ Շամա-
խեցւոց բարբառն թէն տարբեր է Արցախի բարբառից, այսուամե-
նայնիւ հետզհետէ առաջինն տեղի է տալիս երկրորդին»²: Իր
ուղեգրական նոթերում Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին
անդրադառնալով շիրվանահայերի խոսակցական լեզվին, գրում
է. «...բառով գոեիքօրէն խօսին որպէս Ղարաբաղցիք...»³: Մեծա-
նուն լեզվաբան Հր. Աճառյանը եզրահանգել է, որ Շամախի հայե-
րի բարբառը կազմում է Արցախի բարբառի մի ենթաբարբառը⁴:
Ար. Ղարիբյանը լեզվաբանական քննությամբ նույնպես ցույց է
տվել, որ արցախ-ղարաբաղյան բարբառով «...խոսում են Ղարա-
բաղի բնակչությունը և բոլոր այն ղարաբաղցիները, որոնք
գտնվում են Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Շամախու շրջա-

¹ Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Պողոսյան Ա., Արցախյան գորգագոր-
ծության մշակույթի ավանդույթները Հյուսիս-արևելյան Այսրկովկասում, Գա-
վառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու, հ. 14,
Երևան, 2012, էջ 240-249:

² Բաբխուսարեանց Մ., Աղունից երկիր եւ դրացիք, էջ 295:

³ Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, էջ 293:

⁴ Աճառեան Հր., Հայ բարբառագիտութիւն. - Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ
բարբառների (բարբառագիտական քարտեզով), Էմինեան ազգագրական ժողո-
վածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 76:

նում...»¹: Ինչ վերաբերում է Բաքու քաղաքի հայ բնակչության խոսակցական լեզվին, նրանց բառապաշարում առկա է եղել այստեղ հաստատված արցախցիների, զանգեզուրցիների, շամախեցիների և այլ տեղավայրերի հայության լեզվաբարբառային շերտերի ձուլման գործընթացը²: Իսկ Նուխի և Արեշի գավառների հայ բնակչությունը հիմնականում խոսել է Արեշ-Հավարիկի բարբառով³:

Արցախահայերի մի մասը հաստատվեց նաև Շիրվանի կենտրոն Շամախի քաղաքում, որտեղ տակավին վաղ ժամանակներից կենտրոնացած էր Կուրի ձախափնյակի հայության մի զգալի մասը: Քաղաքը համարվել է շիրվանահայության կյրական, մշակութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը⁴: Անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ջենքինսոնը 1563 թ. ապրիլի 10-ին՝ Շամախիում եղած ժամանակ, թողել է հետևյալ ուշագրավ գրառումը. «...այս քաղաքը (Շամախին - Գ. Ս.)... բնակեցված զլիսավորապես հայե-

¹ Տե՛ս Դարիբյան Ար., Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն և լեզվաբանություն), Երևան, 1953, էջ 230: Հարցի հանգամանալից բնությունը տե՛ս Դարիբյան Ար., նշվ. աշխ., էջ 260-262, տե՛ս նաև Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հ. IV, Բ գիրք, Երևան, 1961, էջ 60, 64-66, 178, 187-188, 192, 210, 287, Բաղդամյան Ռ., նշվ. աշխ.:

² Տե՛ս Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմողներ Ա. Ղազիյան, Ս. Վաղդանյան, Երևան, 2004, էջ 16:

³ Տե՛ս Տեր-Պողոսեան Գր., Հավարիկի բարբառը, ԲՀԳԻ, Էջմիածին, 1921-1922, գիրք Ա. եւ Բ., էջ 160-175, տե՛ս նաև Լուսենց Ա., Արեշի բարբառը, Երևան, 1982:

⁴ Շամախի քաղաքի հայության պատմության մանրամասն բնությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը), «Վեմ», Երևան, 2009, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 3, էջ 74-95, տե՛ս նաև Նույնի՝ Շամախի քաղաքի հայերի պատմությունից (դասախոսության տեքստ), Երևան, 2013:

րից...»¹: Քաղաքի ազգաբնակչության թվակազմի վերաբերյալ ուշագրավ հիշատակություն է թողել նաև 1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի միսիոներ Ֆիլիպ Ալբիլը: Ըստ նրա՝ 50-60 հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թվից, որ կարելի է հասցնել 30 000-ի, կան նաև հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ... և բազմաթիվ այլ ժողովուրդներ...»²:

Մատենագրական և ձեռագրական աղբյուրները փաստում են, որ միջնադարում Շամախին եղել է երկրամասի հարուստ գրչօջախներից մեկը³: Մշակութային այդ գործունեությունն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա ժամանակներում, որում իրենց մեծ նպաստն են բերել նաև արցախահայերը⁴: Ձեռնամուկ լինելով գրատպության գործին, 1849 թ. բանաստեղծ Մովսես Զոհրապյանց Արցախեցին⁵, Մարգար Ղուկիյանցը և Մինաս Տարղիլիջյանցը Շամախիում հիմնադրում են տպարան, ուր նույն թվականին տպագրվում է շուրջ 265 էջանոց «Գիրք

¹ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, Աղբյուրներ Հայաստանի եւ Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1932, էջ 372:

² Philippe Avril, Voyage en divers etats d'Europe et d'Asie. Paris, MDCXCII (1692), p. 114.

³ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Եզանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաքյան Փ., խմբ.՝ Խաչիկյան Լ., Մնացականյանի Ա., հ. Բ, Երևան, 1970, էջ 728, 765:

⁴ Տե՛ս Ստեփանյան Գ., Շամախի և Բաքու քաղաքների հայկական տպագրության պատմությունից, Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 93-105:

⁵ Մ. Զոհրապյանցն ավարտել էր Շուշիի գավառական դպրոցը և վարչական աշխատանք էր կատարում Այսրկովկասի գանսզան քաղաքներում: Թղթակցել է «Կովկաս» շաբաթաթերթին, ուր տպագրվել են մեծ մասամբ գրաբարով գրված նրա խոհական, հայրենասիրական և սիրային բանաստեղծությունները: Նրա թարգմանությամբ տպագրվել են նաև Վ. Կապիխտի, Շատրոլի, Ն. Կարամզևի, Ի. Բոգդանովիչի բանաստեղծությունները (տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դդ., հ. Ա, Գահիրե, 2006, էջ 427-428):

Սաղմոսաց Դաւթի» աշխատանքը, որի հիշատակարանում աված է. «Ի հայրապետութեան տեառն Ներսէսի Ե. կաթողիկոսի Ամենայն հայոց և զանազան նշանաց ասպետի. Հրամանաւ վիճակային Հայոց Կոնսիստորիային Շիրվանու. Շամախի, ի տալարանի երից ընկերացն՝ Սովսիսի Զոհրապեանց, Մարգարէի Ղուլիեանց և Մինասի Տարդիլիջեանց»¹: Ընդամին Շամախին համարվում էր հայկական մշակույթի կենտրոններից մեկը, հայերի՝ քաղաքաշինության ժամանակակից պահանջներին համապատասխան կառուցված երկհարկ և եռահարկ տներով:

Մեծ է եղել հատկապէս արցախահայերի դերը Շամախիի առևտրաարդյունաբերական հարաբերություններում: Արցախցի առևտրականները զբաղվում էին մեծածավալ առևտրով և կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ, իրենց ձեռքին կենտրոնացնելով տարանցիկ առևտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ռուսաստանից, Իրանից, Եվրոպայից մինչև Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներ: Ուստի պատահական չէ ուրիշ հեղինակ Պ. Չերեպանովի այն վկայակոչումը, որ Շամախիի գրեթե ամբողջ կապիտալը գտնվում էր հայերի ձեռքին²: Շամախիի տնտեսական կյանքում մեծ դերակատարություն ունէր հատկապէս շերամապահությունն ու մետաքսագործությունը: Ուստի արցախահայերը ներգրավվեցին նաև այդ ոլորտում³:

¹ Անսայան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 427-428:

² Ст. и Черпановъ П., Статистическое описание Шемахинской губернии. Шемаха, КК на 1852 г., Тифлис, 1851, с. 428.

³ Ст. и Сутеխаньян Г., Шамашахские джери Арменьян Այսրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում (Հայաստանի քաղաքակրթական ավանդը

Առանձնապես մեծ է եղել Ապշերոնի թերակղզում, մասնավորապես Բաքվում հաստատված արցախահայերի դերը մինչև XIX դարի կեսերը խիստ հետամնաց այդ բնակավայրի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքի վերելքն ապահովելու գործում: Հարկ է նշել, որ Ապշերոնի թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ հատկապես կարևոր տեղ է գրավում Բաքու քաղաքը: Դեռևս 1684թ. հունվարին Բաքվում հանգրվանած գերմանացի բժիշկ, ճանապարհորդ Էնգելբերտ Կեմպֆերը տեղեկություններ է հայտնում քաղաքի ամրոցի գլխավոր մուտքի՝ «Շամախյան» դարպասների մոտ գտնվող հայկական ութանկյուն քարավանատան մասին: Ըստ Կեմպֆերի՝ «Հասարակական շենքերից ամենաներկայանալին սրբատաշ քարով կառուցված ութանկյուն սյունազարդ քարավանատունն է կամ հյուրանոցը, որը ներսում ունի շրջանաձև սրահ»¹: Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպս. Աշտարակեցու՝ 1822 թ. հունվարին կազմած ցուցակագրության համաձայն՝ Բաքվում հայերն ունեին 49 ծուխ, 1 եկեղեցի և 5 հոգևորական²:

Բաքու քաղաքի աստիճանական զարգացման և քաղաքային բնակչության աճի արդյունքում նկատելի է դառնում նաև հայ բնակչության թվի անընդհատ աճը: Հայերի, մասնավորապես արցախցիների թիվը Բաքվում առանձնապես աճեց XIX

¹Մետաքսի ճանապարհի պատմության մեջ: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, 21-23 նոյեմբեր, էջ 198-218:

¹Kempfer E., Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum Fasciculi, Lemgoviae, 1712, p. 267.

²Տե՛ս Գեղամեան Ե., Պատմական քաղուածքներ, «Հովիտ», Թիֆլիզ, 1910, օգոստոսի 16, N 16, էջ 249:

դարի 70-80-ական թվականների և XX դարի սահմանագլխին՝ նավթային վերելքի շրջանում՝ ի հաշիվ Հայաստանի տարբեր վայրերից տեղափոխվածների¹: 1897 թ. հունվարի 28-ի (հին տոմարով) համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով (ներառյալ արդյունագործական գործարանային շրջանները)՝ Բաքուն ուներ 45.402 հայ բնակիչ²: Հայ ընտանիքների մեծամասնությունն ապրում էր հին քաղաքի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող Բերդաթաղում, Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքում:

Արցախից Բաքու պանդխտության մեկնող երիտասարդությունը հիմնականում Վարանդայի գավառից էր: Ե. Լալայանը գյուղում է. «Պանդխտությունը, որ սաստիկ տարածված է գավառիս (Վարանդայի - Գ. Ս.) բնակչության մեջ: Գլխավորապես պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրոպոլսկ և Անդրկասպյան երկրները: Վարանդացուն սովապին նոր ծանոթ այդ երկրները, մանավանդ Բաքուն՝ յուր նավթահորերով, գրավել և գերել է»³:

Տարածամանակյա փաստերը վկայում են, որ Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել հատկապես արցախահայերը⁴: Առևտրական կապերով կապված լինելով Եվրոպայի և Ռուսաստանի

¹ «Տարագ», Թիֆլիս, 1891, մարտի 31, N 12, էջ 178:

² Տե՛ս Ա. Կարապետ Խաչիկյան, Նամակներ խմբագրութեան (I), «Արձագանք», Թիֆլիս, 1897, հոկտեմբերի 31, N 126, տե՛ս նաև Stepanyan G., Armenians of Baku province in the second half of the the 19th century (historical-demographic study), Yerevan, 2013, p. 214.

³ Լալայան Ե., Երկեր, հ. 2, Արցախ, Երևան, 1988, էջ 136:

⁴ Տե՛ս Микаелян В., Мирзоян С., Участия армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX-первые десятилетия XX вв.), ЛՀԳ, Երևան, 1990, N 2, էջ 74-81:

հետ՝ արցախցի առևտրաարդյունաբերողները առաջիններից էին, որ կանխագգացին նավթի նշանակությունը և սկսեցին զբաղվել ու զարգացնել նրա արդյունաբերությամբ: Նրանց հիմնած հայանուն ընկերությունները («Արարատ», «Արցախ», «Արամագո», «Սյունիք», «Որոտան», «Մասիս», «Աստղիկ» «Վարանդա» և այլն) մեծ դեր են խաղացել Ապշերոնի նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման, ինչպես նաև Բաքվում ֆինանսավարկային և բանկային համակարգերի կազմավորման գործում¹:

Նավթարդյունաբերության ոլորտում արցախցի թերևս առաջին նախաձեռնողներից էր հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչ Պետրոս Մանչեյանը, որը կառավարության հետ 1810 թ. ստորագրած համաձայնագրով կապալով շահագործում էր Ղուբայի նավթահորերն ու ծովային ձկնորսարանները²: Արցախցիներ էին խոշոր նավթահանքերի տերեր, եղբայրներ Առաֆեյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Մուսայել Շահգեղանյանը, Դավիթ Ավան-Յուզբաշյանը, Սամվել Բաղիրյանը, Հարություն (Արտեմ) Մաղաթյանը, Միքայել Արամյանը և շատ ուրիշներ³: Այս առումով ուշագրավ է «Տարագ» ամսագրի վկայակոչած հետևյալ տեղեկությունը. «Գաղտնիք չէ, որ Բազի

¹ Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

² Տե՛ս **Ալիբեյան Վ.**, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 117:

³ Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Արցախահայության դերը Բաքվի առևտրաարդյունաբերության զարգացման գործում. XIX դ.-XX դարասկիզբ, Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ I, Ստեփանակերտ, 2009, էջ 262-266:

հայ հարուստները մի աննշան բացառությամբ, բոլորը դարաբաղցիներ են: Սրանք գաղթելով Բագու՝ իրանց բնածին ընդունակությամբ եւ տոկոսնությամբ մի երեսուն-քառասուն տարւայ ընթացքում շինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն»¹:

1868 թ. նավթարդյունաբերության բնագավառում որոշ քայլեր է ձեռնարկում նաև Բաքվում հաստատված շուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Լազարյանը², որին ռուսական կառավարությունը հատկացրել էր մի փոքրիկ նավթադաշտ: Սակայն հատկացված հողակտորը գրեթե նավթաբեր չէր: Գրականագետ, հրապարակախոս Տիգրան Լազարյանն իր քեռու՝ բաքվաբնակ շուշեցի մեծահարուստ բարեգործ Համբարձում Հախումյանի և Լազարյանի երկխոսությունից վկայում է հետևյալը. «Յիշեցի մեծ դայուս պատմածը՝ որ գեներալ Յովհ. Լազարն էր արել նրան ռուս-տաճկ. Պատերազմին՝ «Այ, Համբարձում աղա, ասում է հայրենասէր դարաբաղցի գեներալ Լազրնը իր նման հայրենասէր հսկայ քեռուս (Համբ. Հախումյանին), Շամիլին բռնելուց եննան, ինձ էլ անպէտք համարեց ռուս թագաւորը: Մի պատառ նօթի հող էր տւել Բագոււմ, էն էլ օգուտ չէր բերում, նօթ չէր դուս գալիս: Սաղ օրը մալուխուլիի մէջ

¹ «Տարագ», Թիֆլիս, 1892, N 25, էջ 350:

² Լազարյանների գերդաստանը սերում էր Քաշաթաղի մելիքական տոհմից (տե՛ս Ղազիյան Ա., Լազարյանների գինկորական փառքը, ԲՀԱ, Երևան, 1991, N 3, էջ 218-225):

ծովին դըրադալը բոլթա՝ տալա ի օրըս մթնընում»²: Հովի. Լազարյանը Բաքվում հիմնականում զբաղվել է բարեգործությամբ՝ պարբերաբար նվիրատվություններ կազմակերպելով «Բաքվի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձության» համար³:

Տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում հայ առևտրաարդյունաբերողներից շատերը Բաքվում հիմնել են գործարաններ, ֆաբրիկաներ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Եթե 1889 թ. Բաքվում գրանցված 69 նավթարդյունաբերական ընկերություններից հայկական էր 34-ը, ապա՝ 1907 թ. 154-ից՝ 89-ը (58 %), 1909 թ. 176-ից՝ 99-ը (56 %): 1907 թ. դրությամբ 448 միլիոն փութ նավթի հանույթի 52,4 %-ը պատկանում էր հայերին, 36,9 %-ը՝ ռուսներին և եվրոպացիներին, իսկ 8,7 %-ը՝ կովկասյան ժողովուրդներին: Արդեն 1917 թ. 368 միլիոն փութ նավթի հանույթի 53 %-ը պատկանում էր հայ ձեռնարկատերերին⁴:

Բաքվի նավթադաշտերի հայ խոշոր սեփականատերերի շրջանում հատկապես առանձնանում են շուշեցի Պողոս, Հակոբ, Աբրահամ և Արշակ Ղուկասյան եղբայրները: Նավթի արդյունաբերության մեջ Պողոս Ղուկասյանի ձեռնարկած արդյունավետ գործունեության շնորհիվ նրա համբավը Կովկասի վաճառականության շրջանակներից լայն տարածում գտավ նաև Ռուսաստանում և այլուր՝ դառնա-

¹ Բոլթա տալ - զբոսնել, ման գալ (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Կ. Երևան, 2008, էջ 99):

² Ե. Չարեկցի անվան զրականության և արվեստի թանգարան, Տ. Նազարյանի ֆոնդ, գ. 233, տ. 4, թ. 19:

³ Պատմության Բազումայ հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձության (1872 թ. ապրիլի 1-ից մինչև 1893 թ. ապրիլի 1-ը): Կազմեց Ա. Գալտեանց, Բազում, 1895, էջ 4-5, 59:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 30-31, տե՛ս նաև *Михаелян В., Мирзоян С., Участие армян в экономической жизни Восточного Закавказья*, էջ 77:

լով համառուսաստանյան չափանիշներով նավթարդյունաբերող առաջին հայր: 1891 թ. Պոդոս Դուկասյանը նախագահում է «Բաքվի նավթարդյունաբերողների միությունը», այդ պաշտոնը 1896 թ. մինչև իր մահը՝ 1917 թ., ղեկավարում է նրա կրտսեր եղբայրը՝ Արշակը¹:

Բաքվում արցախցի առևտրաարդյունաբերողները նավթի վերամշակման և արդյունաբերական այլ գործարաններ ունենալուց զատ, ունեցել են նաև նավամատույցներ և սեփական շոգենավեր: Շոգենավերի տերեր էին Դուկասյան եղբայրները և Գ. Թումայանը: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև արցախցի առևտրաարդյունաբերողների և հայկական այլ ընկերությունների «Հայաստան», «Արցախ», «Արմենիա», «Մասիս», «Արարատ», «Արաքս», «Անի», «Սևան», «Շուշանիկ», «Բաֆֆի», «Վան», «Մուշ» և հայանուն այլ մարդատար ու ապրանքատար շոգենավերն ու առագաստանավերը²:

Այսպիսով՝ ակներև է, որ ներկայիս Ադրբեջանի արդյունաբերության մի շարք բնագավառների, մասնավորապես գլխավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության զարգացման հիմքում ընկած են հատկապես հայ առևտրաարդյունաբերողների և մասնավորապես արցախցիների երկար տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ ձեռք բերված արդյունաբերական միջոցները:

Անհրաժեշտ է նշել, որ Բաքվի հայ դրամատերերը, նրանց թվում նաև արցախցիները, Բաքվից բացի, վիթխարի կարողությո-

¹ Տե՛ս Մարտիաս Ա., Ադրբեջանյան Մանքաշեանց. Մեծ վաճառականն էր բարեգործը: Յիշողություններ իր մահուան 20 ամեակի առթիւ, Վիեննա, 1931, էջ 46-47:

² Տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից: Օովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում: «Այսու» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 39-44:

ստեղծված բարեգործական ընկերություններին և այլն: Բարեգործության իր մասշտաբներով հատկապես աչքի էին ընկնում Կրասնիկյանց և Ղուկասյան եղբայրները, որոնք իրենց կուտակած մեծ կարողությունից բավական գումարներ են ծախսել այդ նպատակներով: Հատկանշական է, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման հենց առաջին տարիներին Բաքվի հայ մեծահարուստները մեծագումար նվիրատվություններ արեցին՝ գիտական և լուսավորական հաստատություններ բացելու համար: Ինչպես օրինակ՝ Արշակ Ղուկասյանը 5.000.000 ռ. կտակեց հայկական համալսարանի հիմնարկման համար¹:

Այսպիսով՝ հսկայական էր Բաքվի հնաբնակ հայության, մասնավորապես՝ արցախցիների դերը Շիրվանի և Ապշերոնի քաղաքակրթական գործընթացներում: Այն կասեցվեց 1918 թ. սեպտեմբերի 15-ին, երբ Նուրի փաշայի զլխավորությամբ թուրքական բանակը հայկական զորքի մղած աներևակայելի քաջագործություններով առլեցուն հերոսական կռիւներից հետո գրավեց Բաքուն և մուսավաթական կառավարության աջակցությամբ, հանձին ներքին գործոց նախարար Բեհբուդ-խան Ջիվանշիրի, տեղի թաթարական ջոկատների հետ միասին երեք օր շարունակ (15-17-ը) կոտորածի ենթարկում ավելի քան 30.000 հայերի՝ կողոպտելով նրանց ունեցվածքը²:

¹ Տե՛ս Աւետիք Ղուկասեանի կտակին շուրջ, «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913, 9/22 փետրուար, N 1154, տե՛ս նաև **Խաչատուրեան Յակ.**, Երեք ամիս ի Կովկաս, Թեղդիկ, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, էջ 200:

² Մանրամասն տե՛ս **Իշխանեան Բ.**, Բազուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920; ՀԱՍ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99; **Геноцид армян в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна**, Ереван, 1982, с. 524 ; **Ստեփանյան Գ.**, Բաքվի հայերի 1918

Հայերի ցեղասպանության քաղաքականությունը Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ, ինչպես նաև Բաքվի նահանգի հայահոծ Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառներում շարունակվեց նաև Ադրբեջանական Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28)¹։ Ավերվեցին և ոչնչացվեցին նաև հազարամյակներով ստեղծված հայկական բազմաթիվ խաչքարեր, մատուռներ ու եկեղեցիներ, այսինքն՝ հայ բնակչության նկատմամբ թուրք-մուսավաթականները իրագործել են նաև մշակութային եղեռն։

Այսպիսով՝ ինչպես ակներև է ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ., անառարկելիորեն փաստում են, որ կատարվածը ցեղասպանություն էր։ Հատկանշական է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում։ Ուստի, թուրք-մուսավաթականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղա-

թ. կոտորածները և թուրք-ադրբեջանական իշխանությունների պատասխանատվությունը (Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը ԼՂՀ-ի դեմ (2010 թ. մարտի 21-24-ը Մտեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային զիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ), «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք, Շուշի, 2010, N 4, էջ 223-237)։

¹ Տե՛ս Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմա-գրության հարցեր, հ. 5, Երևան, 2002, էջ 23-28, տե՛ս նաև Լույսի՝ Հայերի - կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., ՊԲՀ, Երևան, 2008, N 3, էջ 31-48։

սպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

Հայ բնակչության նկատմամբ մուսավաթական կառավարության իրականացրած հայահալած հանցավոր քաղաքականությունը շարունակվեց նաև Խորհրդային իշխանության տարիներին: Ադրբեջանում հայ բնակչությանն իրավագրելու և հալածելու քաղաքականությանը հաջորդեցին Սումգայիթում և Բաքվում հայերի դեմ 1988 թ. փետրվարին և 1990 թ. հունվարին կազմակերպված ջարդերը¹: Հայերի ցեղասպանությանը հետևեց Ադրբեջանից ավելի քան 361.000 հայերի վերջին հատվածի բռնազաղթը², որով ավարտվեց Արևելյան Այսրկովկասի հայության մաքառումներով և հերոսապատումներով լի պատմությունը:

¹ Сумгаит... Геноцид... Гласность?. Составили Г. Улубабян, С. Золян, А. Аршакян, Ереван, 1990; Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը (սլաշտոնական փաստաթղթեր, ականատեսների վկայություններ և այլ նյութեր 1990 թ. հունվարի 13-19-ի ողբերգական իրադարձությունների վերաբերյալ՝ անհրաժեշտ մեկնաբանություններով), Երևան, 1992:

² Տե՛ս Խոջաբեկյան Վ., Ցեղասպանությունը և հայաթափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թթ.), ՊԲՀ, Երևան, 2005, N 1, էջ 40:

CIVILIZATIONAL CONTRIBUTION OF THE ARTSAKH ARMENIANS TO THE DEVELOPMENT OF SHIRVAN AND APSHERON (A SHORT REVIEW)

(Summary)

GEVORG STEPANYAN

Since ancient times Armenia maintained a close relationship with Caucasian Albania sharing a common border along the river Kur. There is historical evidence that since ancient times the multi-ethnic population of the region comprised an Armenian ethnic element which played a unique role in the cultural and political development of the region. Historical sources also testify that Armenian influence on the civilizational developments of the left bank of the Kura mostly spread from Great Armenia's north-eastern provinces Artsakh and Utik. The given program had to be realized on the account of Armenian massacre. On September 15, 1918 Turkish army capturing Baku with the bands of Musavat, during 3 days massacred 30 thousand Armenians. The criminal politics of physical abolishment or the forcible expulsion of Armenians continued during the whole period of Musavat Azerbaijan's existence (1918-1920), in the result of which there were thousands of Armenian victims. During 1918-1920 in Geokcha and Shamakhi districts the considerable part of Armenian population was slaughtered, Muslimized and ousted. The historical monuments which were created during millenniums were abolished and destroyed. The policy of Turkey and Azerbaijan in the province of Baku in 1918-1920 must be viewed as the continuation of Western Armenians' Genocide in 1915-1916, because Armenian Genocide as a political question, both geographically (from Baku, Nukhi, Aresh, Karabagh to Kilikia) and in the historical sense is the result of pan-Turkic entire plan.

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

ՄՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Բ.Գ.Պ.

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

Հովհաննես Թումանյանը իր պատմաբանասիրական աշխատություններում անդրադառնում է դարեր ի վեր հայության շարունակական գաղթի պատմական պատճառներին ու հանգամանքներին: Գրողի մասնավորապես «Երևանի առումը և հայոց պատմությունը» անավարտ ուսումնասիրությունը պատմագիտության, քաղաքագիտության և գրականագիտության միաձուլման հետաքրքիր օրինակ է: Բանաստեղծն օգտագործել է գրականության վիթխարի քանակ՝ սկսած 5-րդ դարի պատմիչներից մինչև Դրասխանակերտցի և Ասողիկ, Լաստիվերտցի, Ուռհայեցի, Դավրիժեցի, Չամչյան: Հայկական սկզբնաղբյուրներից ավելի Թումանյանի հետազոտության զլխավոր փաստագրական հիմքն ու ակունքը եղել են Կովկասի ռուսական նվաճման և Արևելյան Հայաստանի՝ պարսից լծից ազատագրման պատմությունը ներկայացնող բազմաթիվ ռուսական հրատարակություններ¹: Նկատի ունենալով հայ ժողովրդի զանգվածային գաղթերի պատ-

¹ Այդ հարյուրավոր գրքերից են «Кавказский сборник» բազմահատոր մատենաշարի բոլոր հատորների նյութերը, Ե. Լաչինավի և Կովկասյան արշավանքների այլ մասնակիցների հուշերը, Վ. Պետտոյի «Կովկասյան պատերազմը», «Ռուսական տիրապետության հաստատումը Կովկասում», Պ. Բուսուկովի «Նյութեր Կովկասի նոր պատմության համար», «Մարդկության պատմություն» գրքի համապատասխան գլուխները, Մ. Ե. Կոցեբուի «Պարսիկների ներխուժումը Վրաստան 1826թ.» և բազմաթիվ այլ պատմագիտական հետազոտություններ:

մությունը՝ Թումանյանը գրում է. «Շատ քիչ ազգեր են ունեցել էն դաժան ճակատագիրը, որն ունեցել է հայ ժողովուրդը: Նրա պատմության բոլոր էջերն ու շրջանները եղել են անընդհատ հալածանքների ու կոտորածների արյունոտ հանդես: Եվ զարհուրելին էն է, որ էդ ճակատագրի պատճառները պատահական չեն ու վաղանցուկ, այլ մեծ մասամբ մշտական, օրենքների նման. ուստի դրանց հետևանքներն էլ մնում են ու գալիս են անվերջ»¹: Իսկ հետևանքը գրեթե միշտ եղել է գաղթը: Եվ քանի որ հեղինակը բանաստեղծ է, նրա հետազոտության մեջ կոտ տրամաբանությունը ձուլվում է զգացմունքայնությանը: Գրողի պատմաբանական վերլուծությունները հաճախ են զուգորդվում բանաստեղծական պատկերավոր խոսքով: Հեղինակը ընթերցողի ուշադրությունը սևեռում է այն մակդիրների ու փոխաբերությունների վրա, որոնցով տարբեր ազգեր բնորոշում են իրենց հայերնիքը: «Սրբազան Ռուսիայի», «գեղեցիկ Ֆրանսիայի», «ամենից վեր Գերմանիայի», «ալ կարմիր Օսմանլիի» կողքին հայը իր երկիրն անվանում է «թշվառ Հայաստան», «սպանդարան մարտիրոսաց», «զուլումի երկիր»: Եթե գեղարվեստում Թումանյանի համար բառը մի ամբողջ աշխարհ էր, ապա այստեղ յուրաքանչյուր բառ ներկայացվում է իբրև պատմություն, ազգային բնավորություն. «Բառերը պատմություններ են»²: Այդ պատճառով էլ ամենից շատ և իրար ետևից պոետը կրկնում է. «Գաղթե՛ լ, գաղթե՛ լ, գաղթե՛ լ... Բայց սա ուրիշ պատմություն է: Ով գաղթեց զլուխն ազատեց էս դժոխքից,

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, (այսուհետ՝ Թումանյան, ԵԼԺ) հտ 8, Եր., 22 ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 97:

² Նույն տեղում, էջ 175:

պրծավ»¹ : Աշխարհով մեկ սփռված հայությունը գաղթօջախներում փորձում էր պահպանել ազգային ինքնությունը՝ առաջին հերթին իր լեզվի, մշակույթի, ազգային արվեստի ու գրականության զարգացման միջոցով:

Գաղութներում ապրող գրողների և արվեստագետների ստեղծագործություններին Թումանյանն անդրադարձել էր դեռևս «Վերնատան»² տարիներին (1899-1904 թթ.): Գրական այդ սասուլիսներում հաճախ էին քննության նյութ դառնում գրական հեռավոր և մերձավոր նախորդների ստեղծագործությունները, ազգային գրականության ավանդույթները, անցյալի արժեքները՝ վերագնահատելու խնդիրները: Այս համատեքստում վերնականները³, անդրադառնալով նախորդներին, ձգտում էին սահմանագատվել հատկապես Ռ. Պատկանյանի գրականությունից: Գրական քննարկումներում վճռորոշ էր Թումանյանի կարծիքն ու դիրքորոշումը, ով իր անմիջական նախորդների, այդ թվում Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, Ս. Շահագլիզի, Մ. Պեշկյբաշյանի

¹ Նույն տեղում, էջ 172:

² «Վերնատունը» ձևավորվել է 1899թ. աշնանը Բեիրության 50, հետագայում 44 հասցեում գտնվող Հովհ. Թումանյանի բնակարանում: «Վերնատան» անդամները հայ գրականության դասականներն էին՝ Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Ավետիք Իսահակյան և Դերենիկ Դեմիրճյան: «Վերնատուն» անունը կապվում էր ն՝ ավեստաբանական Վերնատան Քրիստոսի աշակերտների հավաքատեղիի, նրանցից շնորհի ստանալու, ներշնչվելու խորհրդի, ն՝ Թումանյանի տան՝ 5-րդ հարկում գտնվելու հանգամանքի հետ, ն՝ դեպի «Վեր», դեպի կատարելություն ունեցած ձգտման, «դեպի Վեր» կարգախոսի հետ: «Վերնատուն» գրական խմբակի դերը նշանակալից է թե՛ հայ գրականության և թե՛ 20-րդ դարասկզբի հայ մշակույթի պատմության մեջ: Ավելի հանգամանորեն տե՛ս Հովհաննիսյան Ս.Գ., «Վերնատուն», Եր., 2018, «Էդիթ Պրինտ» հրատ. 288 էջ:

³ «Վերնատան» անդամները կոչվում էին «վերնականներ», կամ «վերնատունյաններ»: Տե՛ս Դեմիրճյան Դ., ԵԺ 14 կատարով, հտ. 12, Եր., ԳԱ հրատ., 1985, էջ 170:

գրականությունը համարում էր գաղութների, պանդխտության ու հալածանքի գրականություն: Բանաստեղծի ընկալմամբ գաղթօջախներում ապրող գրողները ոչ իրենց մեղքով չէին կարող հայության վիճակի, համաժողովրդական ցավի արտահայտիչը լինել, քանի որ «օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փաթթամությունը ունենալ, մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ»¹:

Շայ գրականությունն ու մշակույթը զարգանում էին ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, հեռավոր գաղթօջախներում, երբեմն շատ ավելի գաղթօջախներում, քան հայրենիքում: Գաղթօջախներում ստեղծագործած հայ գրողների մասին Թումանյանը հիշատակում է նաև Թիֆլիսի ժողովրդական համալսարանի պարապմունքներին կարդացած «Կյանք և գրականություն» դասախոսության մեջ: Նա գրողի արվեստը մեկնում է կյանքի հանգամանքների հետ սերտ առնչակցության մեջ. «Որքան շրջապատը լայն է ու ընդարձակ, բազմակողմանի ու բազմաբովանդակ, այնքան մեծ է գրողը ու նրա շրջահայացը, նույնքան մեծ ու հարուստ է նաև գրականությունը»²:

Այս ելակետից քննելով խնդիրը՝ Թումանյանն իր ելույթներում նույնպես անդրադառնում է հայության տարագրության պատմությանը՝ նկատելով, որ դարեր շարունակ տանջանքն ու բռնությունն են ստիպել հային հեռանալ իր հող ու ջրից, բուն երկրից՝ հայրենիքից: Եվ միայն հեռանալուց հետո են հանգիստ շունչ առել: Սակայն օտար միջավայրը չէր կարող իր ազդեցությունը չթողնել այնտեղ ստեղծվող գրականության վրա: Ի վերջո, բանաստեղծը հանգում է տխուր եզրա-

¹ Թումանյան, ԵԼԺ, հտ. 6, Եր., 1994, էջ 532:

² Նույն տեղում:

կացության. «Տարագիր, պանդուխտ ժողովրդի գրականությունն է, անշուշտ, պիտի լիներ պանդխտության ու հալածանքի գրականություն: Պանդուխտ ժողովուրդ, պանդուխտ գրականություն»¹ :

Այնուհետև բանաստեղծը համեմատում է Ռափայել Պատկանյանի (Գամառ Քաթիպա) և Ղազարոս Աղայանի ստեղծագործությունը՝ ընդգծելով վերջինիս՝ հայկական իրականությանը ավելի հարագատ պատկերները: Երբ Պատկանյանի գյուղացին է գալիս դաշտից, նա տեսնում է ճոխ սեղան, սպիտակ, փափուկ զարեհաց, խորոված, և այդ ամենը ձեռագործ գեղեցիկ սուփրայի վրա: Մինչդեռ Աղայանի «Սերմնացան» և այլ ոտանավորները ներկայացնում են իրական կյանքը:

20-րդ դարասկզբին Ռ.Պատկանյանին վերագրում էին ազգային բանաստեղծի հիմնադրի դերը: Այդ կարծիքները հնչում էին հենց Հայ գրողների կովկասյան ընկերության երեկոյթներում, որի նախագահն էր Թումանյանը: Բանաստեղծը նրանց հակադարձում է. «Այո, Գամառ-Քաթիպան անպայման տաղանդավոր մարդ է, բայց եթե նա քիչ է ազգային բանաստեղծ, էդ պակասությունը իրենը չի, տաղանդի պակասությունը չի, այլ հանգամանքների, ինչպես և իմը չի էն առավելությունը, որ ես ավելի եմ ազգային, այլ դարձյալ հանգամանքների»² : Այս խոսքերը Թումանյանը գրում է 1916թ. օգոստոսին Ցոլակ Խանգադյանին և առանց կեղծ համեստության իր անունը համադրում է Պատկանյանի անվան հետ: Նա հստակ տեսնում էր գրականության պատմական զարգացման տրամաբանությունը և հասկանում էր, որ պատկանյանական փուլն արդեն անցյալում է, իսկ հաջորդ փուլի գլխավոր դերակատարն ինքն է:

¹ Նույն տեղում:

² Թումանյան, ԵԼԺ, հտ. 10, Եր., 1999, էջ 250:

Հովհ. Թումանյանը, նկատի ունենալով մեր գրականության երկփեղկվածությունը, հայ գրականագիտության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դրեց տարաշխարհիկ (կամ գաղութային) և բնաշխարհիկ գրականություն եզրույթները: Նրանից առաջ դեռ ոչ ոք հստակ չէր խոսել գաղթօջախներում ու հայրենիքում ստեղծվող գրականության առանձնահատկությունների մասին, որոնք այսօր էլ չեն կորցրել ոչ միայն իրենց պատմական, այլև արդիական նշանակությունը: Բանաստեղծի շատ մոտեցումներ այսօր էլ կարող են վերաբերել տարբեր գաղթօջախներում ստեղծվող սփյուռքայ գրականությանը:

Տարաշխարհիկ, պանդուխտ գյուղներն ավելի աչքի էին ընկնում իրականության քնարական, ռոմանտիկական ընկալմամբ: Տարախշարհիկ գրականության ներկայացուցիչներ Թումանյանը համարում էր Ռաֆայել Պատկանյանին, Սմբատ Շահագիզին, Ղևոնդ Ալիշանին: Բնաշխարհիկը «ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում»¹: Հենց այդ գրականությունն է իր հետ բերում հայ ազգային կյանքի, տառապանքի և ձգտումների ճշմարտացի պատկերը, ի գորտ է ժողովրդի հետ խոսել նրան հարազատ լեզվով ու պատկերներով: Բնաշխարհիկ գրողները՝ Խաչ. Աբովյանից սկսած, ներկայացնում են իրական դժոխքը հայրենի հողի վրա:

1913թ. մայիսի 16-ին Հայ գրողների կովկասյան ընկերության 15-րդ երեկոյթում, որը նվիրված էր Գամառ Բաթիպային, Թումանյանը, իր ելույթում նշելով Պատկանյանի լեզվական սխալները և անծանոթությունը հայ կյանքին, բնորոշում է տարաշխարհիկ գրականությունը, որը «կտրված հայրենիքից, զաբաղնում է օտար երկնքի տակ

¹ Նույն տեղում, հտ. 7, Եր., 1995, էջ 532:

հայ գաղութներում»¹։ Միաժամանակ ընդծում է, որ օտարության մեջ ապրող հեղինակները. «Հայրենասիրության միշտ մեծ կորով են երևան բերել... քայց հենց որ նրանք վերացական մտքերից դիմում են հայ կյանքի կոնկրետ ձևերին, անմիջապես ցույց են տալիս իրենց անծանոթությունն այդ կյանքին»²։ Գրական-գեղարվեստական ավանս-խի» խմբագրության հարցաթերթիկին պատասխանելիս Թումանյանն անդրադառնում է գաղութներում ստեղծված գրականության առանձնահատկությունները պայմանավորող պատմական հանգամանքներին և գործոններին։ Բանաստեղծը սահմանում է նախ ազգային և ապա համամարդկային լինելու գեղագիտական սկզբունքը, որն ընկած է ցանկացած գրականության զարգացման հիմքում։ «Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ուրի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել։ Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի»³։

Այսպես՝ դեռևս իր ստեղծագործական կյանքի արշալույսին Թումանյանը արձանագրեց հայ գրական կյանքի երկփեղկվածությունը և այն պայմանավորեց ազգային-քաղաքական կյանքի, լեզվական և գեղարվեստական գործոնների օբյեկտիվ տարբերություններով։ Սակայն բանաստեղծը համոզված էր, որ անկախ ամեն ինչից անհրաժեշտ էր գաղթօջախներում ստեղծված գրականությունը ընկալել միևնույն ազգային մշակույթի համատեքստում, քանի որ գրականության ճյուղերի փոխադարձ խորությունը և անծանոթությունը «մի անբնա-

¹ Նույն տեղում։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում, էջ 396։

կան ու աննորմալ երևույթ է, որ վերացնելու առանձին հոգ պետք է ուենանք»¹:

Թե՛ գաղթօջախներում, թե՛ հայ հողի վրա ստեղծվում էր հայության միևնույն ազգային-քաղաքական ձգտումներն արտահայտող գրականություն: Մասնավորապես ազատագրական շեփորը հնչեցնելու գործում ժողովրդի լայն զանգվածների վրա իր ազդեցությունն են թողնում նաև տարաշխարհիկ գրականության տաղանդավոր ներկայացուցիչները: Եվ Բաֆֆու ու Մ.Նալբանդյանի կողքին հայտնվում է նաև Ռ.Պատկանյանի անունը, ում ձայնը հաճախ հնչել է շատ ավելի ուժգին և հայրենասիրությամբ խանդավառել է վիթխարի չափերով: Ըստ բանաստեղծի՝ տարաշխարհիկ գրողները նույնպես խոսել են «Հայ ժողովրդի սրտի հետ, խոսել են նրա ցավի մասին»²: Թումանյանը չէր ժխտում տարաշխարհիկ գրողների ոչ տաղանդը, ոչ էլ նրանց գործի հայերնասիրական արժեքը: Նաև նրանց ստեղծած գրականության շնորհիվ թափ առավ 1890-ականների ազատագրական շարժումը, երևան եկավ մի սերունդ, որն իր վրա վերցրեց Արևմտյան Հայաստանն ազատագրելու սրբազան պարտականությունը: Թումանյանն ինքն այդ սերնդի լավագույն ներկայացուցիչն էր և, անշուշտ, ներշնչվել էր նաև տարաշխարհիկ պոեզիայով:

Հայտնի է, որ Ալեքսանդր Գոլոշյանով է սկսվում հայ ազատագրական շարժման նոր շրջափուլը: Նա երիտասարդ պոետի մտերիմ ընկերներից էր: Նրանք միասին էին խանդավառվել հայրենիքը ազատագրելու գաղափարներով³: Ինչպես հայ ազատագրական

¹ Նույն տեղում, էջ 108:

² Նույն տեղում, էջ 531:

³ 1885թ. Հովհ. Թումանյանը «Թող փչե քամին» երգի եղանակով բանաստեղծությունը նվիրում էր Ալեքսանդր Գոլոշյանին: Վերջինս դառնում է նաև «Հին կռիվը» պոեմի հերոսի՝ Վահանի նախաստիպը: Պոեմը նվիրված էր դաշնակցական

շարժմանը նվիրված հայ երիտասարդությունը, այնպես էլ Ալ. Գոլոշյանը և Թումանյանը գտնվում էին թե՛ տարաշխարհիկ, թե՛ բնաշխարհիկ հայրենասիրական գրականության ինչպես Պատկանյանի, Շահգազիզի, այնպես էլ հատկապես Բաֆֆու ազգային ազատագրական գաղափարների ազդեցության տակ: Ճակատագիրը հրաշքով փրկեց պոետի կյանքը, նա կարող էր զոհվել Գոլոշյանի հետ նույն օրը նույն վայրում¹:

Հենց հայրենասիրությունն էր, որ հաղթահարում էր այդ երկու գրականությունների միջև եղած, հիրավի, միանգամայն ճիշտ նկատված տարբերությունները և դարձնում մեկ ազգի մեկ գրականություն:

Ռոստոմին: Պոետի ձեռագիրը կորավ այն պարկերի հետ, որոնք «Դաշնակցական գործով» հետապնդվող բանաստեղծի բնակարան ներխուժած պսիևորդական բաժնի աշխատակիցները 1908թ. առգրավեցին ու տարան ոստիկանություն ու այլևս չվերադարձրեցին:

¹ Հովհ.Թումանյանն ու Ալ.Գոլոշյանը որոշել էին Գևորգյան ճամբարանի սան, վանեցի Գույրասգյանի ու Հովհաննես Ագրիպայանի հետ զենքով գնալ ու ազատել Արևմտյան Հայաստանը՝ Երկիրը: Այդ նպատակով դեռևս նոր նշանված 19-ամյա պոետը վաճառում է իր ամառային վերարկուն և ձեռք բերած գումարով զենք գնում: Մական 1888թ. հուլիսին, երբ 4 երիտասարդներով պիտի մեկնեին Արևմտյան Հայաստան, անկողնուն զամված հիվանդ բանաստեղծը չի կարողանում միանալ ընկերներին և նրա գնալը հետաձգվում է: Մական պոետի երեք զինակից ընկերները զոհվում են Վան մեկնելու ճանապարհին՝ Չըխոր Գյոդուկ բնակավայրում: Թումանյանը ծանր է տանում գաղափարակից ընկերների կորուստը և վերանայում է Արևմտյան Հայաստանը ազատագրելու իր ռոմանտիկական ծրագրերը: Տե՛ս ԼԵՁ, «Հայ հերոսներ», 1920, էջ 41-70: Տես նաև Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատ. 1969, էջ 329:

**TUMANIAN'S UNDERSTANDING OF THE LITERATURE
OF DIASP
(Summary)**

SUSANNA HOVHANNISYAN

In his historical and philological works Hovhannes Tumanyan has touched the historical causes and circumstances of the continued for centuries emigration of Armenians. According to Tumanyan, the foreign environment could not have influenced the literature created there. Before Tumanyan, no one had spoken clearly about the peculiarities of literature created in the Armenian Diaspore and the motherland, which today have lost not only their historical but also their contemporary significance.

The poet was convinced that it was necessary to understand the literature created in the Diaspore in the context of the same national culture. Literature reflecting the same national-political aspirations of Armenians was created both in the Diaspore and on Armenian soil.

ՀԱՆՐԱՊԵՏԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

2003 թուականին Երեւանի մէջ լոյս տեսած *ՀԱՅ ՄՓՅՈՒՌՔ* հանրագիտարանի, Սիրիա (Սուրիա) բաժնի էջ 527-ի վրայ Հայ Կարմիր Խաչի կազմակերպութեան մասին հետեւեալը կը կարդանք. «Հիմնվել է 1918-ին, Հալեպում: Հիմնադիրներն են բժիշկ Հարություն Պողոսյանը, դեղագործներ Ռուբեն Պողոսյանը և Սարգիս Սեւյանը: Նպատակն էր կազմակերպել հայ տարագիրների բուժօգնությունը: 1926-ին վերանվանվել է Հայ ազգային Կարմիր Խաչ: Կազմվել է նոր վարչություն, որի կազմում ընտրվել են նաև բժիշկներ Քաջբերունի և Թորոս Պասաճյանները: Սկզբնապես գործել է մարաշցի գաղթականների ճամբարում, ապա 1926-ին Հալեպի Սուլեյմանիե թաղամասում կառուցվել է երկհարկանի շէնք՝ անհրաժեշտ բժշկական կաբինետներով և հիվանդասենյակներով: Գործել է մինչև 1977-ը»¹:

Ուսումնասիրելով Հալեպի Հայ Կարմիր Խաչի, ապա Սուրիա-հայ Օգնութեան Խաչի պատմութեան վերաբերող արխիւային փաստաթուղթեր, գրականութիւնն ու տեղեկանքները, կը պարզուի հետեւեալը, որ «կարգ մը սրտցաւ ազգայիններ ազդուած տխուր իրականութենէն եւ նկատի ունենալով այդ ցաւալի վիճակը, զորս ենթարկուած էին տառապանքն ճողոպրած ազգակից-

¹ Հայ Մփյոտք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 527:

ները ու միաժամանակ բացայայտօրէն զգալով գէթ որոշ չափով, անոնց օգնելու անհրաժեշտութիւնը 2 Սեպտեմբեր 1919 թ.-ին կ'որոշուի ժողով գումարել եւ ծնունդ տալ «Հայ Կարմիր Խաչ»-ի մասնաճիւղի, Հալէպի մէջ, նալատակ ունենալով նիւթապէս եւ բարոյապէս օգնելու թշուառներուն եւ հիւանդներուն, նաեւ գործ հայթայթել անգործներուն»¹:

Նկատի ունենալով Հալէպ գտնուող տարագիրներու անգործութիւնը եւ անոնց մէջ գտնուող թշուառութիւնը եւ հիւանդութիւնը. Մարի Սինասեան, Լուսիա Երեցեան, Լուսին Մանուկեան, բժիշկ Յարութ Տէր Պօղոսեան, Մինաս Մինասեան եւ պր. Մարութ Սինասեան կը խորհին տեղոյս մէջ կազմել Հայ Կարմիր Խաչի² մասնաճիւղ մը, գէթ մասամբ մեղմացնելու տարագիրներու ներկայ անմխիթար վիճակը: 1919 Սեպտեմբեր 2-ին, եկեղեցիին դուռը փակցուած ազդերով հայ երկսեռ հասարակութիւնը կը հրաւիրուէր Առաջին ժողովին Հայկազեան վարժարանին մէջ, որ տեղի պիտի ունենար նոյն ամսոյն 4-ի երեկոյեան³: Քառասուն անդամներու ներկայութեամբ կ'որոշուի ընտրել առժամեայ վարչութիւն մը՝ վերոյիշեալներէ, գաղտնի քուէարկութեամբ:

5 Սեպտեմբեր 1919 թ. նորընտիր վարչութիւնը կը գումարէ իր առաջին նիստը: Դիւանի ընտրութենէն ետք կ'որոշուի 7 Սեպտեմբեր 1919 թ. պաշտօնապէս կատարել ՀԿ Խաչի բացման հանդիսութիւնը: Յարմար կը նկատեն հանդիսութեան իբրեւ բանախօս հրաւիրել բժշկ. ՔԱԶԲԵՐՈՒՆԻՆ եւ Պ. Ղազարեանը՝ «երգչ-

¹ Ֆիշենկճեան Ա., Յուշամատեն Սուրիահայ Օգնութեան Խաչի 1919-2010, Հալէպ, 2009, էջ 20:

² Յետայսու՝ ՀԿԽ:

³ Ֆիշենկճեան Ա., նշ. աշխ., էջ 38:

խումբի վարիչ»։ Բացման խօսքը պիտի կատարեր Մարութ Սինանեանը (ատենապետ), իսկ պատմականը՝ Մինաս Մինասեանը (ատենադպիր)։

Ա. նիստին կ'որոշուի սերտ յարաբերություններ մշակել հայրենակցական միություններու հետ, որովհետեւ անոնց կապը առաւել անմիջական էր ժողովուրդի հետ եւ նպատակայարմար պիտի ըլլար որոշ հարցերու լուծման համար նկատի առնել անոնց հետ խորհրդակցաբար համագործակցութիւնը ։

Բժշկ. Ռ. Ճէպէճեանի, «Զարթօնք» օրաթերթի մէջ, ՀԿ Խաչի մասին փոխանցած տեղեկութիւններէն կ'իմանաք, թէ Հ Կ Խաչը հիմնուած է 1918թ.։ «Այս մասին կը վկայէ Գրիգոր Պողարեանի մեզի փոխանցած արխիւներու մէջ յայտնուած մէկ նամակը»¹։

Նման տեղեկութիւններու հանդիպած ենք նաեւ 1921 թ. Հ.Կ. Խաչի տեղեկագիրներէն մէկուն մէջ, ուր կ'ըսէ. «Հայ Կարմիր Խաչի տեղական մասնաճիւղը, արդէն, կազմուած է 1918 թ.»²։

Վերոյիշեալ երկու տեղեկութիւնները, անկասկած, կը վերաբերէին ո՛չ թէ Հալէպի մասնաճիւղին, այլ՝ Պոլսոյ։

26 Նոյեմբեր 1918 թ. արդէն Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը վերակազմուած էր եւ օրինաւոր կերպով կը գործէր Պոլսոյ եւ գաւառներուն մէջ։ Ասկէ կարելի է հետեւցնել այն, որ Հայ Կարմիր Խաչի Հալէպի մասնաճիւղի հիմնադրութեան ճշգրիտ թուականը 2-Սեպտեմբեր- 1919 թ. է։

¹ «Զարթօնք», օրաթերթ, թիւ 220, 21 յուլիս 1989, Պէյրութ։

² Ֆիշենկճեան Ա., նշ. աշխ., էջ 38։

Նորակազմ վարչութեան մասին կը տեղեկացուի թէ՛ Ազգային Առաջնորդարանի եւ թէ՛ Հայ Ազգային Միութեան, որոնց կողմէ պաշտօնապէս կը ճանչցուի, կը հաստատուի ու կը վաւերացուի:

Ստորեւ կը ներկայացնենք 6- Մեպտեմբեր- 1919 թուակիր նամակի պատճենը ուղղուած Հայ Ազգային Միութեան, ուր կը տեղեկացնեն նորակազմ կազմակերպութեան մասին եւ նորընտիր վարչութեան անուանացանկը:

«Պատուարժան Վարչութիւն

Հայ Ազգային Միութեան

Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղ մը կազուած ըլլալով Հալէպի մէջ, իր առաջին ընդհանուր ժողովով ընտրեց առժամեայ վարչութիւն մը հետեւեալներով՝

Ա. ատենապետ Մարութ Մինանեան

Բ. ատենապետ Մարի Ստեփանեան

Ա. ատենադպիր Մինաս Մինասեան

Բ. ատենադպիր Լուսիա Երեցեան

Գանձապահ Յարութիւն Տէր Պօղոսեան

Խորհրդական Մարի Մինասեան

Խորհրդական Արտեմիս Աշխարհունի

Ուստի որպէս պաշտօնական մարմին, պարտք կը զգանք վարչութեանս կազմութիւնը ծանօթացնել՝ ի գիտութիւն պատկ. միութեանդ եւ խնդրել ձեր աջակցութիւնը:

Ի դիմաց Հայ Կարմիր Խաչի Հալէպի մասնաճիւղի վարչութիւն:

Ատենադպիր՝

Մ. Մինասեան

Ատենապետ՝

Մ. Մինանեան

6- 9- 1919

Բացի այդ, կ'որոշեն Հ Կ Խաչի Հալեպի մասնաճիղի կազմութեան մասին տեղեկացնել Պոլսոյ Հ Կ Խաչի կեդրոնական վարչութեան, միաժամանակ կը խնդրեն կանոնագիր ու գործունէութեան որոշ հրահանգներ: Սակայն կանոնագիրն ու հրահանգները կ'ուշանան, ճանապարհներու անկանոնութեան պատճառով: Հալեպի վարչութիւնը կ'որոշէ իր սեփական միջոցներով աշխատիլ եւ գործել, մինչեւ կեդրոնէն համապատասխան կանոնագիրերու եւ թուղթերու առաքումը: *«Միութեանս առաջի գործը եղաւ, անմիջապէս իր կազմութիւնը տեղեկացնել կեդր. վարչութեան եւ որը անմիջապէս հաստատելով դրկեց պաշտօնական թուղթեր, ընկալագիրներ եւ կնիք մը: Մինչ այս թուղթերու գալը, միութիւնս արդէն կնիք մը փորագրած էր եւ ընկալագիրները այս կնիքով կը կնքուէին»*¹:

Սակայն ֆրանսական իշխանութեան կողմէ Կիլիկիոյ գրաւումը քաջալեր պիտի հանդիսանար Միջագետքի եւ Սուրիոյ անապատներուն մէջ տարագրուած հայութեան մնացորդացի «տուն դարձին»:

Իսկապէս մնացողները կը մատնուին անել կացութեան առջեւ: Պետք էր աշխատիլ եւ գործել: Այս էր հրամայական պահանջը, «որուն գիտակից քանի մը յանձնուէր եւ անխոնջ անդամներու ջանքերով, 1919 Դեկտեմբեր 1-ին վերակազմուեցաւ վարչութիւնս, եօթը երկսեռ գործօն եւ չորս երկսեռ հաշուեքննիչ անդամներով»²:

¹ Ֆիշենկճեան Ա., նշ. աշխ., էջ 25:

² Նոյն տեղը, էջ 28:

Նորակազմ վարչութիւնը նոր ուժերով զօրացած, կեդրոնէ հասած նոր կանոնադիրերու եւ հրահանգներու գծով եռանդով եւ անձնուիրութեամբ գործի կը ձեռնարկէ: Ներգաղթած անդամներու տեղ նորերը կ'անդամակցին եւ դեկտեմբերի վերջը վարչութիւնը կը հաշուէր շուրջ 200 անդամ:

1 'Դեկտեմբեր 1919-ի նորընտիր վարչութեան կազմի ցանկը հետեւեալ պատկերը կը ներկայացնէր՝

Ա. ատենապետ Սարգիս Սէլեան

Բ. ատենապետ Մարի Ստեփանեան

Ա. ատենադպիր Մարութ Սինանեան (հրաժարած Մարտ 15-էն 1920թ.)

Բ. ատենադպիր Պօղոսիկ Քիրէմիրճեան (մեկնած Փետրուար 15-ին)

Գւանձապահ Սկրտիչ Նաճարեան (մեկնած Փետրուարի մէջ)

Խորհրդական Աղանի Նազարեան (մեկնած Ապրիլ 20-ին)

Խորհրդական Երանուհի Սահակեան

Հաշուեքննիչներ

-Բժշկ. Յարութիւն Տէր Պօղօսեան (մեկնած Մարտ 10-ին)

-Վերգին Թնկրեան

-Սաթենիկ Էճգաճեան

-Լեւոն Թիւֆէնկճեան

ՀԳ Խաչի տեղական մասնաճիւղի կողմէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան տեղական մասնաճիւղի 7-Դեկտեմբեր- 1919թ. յղուած պաշտօնական նամակի ի պատաս-

խան, ՀԲԸՄ 11- Դեկտեմբեր- 1919թ., 360 թուակիր նամակով, կը յայտնէ իր աջակցութիւնը ՀԿ Խաչի ձեռնակներուն՝

«Մեծայարգ

Տիար Ատենապետ

Հ Կ Խաչի տեղական մասնաճիւղի

Աստ.

Պատիւ ունեցանք ստանալու ձեր 7 Դեկտեմբերի ամսաթիւը, ուր հիւանդ գաղթականներու օգնելու պէտքը շեշտելով մեր ալ ձեռնտուութիւնը կը փափաքիք: Յայտնի է արդէն, որ Կարմիր Խաչի եւ Բարեգ[ործական] Միութեանս կալուածը միեւնոյնն է գրեթէ եւ մեզի համար յոյժ բաղձալի պիտի ըլլար գործակցաբար աշխատիլ միեւնոյն նպատակը իրագործելու համար: Ատոր համար իսկ կը կարծենք թէ լաւագոյն պիտի ըլլայ ուղղակի տեսակցութիւն մը դիւանիդ հետ, որոշելու համար թէ ինչ պէտքերու մէջ կարելի է օգնել իրարու:

Միութեանս գրասենեակը միշտ բաց է մանաւանդ առաւօտները ժամը 10-12, եթէ բարեհաճիք պատուել զմեզ:

Հաճեցէք ընդունիլ, Մեծայարգ Տէր, մեր յարգանոյ անկեղծ հաւաստիքը.

ՀԲԸՄիութեան տեղական մասնաժողովի

Ատենադպիր

Ատենապետ

11- Դեկտեմբեր- 1919

Սակայն մեր յօդուածի հիմնական նպատակը Հալէպի Հայ Կարմիր Խաչի գոյութեան մասին տեղեկութիւններ փոխանցել չէ սոսկ, այլ ապացուցել, որ Հալէպի մէջ ծնունդ առած եւ գործած է

նաեւ Հայ Ազգային Կարմիր Խաչ կազմակերպութիւնը, որուն գոյութեան մասին պատմական տուեալները բաւականին աղօտ են:

Ստորեւ պիտի անդրադառնանք Հալէպի Հայ Ազգային Կարմիր Խաչի գոյութեան եւ Հայ Կարմիր Խաչի համատեղ գործունեութեան պատմութեան, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի մէջ պահպանուած արխիւային նիւթերու համաձայն:

ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Դեղագործ Սարգիս Սէլեանի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, որոնք անմիջական կ'առնչուին Հայ Ազգային Կարմիր Խաչի կազմութեան հարցին, իր «Լուրջ հարցեր եւ Ազգ. իշխանութեանց դրութիւնը անոնց հանդէպ» անտիպ գրութեան մէջ Հայ Ազգային Կարմիր Խաչի (յետայսու՝ ՀԱԿԽ) կազմութեան թուական կը նշէ 1925 թ. : «1925-ին կազմուած Հայ Ազգ[ային] Կարմիր Խաչի Առժամեայ վարչութեան անդամ ընտրուած էի. երեք անդամներէ յանձնախումբ մը կազմուեցաւ ծրագիր-կանոնագիր մը պատրաստելու, որուն մէջ գլխաւոր աշխատանքը ինծի յանձնուեցաւ»: Ս. Սէլեանի նպատակը եղած է ՀԱԿ Խաչը ծառայեցնել, ոչ միայն հիւանդներ դարմանելու, այլեւ՝ կազմել հայ սպասուհիներու ինքնուրուշ խումբ մարմին մը:

Մեր տրամադրութեան տակ եղող ՀԱԿ Խաչի նամակներէն կը պարզուի, թէ Առժամեայ վարչութեան ատենապետի պաշտօն վարած է բժշկ. Հրէշտակեանը, իսկ ատենադպիր՝ Ս. Սէլեանը:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հալեպի Հայ Կարմիր Խաչի նորընտիր վարչութիւնը 14- Յունուար- 1925 թուակիր նամակով կը հաղորդէր իր որոշումը, որուն համաձայն, Հայ Կարմիր Խաչը համագգային հողի վրայ դնելու առաջադրութեամբ երեք յարանուանութիւններէն մէկական ներկայացուցիչ կը փափաքէր ունենալ իր կազմին մէջ եւ կը խնդրէր խառն ցանկ մը դրկել, յարմար անձը ընտրելու ցանկութեամբ:

Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովի 16- Յունուար- 1925 թ. Թ. նիստին այս հարցը կը քննարկուի եւ յետ խորհրդակցութեան կ'որոշուի միայն մէկ անձ դրկել, որուն մասնակցութեամբ «ղիւսնը կազմուի եւ տեղեկագրուի»: Այս որոշումին իր անհամաձայնութիւնը կը յայտնէ Էֆէնտի Ֆէթեղեանը հետեւեալ առարկութեամբ. «ՀԿ Խաչը միութիւն է, որ ունի իրեն յատուկ ծրագիր-կանոնագիր եւ պատասխանատու է իր ընդհանուր ժողովին: Իսկ Քաղաքական Ժողովը Ազգ[ային] վարչական մարմին է, որ պատասխանատու է Ազգին: Ընդհանուր ազգին պատասխանատու վարիչ մարմինը միութեան մը ընդհանուր ժողովին համարատու ըլլալուն դիրքին մէջ դնել ուղիղ չէ: Այդ պատճառաւ պաշտօնական մասնակցութեան համար ներկայացուցիչ տալու տեսակետէն համաձայն չէ»: Այլ խօսքով՝ քաղաքական ժողովի անդամները կտրուկ կը մերժեն «ներկայացուցիչին անդամ ըլլալով մասնակցելու պարագան» եւ հաստատ կը մնան իրենց որոշումին: Կ'որոշեն ներկայացուցիչ չդրկել»¹:

¹ Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ (Յետայսու՝ ԲԹ ԱԱԱ), Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ թիւ 46, 20 - Ապրիլ - 1924-էն, 16 Յունիս 1925, ԺԱ. նիստ, 6 Փետրուար, 1925:

Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազդ ծ[այրագոյն] վրդ[վար-
դապետ] Միւրմէան միջ-յարանուանական Կ Խաչի առաջադ-
րութեամբ կը խորհրդակցի կաթողիկէ եւ բողոքական հոգեւոր
առաջնորդներու հետ եւ յարմար կը նկատեն երեք յարանուանու-
թեանց ներկայացուցիչներով մշակել ծրագիր-կանոնագիր եւ են-
թարկել ժողովի հաւանութեան: Այս գծով ժողովը իրաւասութիւն
կ'ընձևո՞ւն, որ ՀԿ Խաչը երեք անդամ ներկայացնէ:

Սակայն 11- Մայիս- 1925 թ. Լ. նիստի ընթացքին հայր սուրբը
կը զեկուցէ, որ կաթողիկէ եւ բողոքական /աւետարանական/
Առաջնորդարաններու ներկայացուցիչները համաձայն չեն
գտնուած «Հին Կ[արմիր] Խաչի շարունակուելուն եւ յայտնեցին
որ ուրոյն Կ[արմիր] Խաչ մը կազմելու պիտի աշխատին, եթէ նոյ-
նիսկ մենք համաձայն չի գտնուինք»¹:

5- Մայիս- 1925 թուակիր նամակով Հայ Ազգ[ային] Կարմիր
Խաչի Առժամեայ վարչութեան խորհուրդը կը տեղեկացնէր ցարդ
ունեցած գործունէութեան եւ կը խնդրէր անհրաժեշտ կարգադ-
րութիւն տնօրինել՝ վերջնական վարչութիւն ընտրելու:

Ստորեւ կը ներկայացնենք պատճենը²

Հալէպ, 5- Մայիս- 1925

Գերապատիւ

¹ ԲԹ Ա.Ա.Ա., Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ թիւ 46, 20 Ապրիլ, 1924-էն,
16 Յունիս 1925, Լ. նիստ, 11 Մայիս, 1925:

² Ֆիշենկճեան Ա., նշ. աշխ., էջ 41:

Տ[եր] Արտաւագդ Ծ[այրագոյն] Վրդ[վարդապետ] Սիւր-
մէեան,

Առաջնորդ Հայոց Բերիոյ

Աստ.

Ներկայիս կու գանք յայտարարել խոնարհաբար թէ, «Հայ Ազգ[ային] Կարմիր Խաչի կազմութեան համար Ձեր 19- Մարտ-1925 թուակիր պաշտօնագրով մեզի յանձնուած պարտականութիւնը յաջողած ենք ի գլուխ հանել, ամսոյս մինչեւ չորսը վերոյիշեալ Միութեան անդամ արձանագրելով -196 - անձ եւ անոնցմէ գանձած ըլլալով 4040 դահեկան ողջ:

Ներկայիս անդամ արձանագրելու գործը կը շարունակուի ըստ առաջնոյն, սակայն նկատի ունենալով մեզի տրուած իրաւասութեան սահմանը, ներկայիս կը խնդրենք որ Բարեհաճիք հարկ եղածը տնօրինել, որպէսզի ձեռնարկուի տեւական վարչութեան ընտրութիւն, օր առաջ կարենալ գործի սկսելու համար:

Մնալով ամենախորին յարգանօք

Ի Դիմաց Հայ Ազգ[ային] Կ[արմիր] Խաչի Առժամեայ վարչ[ու-
թեան] Խորհուրդի

Ատենադպիր
Ս. Սէլեան

Ատենապետ
Տօթթ[որ] Հրեշտակեան

Այս խնդրանք-առաջարկէն ետք, Արտաւագդ ծ. վրդ. Սիւր-մէեան Բերիոյ թեմի յարանուանական երկու հոգեւոր առաջնորդներու (կաթողիկէ, աւետարանական) հետ հանդիպում կ'ունենայ ՀԱԿ Խաչի Առժամեայ վարչութիւնը վաւերացնելու համար: Հաւանակ հայր սուրբի ջանքերուն եւ տարբեր առաջարկութիւննե-

րուն, երկու հոգեւոր պետերը անդրդուելի կը մնան: Այլ խօսքով՝ անոնք ոչ մէկ կերպ կը համոզուին երկու Կարմիր Խաչի գոյութեան, կամ ալ տարբեր անուններով Կ Խաչերու կազմութեան: Հայր սուրբը քաղաքական ժողովի դէմ ու դէր կարծիքներէն առաջնորդուելով եւ զգալով կատարուած իրողութեան մը ստեղծումը, «Կ'որոշէ ներդաշնակ գործունէութեան մէջ մնալու համար, միւս առաջնորդարանները եւ Ազգ[ային] շահը նկատի առնելով մեծամասնութեամբ եւ ցանկալով միացումի իր փափաքը՝ իւրացնել եւ վաւերացնել ներկայացած ծրագիր-կանոնագիրը, թողելով անոր բարեփոխումը ընդի[անուր] ժողովին»¹:

Հայ Ազգ. Կարմիր Խաչի Առժամեայ վարչութիւնը 30- Յուլիս-1925 թուակիր պաշտօնագիրով կը փոխանցէր հաստատութեան անդամներու մեծամասնութեան փափաքը, որ է գումարում ընդհանուր ժողովի տեղեկատուութիւն եւ մնայուն վարչութեան ընտրութիւն: Քաղաքական ժողովը իր ԽՁ. նիստին (7- Օգոստոս-1925) համաձայնութիւն կը կայացնէ:

Դժբախտաբար մեզի յստակ չէ, թէ որոնք եղած են Առժամեայ վարչութեան անդամները: Մակայն մեր տրամադրութեան տակ ունեցած նամակներէն կարելի է ենթադրել, որ ատենապետը եղած է բժշկ. Հրեշտակեանը, իսկ ատենադպիրը՝ Ս. Սէլեանը:

¹ ԲԹ՝ ԱԱԱ, Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ թիւ 46, 20- Ապրիլ- 1924-էն, 16- Յունիս- 1925, ԸԱ. նիստ, 16- Մայիս- 1925:

ՀԱԿ Խաչի Առժամեայ վարչութեան կողմէ նախատեսուած եւ ճշդուած, անդամական ընդհանուր ժողովը 20- Սեպտեմբեր 1925- ին չի գոյանար, ներկաներու ոչ բաւարար թիւի պատճառաւ: Վարչութիւնը, կազմական ծրագիրին համաձայն, Ազգային Առաջնորդարանէն կը խնդրէ իր ներկայացուցիչը, ընտրովի վարչութեան իբրեւ անդամը: Քաղաքական ժողովը յետ խորհրդակցութեան կ'որոշէ Գ. Եղբայրեանը:

Ծրագիր- կանոնագրին համաձայն, վարչութիւնը պէտք է բաղկացած ըլլայ եօթը անդամներէ, որոնցմէ մէկը կը ներկայացնէ Ազգ. Առաջնորդարանը ու երկուքը՝ երկու հայ յարանուանականները. աւետարանական եւ կաթոլիկ համայնքները, իսկ չորսն ալ կ'ընտրուին Ընդհ. ժողովէ:

4- Հոկտեմբեր- 1925-ի նորընտիր վարչութեան կազմը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ՝

Վեր[ապատուելի] Ա. Շիրաճեան	Ատենապետ
Բժշկ[բժիշկ] Ա. Հրեշտակեան	Ատենդաիր
Գ. Եղբայրեան	հաշուակալ գանձապահ
Բժշկ[բժիշկ] Ն. Յովնանեան	խորհրդական
Բժշկ[բժիշկ] Խ. Պօղոսեան	խորհրդական
Ս. Խըրլագեան	խորհրդական
Ս. Ահարոնեան	խորհրդական

Հալէպի ՀԱԿ Խաչին անդամակցած էին արդէն 205 անդամներ, որոնց մէծ մասը այրեր էին: Վարչութիւնը 18- Նոյեմբեր- 1925թ., 29 համար գրութեամբ ներփակ կ'ուղարկէ ընդհանուր անդամներու անուանացանկը Ազգ. Առաջնորդարան: Վարչութիւնը սերտ յարաբերութիւններ մշակած է երեք առաջնորդա-

րաններու հետ եւ յաճախ համապատասխան թելադրութիւններ
ու յանձնարարականներ ստանձնած եւ դրած է ի գործադրութիւն:

11- Դեկտ[եմբեր] - 1925

Մեծայարգ

Տիար Ատենապետ Պատուարժան Անդամք

Հայ Ազգային Կարմիր Խաչի

Աստ.

Ձմեռնային խիստ եղանակի առիթով, բնական է որ կարգ մը
տարափոխուկ եւ վտանգաւոր հիւանդութեանց իբրեւ նախադուռ
եղող «կոխք»-ի դէմ ամէն նախագգուշական միջոցներ ձեռք առ-
նուին, մասնաւորապէս կայաններու եւ հիւղաքաղաքի մէջ
պատասպարուող մեր տարագիր ու կարօտեալ ժողովրդեան մէջ:
Այս առթիւ վստահ ըլլալով հանդերձ որ յարգելի վարչութիւնդ իր
կարելին կ'ընէ այժմէն իսկ կանխատեսելով ցուրտ ու խոնաւ կլի-
մայի մը բերումով յառաջ գալիք հետեւութիւններ: Առաջնորդա-
րանս կարեւորութենէ գերծ չի համարեր տալով հետեւեալ առա-
ջադրութիւնները.-

1-Յաճախակի այցելութիւններով հրահանգել կայաններու
բնակիչները որ զգուշանան ցրտառութենէ եւ մասնաւորապէս հոգ
տանին որ երեխաներ, մանուկներ եւ վերջապէս անչափահաս
պզտիկներ ցուրտի եւ խոնաւութեան ալ աւելի պաշտպանուին:

2-Խստիւ հրահանգ տալ կայաններու պատասխանատու պա-
հակներուն որ ջերմով սկսող եւ վտանգաւոր ամէն հիւանդութիւն

իսկոյն տեղեկացնեն վարչութեանդ բժիշկին, որ պատրաստ է հիւանդին հիւանդանոց փոխադրել տալ, Առաջնորդարանի միջոցաւ:

3-Մասնաւորապէս այս օրերուն օժանդակ բժիշկ եւ դեղագործներով յաճախակի այցելել հիւղաքաղաքն ու բոլոր կայանները, մօտէն քննելու անոնց առողջապահական վիճակը եւ ըստ այնմ ձեռք առնել կանխահոգ ամէն դարման:

4-Առատ *quarion* եւ ասբեռին տրամադրել բժշկական սպասարկութեան, ինչպէս նաեւ առատ անգլիական աղ կամ նման լուծողականներ:

5-Եթէ կայաններու մէջ ծախկախտի դէպքեր կան, իսկոյն լուր տալ Առաջնորդարանիս, պատուաստել տալու համար բոլոր վարժարաններու ուսանողութիւնը:

6-Մասնաւոր ուշադրութեամբ հետեւիլ հարսանիթի դէպքերուն, իսկոյն չեզոքացնելով վարակուող մանուկը կամ երեխան իր մօրը հետ:

Ասկէ գատ կու գանք կարենորութեամբ յանձնարարել յարգելի վարչութեանդ որ ի դէպ ամէն հաւանականութեան, հայ տիկիներէ եւ օրիորդներէ օժանդակ մասնախումբ մը ընտրէ, որ յաճախ այցելելով բոլոր գաղթակայանները իրազեկ պահէ վարչութիւնդ, հոն տիրող առողջապահական պայմաններու մասին:

Յուսալով որ նորակազմ վարչութիւնդ իր լաւագոյնը պիտի ընէ ձմեռնամուտի սա փափուկ եղանակին, երբ ջերմ եւ կոիբ անպակաս են, դժբախտաբար, եւ կրնան լուրջ աւերներ գործել մեր սիրելի ժողովրդեան մէջ, եւ յաջողութեան սրտեռանդն մաղթանքներս:

*Մնամ սիրոյ ողջունիւ
աղօթարար*

18- Դեկտեմբեր- 1925թ. 63 համար գրութեամբ Ազգ. Առաջնորդարան կը տեղեկացնէ, ըստ Առաջնորդարանէն ստացած յանձնարարականին, «Տիկնանց Մասնախումբ»-ի մը կազմութիւնը, որուն «Վարչութիւնը նախապէս անդրադարձած ըլլալով, արդէն կազմուած եւ գործի ձեռնարկած է»:

Իյօք պետք է խոստովանիլ, որ Հայ երեք հոգեւոր Առաջնորդները, Բարեսիրական հաստատութիւնները, հայ թէ օտար, անհատ օտար բարերարները ոչ մէկ ճիգ խնայած էին թշուառութեան մէջ գտնուող տարագիր հայորդիներու միջոցներ որոնելու դարման գտնելու եւ ամոքելու անոնց ցաւերը:

Սակայն հայը վերջին տասնեակ տարիներու ընթացքին ենթարկուած ըլլալով անլուր տառապանքներու, ապաւինած էր ֆրանսական իշխանութեան եւ Սուրիոյ արաբ ժողովուրդին: Թշուառ բեկորներու կարեւոր մասը, կեանքի ամենատարրական պիտոյքէ զուրկ՝ տեղաւորուած էին «քէմբ»-երու¹ եւ քաղաքիս այլ եւ այլ թաղամասերու մէջ, ուր մատնուած էին նիւթական, ֆիզիքական եւ բարոյական ողորմելի վիճակի: Թէեւ Հայ Կարմիր Նաչը իր ծնունդէն հիմնած էր իր դարմանատունը թէ՛ քէմբերու եւ հոգեւտան մօտակայ վայրի մէջ եւ մնայուն ու շրջուն բժիշկներով ու դեղագործներով կը փութար կարիքաւորներու օժանդակութեան, բայց տարագիրներու առաւել թիւի պատճառաւ ոմանք հեռու էին բժշկական խնամքէ: Առաւել, ամէն օր տեղույս թաղապետական, ֆրանսական Սէն Լուի եւ զինուորական հիւանդանոցները տասնեակներով հայ հիւանդներ կ'ընդունէին եւ բժշկական

¹ Հիւղստաններու:

դեղ ու դարման կը ստանային ձրիաբար: Քաղաքական ժողովը երախտագիտական պարտականութիւն համարելով, իր ՀԲ. նիստին /24 Դեկտ[եմբեր] 1926/ որոշում կ'ընդունի Հայ Կարմիր Խաչի հետ համագործակցաբար, առանց խտրութեան, կաղանդի նուէրներ տալ, յիշեալ հիւանդանոցներու մէջ գտնուող բոլոր հիւանդներուն:

24- Դեկտեմբեր- 1925

Մեծայարգ

Տիար Ատենապետ եւ յարգոյ Անդամք

Հայ Ազգային Կարմիր Խաչի վարչութեան

Աստ.

Ծանօթ է յարգելի վարչութեանդ որ անցնող տարիներուն մէջ Ամանորի առթիւ Հայ Ազգային Միութիւն եւ Կարմիր Խաչը համագործակցաբար Կաղանդի նուէրներ բաշխած են քաղաքիս բոլոր հիւանդանոցներուն անխտիր, ինչպէս նաեւ Միս Եփփէի եւ Բարեգործականի որբանոցներուն նկատի ունենալով որ քաղաքիս բոլոր հիւանդանոցներուն մէջ ամէն օր հարիւրաւոր հիւանդներ կը դարմանուին եւ միեւնոյն որբանոցներուն մէջ բազմաթիւ որբեր իրենց հայրենի կաղանդը կ'երազեն:

Այս խիստ գովելի, մարդասիրական ու առաւել եւս բարեսիրական ձեռնարկը այս տարուայ համար եւս իրականացած տեսնելու ցանկութեամբ. ներկայիս ջերմապէս եւ կարեւորութեամբ կը յանձնարարեմ յարգելի վարչութեանդ, այժմէն իսկ հարկ եղած կարգադրութիւնները ընել յառաջիկայ Ամանորի առթիւ եւս կաղանդելու եւ ուրախացնելու համար բոլոր հիւանդանոցներու մէջ գտնուող ցաւատանչ հայ եւ օտար հիւանդներն ու որբանոցներու

անկինը ծնողական գուրգուրանքէն հեռու մնացող մեր բաղդագուրկ եւ ծնողագուրկ որբուկները:

Այժմէն իսկ յաջողութիւն մաղթելով ձեր սոյն ձեռնարկին համար եւ սիրոյ ամենաջերմ ողջոյններով:

Մնամ աղօթարար
Առաջնորդ Հայոց Բերիոյ
Արտվզդ [Արտաւազդ]

2. Ազգ. Կ. Խաչի վարչութիւնը «Կոչ Հայ Ազգին» շրջաբերականով հանրութեան կը ծանուցէր նորընտիր կազմի ցանկը, առաւել բարոյական եւ նիւթական աջակցութեան եւ անդամագրուելու կը հրաւիրէ հալէպահայ հասարակութեան այն հատուածը, որոնք իրենց օժանդակութեամբ պիտի սատարէին այս գործի յաջողութեան:

1925-ի վերջերը Հալէպի մէջ երկու Կարմիր խաչերը կը շաւրունակեն իրենց գործունէութիւնը:

8- Փետրուար- 1926 թուակիր նամակով, Հ. Ազգ. Կ. Խաչի վարչութիւնը պաշտօնագիրով կը տեղեկացնէր Քաղաքական ժողովին Հալէպի մէջ գործող երկու Կարմիր Խաչերու միացման մասին: Իսկ 14- Փետրուար- 1926 թուակիր եւ 99 համար գրութեամբ կը հաստատէր կրկին միացումը եւ կը խնդրէր Սրբազան Հօրմէ եկեղեցւոյ բեմէն հայրաքար յորդորել ժողովուրդը, «իւր հնչուն մասնակցութիւնը բերելու» անոր համար: Այսպիսով կրնար բազմաթիւ անդամներ ապահովել: Անկասկած ժողովը հաճոյքով կ'արձագանգէ այդ:

8 - 2 - 1926

Գերապատիւ

Տ[էր] Տ[էր] Արտաւազդ Վրդ[վարդապետ] Սիրմէան
Առաջնորդ Հալէպի Հայոց

Գերապատիւ Հայր Սուրբ

Ուրախ ենք իմացնել Ձերդ գերապատուութեան թէ Հալէպի
մէջ գտնուող երկու Հայ Կարմիր Խաչերը միացած են, որով յետ
այսու մէկ Կարմիր Խաչ միայն գոյութիւն ունի:

Մատչելով ի համբոյր Ս[ուրբ] Աջոյդ

Ի դիմաց Հայ Կարմիր Խաչերու վարչութեանց
ԲԺ. Թ. Պասմաճեան Վեր. Ա. Ա. Շիրաճեան

Սակայն Գ. Եղբայրեանի քաղաքէն շուտափոյթ մեկնումով
նորակազմ վարչութիւնը կը մնայ նոր առաջադրանքի առջեւ:
ՀԱԿ Խաչի տեղական վարչութեան 5- Դեկտեմբեր- 1926 թուակիր
էւ 186 համարաւ գրութիւնը, կատարուած նոր ընտրութեան առի-
թով, կը խնդրէր Գ. Եղբայրեանի փոխարինող անձի նշանակումը:
Սակայն «Տրուած ըլլալով, որ ոչ-անդամ մը չի կրնար վարչական
անդամ ըլլալ Կ Խաչին, որոշուեցաւ նախ պատրաստել անդամ-
ներու ընդհանուր ցանկը եւ ապա այն ցանկին վրայէն կատարել
ընտրութիւնը»¹:

Քաղաքական ժողովը Գ. Եղբայրեանի փոխարէն միաձայնու-
թեամբ կ'որոշէ Միհրան Մարլեանը վերահաստատել պաշտօնին,

¹ Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ թիւ 48, 29-Յունիս-1925-էն, 3- Յունիս-
1927, Ժ. նիստ, 13- Նոյեմբեր- 1925:

վարչութեան անդամ, որպէս Ազգ. Առաջնորդարանի ներկայացուցիչ տարած անխոնջ ու անձնուէր ծառայութիւններուն: Ժողովը կ'որոշէ առանձին պաշտօնագիրով ծանուցել թէ՛ Կ. Խաչի վարչութեան եւ թէ՛ Մ. Մարլեանին:

24- Դեկտեմբեր- 1926 թ. Միհրան Մարլեան կը վերահաստատուի իր պաշտօնին, ըստ Հ. Ազգ. Կարմիր Խաչի կանոնագրի 18-րդ յօդուածին տրամադրութեան:

Ուսումնասիրելով երկու թուակիր նամակները, մեր աչքի առաջ կը պարզուի, որ 8-2-1926 թուակիր նամակի վրայ ատենապետի դերով հանդէս եկած է Վեր. Ա. Ա. Շիրաճեանը, ատենադպիր՝ Բժշկ. Թ. Պասմաճեանը փոխան Բժշկ. Յ. Հրեշտակեանի, որ համանուն վարչութեան ատենադպիրն էր: Մեր տրամադրութեան տակ ունեցած նամակներէն կը պարզուի նաեւ, որ մինչեւ 1926 թ. վերջերը վարչութեան ատենադպրութեան պաշտօնը վարած է Բժշկ. Թ. Պասմաճեան: Իսկ 1929 թ. տուեալներով՝ Բժշկ. Թ. Պօղոսեան:

Հայ Ազգ. Կ. Խաչի վարչութիւնը 1926-ի Նոյեմբերին միւս յարանուանութիւններու, ՀԲԸՄ կողքին իր մասնակցութիւնը բերած է Ազգային Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած Համագգային հանգանակութեան, Հայաստանի աղետեալներու անմիջական օգնութեան հասնելու ցանկութեամբ:

Հ. Ազգ. Կ. Խաչի վարչութիւնը, բացի ստացած օտար օժանդակութիւններէ եւ անդամավճարներէ, եկամուտ ապահովելու համար նախաձեռնած է գեղարուեստական երեկոյթներ, Ազգ. Վարժարանի երգչախումբի մասնակցութեամբ:

1928 թ. 20- Ապրիլի ԺԹ. նիստին, Քաղաքական ժողովը որոշում կ'ընդունի Կարմիր կիրակլին յատկացնել Հ. Ազգ. Կ. Խաչին,

ըստ իրենց փափաքին: Այդ առթիւ կատարուած հանգանակութիւնը ի նպաստ համանուն հաստատութեան էր:

1927 թ. պարբերաբար եւ 1929 թ. ընդհանրապէս Սուրիա հասնող նոր տարագիրներու հոսքը, Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն դէպի Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջաններն ու Հալէպ քաղաքը, նոր առաջադրանքի առաջ կը դնէ Ազգ. մարմինները, որոնք պիտի փութային տեղաւորելու եւ առողջապահական հարցերը կարգաւորելու աշխատանքին: Անշուշտ այս աշխատանքի մէջ բաժին մըն ալ վերագրուած էր ՀԱԿ Խաչի վարչութեան, ներկայացուցիչներ ուղարկելու եւ օգնութեան փութալու:

1929 թ. Ամերիկայի ՀԿ Խաչի Կեդրոնական վարչութեան Սուրիոյ տարածքին նոր մասնաճիւղեր կազմակերպելու առաջարկին Տեղական վարչութիւնը իր բացատրեալ նամակով Ազգ. Առաջնորդարանին կը փոխանցէր իրորոշումը:

Դժբախտաբար, 1929 թ.-էն մինչեւ 1937 թ. Հ. Ազգ. Կ. Խաչի վարչութեան գործունէութեան հետ առնչուող տեղեկութիւններ կը պակսին: Ըստ 1937-1938 տեղեկագիրին, կարգ մը անդամներ հրաժարելէ ետք գործը շարունակած են 4-5 հոգի՝

Վեր. Ա. Շիրաճեան Ատենապետ

Բժշկ. Պօղոսեան Ատենադպիր

Բժշկ. Յ. Հրեշտակեան Գանձապահ

Պ. Մարանկօզեան եւ Ե. Տայեան խորհրդականներ:

Վերջինիս անակնկալ մահով Հայ Բողոքական համայնքէն կը հրաւիրուի ատամնաբոյժ Նազարեան: Վարչութեան կազմը ամբողջացնելու միտումով, պաշտօնի կը հրաւիրուին՝ Տ. Տ. Պ. Էքնօսեան (արկղակալ Պանք տը Սիրի է տիւ կրան) եւ Լ. Պիլեզիքճեան (մաքսային պաշտօնէայ):

1938 թ. վարչությունը երիտասարդ ուժեր է բաղկացած մարմին մը կը յառաջացնէ հետեւեալներէ, որոնք իրենց բոլորանուէր աջակցութիւնը կը ցուցաբերեն վարչութեան:

Տ. Տ. Բժշկ. Քէթնճեան

Ժ. Գալեմբեաբեան

Գ. Գաբրիէլեան

Դ. Ոսկանեան

Կ. Պօրօնօգեան

ՆՈՐ ԴԱՐՄԱՆԱՏՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Հալէպի Հայ Կարմիր Խաչը իր կազմութեան օրէն իսկ նպատակադրած էր ունենալ սեփական դարմանատուն ու հիւանդանոց:

Հայ Կարմիր Խաչը իր ծնունդէն՝ 1919 թ.-էն, կարիքը զգալով դարմանատան մը, իր դժուարին պայմաններու տակ, նիւթական անձկութեան պատճառաւ դարմանատուներ ունեցած էր քեմբերու մօտակայքը կամ երբեմն հիւանդներու դարմանումը եղած է շրջուն բժիշկի մը միջոցաւ: Բայց պէտք է խոստովանիլ որ հեռու էր ինքնաբաւ ըլլալէ: Սեփական հիւանդանոցի հարցը միշտ ալ մնացած էր անբուժելի, հակառակ ներքին եւ արտաքին զանազան օժանդակութեանց:

Նորակազմ վարչութիւնը նկատի ունենալով այդ բոլոր դժուարութիւնները, կ'որոշէ դարմանատան վարձքի համար ամէն տարի կարելոք գումար մը յատկացնել: Այս անպատեհութիւնը դարմանելու համար եւ առաջնորդուելով «կամենալ կարենալ» սկզբունքէն կը յղանայ դարմանատուն մը կառուցելու գաղափարը: «Իր զանձին դատարկութիւնը առ ոչինչ համարելով, բայց հայ

ժողովուրդին վարչութեան հանդէպ տածած համակիր զգացումներով զօրացած՝ գետնի մը գնումը կատարեց»¹:

1925-ին ՀԱԿ Խաչի կազմութենէն ու երկու Կ. Խաչերու միացումէն ետք, Հալէպի վարչութիւնը իր 9- Յուլիս- 1926 թուակիր նամակով, Առաջնորդ Յօր կը հաղորդէ իր որոշումը, ըստ որու քաղաքին մէջ յարմար հող մը գնելով Կ. Խաչի յատուկ շէնք մը կառուցել:

Համագգային այս հաստատութեան նշանակելի գործը եղաւ սեփական դարմանատան մը շինութիւնը:

Վարչութիւնը կը յաջողի 500 ք[քառակուսի] կանգուն հող մը գնել Սիւլէմանիէէն, սեփական դարմանատուն եւ մայրանոց մը հաստատելու համար: Յիշեալ շինութիւններու հիմնարկէքը կ'որոշուի կատարել 2- Նոյեմբեր- 1926-ին: Առ այդ պաշտօնական նամակներ կը յղուին Առաքելական, Կաթօղիկէ եւ Բողոքական յարանուանութեանց հոգեւոր պետերու ներկայ գտնուելու հիմնարկէքի արարողութեան:

ՀԱԿ Խաչի վարչութիւնը սկիզբը կը ծրագրէ համեստ շէնքով մը գոհանալ, Բայց նկատելով ժամանակի պահանջները կը պարտաւորուի հետզհետէ յատակագիծը փոխելով ընդարձակել ծրագրուած շէնքը:

Տարբեր աղբիւններու ուսումնասիրութեամբ, կը յիշուի թէ նորակառոյց դարմանատան շինութեան ձեռնարկած աշխատանքներու ընթացքին, վարչութիւնը մտադրած է մեծ սրահն ու յարակից սենեակներու մէկ մասը յատկացնել հիւանդներու, օժտուած տասնեակ մը մահճակալներով, այս կերպով կորիզը կազմելու ապագայ Ազգ. հիւանդանոցի մը: Դժբախտաբար վրայ հասնելով

¹ Եփրատ օրաթերթ, գ. տարի, 7 Մարտ, 1931:

համաշխարհային տազնապը, վարչութիւնը անձկութեան կը մատենուի եւ չի կրնար իրականացնել այդ ազգօգուտ ծրագիրը¹:

1936 թ. վարչութիւնը կը ստիպուի առժամեայ վարձու տալ հայ բողոքական Նահատակաց եկեղեցւոյ այդ ընդարձակ սրահը: Իսկ սենեակներէն մէկն ալ կը յատկացնէ մանկամսուրի²:

Դարմանատունը գուրգուրանքի առարկայ դարձած էր, հաւասարապէս, թէ՛ Հալէպի եւ թէ՛ արտասահմանի հայերու կողմէ: Հալէպահայերը մասնակցելով Կ. Խաչի Կիրակի օրուան հանգանակութիւններուն, իրենց օժանդակութիւնը լաւագոյնս ցուցաբերած էին: Բացի ատկէ, օժանդակութիւն ստացած են Լոնտոնի եւ Մանչեսթըրի Հայ Տիկնանց Միութիւններէ: Օտար հաստատութիւններու մէջ յիշատակութեան արժանի են Անգլիական Հայրենասէրներու ընկերութիւնը «FRIEND OF ARMENIA»-ն: Համակրելի վերաբերում ցոյց տուած են նաեւ քաղաքս գտնուող Միս Եփփէն եւ օտարազգի բարերարներ ու բարեսիրական հաստատութիւններ:

Ըստ *Եփրատ* օրաթերթի հաղորդած տեղեկութիւններուն, վարչութիւնը ծախսած է 2500 ոսկի գումար մը: Շէնքի շինութենէն գոյացած է 300 ոսկի պարտք, որուն 150 ոսկին տրամադրած է օտար բարերարուհի մը: Ուստի վարչութիւնը կոչ կ'ուղղէ «գթասիրտ հայ ժողովուրդին վարչութեան զօրավիգ կանգնելու»³: 1927 տարուան ընթացքին դարմանատուն կը դիմեն 6579 երկսեռ հիւանդներ եւ կ'օգտուին զանազան դարմանումներով:

¹ Տեղեկագիր Համառոտ պատմութիւն Հայ Աւետ. Նահատակաց եկեղեցիին, Հալէպ, Սուրիա (անտիպ):

² Տեղեկագիր ՀԱԿ Խաչի 1937-1938 թթ., էջ 3:

³ «Եփրատ» օրաթերթ, Գ. տարի, 7- Մարտ- 1931, Հալէպ:

Տարեկան ընդհանուր պիտճէն եղած է 910 օսմանեան ոսկի /օսմ. ոսկի/, որուն 600-ը արտասահմանի հայ եւ օտար բարեսիրական հաստատութիւններէ եկած, 110-ը՝ դարմանատան հասոյթէ, 37-ը տեղական անդամավճարներէ, իսկ մնացեալը 1926 թ. դրամէն գոյացած: Ելքերը՝

110 օսմ[անեան] ոսկի՝ դեղօրայք

26 օսմ[անեան] ոսկի՝ այլեւայլ

40 օսմ[անեան] ոսկի՝ գնուած գետինի

650 օսմ[անեան] ոսկի՝ շիութեան

90 օսմ[անեան] ոսկի՝ պաշտօնեաներու թոշակներ

Տեղեկագիրի տակ գետեղուած ծանօթութենէն կը պարզուի, թէ 1928 տարուան փոխադրուած է 280 օսմ[անեան] ոսկի պարօք: Նոր դարմանատան գետինին եւ շէնքին ծախսուած է 950 օսմ[անեան] ոսկի եւ տակաւին ամբողջացման համար կարիքը կայ 700 ոսկիի:

1928 թ. առաջի ամիսներուն կը կատարուի հանգանակութիւն մը՝ 65 օսմ[անեան] ոսկի եւ պագարէ՝ 100 օսմ[անեան] ոսկի հասոյթներով:

1925-1936 թթ. դարմանատան մէջ դարմանուած են 79,914 հիւանդներ: Իսկ 1937-1938 տարիներուն՝ 7351 հոգի:

ՀԱԿ Խաչի վարչութիւնը 1936-1937 թթ. ծրագիր մը կը մշակէ ակնաբուժական եւ ատամնաբուժական ճիւղեր հաստատելու դարմանատան մէջ: Բայց նիւթական դժուարութիւններու պատճառաւ անկարող էին յաջողցնելու այդ ձեռնարկը: Սակայն հիւղաւաններու մէջ վարակող աչքի հիւանդութիւնները հարկադրանքի տակ դրած էին վարչութեան կարգադրութիւններ ընելու

եւ ակնարութեական ճիւղը վերականգնանքնելու ՀԲ Ընդհանուր Միութեան շնորհիւ¹:

1 Յունուար 1937 թ. դարմանատան բժշկ. Լուսինեան կը հրաժարի: Դժբախտաբար մեզի յայտնի չէ թէ որ թուականէն ստանձնած է իր պաշտօնը, փաստաթուղթերու բացակայութեան պատճառաւ: ՀԱԿ Խաչի վարչութիւնը պատեհ առիթ ստեղծելով դարմանատան ստողջապահական հարցերը կը յանձնէ բժշկն. Ե. Ստեփանեանին եւ Ա. Արսլանեանին, որոնք շաբաթը երեքական օր, փոխն ի փոխ կը տանին իրենց վրայ վստահուած աշխատանքը: Աւելի ուշ բժշկ. Արսլանեանի հրաժարականէն ետք բժշկ. Ե. Ստեփանեան կը շարունակէ դարմանատան աշխատանքը²:

12- Ապրիլ- 1932 թուակիր եւ 4150 համար գրութեամբ, պատկան պաշտօնատունը կը տեղեկացնէ վարչութիւն, թէ դարմանատան շէնքը զերծ կացուցուած է կալուածատուրքէ: Այս որոշումով, իբր բարեգործական հաստատութիւն, արտօնուած էր զանազան դեղեր, գործիքներ եւ այլ պէտքեր ընդունիլ արտասահմանէն, առանց մաքսատուրքի:

Բանաւոր քաղած մեր տեղեկութիւններուն համաձայն, սոյն դարմանատունը 1954 թ. կը յանձնուի ՀԲԸ Միութեան:

1977 թ. կը փակուի:

Արդարեւ, Հալէպի հայ համայնքի ձեւատրման օրերուն, Թուրքիոյ տարբեր շրջաններէն Սուրիա ապաստանող գաղթականներուն օգնութիւն ցուցաբերեցին մարդասիրական, բարեսիրական տեղական եւ միջազգային կազմակերպութիւնները, հայ-

¹ Երկամեայ տեղեկագիր Հայ Ազգ. Կ. Խաչի Հալէպ 1937 եւ 1938, Հալէպ, 1938, էջ 3-9:

² Նոյն տեղը, էջ 2:

ընկերակցական միութիւնները եւ հայազգի անհատներ, որովհետեւ
ապաստանողներուն վիճակը անմխիթար էր եւ անոնց կարիքնե-
րը անհամար:

THE ARMENIAN RED CROSS OF ALEPPO
(HISTORICAL REVIEW)
(Summary)

ANI FISHENKJIAN

Key words: Aleppo, Red Cross, Syria, Diocese of Peria, FRIEND
OF ARMENIA, Euphrates daily, Cilicia, The Armenian General
Benevolent Union, charity, National Association

As a result of the policy of extermination of the Armenians by the
Young Turks organized in 1915, a large number of immigrants found
refuge in Aleppo. Their poor and miserable situation put the
community figures into a difficult situation, so they started to act
immediately in the crucial situation.

In 1919 due to efforts of several national figures the Armenian Red
Cross of Aleppo is being founded, the main goal of which was to
support all needy people (in the fields of education, health), along
with other humanitarian organizations.

The article sheds light into the history of the existence of the
Armenian National Red Cross of Aleppo and joint activities with the
Armenian Red Cross history, according to archival materials
preserving at the Primate of the Armenian Prelacy of Peria.

TRE EPIGRAFI SEPOLCRALI ARMENO-LATINE DEL XVIII SECOLO DA ALTRETTANTE CHIESE DI ROMA*

ANNA SIRINIAN

Alma Mater Studiorum – Università di Bologna

È noto che per quasi tre secoli, a partire dal 1566, sotto il pontificato di Pio V, fino al 1836, quando Gregorio XVI le concesse la chiesa di S. Biagio della Pagnotta in via Giulia, la comunità armena di Roma ebbe come propria chiesa quella di S. Maria Egiziaca, con annesso l'ospizio nazionale¹. Durante tale arco di tempo, è qui che si dirigevano in cerca d'accoglienza i numerosi pellegrini ed ecclesiastici armeni in visita nella città dei papi, chi per una breve, chi per una lunga sosta, alcuni anche fino al termine dei propri giorni. Oggi la chiesa di S. Maria Egiziaca, riportata negli anni Venti del secolo scorso al suo originario

* A Maria Adelaide Lala Comneno (già Università della Basilicata) e a Cesare Santus (École française de Rome) esprimo il mio vivo ringraziamento per l'aiuto offertomi nella stesura di questo articolo. Al secondo, attualmente impegnato in un progetto di ricerca riguardante la circolazione dei cristiani orientali tra l'Impero ottomano e l'Italia in età moderna, devo in particolare l'indicazione delle fonti relative a Matteo Bali e a Suchias Khaxavat/Succhias Cassevct.

¹ Sulla storia della presenza armena a Roma, con particolare riguardo al periodo qui trattato, si vedano L.B. Zekiyán, *Le colonie armene in Italia e le relazioni culturali italo-armene* (Materiale per la storia degli Armeni in Italia), in *Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena* (Bergamo, 28-30 giugno 1975), a cura di G. Ieni - L.B. Zekiyán, San Lazzaro-Venezia 1978, pp. 803-946; 851-859; Mesrop vardapet Owl'owrlean, *Storia della Colonia armena di Livorno e della costruzione della sua chiesa* (con appendici), presentazione, traduzione e note di A. Orenco, Livorno 1990, pp. 182-185; G. Casnati, *Presenze armene in Italia. Testimonianze storiche ed architettoniche*, in *Gli Armeni in Italia/Hayero Italioy mēj* [catalogo della mostra: Venezia, Isola di S. Lazzaro-Padova, Museo al Santo, 9 settembre 1990-20 gennaio 1991], Roma 1990, pp. 28-38; 32-36; Կարապետյան Մ. Մ., Հռոմի հայ զաղթթցախի պատմությունը, ԴԲՀ, 1998/1-2, էջ 147-148; G. Aral, *Gli Armeni a Roma*, in *Roma-Armenia*, [catalogo della mostra: Biblioteca Apostolica Vaticana, Salone Sistino, 25 marzo-16 luglio 1999], a cura di C. Mutafian, Roma 1999, pp. 334-336; P. Chobanyan, *Roma e l'Italia nei racconti dei viaggiatori armeni*, ibid. pp. 252-254

aspetto di tempio romano dedicato al dio Portuno – ma più comunemente noto come «Tempio della Fortuna Virile» –, non conserva ormai quasi alcuna traccia del suo trascorso armeno¹; tuttavia sappiamo da più fonti che, tra i segni più marcati lasciati da questa presenza, il suo pavimento era costellato di lapidi in armeno e in latino, come mostra la pianta disegnata con cura nel 1851 dal padre mechtarista Anania Ćelalean (1790-1867) all'inizio della sua raccolta delle epigrafi di S. Maria Egiziaca, rimasta in forma manoscritta presso la Biblioteca del Monastero dei PP. Mechtaristi di S. Lazzaro, a Venezia (ms. 2746); prima di quella di Ćelalean, un'altra loro descrizione era stata allestita intorno al 1772 da un altro mechtarista, il p. Step'annos Aslikean (1737-1807), anch'essa inedita e conservata a Venezia in forma di manoscritto (ms. 2721)². Tra gli anni 1917-1921, le lapidi di S. Maria Egiziaca furono trasportate nella chiesa e nel collegio di S. Nicola da Tolentino – sede del Pontificio Leoniano Collegio Armeno in Roma –, dove si trovano tuttora distribuite in diversi luoghi: intorno alle colonne e lungo le pareti del chiostro, nel corridoio che conduce alla sacrestia e in piccola parte dentro la chiesa.

Non tutti gli Armeni che in quel periodo soggiornarono e morirono a Roma furono, però, sepolti a S. Maria Egiziaca: in almeno tre chiese del centro di Roma sono conservate infatti altrettante lapidi sepolcrali di personaggi armeni che, per motivi diversi, ancora da chiarire, furono colà tumulati. Ne offriamo qui una breve presentazione in ordine cronologico unita alla trascrizione e traduzione dei testi che

¹ Un segno di questo passato è tuttavia riemerso inaspettatamente nel 2006, quando nella cella del tempio fu rinvenuta una croce in marmo con alla base un'iscrizione armena: la croce, collocata in origine sul tetto della chiesa, era stata commissionata dallo stampatore Yovhannēs Tērznc'i negli anni 1583-1586; mi permetto di rinviare su questo ad A. Sirinian, La presenza degli Armeni nella Roma medievale: prime testimonianze manoscritte ed epigrafiche (con un'iscrizione inedita del XVI secolo), in *Atti della Pontificia Accademia Romana di Archeologia*, ser. III: Rendiconti 86 (2013-2014), pp. 3-42: 32-42.

² In entrambi i manoscritti sono raccolte anche le nostre iscrizioni.

ognuna di queste lapidi reca, come primo, modesto contributo per un inventario sistematico delle epigrafi armene di Roma¹.

Chiesa di S. Giovanni Decollato: iscrizione funebre di Matteo Bali (anno 1726)

La chiesa di S. Giovanni Decollato, situata nel Rione Ripa, ai piedi del Campidoglio, nelle immediate vicinanze della chiesa di S. Maria Egiziaca/Tempio di Portuno, conserva al suo interno la lapide di Matteo Bali «arcivescovo di Costantinopoli, Antiochia e Sis», come recita la lapide stessa, spentosi a Roma nel 1726. La chiesa è tuttora sede dell'omonima Arciconfraternita, fondata nel suo ramo romano nel 1488 allo scopo di prestare conforto ai condannati a morte e di provvedere alle loro esequie. Entrando nella chiesa, l'epigrafe di Matteo Bali si trova murata sulla parete di destra, più precisamente sul lato sinistro di quella che è chiamata «la porta della misericordia», ovvero la porta attraverso la quale passava quel condannato che il 24 giugno di ogni anno, nella ricorrenza della festa del santo patrono, l'Arciconfraternita aveva il permesso di liberare.

La lapide, che originariamente era disposta sul pavimento², presenta in alto un'iscrizione in latino e in basso in armeno; al centro campeggia uno stemma recante, sulla sommità, la mitra sotto la quale è raffigurata la testa di un cherubino con, ai lati, due bastoni pastorali incrociati; al centro dello stemma sono incisi i simboli dei quattro evangelisti (in alto il leone, ai lati l'angelo e l'aquila, in basso il bue).

¹ I testi armeni di queste iscrizioni (ad eccezione della seconda, per la quale si veda la bibliografia citata) sono, a quanto ci risulta, inediti; quelli latini sono stati invece inclusi nel repertorio di **Vincenzo Forcella**, *Iscrizioni delle chiese e d'altri edifici di Roma dal secolo XI fino ai giorni nostri*, I-XIV, Roma 1869-1884, come indicheremo di volta in volta.

² Lo spostamento delle lapidi che si trovavano sul pavimento fu dovuto ai lavori di rifacimento dello stesso intrapresi ancora nel corso del XVIII secolo a breve distanza di tempo dalla sepoltura del nostro. Ringrazio per questa e altre informazioni la dott.ssa Raffaella Gili, segretaria dell'Arciconfraternita; sulla storia dell'istituzione dell' Arciconfraternita e sul complesso monumentale di cui la chiesa di S. Giovanni Decollato è parte si veda il sito web <<http://www.sangiovannidecollato.org/it/arciconfraternita-san-giovanni-decollato/>> (ultima consultazione: 27.01.2018).

L'iscrizione latina recita¹:

D(eo) O(ptimo) M(aximo) | Mattheo Bali | sanguine moribus, et
doctrina cattolico [*sic*] | Antiochiae Siis, et Constantinopolis | patriarchae
vigilantissimo | orthodoxae fidei | in angustiis, in vinculis, in tormentis |
propugnatori imperterrito | incunabula prestitit Caesarea | tumulum Roma
Obbit [*sic*]² | die XVIII mensis aug. aet. suae XC. anno D(omi)ni |
MDCCXXVI³

«A Dio Ottimo e Sommo. A Matteo Bali, cattolico per sangue, costumi e dottrina, patriarca vigilantissimo di Antiochia, di Sis e di Costantinopoli, difensore imperterrito della fede ortodossa in carcere, in catene, nei tormenti, Cesarea diede i natali, Roma il sepolcro. Morì il giorno 18 del mese di agosto, all'età di novant'anni, nell'anno del Signore 1726».

Il testo armeno, piuttosto fitto e ricco di compendi e soprattutto di nessi, non corrisponde a quello latino, come si noterà anche in seguito:

Այս է տապան մարմնոյ տեղին. Կեսարացի Մատթէոս | Կ-
(ա)թ(ն)դ(ի)կին. Անտիոքա պատրիարգին: Տանն Էփիկոյ | Փոքր
Մասին: Հալաճական եղեալ անտի: | Վ(ա)ս(ն) հաւատոյն Ք(րիս-
տոս)ի: Ղիմեաց առ ս(ուր)բ եկ(ե)ղ(ե)ցի: | որ է ըստոյզ մայր գրաւի:
Եկաց փոքր ինչ | ժամանակի: Հանգեաւ առ Տ(ե)ր իւր ցանկալի: |
փափաքն. Ի թ/ին⁴. ՌՃՀԶ: Օգոստ(ո)սի: ԺՀն:

«Questo sepolcro è il luogo del corpo (= In questo sepolcro giace il corpo) di Matt^{eo}s di Cesarea cattolico, patriarca di Antiochia della Casa di Cilicia della Piccola Armenia. Dopo essere stato colà perseguitato

¹ Qui e in seguito i testi delle iscrizioni saranno riportati diplomaticamente; nostro è però l'uso delle maiuscole/minuscole.

² Questo verbo, da collegarsi a quanto segue, sembrerebbe un'aggiunta successiva: la sua presenza rompe infatti lo schema compositivo dell'iscrizione.

³ Forcella, *Iscrizioni delle chiese e d'altri edifici di Roma* cit., VII, Roma 1876, p. 65 n° 152.

⁴ Nella parola armena per «numero»/«data», la seconda lettera, segnalata in corsivo, è un errore. Qui e in seguito, verranno così indicate le (poche) anomalie grafiche riscontrate nelle iscrizioni.

a causa della fede di Cristo, si è rivolto alla santa Chiesa, che è vera madre compassionevole. Giunse per poco tempo. Riposò nel Signore, sua cara speranza, nell'anno 1176 (= 1726), il 18 di agosto».

Curiosamente, nel testo armeno non si fa menzione di Costantinopoli.

Chiesa di S. Michele dei Frisoni: iscrizione sepolcrale di Gregorio Bugdan (anno 1765)

Nelle adiacenze di Piazza S. Pietro, là dove, osservando dalla Basilica la piazza, termina l'emiciclo di destra del colonnato del Bernini e inizia Borgo Santo Spirito, si trova la nascosta chiesa di S. Michele dei Frisoni al cui interno si conserva la lapide di tal Gregorio Bugdan, armeno cattolico originario di Erzerum, che morì a Roma nel 1765. La lapide è murata sulla parete esterna della navata di sinistra, in fondo, accanto a quella del celebre pittore tedesco Anton Raphael Mengs (1728-1799). La forma della lapide, realizzata con una certa maestria e ben rubricata in nero, ricorda quella di un sepolcro visto frontalmente, sul cui coperchio campeggia al centro la lettera armena է, propria della terza persona singolare del verbo «essere» e per ciò stesso simbolo di Dio, «Colui che è» (Es 3,14). A differenza della lapide di Matteo Bali, qui l'iscrizione armena è disposta in alto e quella latina in basso. Anche qui al centro è inciso uno stemma che, per mancanza di attributi ecclesiastici, segnala immediatamente che si tratta di un defunto laico: al suo interno tre spighe disposte a ventaglio sono racchiuse tra due coltelli incrociati dai manici sottili e allungati¹.

L'iscrizione armena, più estesa di quella latina, regolare e sobriamente elegante, è composta da sette versi dodecasillabi rimanti in – է, probabilmente in richiamo della grande «Է» posta in alto, seguiti dalla data:

¹ «Due temperini all'orientale» sono definiti nel ms. 2721 della Biblioteca dei PP. Mechitaristi di Venezia, al f. <3r>.

Գերմահարձանս ի յիշատակ մեծի առն է | Էրզրումեցոյ ի
Պուղտանեան ազգատոհմէ | որ ի Հալէպ տնաւորեալ զարմ անդ
տնկէ | ըոտմամբ սրտի եկեալ ի Հոսմ գիւրսն լքէ | Գրիգոր կոչիւր
անուն նորա Հայոց յազգէ | վեշտասան ամս պանդխտեալ լաստ ի
Տէր ննջէ | պատանդի արդ ի պորտ շիրմիս փողոյն սպասէ: | Յա-
մի Տ(եառ)ն ՌԶԿԵ

«Questa lapide sepolcrale è in ricordo di un grande uomo | di
Erzerum, della famiglia Pultanean | che, stabilito ad Aleppo, dà origine
colà a una famiglia. | Venuto a Roma per desiderio del cuore lascia i suoi.
| Gregorio è il suo nome, della nazione armena. | Per sedici anni esule, qui
si addormenta nel Signore. | È ora avvolto dentro questo sepolcro (e)
attende la tromba (del Giudizio Universale). | Nell'anno del Signore
1765»

Il testo latino recita:

Gregorio Bugdan Armeno Berrhoensi | catholicac fidei
propugnatori ac vindici | qui Romae sexdecim annis commoratus | obiit
VIII idus octobris MDCCLXV¹

«A Gregorio Bugdan armeno di Aleppo, difensore e protettore
della fede cattolica che, fermatosi a Roma per sedici anni, morì l'8
ottobre 1765».

*Chiesa di S. Carlo alle Quattro Fontane: iscrizione tombale di
Alexander Aslanean (anno 1792)*

Dedicata a Carlo Borromeo, arcivescovo di Milano, la piccola
chiesa di S. Carlo (detta anche di S. Carlino) alle Quattro Fontane, nel

¹ Forcella, *Iscrizioni delle chiese e d'altri edifici di Roma cit.*, VI, Roma 1875, p. 274 n° 985. L'iscrizione di Gregorio Bugdan è menzionata anche da G. Hofmann, *La chiesa cattolica e il popolo armeno*, in *La Civiltà Cattolica* 95/2 (1944), pp. 354-365: p. 362 in nota, ove rinvia all'edizione sia dell'armeno che del latino fatta da Sebastian Euringer, *Zwei orientalische Epitaphien in San Michele in Sassia in Rom*, in *Oriens christianus*, ser. III, 8 (1933), pp. 161-163 (con alcune imprecisioni relative all'armeno).

Rione Monti, è un piccolo gioiello di architettura barocca realizzato da Francesco Borromini (1599-1667). L'iscrizione armena non si trova all'interno della chiesa, ma nel primo locale che si raggiunge attraverso un ingresso che si apre sulla destra del presbiterio. Collocata per terra in un punto di passaggio, la lapide presenta forti segni di usura dovuti al calpestio.

Il testo latino, inciso nella parte superiore della lapide, è il seguente:

D(eo) O(ptimo) M(aximo) | Alexander Aslan | patria |
Constantinopolitanus | dignitate | Vanensis Archiepiscopus Armenus | qui
| omnia relinquens | ut | non perderet omnia | ad | hanc S(anctam) Sedem
filiali obedientia venerandam | venit | et in hac trinitaria religiosa domo |
religioso receptus hospitio | mortis memor | vivens | h(oc) l(egavit) | Obiit
die XIX Maii R(edemptionis) a(nno) MDCC/CII aet. XCVI¹

«A Dio Ottimo e Sommo. Alessandro Aslan, costantinopolitano per patria e arcivescovo armeno di Van per dignità (ecclesiastica), che tutto lasciando per non perdere tutto, venne con filiale obbedienza in questa veneranda Santa Sede e, accolto con religiosa ospitalità in questa casa religiosa trinitaria², memore della morte, in vita provvide al sepolcro per legato. Morì il 19 maggio dell'anno della Salvezza 1792, all'età di 96 anni».

Segue al centro lo stemma, di cui si distinguono ancora i contorni ma non i particolari. Esso mostra in alto una mitra posta sopra l'incrocio di due bastoni pastorali i cui dettagli risultano pressoché indistinguibili. Al

¹ Forcella, *Iscrizioni delle chiese e d'altri edifici di Roma* cit., III, Roma 1873, p. 271 n° 650; l'affermazione che vi si legge sulla collocazione della stessa «Nel pavimento sulla linea di mezzo», se attendibile, lascerebbe supporre che la lapide fosse a quel tempo collocata in un punto centrale della chiesa stessa. Anche Mesrop Owl'owrlean, che menziona l'iscrizione nella sua Storia (cfr. **Mesrop vardapet Owl'owrlean**, *Storia della Colonia armena di Livorno* cit., p. 183), afferma che essa si trovava nella chiesa.

² Si allude ai frati dell'Ordine della SS. Trinità, cui appartiene tuttora la chiesa, sui quali si veda ancora in seguito.

centro dello stemma sappiamo che vi era un leone avente tra le zampe il mondo, quest'ultimo forse ravvisabile in una linea circolare ancora visibile¹.

Nel testo armeno, composto in modo che ogni riga termina con la lettera -ն, si legge:

Այս է շիրիմ ան տ/ան | Ասլանեան զարմ Աղեքսանդրին
| ծննդեամբ կոստանդնուպոլսեան | Եպիսկոպոս Վան քաղաքին |
ի մեծ Հայաստան աշխարհին | Սա եկն ի Հոռմ առ գահ պետին | ի
դաւանիլ զճշմարտութիւն | ուղղափառական հաւատոյն | Հան-
գեաւ ի Տէր ամօք Ղ [եւ Զ] ին

Յամի Տ/ան ՌԶՂԲ մայիսի ԺԹ ին

«Questo è il sepolcro di *Tēr Alek'sandr* della famiglia Aslanean, costantinopolitano di nascita, vescovo della città di Van nella Grande Armenia. Egli venne a Roma presso la cattedra del capo (= il papa) per professare la verità della fede ortodossa. Riposò nel Signore all'età di 96 anni».

Il prelado armeno, come riferito dall'iscrizione latina, ricevette dunque accoglienza nel convento annesso alla chiesa di S. Carlo dei frati detti Trinitari, ovvero dell'*Ordo Sanctissimae Trinitatis redemptionis captivorum*, cui il complesso appartiene tutt'oggi. Qui egli lasciò inoltre disposizioni per esservi sepolto, secondo quello che sembra essere lo scioglimento più probabile dell'abbreviazione latina (*h[oc] l[egavit]*). Essendo compito precipuo di tale ordine religioso, come è specificato anche dal nome, quello di liberare gli schiavi, in particolare quelli cristiani caduti in mani musulmane, favorendone il riscatto, si potrebbe

¹ Interpretiamo in questo modo l'espressione *ariwe unelov zašxarh i žanis iwr* (letteralmente «un leone recante il mondo tra le zanne») che si legge a p. <93> del ms. 2721 della Biblioteca dei PP. Mechitaristi di S. Lazzaro a Venezia, in un foglio aggiunto successivamente contenente la descrizione e la trascrizione sia del testo latino che di quello armeno della nostra epigrafe. La presenza del leone si lega con ogni probabilità al cognome del personaggio, Aslanean, dal vocabolo turco *aslan* («leone»).

supporre che il vescovo armeno, per la sua conoscenza della lingua turca, avesse partecipato alle attività dei frati che lo avevano accolto prestando la sua opera in questo senso.

In effetti, la curia poteva disporre l'accoglienza di prelati stranieri, in particolare di rito orientale, presso gli ospizi romani, come è stato recentemente evidenziato per un altro ecclesiastico armeno presente a Roma in questo stesso periodo, il vescovo di Aleppo Suchias Khaxavat, morto nel 1743 dopo essere stato ospitato presso la comunità dei Ruteni nella chiesa dei Ss. Sergio e Bacco, ai quali lasciò i suoi beni e la sua ricca biblioteca¹. Il religioso, che precedentemente dimorava presso l'ospizio di S. Maria Egiziaca, dovette ottenere per il suo spostamento il consenso del cardinal Pier Luigi Carafa (1677-1755), l'allora protettore e visitatore apostolico della chiesa e dell'ospizio armeno².

Un'ipotesi di contestualizzazione

Al termine di questa breve descrizione delle tre epigrafi settecentesche armeno-latine non facenti parte del gruppo di quelle di S. Maria Egiziaca, restano ancora da chiarire le motivazioni per le quali questi personaggi furono sepolti nelle chiese menzionate. A questo scopo, particolarmente utile potrebbe rivelarsi lo spoglio dei documenti dell'Archivio della Congregazione de Propaganda Fide, dell'Archivio Segreto Vaticano e dell'Archivio del Pontificio Collegio Armeno, nel

¹ Si veda L. Tatarenko, I ruteni a Roma: i monaci basiliani della chiesa dei Santi Sergio e Bacco (secoli XVII-XVIII), in A. Molnár, G. Pizzorusso e M. Sanfilippo (a cura di), Chiese e nationes a Roma: dalla Scandinavia ai Balcani. Secoli XV-XVIII, Roma 2017, pp. 184-185, dove il nome del prelado armeno è così riportato; lo studioso segnala la documentazione consultata: APF (= anche in seguito Archivio della Congregazione de Propaganda Fide), Congressi. Ser. II, Ospizio dei Ruteni. vol. 1, ff. 39r-62v.

² Queste notizie sono tratte da una nota biografica sul personaggio, qui chiamato Suchias Cassevet, reperibile in APF, CP 133, ff. 6v-7r; dalla stessa risulta anche che egli fu per qualche tempo docente di lingua armena presso il Collegio Urbano e poi confessore dei suoi connazionali a S. Pietro. – Non si sono trovate al momento notizie circa il luogo in cui è collocata, se ancora esiste, la sua lapide.

quale ultimo, come è noto, sono state trasportate le carte relative a S. Maria Egiziaca. In attesa di nuovi dati, vorremmo formulare un'ipotesi sul primo e più alto in grado dei tre defunti, il patriarca di Costantinopoli Matteo Bali, che possa spiegare il motivo del suo rapporto con la chiesa di S. Giovanni Decollato. Oltre al fatto di essere stato patriarca di Costantinopoli negli anni 1692-1694¹, sappiamo su di lui che, al tempo delle forti tensioni che nei primi anni del XVIII secolo opposero, nella capitale ottomana, il clero armeno ortodosso e quello cattolico, egli fece parte del gruppo di preti cattolici arrestati la notte del 2 novembre 1707 insieme al sacerdote uxorato Gomidas Keumurgian (K'ēōmiwrēan in traslitterazione scientifica) o, secondo la forma italianizzata del nome, Cosma da Carboniano (1656-1707). Condannati tutti a morte per decapitazione, il solo Gomidas, destinato a divenire beato dopo un processo durato più di due secoli, rifiutò l'abiura che gli avrebbe salvato la vita e si sottopose al martirio²; gli altri, colti da terrore, accettarono invece di convertirsi all'islam. Il terribile momento è così descritto nel libro del p. Minas Nurikhan, *Il Servo di Dio Abate Mechitar*, Venezia 1914, pp. 159-160:

Fra i carcerati vi erano altri notabili, e tra questi il vescovo Matteo Sari [Matteo Bali]³, antico Catholicos (di Cilicia), e poi patriarca

¹ L'indicazione degli anni varia nelle fonti, probabilmente perché i patriarchi in quel tempo venivano eletti e deposti più volte.

² Sulla figura di Gomidas e sul lungo processo che portò alla sua beatificazione si veda il recente contributo di C. Santus. Un beato martire per la nazione martire. La causa di beatificazione del sacerdote armeno Gomidas Keumurgian (1709-1929), in *Un mestiere paziente. Gli allievi pisani per Daniele Menozzi*, a cura di A. Mariuzzo, E. Mazzini, F. Mores, I. Pavan, Pisa 2017, pp. 221- 233, con bibliografia.

³ Per il collegamento tra i due nomi si veda il Ristretto della vita, e martirio del servo di Dio D. Cosmo de Carbognano raccolta dagli autentici scritti della cancellaria vicariale di Costantinopoli per opera di Cosimo Cav. Comidas de Carbognano, Roma 1807, dove, nella lista dei patriarchi (di Costantinopoli) pubblicata a p. 10, si legge «Matteo Bali di Cesarea detto Sari, Es (sic) patriarca di Sis: 1692», e nella relativa nota: «Nella Persecuzione del 1706 fu messo in galera come gli altri Cattolici: e dopo la morte di Der-Comidas si ritirò in Roma, e ivi finì i suoi giorni».


di Costantinopoli. Quando questi carcerati furono condotti al luogo del supplizio, corsero attorno tutti: familiari ed amici piangenti in alta voce e preganti che rinnegassero momentaneamente. Essi si tenevano forti, ma tremarono al balenare delle spade di morte, ed i disgraziati comprarono la vita, col rinnegare la fede cristiana. Però toccati poi dalla misericordia divina, sinceramente si pentirono, e si rifugiarono in paesi cristiani per piangere ed espiare tanta colpa. Anzi il vescovo Matteo Sari si recò a Roma, dove condusse una vita esemplare di penitenza, e morì dopo di aver dato prove luminose del suo sincero pentimento¹.

Forse non è troppo lontano dal vero immaginare, sulla scorta della descrizione del p. Nurikhan, che Matteo Bali, ormai anziano e provato da una così tragica esperienza, una volta giunto a Roma nella chiesa di S. Maria Egiziaca, potesse aver trovato nella vicina chiesa di S. Giovanni Decollato, e nell'attività di consolazione a favore dei condannati a morte svolta dall'omonima Arciconfraternita, il luogo e il contesto adatto per attuare la sua espiatione. Di certo una forte impressione devono aver suscitato in lui le scene relative alla vita e soprattutto alla decollazione di S. Giovanni Battista che campeggiano nelle pareti dell'oratorio e della chiesa, *in primis* la pala d'altare, opera di Giorgio Vasari; o anche i cortei notturni – nei quali facilmente avrebbe potuto imbattersi – formati dai membri dell'Arciconfraternita, i cosiddetti «comfortatori» che, incappucciati e con i lumi in mano, si dirigevano verso le carceri romane². In attesa di poter meglio definire le modalità dell'eventuale collaborazione prestata da Bali alle opere dell'Arciconfraternita – secondo dati da ricercare in questo caso nell'Archivio stesso di S. Giovanni Decollato – concludiamo affermando

¹ Al termine della sua descrizione, p. Nurikhan indica come fonte il terzo libro della *Patmut' iwn Hayoc'* [= Storia degli Armeni] del p. M. Čiamč'ean, I-III, Venezia 1784-1786, dove l'episodio è narrato al cap. 43, pp. 753-754.

² In una stanza adiacente agli uffici dell'Arciconfraternita sono ancora conservati gli oggetti e le cappe utilizzate un tempo dai suoi affiliati, comprese le ceste che essi recavano con sé per recuperare, una volta terminata l'esecuzione, la testa del condannato.

che, se anche la definizione di *orthodoxae fidei in angustiis, in vinculis, in tormentis propugnator imperterritus* che gli attribuisce la lapide non provoca in noi, alla luce di quanto esposto, quell'ammirazione che si suppone provocasse nei visitatori della chiesa, di certo essa suscita la nostra umana comprensione.



Roma, chiesa di S. Carlo alle Quattro Fontane: iscrizione di Alexander Aslanean (anno 1792)

Հայերի՝ իրենց բնաշխարհից աշխարհագրականորեն հեռու տարածքներում հայտնվելը վաղուց ի վեր դադարել է արտառոց երևույթ ընկալվել: Մշտապես դեպի նորանոր հորիզոնների ձգտող հայ ժողովրդի զավակները թափանցել են մինչև անգամ մայրցամաքների ծայրամասերը, հիմնական բնակավայրերից հեռու գտնվող ու նվազ բնակեցված շրջանները՝ Հարավային Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և Նոր Զելանդիա ու մինչև անգամ՝ Արկտիկայի նախաշեմ, Ալյասկա և կամ Խաղաղ օվկիանոսի արևմտյան ու կենտրոնական հատվածներում գտնվող հարյուրավոր կղզիներից կազմված Օվկիանիա¹:

Սույն հաղորդումը վերաբերում է վերջին աշխարհաքաղաքական տարածաշրջանում հայերի սակավաթիվ ներկայության փաստերին: Եթե Ավստրալիայում ու Նոր Զելանդիայում 19րդ դարից սկսած հայտնվել են հայեր², և հետագա դարում կազ-

¹ Այս տեղանունը ժամանակին հայերեն թաղգմանվել է Օվկիանոսը՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում և Հայաստանի նկարիչների միությունում բացված ֆրանսիացի նկարիչ Նիկոլայ Միշուտովիչին¹ խաղաղօվկիանոսյան կղզիների բնիկների արվեստի և արհեստի գործերի հավաքածուի կապակցությամբ (տե՛ս Օվկիանոսի ազգագրությունն ու արվեստը, Յուգոսլավիայի ուղեցույց, Մարդարայատ, 1981), սակայն շինծու լինելով՝ իրավամբ չի մտել շրջանառության մեջ:

² Ընդունված էր այն կարծիքը, թե առաջին հայն Ավստրալիա է մեկնել 1918-ին, իսկ համայնքի հիմքը դրվել է Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ այդ մայրցամաք են գաղթել 30 հայեր՝ Լիբանանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Պաղես-

մավորել է համայնք, որի պատմությունն այս կամ այն չափով ուսումնասիրված է¹, ապա Օվկիանիայում հատուկենտ հայերի ներկայությունը տակավին չի քննվել²: Այս տարածաշրջան պարզապես ճանապարհորդած հայերի թիվն անգամ մեծ չէ³, չխոսե-

տինից և Եգիպտոսից (տե՛ս Գաղութ գաղութ, Յառաջ, Փարիզ, 29.03.1952): Սակայն հայազգի ավստրալական պատմաբան Նադյա Բայթը պարզել է, որ դեռևս 1857-ին Ավստրալիայի Վիկտորիա քաղաքում ապրել է առնվազն 17 հայ (տե՛ս Wright Nadia, *Armenians in Victoria, Australia, in the Ninetecnth Century*, «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրուք, հտ. ԻԸ., 2008, էջ 61-88):

¹ Տե՛ս Աւստրալիոյ հայ գաղութը, «Նոր երկիր», Աթենք, 15.07.1928: *Armerians in Australia and New Zealand*, compiled by Aramais Mirzaian, Sydney. 1966. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 86-91:

² Այստեղ չենք անդրադառնա Լեյլա Գ. Ստեփանյանի այն դրույթին, հաւածայն որի Պոլինեզիայի բնիկների նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է՝ հիմնված պոլինեզիական լեզուների (մասնավորապես՝ ռապանուեերենի) և հայերենի, ինչպես նաև երկու ժողովուրդների դիցարանների և տեղանունների զուգահեռ քննության վրա (տե՛ս Ստեփանյան Լ., Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Երևան, 2015):

³ 1954-ին Հավայան կղզիներում և Ֆիջիում է եղել հոգևորական Ասողիկ Ծայրագույն վարդապետ Ղազարյանը, իր հողվածում վկայել այդ կղզու բնիկների, նաև՝ առաջինի հայազգի բնակիչների մասին (Ասողիկ Ծ. վրդ., Սան Ֆրանսիսկոյէն դէպի Սիտի, «Սիտն», Երուսաղեմ, 1955, Փետրուար, թ. 2, էջ 6062, Մարտ, թ. 3, էջ 91): Օվկիանիա հազվադեպ այցելել են հայ արվեստագետներ և գիտնականներ՝ Խորհրդային Սիությունից: Թերևս առաջինը եղել է ծնունդով հայաստանցի ճանապարհորդ Ալեքսանդր Երվանդի Պողոսովը (1908–), որը 1965-ին ԽՍՀՄ ԳԱ «Վիտյակ» նավով մասնակցել է աստղագիտական արշավախմբին որպես պետի տեղակալ, մեկ ամիս ապրել Քուրի կղզիներում, այցելել Արևմտյան Մաուա, Հավայան կղզիներ, Թաիթի և այլուր: 1970ին Պողոսովը դարձյալ արշավախմբի պետի տեղակալի պաշտոնով մասնակցել է մեկ այլ գիտարշավի՝ այցելելով Պապուա Նոր Գվինեա, Ֆիջի, Նոր Կալեդոնիա, Նաուրու, Արևմտյան Մաուա (տե՛ս Պողոսովը Չեյուսկիյան լեզենդից, հարցազրույցը վարեց Հովհաննես Այվազյանը, «Գարուն», Երևան, 1986, թ. 3, էջ 72): 1971-ին հայ բուսաբան, սկադեմիկոս Արմեն Թախտաջյանը (1910–2009) մասնակցել է խաղաղօվկիանոսյան ծովային արշավախմբին, այցելել Ֆիջի, Մաուա, Պապուա Նոր Գվինեա, Նոր Կալեդոնիա, Լորդ Հաու կղզում ուսումնասիրել է տեղական բուսաշխարհը, որը գրեթե անհայտ է եղել:

լով ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատածների մասին: Հիմնական վայրերը, որտեղ ապրել են հայեր, հանրահայտ Թալիթի կղզին է և ԱՄՆ-ի հիաունմեկերորդ նահանգը հանդիսացող Հավայան կղզիները, որտեղ մինչև անգամ կա փոքրաթիվ համայնք:

Սկսած 16-րդ դարից՝ եվրոպացի ճանապարհորդներն ուսումնասիրել են Օվկիանիայի կղզիները, որոնք 18-րդ դարում սկսել են զաղութացնել եվրոպական տարբեր երկրներ, և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը սկսել էր մատչելի դառնալ եվրոպացի ընթերցողին: 18րդ դարում Վենետիկում տպագրված հայալեզու քարտեզներում «Ծով Հարաւային կամ Խաղաղական»ում արդեն հիշված են Օվկիանիայի որոշ կղզիները, մասնավորապես՝ «Կդ. Մարքեզի մենտոգեան»ը: Իսկ հայալեզու տպագիր գրականության մեջ, որքանով պարզել ենք, Օվկիանիան առաջին անգամ հիշատակվել է Ստեփանոս Ագոնցի աշխարհագրության գրքում, որտեղ կան նաև այս տարածաշրջանի վերաբերյալ առանձին գլուխներ՝ «Կղզիք Ընկերութեան», «Դալիդի կամ Օդաիդի», «Կղզիք Բարեկամաց» և «Օվայիի կամ Օվիել»¹:

1977-ին խորհրդային պատվիրակության կազմում Ավստրալիա և Ֆիջի է ճամփորդել զրոգ Արտաշես Քալանթարյանը, հանդես եկել այդ մասին ուղեգրությամբ (տե՛ս Քալանթարյան Ա., Ֆիջի, «Մովետական գրականություն», Երևան, 1977, թ. 10, էջ 105-122): 1997-ին Թալիթի և ԲորաԲորա կղզիներում վավերագրական կինոկարներ է նկարահանել Ստաս Նամինը (Նևաստաս Միկոյան): Հիշենք նաև, որ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ՀՀ ԳԱԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտի գիտաշխատող Լևոն Աբրահամյանը 1978 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ Ավստրալիայի և Օվկիանիայի բնիկների մշակույթի վերաբերյալ:

¹ Տե՛ս Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի... Աշխատասիրութեամբ Տ. Ստեփանոսի Գիւլէր Ագոնց, 1805, Վենետիկ, էջ 418440:

ՊԱՊՈՒԱ ՆՈՐ ԳՎԻՆԵԱ

Քննվող տարածաշրջանում հայտնված առաջին հայր, որի անունը մեզ հայտնի է, եղել է 20-րդ դարի սկզբին Հեռավոր Արևելքի երկրներում և Ավստրալիայում դեգերած պոլսեցի, հետագայում ամերիկաբնակ գործարար և Հայ բարեգործական ընդհանուր միության բարերար անդամ Երվանդ Հակոբյանը:

Մարգարիտ որոնելու և մարգարտի առևտրով զբաղվելու նպատակով նա որոշ ժամանակ բնակվել է Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում, Ֆիլիպիններում (որտեղ ամերիկյան գինվորականների մեջ հանդիպել է մի հայի), Ավստրալիայում և չորս տարի՝ Պապուա Նոր Գվինեայում: Ավստրալիայից մեկնելիս մի օվկիանոսացի ընկերոջ հետ նստել է առագաստանավ, որտեղ որպես նավաստի եղել են հին մարդակեր գվինեացիներ: Նրանցից մեկը շոշափել է Հակոբյանի թևը և ասել, որ այս մարդը պարարտ է և հարմար՝ կերակուր դառնալու համար: Հակոբյանը, որն արդեն սովորել էր պապուասերեն, հասկացել է, և ամերիկյան տասհարվածյան հրացանը միշտ նավագների կրծքին բռնած՝ ճամփորդել է հինգ ցերեկ և հինգ գիշեր: Երկու ընկերները փոխնեփոխ, չորս ժամը մեկը, զենքը մեկը մյուսին փոխանցելով, սպառնալից ու զգուշավոր դիրքով կարողացել են անվտանգ կատարել իրենց ճամփորդությունը: Արդեն նավի մեջ Հակոբյանը սկսել է ուսումնասիրել մարդակերների կենցաղն ու բնավորության գլխավոր գծերը: Զարմանքով տեսել է, որ վայրենիները կոտորում են հանքային ջրի շիշը և ապակիով սափրվում՝ առանց մաշկը վնասելու կամ՝ անտառներում իրենց յոտնատակին, առանց ցավ զգալու,

կարում են կենդանու հաստ կաշիներ, այնքան կարծրացած է նրանց ոտքերի մաշկը:

Չորս տարի շարունակ Երվանդ Հակոբյանը մանրամասնորեն ուսումնասիրել է Նոր Գվինեայի բնիկների բարքերն ու սովորությունները: Լինելով երաժիշտ՝ նա ձայնագրել է 26 զանազան գվինեական եղանակներ, որոնք մտադիր է եղել հրատարակել՝ փաստորեն դառնալով գվինեացիների Կոմիտաս Վարդապետը: Այդ չորս տարվա ընթացքում իր ընկերներով միշտ նավի մեջ են գիշերել: Ծանոթացել է կառավարության անգլիացի փոստային կառավարչի հետ, որը 14-րդն է եղել այդ պաշտոնում, քանի որ նախորդ բոլոր պաշտոնյաները տարբեր ժամանակներում սպանվել և կերվել են: Անգլիացին պարզաբանել է, որ ինքն այդ վտանգավոր տեղն աշխատում է, քանի որ Անգլիայի 100 ֆրանկի փոխարեն ինքը 300400 ֆրանկ աշխատավարձ է ստանում:

Մի անգամ, երբ Հակոբյանը իր չորս ընկերների հետ զբոսնել է անտառում. հայորդուն իր պարթև հասակի համար խմբի առաջնորդ են ընտրել: Հանկարծ նրանք անտառի խորքում հայտնաբերել են, որ շրջապատված են մոտ 500 մարդակերներով: Ծառերի վրա դիրքավորվելով՝ հրաձգություն են սկսել, սպանել 67 պապուասի, մյուսները փախել են, սակայն մի նետ վիրավորել է Հակոբյանին: Բարեբախտաբար, նետը թունավորված չի եղել, այլապես նա ողջ չէր մնա:

Այս պայմաններում Հակոբյանին հաջողվել է որոշակի հարստություն կուտակել, Գվինեայի ծովափին անձամբ հավաքել է մարգարտի խեցիներ և ուղարկել է Փարիզ՝ իր հրեա ընկերներին, որոնք շահագործել են նրան՝ 100 ֆրանկի մարգարի-

տը 1000ի ծախելով: Հիվանդանալով դեղին տենդով՝ Երվանդ Հակոբյանը ստիպված վերադարձել է Եվրոպա, որտեղից էլ հետագայում տեղափոխվել է ԱՄՆ¹:

ՀԱՎԱՅԱՆ ԿՂԳԻՆԵՐ

1955-ին սփյուռքահայ մամուլում տեղեկացվել է, թե Կալիֆոռնիայի մասին գրքերից մեկում ակնարկվում են Հայկական կղզիները (Armenian Islands), որոնց նկարագրությունից պարզ է դառնում, որ խոսքը Հավայան կղզեխմբի մասին է: «Արդեն «Հաւայան» եկած կրնայ ըլլալ «հայ» կամ «հա'այ» բառէն: Ծանօթ է, թէ Հաւայան կղզիներու բնակիչները մասամբ սերունդն են Սիպերիոյ վրայով Խաղաղականի կղզիները անցած եւրոպացիներու»²: Վստահաբար նկատի է առնված ամերիկացի պատմաբան Ջոն Ուոլթոն Քոֆիի (1902–1995) 1940 և 1953 թթ. հրատարակված «Կալիֆոռնիա» աշխատությունը, որտեղ «Հայկական կղզիները» հիշվում են Ճապոնիայից արևելք³: Քոֆին հղել է Հավայան կղզեխումբը հետազոտած իսպանացի ծովային Ֆրանսիսկո Գալիին (1539–1591), որն էլ մեջքերել է իր նավատարի կողմից «Հայկական կղզիների» նկարագրությունը⁴: «Հայկական կղզիներ» անվան առկայությունը թյուրիմացության արդյունք է թվում⁵:

¹ Տե՛ս Աղաթոն Ե. Գ., Ո՞վ է Երուանդ Յակոբեան եւ ի՞նչպէս բարերար անդամ եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, «Միութիւն», Գահիրէ, 1913, թ. 17, Մայիս, էջ 68-69: Նոյնի, Գաղափարի նշխարներ, Մարսէլյ, 1934, էջ 67-72:

² Հայկական անուններ հեռուոր երկիրներու մէջ, «Զարթօնք», Պէրոյթ, 13.08.1955:

³ Տե՛ս John Walton Caughey, California, PrenticeHall, 1953, էջ 70:

⁴ Տե՛ս John Walton Caughey, California, PrenticeHall, 1940, էջ 70:

⁵ Հարցի քննությունը մանրամասն տե՛ս Վարդան Մատթէսեան, Դրուագներ ԺԵ-ԺԹ. դարերի հայ-սպանական պատմամշակութային կապերէն, «Բազմավեպ», Վենետիկ, 2003, թ. 14, էջ 191-195, տե՛ս նաև Վահան Մարգարյան, Հայկական կղզիները, «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում =

Հավայան կղզիների հետ հայ ժողովրդի առաջին հայտնի առնչությունը վերաբերում է Ցեղասպանությունից հետո սկիզբ առած հայանպաստ շարժմանը: Ըստ ավստրալահայ պատմաբան Վիգեն Բաբկենյանի՝ 1919 թ. հիմնված Մերձավոր Արևելքի նախատամատույց կազմակերպության միջազգային կոմիսար, ամերիկացի կոնգրեզացիոնալիստ քահանա Լինքոլն Լ. Ուիրթը հայոց Ցեղասպանությունից փրկվածներին օգնելու նպատակով 1922–1923 թթ. մասնաճյուղեր էր հիմնել Հավայան կղզիներում, Ճապոնիայում, Չինաստանում, Կորեայում, Ֆիլիպիններում, Նոր Զելանդիայում և Կուբայում: Նա իր առաքելությունը սկսել է Հավայան կղզիների Վայկիկի բնակավայրից՝ տեղական արքայական պալատում արժանանալով ջերմ ընդունելության: Միջոցառման ժամանակ ստեղծվել է հայերի օգնության հանձնախումբ, որի նախագահ է ընտրվել Հավայանների ամերիկացի նահանգապետ Սանֆորդ Բ. Դոուլը, քարտուղար՝ հայտնի միսիոներ դոկտոր Վիլյամ Դ. Վեսթերվելթի տիկինը: Նրանց ուղեկցությամբ Ուիրթն այցելել է կղզիներից յուրաքանչյուրի քաղաքը՝ հայերի համար օգնություններ հավաքելու: Ուիրթը վկայել է, որ յուրաքանչյուր համայնքում հանձնախմբեր են ստեղծվել, և Հավայան կղզիներից մեկնելիս նրա ձեռքին եղել է 50 հազար ԱՄՆ դոլար, կրկնակին՝ իր ակնկալածից: Հավայանների հայերի օգնության հանձնախումբը շարունակել է շռայլ նվիրատվություններ կատարել, և 1920-ական թթ. վերջին հավաքել է ավելի քան 200 հազար դոլար (այսօրվա արժեքով՝ մոտ 2.8 միլիոն դոլար), որն այն

Культура моря - культура человечества в диалоге цивилизаций», «Այսա» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2010 թ., մայիսի 14-16, լսմ. խորհուրդ՝ Է. Դանիելյան և ուրիշ, Երևան, 2011, էջ 70-71:

ժամանակվա համար հսկայական գումար էր¹: Ի դեպ, սկսած 1916-ից, հավայան մամուլը («Հառուայան գազեթ», «Հոնոլուլու սթար բուլեթին») անդրադարձել է Ցեղասպանությանը և հայերին ուղարկվող մարդասիրական օգնությանը:

Թուրքիայում 20 տարի որպես միսիոներ աշխատած դոկտոր Ջոն Ք. Բրաունը 1921-ին Մաուիի միջնակարգ դպրոցում ելույթ է ունեցել՝ մեծ համակրանք գտնելով ուսուցիչների և աշակերտների շրջանում պատմելով հայ տղաների և աղջիկների հերոսականության մասին: Նա մասնավորապես նշել է, որ հայերը, չնայած սակավաթիվ լինելուն, հրաշալի ժողովուրդ են, որոնք ապրում են սարսափելի պայմաններում, այնպես որ ամերիկացիները պետք է հնարավորինս օգնեն նրանց²:

Առաջին հայը, որը, մեզ հասած տվյալներով, հաստատվել է Հավայան կղզիներում, եղել է ուշագրավ մի անձնավորություն՝ տադանդավոր նկարիչ, «հավայան Գոգեն» անվանված Այրման (իսկական անունը՝ Թադնոս) Մանուկյանը (1904, Կ.Պոլիս – 1931, Հոնոլուլու): Հայ տպարանատեր Արշակ Մանուկյանի զավակը նախնական կրթությունն ստացել է Գալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանում: Մեծ եղեռնի նախօրեին, խուսափելով հալածանքներից՝ Արշակ Մանուկյանն ընտանիքով տեղափոխվել է Ֆրանսիա: 1920ին 16-ամյա Արմանին մայրն ուղարկել է Փրովիդենս (ԱՄՆ), որտեղ տղան սովորել է Ռոդ Այլենդի նկարչական դպրոցում: Ջրադվել է գրքերի ձևավորմամբ, աշխատակցել «Լեդլերներ» ամսագրին: 1923 թվականին ծառայության է մտել

¹ St u Babkenian Vicken, Cuba, China, Korea, Hawaii and the Armenian Genocide, "The Armenian Review," New York, 10.11.2010:

² St u Hair Doris, High School Students Hear About Armenians, "Maui News," Maui, 11.03.1921:

ԱՄՆ նավատորմիդ, 1924-ին դարձել նավատորմիդի պատմա-
բան մայրո Հոլլին Նորթ Մքքլելանի համհարզը: Մեկ տարի անց,
երբ Մքքլելանը պաշտոնավարման է ուղարկվել Փըրլ Հարբոր
(Հավայան կղզիներ), նա իր հետ տարել է Մանուկյանին: Վեր-
ջինս Մքքլելանի գրած (և ցարդ անտիպ մնացած) ամերիկյան ծո-
վային հետևակի կորպուսի՝ շուրջ հազար էջանոց պատմական
ուսումնասիրության համար կատարել է 75 գծանկար: 1927-ին,
զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, Մանուկյանը
որոշել է մնալ և ստեղծագործել Հավայան կղզիներում: Հոնոլուլու-
ում աշխատակցել է տեղական ամսագրերին: 1928-ին դարձել է
Հոնոլուլուի արվեստագետների ընկերակցության անդամ: 1929
թվականին Արման Մանուկյանն ունեցել է իր առաջին անհատա-
կան ցուցահանդեսը: Խոր ընկճախտ ապրելով՝ նկարիչը 1931
թվականին ինքնասպանություն է գործել Հոնոլուլուում¹: Նրանից
պահպանվել է հավայացիների կյանքը պատկերող 31 յուղան-
կար, որոնք ներկայումս շատ բարձր են գնահատվում (գտնվում
են Բիշոփ և Հոնոլուլուի արվեստի թանգարաններում և մասնա-
վոր հավաքածուներում): 2010 թվականի նոյեմբերի 4-ից մինչև
2011 թվականի ապրիլի 24-ը Հոնոլուլուի Գեղարվեստի ակադե-
միան կազմակերպել է «Գույնի իմաստը, գծի արտահայտչություն-
նը. Արման Մանուկյանի մոդեռնիզմը» խորագրով: «*Իր պատկեր-
ները, ինչպես Փոլ Կոկենի Թափիթիի գործերը, անգոյ տեղի մը
խտելականացած վերապրումն են*»²:

¹ Տե՛ս Մատթեոսեան Վ., Արման Մանուկեան (1904–1931)՝հայ նկարիչ մը Հաու-
այի մէջ, «Օրեր», Պրահա, 2004, թիվ 12 (28), էջ 35-38 Տե՛ս նաև նույն հեղինակի
Դանիէլ Վարուժանի աշակերտը Հաուայի մէջ հողվածը (Մատթեոսեան Վ., Գրա-
կան-Բանասիրական ուսումնասիրութիւններ, Անթիլիաս, 2009, էջ 328-331):

² Նույն տեղում, էջ 330:

Հավանաբար Հոնոլուլուում հաստատված երկրորդ հայը եղել է Վասկան Գուկարստվը (Ոսկան կամ Վազգեն Ղուկասով-Ղուկասյան): Նա ծնվել է Թուրքիայում, կոտորածների հետևանքով տեղափոխվել Արմավիր (Ռուսաստան): Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հաստատվել է Հավայան կղզիներում, անունը փոխել Ալֆրեդ Ֆաուստ, ամուսնացել է ինդիանապոլսեցի ուսուցչուհի Ջեննիի հետ, ունեցել զավակներ: Ինքնակրթությամբ ձեռք է բերել ճարտարագետի մասնագիտություն: Մահացել է 1958-ին, Մաուի կղզում: 1973-ին ԽՍՀՄում մնացած նրա եղբայրները դիմել են Հավայան կղզիներ և գտել են նրա ընտանիքին: Ալֆրեդ Ֆաուստի ընտանիքը նոր միայն իմացել է հոր ազգությունը, որին մինչ այդ ոռու է կարծել: Այդ առթիվ դուստրը՝ Սոնիա Ֆաուստը (1936–2014), գրել է «Հայրենիքից հեռու» ակնարկը, որ հրատարակվել է Նյու Յորքի «Արարատ» անգլերեն քառամսյա հանդեսում¹: Հայկական ծագումով այդ հավայուհին մեծացել է Վահիավայում, Լոս Անջելեսում և Մաուի կղզում, որի Բալդվին միջնակարգ դպրոցն ավարտել է 1955 թվականին: 1959-ին ավարտել է Հավայան համալսարանը, որից հետո իրավաբանական կրթությունը շարունակել է Սան Ֆրանցիսկոյում: Որպես իրավաբան և փաստաբան պաշտոնավարել է Հավայան կղզիների նահանգի տարբեր պետական մարմիններում²:

1955-ին Հավայան կղզիներ է այցելել մի հայ հոգևորական և հայ մամուլին վկայել, որ Հոնոլուլուում ապրում են մի քանի

¹ Տե՛ս **Faust Sonia**, *Far From the Fatherland*, "Ararat Quarterly", New York, volume XV no 1, Winter, 1974, p. 5: Հոր մասին տե՛ս նաև շապիկի երկրորդ էջին:

² Սոնիա Ֆաուստի մասին տե՛ս **Hope Judith**, *Pinstripes and Pearls*, Simon and Schuster. 2003, p. 165. **Sonia Faust**, Honolulu StarAdvertiser Obituaries (Posted On November 23rd, 2014):

հայեր՝ **Ռոյ Էսոյանը**, ամերիկացու հետ ամուսնացած Ֆրեզնոյում ծնված ծագումով մշեցի **Հակոբյան** ընտանիքի դուստրը, **Հակոբ Բարայեյանը**, որը միաժամանակ ուսանել և դասավանդել է տեղի համալսարանում, ինչպես նաև «Ասոյշիեդ փրեսի» լուսանկարիչը Հավայաններում նույնպես հայ է եղել¹։ Այս անուններից ճանաչված է լրագրող **Ռոյ (Գարեգին) Էսոյանը** (1919, Յուրուգա, Հապոնիա – 2012)։ Կարնեցի ծնողների զավակ Էսոյանը կրթությունն ստացել է Շանհայում (Չինաստան), իսկ 1950-ականներին տեղափոխվել է Հոնոլուլու (Հավայան կղզիներ), որտեղ դարձել է «Ասոյշիեդ փրես» գործակալության թղթակից։ Ռոյ Էսոյանի և ամերիկուհի Բեթսի Ռոյ Էսոյանի որդին՝ **Դեյվիդ Էսոյանը**, 25 տարի բնակվել է Հապոնիայում, իսկ ներկայումս բնակվում է Հավայան կղզիներում։ Այստեղ է բնակվում նաև Դեյվիդի քույրը՝ գրող **Սյուզան Էսոյանը**։

Կյանքի վերջին տարիներին Հավայան կղզիներում է բնակվել նաև ֆրանսիական թատրոնի հայազգի դերասանուհի **Նադեժդա Փիթոնան** (1916–²), ծնունդով թիֆլիսցի նշանավոր դերասան և բեմադրիչ Ժորժ Փիթոնի (Գեորգի Փիթոյան) դուստրը, որը Հոնոլուլուում դասավանդել է թատերական արվեստ, ուսանողների հետ բեմադրել Ժան-Բատիստ Մոլիերի թատերախաղերն անգլերեն։

Հայազգի ամերիկյան կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը (1911–2000) 1962-ին վեց ամիս ապրել է Հավայան կղզիներում, ուսումնասիրել տեղական և ճապոնական երաժշտություն, մաս-

¹ Տե՛ս **Աստղիկ Ճ. Վրդ.**, Սան Ֆրանսիսկոյեն դեպի Սիտնի, «Սիտն», Երուսաղեմ, 1955, Փետրուար, թ. 2, էջ 62։ Նույնը տե՛ս Հայեր Հոնոլուլուի մէջ, «Յառաջ», Փարիզ, 29.03.1955։

նակցել է Հոնոլուլուի երաժշտության և արվեստի փառատոնին, որտեղ կատարվել է նաև նրա 15-րդ սիմֆոնիան:

1964-ին սփյուռքահայ մամուլը վկայել է, որ Հավայան կղզիներում բնակվում է տաս հայ, որոնցից երկուսն ամուսնացած են օտարազգիների հետ: Երեքն իրանահայեր են՝ Բուրոնի երաժշտանոցն ավարտած Հարմիկ Եղիազարյանը, որը նվագում է Հոնոլուլուի սիմֆոնիկ նվագախմբում և երաժշտության բասսատու է դայրոցում: Իրանահայ օրիորդ Ռիտան պաշտոնավարել է ապահովագրական ընկերության մեջ, իսկ երրորդ իրանահայ Ավետիսյանը, տնօրինել է «Պարսկական ոսկեղեն» խանութը: *«Այս իրանահայերը հայերու կարօտ կը քաշեն, իսկ միւսները քիչ մը ամերիկացած են»¹:*

1967ին Հոնոլուլուի Հավայան համալսարանի ուսանող լիբանանահայ Սահակ Արսլանյանը հայ մամուլին գրած նամակում վկայել է, որ կղզիներում երեք հայ է բնակվում, երկուսը՝ պարսկահայ, մեկն՝ ամերիկահայ: Վերջինս տիկին Բեյքըր Հացագործյանն է, որն իրեն խնդրել է իր ավտոմեքենայի համար հայկական եռագույն դրոշ հայթայթել²:

1970-ից Պերճ Պուշագճյանը (անգլերեն գրվում է Բուշաքյան) Լոս Անջելեսից գաղթել է Հոնոլուլու և վկայել, որ 30 հայ է ապրում այնտեղ, բոլորն էլ՝ ամուսնացած հավայուհիների հետ³: Հետագա պրպտումները պարզեցին, որ Պերճ Պուշագճյանը ծնունդով եղել է Իսրայելից, 14 տարեկանից բնակվել է ԱՄՆում, որտեղ եղբայրների հետ զբաղվել է ոսկերչությամբ: Այժմ բնակ-

¹ Տասը հայեր կան Հավայեան կղզիներու մէջ, «Ազդակ», Պէրուք, 22.06.1964:

² Տէ՛ս Աստղ, Եռագոյնը հասցուցեք Հոնոլուլու, «Ազդակ», Պէրուք, 16.02.1967:

³ Տէ՛ս Հոնոլուլուի հայ գաղութը, «Արև», Գահիրէ, 21.06.1970:

վում է Կալիֆոռնիայում, որտեղ տնօրինում է մի քանի ցուցասրահ: Նույնպես ոսկերչությամբ են զբաղվել Հավայան կղզիներում բնակված Վիկտոր և Արի Գալուստյան եղբայրները: «Վիքթորը ջրվրի» ոսկերչական կենտրոնը ղեկավարել է Վիկտորը և իր կիները: Բոյաջյան ընտանիքը Հավայաններում տնօրինել է «Լեոգ տավերնա» ռեստորանը: Հայկական և ճապոնական ծագում ունի Սյուզի Ֆիլդը՝ Հոնոլուլուի ամենանշանավոր փաստաբան Ռիք Ֆրիդի կինը, որը մոդել է և անշարժ գույքի գործակալ¹:

2009-ին Երևանում կայացած ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպած իրավաբանների համահայկական առաջին համաժողովին մասնակցել է նաև փաստաբան, Հայ իրավաբանների միջազգային միության անդամ Դոուն Շահբազյան-Սմիթը՝ Հոնոլուլուից: Հայրն ամերիկացի Ֆրանք Սմիթն է, մայրը՝ Գրեյս Շահբազյանը, որի մայրը՝ Արշալույսը, եղել է Գուրունից (Մեքսատիա): Գրեյսը դստերն անվանել է Դոուն (անգլերեն՝ արշալույս) ի պատիվ իր մոր: Հավայաններում և ԱՄՆ այլ նահանգներում փաստաբանական կարիերայից բացի Դոուն Շահբազյան-Սմիթը զբաղվել է նաև կինոյով, իր սցենարով նկարահանել է մի կատակերգություն թուրքական բանտում մեծացած և հայերեն խոսող Դրակուլայի մասին, որը երկու հայ որբերի օգնում է գտնել Հոնոլուլուում գտնվող իրենց հորեղբորը: Ֆիլմը ցուցադրվել է Հավայանների հեռուստատեսությամբ. «Յունիվիզն» ընկերությունն այն հեռարձակել է երկու տարի շարունակ²: Դոունն ամուսնա-

¹ Տեղեկությունը՝ Դոուն Շահբազյան Սմիթի (2017 թ. մայիսի 8ի էլեկտրոնային նամակ):

² Դաֆնի Ն. Մ., Դոուն Շահբազյան-Սմիթ. Հայաստանից վերադառնալուն պես պետք է զբաղվեմ Հավայան կղզիներում հայ համայնքի կազմակերպմամբ հեռ://nt.am/a:n/news/54989/ (այցելությունը՝ 25.11.2010):

ցած է նիկարագուացի Հրլ Մալպարտիդայի հետ, ունի մեկ որդի՝ ամուսնացած չինուհու հետ

Դոուս Շահբազյան-Սմիթի վկայությամբ՝ Հավայան կղզիներում բնակվում է շուրջ 100 հայ: Չունենալով հայկական եկեղեցի՝ մեծ մասը հաճախում է հունական եկեղեցի: Նրանցից շատերը ներգաղթել են Հայաստանից, որոնցից է նաև Մարգարիտ Լավոիեն՝ Հավայանների նահանգային դեպարտամենտի արտասահմանյան ծառայության պաշտոնյա, որպես «Խաղաղության կամավորներ» կազմակերպության անդամ, Հայաստանում որոշ ժամանակ բնակված և Գավառի պետական համալսարանում դասավանդած Ֆրանկ Լավոիեի կինը: Ֆրանկ Լավոիեի ջանքերի շնորհիվ Հավայան կղզիներում մեծացել է իրազեկությունը Հայոց ցեղասպանության մասին, մտադրություն է եղել Հոնոլուլուի կենտրոնական այգում տեղադրել խաչքար (2017-ի տվյալով՝ տակավին չիրագործված): 2014-ից Լավոիե ամուսիններն ապրում և աշխատում են Բրազիլիայում:

Ի դեպ, Հավայան կղզիներ նահանգը 2014-ին ճանաչել է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հանրապետությունը՝ դառնալով ԱՄՆ 7-րդ նահանգը, որը ճանաչել է Արցախի անկախությունը: Չնայած ԱՄՆում Ադրբեյջանի դեսպանատան ճնշումներին՝ Հավայանների ներկայացուցչական պալատն ընդունել է այդ փաստը, այն էլ՝ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Վաշինգտոն կատարած այցից 24 ժամ առաջ: Այս գործում կարևոր դեր են խաղացել ներկայացուցչական պալատի անդամներ Անգուս Մքքելվին և Ջոն Միգունոն: Արցախյան խնդիրը լուսաբանելու գործում մեծ է եղել Հոնոլուլուից փաստաբան Արթուր Արթենյանի, նաև Ռուդի Դեքերմենջյանի և այլ հայերի դերը: Նրանց շնոր-

հիվ Հավայանների օրենսդրությունը հանրային քննարկման է ենթարկել և մերժել Ադրբեջանի մի քանի հակահայկական նախաձեռնություն¹: Հայկական շահերի պաշտպանության և ադրբեջանական հարձակումներին դիմակայելու գործում հատկապես կարևոր դեր են խաղացել Հավայանների հայ համայնքի երեք ակտիվ անդամները՝ Արփինե Ֆիյան Մարը, Արթուր Մարտիրոսյանը և Անի Մարտիրոսյան Մենոնը²: Իսկ 2015 թվականին մասնավորապես վերոհիշյալ Ֆրանկ Լավոիեի և Արթուր Արթենյանի ջանքերով Հավայան կղզիների սենատը պաշտոնապես ճանաչել է 1915 թվականի հայոց Ցեղասպանությունը, և ապրիլի 24-ը հայտարարվել է հայոց Եղեռնի զոհերի հիշատակի օր³:

ՊՈԼԻՆԵԶԻԱ

Ֆրանսիայի գաղութ Պոլինեզիայում և հատկապես Թաիթի կղզում ապրել և աշխատել են հատուկենտ ֆրանսաբնակ հայ գործիչներ:

Այստեղ հայտնված առաջին հայը եղել է զինվորական գործիչ Ռուբեն Միրիմանովը (24.04.1894, Թիֆլիս – 22.10.1967, Արուս, Օվկիանիա): Ծնվել է Սուրեն Միրիմանովի և Ելենա Սենկոսկայայի (հավանաբար՝ լեհ) ընտանիքում: Լինելով սպիտակգվարդիականների կազակական հեծելազորի սպա՝ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բնակվել է Ֆրանսիայում, ծառայել զինված ուժերում: 1942-ին զենեռալ Շառլ դը Գոլի կողմից ուղարկվել է Օվկիանիա՝ ռազմական ծառայության: Թաիթի կղզում աշխա-

¹ Hawaii Recognizes Nagorno Karabakh Republic's Independence, "Asbarez," Los Angeles, 3.04.2015.

² Hawaii Rejects Azeri Lies, "Asbarez," Los Angeles, 12.02.2014.

³ Still u Hawaii State Senate Recognizes Armenian Genocide, "Asbarez," Los Angeles, 3.04.2015:

տել է գյուղատնտեսության և ձիաբուծության ասպարեզում: 1944ին ամուսնացել է թաիթուի Աննա Ուրատուա Ալենի (ծն. 31.05.1919, Պապեետե) հետ, ունեցել երեք դուստր՝ Գալինա (1945), Նատաշա (1947) և Միլիցա (1949): 1945-ին կնոջ հետ հիմնադրել և մինչև 1958-ը ղեկավարել է ձիասպորտի դպրոց Պապեետեում: Հաճախ ճամփորդել է Ֆրանսիա, այնտեղից ներմուծել է ձիեր: Նրա մահից հետո գործը շարունակել են կինը և դուստրերը: Միրիմանովի անունը տեղ է գտել 1975-ին հրատարակված «Թաիթցիներ» տեղեկատուի մեջ¹: 2012ին նրա այրին՝ 93-ամյա Աննա Միրիմանովն արժանացել է Ֆրանսիայի Արժանյաց շքանշանին:

Մեզ հաջողվեց էլեկտրոնային նամակագրություն հաստատել Պունա՝աույայում (Ընկերության կողմից, ֆրանսիական Պոլինեզիա) բնակվող Նատաշա Միրիմանովի հետ՝ խնդրելով լրացուցիչ տվյալներ իրենց ընտանիքի մասին և լուսանկարներ: 2016-ի հոկտեմբերի 30-ին հայթաիթական ծագումով այդ կինը մեզ գրեց, որ իրենց հորաքույր Ջուլյա Միրիմանովան ամուսնացել է Յուրի Մաղաքյանի հետ, ապրել Երևանում. նրա որդին է աստղաֆիզիկոս, Բյուրականի աստղադիտարանի փոխտնօրեն Տիգրան Մաղաքյանը, որի հետ իրենք կապ են ունեցել: Այս նամակում ամենահետաքրքրականը Նատաշա Միրիմանովի այն վկայությունն է, որ Պոլինեզիայում կա հայկական փոքր մի ընկերակցություն: 2016-ի նոյեմբերի 9-ին գրված նամակում էլ վկայել է իր և քույրերի մասին. *«Գալինան ունի մի որդի, անունը՝ Ռուբեն, նրա թոռնուհին է Մելանան, ինը տարեկան: Միլիցան զավակ չունի, բայց ունի մի շուն ու մի կատու... ունի նաև ամուսին: Ես*

¹ Տե՛ս O'Reilly Patrick, Teissier Raoul, Tahitiens, Paris, 1975, p. 392:

ունեմ որդի՝ Վլադիմիր, որը 38 տարեկան է և մի թոռ՝ Վոլոդյա, որը վեց տարեկան է: Հետաքրքրական է, որ այդ թափուհիներն իրենց զավակներին կոչել են հոր անվամբ և ուսական անուններով:

Ֆրանսիական Պոլինեզիայում է պաշտոնավարել նաև ֆրանսիական պետական գործիչ Ժաք (Արշակ) Մուրադյանը (14.12.1910, Կոնշ-ան-Ուշ, Ֆրանսիա – 14.06.1992, Փարիզ): Ուսանել է Սևրի Մխիթարյան և Փարիզի Արևելյան լեզուների դպրոցներում, մասնագիտացել գրականության և իրավաբանության մեջ: Պաշտոնավարել է աֆրիկյան Զադ, Մենեզալ, Հասարակածային Գվինեա, Նիգեր, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Մադագասկար պետություններում, այնուհետև 1963–1965 թթ. եղել է Օվկիանիայում ֆրանսիական Նոր Հեբրիդյան կղզիների (ներկայումս՝ Վանուատուի Հանրապետություն) կառավարիչ, 1969–1973 թթ.՝ Հնդկական օվկիանոսում գտնվող Կոմորյան կղզիների կառավարիչ: Եղել է Հարավ-խաղաղօվկիանոսյան հանքարդյունաբերական ընկերության նախագահը: Արժանացել է «Պատերազմի խաչ» և «Պատվո լեգեոն» պատվանշանների¹:

Ռազմական գործիչ, կապիտան Ժորժ Աստվածատրյանը (ծն. 1930) 1977-ին պաշտոնի է նշանակվել Պոլինեզիայում դառնալով Թաիթի կղզու վարչական կենտրոն Պապետեի քաղաքային մարմնի ընդհանուր հրամանատարը: Նախապես եղել է Կլամարի քաղաքային մարմնի ոստիկանության հրամանատար²:

¹ Sli u Tribunale mixte de commerce de Noumea, «Journal officiel de la Nouvelle Calédonie», 17.05.1999:

² Sli u Հայեր մինչև Փոլինեզիա..., «Յառաջ», Փարիզ, 25.11.1977:

Հայազգի ֆրանսիական ռազմական գործիչ Ալեքսանդր Տեր-Սարկիսովը (1911, Փարիզ – 1991, Նիս) Աֆրիկայում և Հնդկաչինում պաշտոնավարելուց և թոշակի անցնելուց հետո որոշ ժամանակ բնակվել է Թաիթիում:

Դիվանագետ Հենրիկ Լիլոյանը խորհրդային ժամանակներում «Ոգնի» երգիծաթերթում որպես արտառոց փաստ վկայել է, որ Պապենտում բնակվել է մի ֆրանսահայ՝ ֆրանսուհի կնոջ և երկու զավակի հետ, զբաղվել առևտրով և նամակով խնդրել է Լիլոյանին՝ իրեն հայերեն դասագրքեր ուղարկել՝ զավակներին հայերեն գրել-կարդալ սովորեցնելու համար¹:

Վերջում հիշենք, որ երևանցի Արմեն Բաբայանը 2001ի սեպտեմբերին մեզ տեղեկացրել է, որ իր հորաքրոջ ամուսինը՝ վլադիվոստոկցի ծովային Միխայիլ Յակովլևիչ Բերկովիչը, 1960-ականներին Ֆիջիում խորհրդային պատվիրակության հետ հանդիպում է ունեցել մայրաքաղաք Սուվայի քաղաքագլխի հետ: Վերջինս հետաքրքրվել է հյուրերի ընտանիքներով և լսելով, որ Բերկովիչն ամուսնացած է Շողակաթ անունով հայուհու հետ, հանդիպումից հետո Բերկովիչին առանձին հայտնել է, որ ինքը նույնպես հայ է: Այս անձի ինքնությունը, սակայն, չկարողացանք ճշտել: Ենթադրում ենք, որ խոսքը կարող է վերաբերել Սուվայի քաղաքային խորհրդի անդամներից մեկին, որոնց թվում 1960-ականներին եղել են նաև վեց եվրոպացիներ:

Ինչպես տեսնում ենք, ավելի քան մեկ դար առաջ Օվկիանիայում հայտնված հատուկնետ հայերի ներկայությունը նշանավորվել է տեղացիների կյանքում կարևոր գործերով (տեղաբնիկներ-

¹ Այս մասին տե՛ս նաև՝ Բախչինյան Ա., Հայկական նշմարներ, «Անդրադարձ», Երևան, 1993, հունվար:

րի երգերի գրառում հայի միջոցով, տեղական բնապատկերների ստեղծում հայ նկարչի կողմից, հալազգի գործիչների վարչական աշխատանք): Համադրելով և վերհանելով այս փաստերը՝ ևս մեկ գույն է ավելանում հայ Սփյուռքի գունապնակին, թերևս՝ ամենից հեռավորն ու տարաշխարհիկը: Անշուշտ, «Սփյուռք» եզրույթը զործածում ենք որոշ վերապահումով. ինչպես տեսանք, միայն Հավայան կղզիներում գոյություն ունի հայ համայնք, իսկ Պոլինեզիայի հայերի միության մասին տեղեկությունը ճշտված չէ:

THE ARMENIAN PRESENCE IN OCEANIA

(Summary)

ARTSVI BAKHCHINYAN

This paper presents random few facts of temporary and permanent presence of the Armenians in Oceania. The first Armenian who appeared in the region was musician Yervant Hagopian from Constantinople. In the beginning of the 20th century, he lived in Papua New Guinea for four years and was engaged in pearl hunting. He had mastered Papua language, recorded 26 Guinean songs and lived an adventurous life on the islands.

Although some sources mention so-called Armenian Islands in the East of Japan, which identify with those of Hawaiis, this seems to be a misunderstanding. In 1922, Rev. Dr Lincoln L. Wirt, the International Commissioner of the Near East Relief organization, visited Hawaii, where he formed an Armenian Relief Committee. By the late 1920's, Hawaii's Armenian Committee had successfully collected over \$200,000 (about \$2.8 million dollars in today's terms) for the Near East Relief. The Hawaiian

Islands are the only place in Oceania where there is an Armenian community. Honolulu-based artist Arman Manookian (1904-1931) was called the Hawaiian Gauguin. In the 21st century around 100 Armenians lived in Hawaii. Due to their efforts, the state of Hawaii recognized the Republic of Artsakh (Nagorno Karabakh) in 2014 and the Armenian Genocide in 2015.

There were also several Armenian inhabitants in French Polynesia, like, Rouben Mirimanoff (Mirimanian) originally from Tiflis (Tbilisi), who had established a hippodrome in Papeete - capital of French Polynesia. His three half-Tahitian daughters live in Polynesia until today. Some French Armenians were appointed as French officials: Jacques Mouradian was the High Commissioner-Resident of French New Hebrides in 1963-1965, while Georges Asdvadzadurian was elected as the Chief Commander of Papeete City Council in 1977.

LES ARMÉNIENS ET LA CRÈTE (912-1669): UN SURVOL

GERARD DEDEYAN

Professeur émérite à l'Université Paul Valéry – Montpellier 3.

Membre à l'étranger de l'Académie des Sciences d'Arménie.

Entre 824 et 827/8, des Arabes d'Espagne, conduits par Abou Hafs, abordent en Crète, conquérant toute l'île en peu de temps, et établissent leur capitale à Chandax (future Candie). Cette occupation fait de l'île une base maritime à partir de laquelle les Arabes lancent des raids dévastateurs dans toute la mer Egée. Après les échecs de son prédécesseur pour reconquérir l'île, le futur empereur, Nicéphore Phokas, lance, en 960, une offensive contre la Crète et s'empare de Chandax en mars 961. La Crète reste aux mains de puissances chrétiennes (Byzance, 961-1204, Venise, 1204-1669) jusqu'à la conquête ottomane.

Les premières expéditions byzantines (912, 949).

Nous n'insistons pas sur l'histoire générale de la Crète byzantine, largement évoquée par Dimitris Tsougarakis, mais seulement sur les contacts des Arméniens avec la Crète, aux X^e-XII^e siècles. La première mention de contacts entre les Arméniens et la Crète remonte à l'offensive du drongaire de la flotte Himérios contre la Crète, sous l'empereur Léon VI le Sage (886-912), fils du fondateur de la dynastie macédonienne (867-1056), Basile I^{er}, descendant de colons militaires arméniens installés en Thrace. Cette offensive se solda par la défaite d'Himérios, au large de Chio, en 912, face aux amiraux arabes Damianos et Léon de Tripoli (un Mardaïte d'Attaleia, converti à l'islam après sa capture par les Arabes).

L'empereur encyclopédiste Constantin VII Porphyrogénète (945-959) issu de la dynastie macédonienne, se montre souvent, dans ses écrits, attentif à l'Arménie (le royaume bagratide de Chirak est un allié important de Byzance, au X^e siècle), aux grands personnages arméniens passés au service de l'Empire (Meleh/Mélias le Grand, fondateur du thème de Lykandos au début du X^e siècle), voire aux composantes arméniennes de l'armée des thèmes.

La situation étant relativement calme en Asie, au milieu du X^e siècle, le basileus jugea le moment opportun, en 949, pour organiser une expédition contre la Crète, qui fit oublier le désastre d'Himérios en 912. Après une soigneuse préparation diplomatique, conclue par un traité d'amitié avec le calife ournayyade de Cordoue, Abd al-Rahmān III (les Arabes de Crète entretenaient des relations avec ceux d'al-Andalous), et une sécurisation de la Méditerranée occidentale et de l'Adriatique par l'envoi de petites escadres, Constantin VII imposa à l'Empire un énorme effort militaire et naval, dans lequel chaque thème devait fournir sa contribution. Si le débarquement sur l'île se passa bien, l'inexpérience du chef de l'expédition, Constantin Gongylès, permit aux Arabes de surprendre son armée, qui fut presque entièrement massacrée.

Constantin Porphyrogénète, dans son traité *De Ceremoniis aulae byzantinae*, écrit à la gloire du basileus et de ceux qui étaient à son service, et décrivant avec minutie les grandes comme les petites cérémonies, fournit, aux chapitres 44 et 45 de l'ouvrage, situés dans leur genèse et analysés par John F. Haldon, commentés dans leur dimension arménienne (il s'agit de la province commandée par un stratiote) par Heratch Bart'ikyan, des renseignements très précis sur la

participation des Arméniens des différents thèmes d'Asie Mineure, aux expéditions de 912 et 949. A une époque (la première moitié du X^e siècle) où les Arméniens, selon Peter Charanis, fournissent le tiers de l'armée des thèmes, on ne s'étonnera pas de les voir constituer une part importante des effectifs de la cavalerie.

Les Arméniens de France participèrent activement à la seconde guerre mondiale, où s'illustra particulièrement Missak Manouchian, résistant connu par « l’Affiche rouge » et mort en martyr. Après la fin de la guerre, plus de 7 000 Arméniens de France répondirent à l'appel de Staline et allèrent s'installer en Arménie soviétique. À l'heure actuelle, les quelques centaines de milliers d'Arméniens de France perpétuent

leur identité à travers les nombreuses églises, les Maisons de la culture arménienne, la presse – même si elle est de plus en plus majoritairement en langue française –, les stations de radio, sans oublier les monuments au Génocide, lieux de recueillement et de manifestations; celui de Paris représente le fameux compositeur Komitas, qui survécut à 1915 mais termina ses jours dans un hôpital psychiatrique de Villejuif. À Paris se trouvent aussi la Maison des étudiants arméniens de la Cité universitaire et la Bibliothèque Nubar, la plus grande collection d'arménologie hors d'Arménie. En 1953 fut inauguré, au 59 avenue Foch, le Musée arménien de France, exposant les magnifiques collections réunies par un mécène, Nourhan Fringhian ; malheureusement, il fut fermé en 1994 pour raisons de mise aux normes de l'immeuble, et depuis on lui a retiré illégalement son accès aux locaux. Une procédure judiciaire a été ouverte en 2014.

Même si l'usage de la langue diminue inexorablement, les Arméniens de France passant peu à peu du statut de diaspora culturelle à celui de diaspora d'assimilation, la conscience d'une identité culturelle subsiste. Elle a pris un nouvel élan depuis 1991, avec l'indépendance de l'Arménie suivie de peu par la fondation de la république du Haut-Karabagh.

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԵՐԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ
(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԿԼՈՂ-ԱՐՄԵՆ ՄՈՒԹԱՅՑԱՆ

Ռուսաստանից եւ Միացյալ Նահանգներից հետո Ֆրանսիայի հայ համայնքն իր մեծությամբ երրորդն է աշխարհում եւ ամենանշանակալիցը Արեւմտյան Եւրոպայում:

Հայ-Ֆրանսիական հարաբերությունների պատմական ընթացքը կարելի է չորս ժամանակաշրջանի բաժանել.

1. Մինչեւ խաչակրաց արշավանքները (IV–XII դդ.),
2. Խաչակրաց արշավանքների ընթացքում (XII–XIV դդ.),
3. Խաչակրաց արշավանքներից մինչեւ Մեծ Եղեռն (XV–XX դ. սկիզբ),
4. Մեծ Եղեռնից հետո ընկած ժամանակաշրջան (XIX դ. վերջ – XXI դ. սկիզբ):

Հեղինակը պատմական ակնարկում հակիրճ անդրադարձ է կատարել հայ-ֆրանսիական հարաբերությունների ժամանակագրական տեսակետից համեմատաբար կարելուր քաղաքական, միգրացիոն եւ պատմա-մշակութային, իրադարձություններին:

DES VOÏVODES ARMÉNIENS DE MOLDAVIE

CLAUDE MUTAFIAN

L'ascendance de Ion Vodă l'Arménien

Dans sa chronique écrite au début du ^{xvii}^e siècle, Urechi consacre son chapitre XXVII au « Règne de Jean, dit l'Arménien », en précisant : « Quelques-uns disent que ce Jean était un fils d'Arménien, d'autres qu'il était fils d'un prince appelé Etienne »¹. Les avis ont en effet longtemps divergé sur l'ascendance de ce voïvode (1572-1574)². On admet maintenant les conclusions de Hasdeu³, qui lui a consacré en 1865 une monographie détaillée. Selon lui, il s'agit d'un fils illégitime du voïvode Étienne IV le Jeune (mort en 1527), fils de Bogdan III le Borgne, lui-même fils d'Étienne III le Grand, et sa mère arménienne avait eu deux fils légitimes. Il semble que *Șerbag*, ou *Serpêga*, ou *Serbeza*, soit son patronyme ou celui de son époux.

Ion Vodă l'Arménien selon la chronique d'Urechi

¹ Urechi Grégoire, Chronique de Moldavie depuis le milieu du xiv^e siècle jusqu'à l'an 1594, (texte roumain et trad. française annotée de Émile Picot), Paris, 1878, p. 472-473.

² Cantemir Dimitrie, Descrierea Moldovei, trad. Petre Pandrea, Bucarest, 2001, p. 69; Ciocan, Cantemir, «Notes pour servir à l'histoire des Arméniens de Moldavie (xvi^e-xvii^e siècles) d'après la 'Descriptio Moldaviae' du prince Démètre Cantemir», Ani, Bucarest (1995-1996) p. 138; Xénopol, Alexandru Dimitrie, Histoire des Roumains de la Dacie trajane, 2 vol., Paris, 1896, t. I, p. 330; Գովրիկեան Հ. Գր., Մինաս Թոխաթեցի՝ նոր ձեռագիր, Ողբի վերայ Օլախաց երկրին Հայերուն», Հանդես Ամսօրեայ. 2 (1888), էջ. 37-39; Բաբախան Լ., Հայերը Մոլդավիայում ու Բուլղարիայում. Թիֆլիզ 1911, էջ 69; Iorga Nicolae, Arméniens et Roumains, un parallèle historique, Académie roumaine, Bulletin de la Section historique I (1913), стр. 221; Macler, Roumanie, REA X, (1930), p. 17; Գալփագեան Յովհ., Ռումանահայ զաղորդը, Երուսաղեմ, 1979, էջ. 231; ՀՍՀ, հ. VIII, էջ 128; Ռդանցյան Ս., Ռումանահայոց մարի գանձարանը՝ Պուրբեշի «Հայ մշակույթի տունը». Էջմիածին, 1948. 5-6, էջ 72-73:

³ Hasdeu Bogdan Petriceicu, Ion-Vodă cel Cumplit (1572-1574), Bucarest, 1865, p. 7, 221-225.

Le bref règne de Ion Vodă est particulièrement bien documenté¹. Écrite peu après les événements, la chronique d'Urechi² précise que c'est avec l'aide des Turcs que Jean réussit à évincer le voïvode Bogdan IV, soutenu par les Polonais. Une fois au pouvoir, « il se montra cruel, afin d'inspirer partout la terreur, ne songea qu'à ordonner d'affreux supplices et à verser le sang », et, plus loin, « il mit tout le monde contre lui par sa cruauté et par les supplices affreux qu'il ordonnait. Il ne voulait l'emporter sur les autres que par son habileté à répandre le sang ; aussi inventait-il chaque jour de nouveaux genres de tortures », ses principales cibles étant les religieux et les boyards. Il se retourna bientôt contre les Turcs et les Tatares et, allié aux Cosaques, les défait à plusieurs reprises. Il s'empara de la Valachie, mais à la quatrième bataille, près de Cahul, il fut trahi par des boyards. Il se rendit au camp turc en échange de promesses qui ne furent pas tenues, et le 14 juin 1574 le sultan Sélim II « le fit attacher vivant à la queue de deux chameaux qu'on lança à travers le camp jusqu'à ce qu'il fût mis en pièces ». Le chroniqueur conclut : « Voilà comment Jean échoua dans son entreprise. Il avait régné trois ans. Après la mort de Jean, les Tatares se répandirent dans tout le pays pour se livrer au pillage. Jamais la dévastation n'avait été aussi grande en Moldavie qu'elle le fut alors. Les habitants furent surpris dans leurs maisons comme ils s'y attendaient le moins. Depuis lors la région comprise entre le Prout et le Dniestr est restée déserte ; il n'y est plus revenu d'habitants ».

Un voïvode populaire

Le jugement d'Urechi est, on le voit, ambigu : s'il ne peut qu'admirer le courage et l'héroïsme du voïvode face aux Turcs, il insiste sur sa cruauté qu'il présente comme naturelle. Elle lui a d'ailleurs valu le surnom de « *Ion-Vodă cel Cumplit* », c'est-à-dire « le voïvode Jean le Terrible ». Cela dit, le chroniqueur précise bien que cette cruauté était essentiellement dirigée contre l'Église et surtout contre les boyards, dont il jugeait l'influence excessive et qu'il réprima impitoyablement.

¹ Urechi, p. 473-476.

² Urechi, p. 479-511; Ալիշան Հ. Ղ. Կամանից, էջ. 44-45.

Il était en fait très apprécié par le peuple, et on ne s'étonnera pas que les jugements des auteurs postérieurs aient été presque unanimement positifs. C'est ainsi que Dimitrie Cantemir le présente comme un personnage « très lettré en latin et en grec » qui s'insurgea contre la domination des Turcs, fut capturé par trahison et subit une mort cruelle¹. Quant à son biographe Hasdeu, il en dresse un portrait très laudatif². Un peu plus tard, Xénopol³ écrit qu'il était « en général mal disposé envers tous les boyards ; il les détestait comme classe et voulait chercher un appui contre eux dans celle des paysans, qu'il protégeait et favorisait de toutes les manières. Aussi était-il mal vu par les nobles, tandis qu'il était idolâtré par le peuple. Tous les écrits du temps font ressortir cet amour des déshérités pour Jean ». Il ajoute que, selon une chronique turque, le successeur de Jean « fut placé sur le trône de Moldavie au milieu des larmes du peuple, qui regrettait Jean ». La trahison des boyards et son épouvantable supplice ne firent qu'ajouter à sa gloire, que résume bien Xénopol : « Ainsi disparut l'une des figures les plus remarquables de l'histoire du peuple roumain, qui, par sa puissante personnalité, par la fascination qu'il exerçait sur son peuple, l'avait poussé à faire reparaître le temps d'Etienne-le-Grand ». L'histoire de Ion Vodă fournit à Gheorghe Dumitrescu le sujet d'un opéra, représenté à Bucarest en 1956. À côté du surnom "le Terrible" il portait aussi celui de «*cel viteaz* [le Courageux]

Il est intéressant de noter que cette gravure du xix^e siècle a retenu le surnom de 'terrible', alors que sur sa statue à Iași (cf. *supra*, p. 13), figure celui de 'courageux'.

Le déplacement de la capitale moldave de Suceava à Iași est généralement fixé sous le voïvode Alexandre IV (1564-68), mais selon Hasdeu cette mesure, visant

¹ Cantemir, p. 69-70, 104.

² Hasdeu, *passim*; Քոլանցյան, նշվ. աշխ., էջ. 72-77. Voir Id., «Colonies», p. 396; Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղութների պատմության երևան, 1964, հ. 1, էջ. 348; Գալիպագեան Յովհ., նշվ. աշխ., էջ. 230-231; Ciocan, Cantemir, p. 141.

³ Xénopol Alexandru Dimitrie, Histoire des Roumains de la Dacie trajane, 2 vol., Paris, 1896 t. I, p. 330-337; Cantemir, p. 69-70.

probablement à s'éloigner de la frontière polonaise, aurait été prise par Ion Vodă en 1572¹.

Les frères utérins de Ion Vodă

À Ion Vodă succéda Pierre-le-Boiteux, mais en 1577 apparut « un certain Ivan, qui s'appelait aussi Potcoavă, parce qu'il était de force à briser un fer à cheval [*potcoavă*], et que quelques-uns nommaient le Crépu [*Cretul*], se prétendit frère de Jean » et « voulut s'emparer de la Moldavie ». Il s'agirait d'un frère utérin de Jean, également appelé 'Ivan Pidkova', lui aussi allié aux Cosaques. Après plusieurs victoires, il fut confronté à une coalition dirigée par la Hongrie, se réfugia en Pologne où il fut arrêté et décapité sur la place centrale de Lvov le 16 juin 1578 sur ordre du roi Étienne Báthory, contraint d'obéir aux exigences turques². Selon Hasdeu, il aurait porté le prénom « *Carabied* », qui correspond à l'arménien « *Karapet* »³.

L'année suivant son exécution, son frère Alexandre, donc un autre frère utérin de Ion Vodă, « vint encore attaquer Pierre, à la tête d'une armée cosaque », s'installa à Iași comme voïvode, mais fut vaincu après avoir « occupé le trône pendant un mois »⁴. Ion Vodă eut aussi, d'une maîtresse saxonne, un fils, Étienne le Sourd, qui fut brièvement voïvode de Valachie en 1591⁵.

¹ Hasdeu, p. 261-262. Urechi, p. 485. ԶՄԶ, h. VIII, էջ. 126; Քոլակեցան Ս., նշվ. աշխ., էջ 73:

² Urechi, p. 512-525; Ալիշան Հ. Ղևոնդ, Կամենից, էջ. 49. Xénopol, t. I, 1887, p. 337; Գալիպոլեան Յովհ., նշվ. աշխ., էջ 233:

³ Hasdeu, p. 181, Macler, Roumanie, p. 17; Հայ ժողովրդի պատմություն, Երևան, հ. 4, 1972, էջ 396:

⁴ Urechi, p. 525-527. Tanase Andreea, Armenians in Romania, Bucarest, 2015, p. 16-17.

⁵ Hasdeu, p. 169-174 ; Urechi, p. 510; Քոլակեցան Ս., Բուխարեստի հայոց անցյալի ու ներկան. Էջմիածին, 7 (1950), էջ 60:

ՄՈՒՂՈՎԱՅԻ ՀԱՅ ՎՈՅԵՎՈՂՆԵՐԸ

(Ամփոփում)

ԿԼՈՂ-ԱՐՄԵՆ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Ըստ 17-րդ դ. մուղղվացի ժամանակագիր Գրեգուար Ուրեկիի՝ Յոն Վոդան հայկական ծագում ուներ: Նա վոյեվոդի պաշտոնը զբաղեցրել է կարճ ժամանակով՝ 1572-1574 թթ.: Սակայն նրա իշխանության շրջանը հայտնի է եղել իր ծայրահեղ դաժանությամբ՝ տեղական բոյարների, հոգեւորականության եւ թուրք - թաթար զավթիչների նկատմամբ, որոնց ձեռքով էլ, մատնության պատճառով, մահապատժի է ենթարկվել: Լինելով ժողովրդի պաշտպանն ու սիրելին՝ դարձել է նրա հերոսը: Նրա եղբայրները եւս ունեցել են կարճատեւ իշխանություն: Պատմագիրների վկայությամբ Մուղղվայի մայրաքաղաքի տեղափոխումը Սուչավայից - Յասսի ծրագրված է եղել Յոն Վոդայի կողմից, սակայն իրականացվել է Վոյեվոդ Ալեքսանդր 4-րդի ժամանակ՝ 1564-1568 թթ.: Նպատակը՝ մայրաքաղաքը լեհական սահմաններից հեռացնելն էր:

Վենետիկի քաղաքային արխիվում է պահվում մի արժեքավոր փաստաթուղթ, վերնագրուած “Nota di quanti Armeni, e figli d’Armeni adulti che si ritrouano in questa inclita città di Venezia, tanto secolari, quanto religiosi in primo agosto 1750”, որի վկայությունները բավական մեծ տեղեկություններ են պարունակում 1750 թվականին Երոպական այս քաղաքի հայ բնակչության արական սեռի աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչների մասին¹:

Իր բնույթով եւ մանավանդ բովանդակային առումով այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայագիտության համար: Բացի նրանից, որ սրանով բացահայտվում է Վենետիկի հայ համայնքի ձեւավորման ակունքները, դրա աշխարհագրությունը, նաեւ այնտեղ հիշատակվող անունների մեծ մասի հետ կապված են առևտրա-տնտեսական, հոգևոր, իրավական մեր պատմության համար կարեւոր նշանակություն ունեցող դրվագներ: Շեիրիմանյանների, Գերաքների, Հերմեթների, Շահումյանների, Սեդոսյանների, Վելիջանյանների, Նորատունկյան-Կազանովաների կողքին, 46-րդ համարի տակ գտնում ենք եւս մի անուն՝ Գրեգորիո Աղդոլո, որին նվիրված է սույն հետազոտությունը:

¹ Liste des Arméniens de Venise (1750), - «Roma-Armenia», (sous la direction de Claude Mutafian), ed. De Luca, Roma, 1999, p. 295.

Գրեգորիո դի Պիետրո Ադդոլոն (Ագդոլո) ըստ իր մահա-
խոսականի՝ ծնվել է 1707 թ. Սպահանում (հավանաբար Նոր
Զուղայում): 1730 թ. նա Լիվոռնոյում էր եւ ինչպես ջուղահայ երի-
տասարդ շատ վաճառականներ, Եւրոպա էր եկել «տեքստիլ»
(հում մետաքսի՝) առետրով զբաղվելու նպատակով:

Մի քանի տարի անց նա հաստատվում է Ֆլորենցիայում, 1738
թ. անդամակցում է սաքսոնական առետրական ընկերությանը՝
դառնալով նրանց կոմիսարը Տոսկանայում եւ ստանալով այդ
երկրամասի քաղաքացիություն: Իսկ 1740 թ. արդեն Լեհաստանի
արքայի առետրական ներկայացուցիչն էր Տոսկանայում:² Հայ
վաճառականի կենսագրական այս տասնամյա առաջխաղացումը
հուշում է այն մասին, որ նրա առետրական հարաբերությունները
չէին սահմանափակվում միայն Իտալիայով:

Ավելին, 1742 թ. ապրիլից սեպտեմբեր ամիսներին Ադդոլոն
մի քանի հայ վաճառականների հետ միասին Մոսկվայում, եւ
հաջորդ՝ 1743 թ. փետրվարին Սանկտ Պետերբուրգում փորձում է
սաքսոնա-լեհական առետրական հարաբերություններ հաստա-
տել Ռուսաստանի հետ³:

1750-ական թվերին Գր. Ադդոլոյին շնորհվում է Լեհաս-
տանի արքայի «վսեմագույն խորհրդականի» եւ կոմսի կոչում,

¹ Provveditori alla sanità, Necrologi, reg. 976, c. 136, necrologio di Gregorio Agdollo q. Pietro. 12 maggio 1789 (հղումը տե՛ս Cecchini Isabella, Gregorio Agdollo [Isfahan 1707-Venezia 1789] հոդվածը Borean L., Mason S., Il collezionismo d'arte a Venezia. Il Settecento, ed. Marsilio-Padova, 2009, ժողովածուում, էջ 236):

² Corti Gino, The Agdollo Collection of Paintings: An Inventory of 1741: The Burlington Magazine, Vol. 120, No. 904 (Jul., 1978), p. 442.

³ Cianpi Seb., Bibliografia Critica delle Antiche reciproche corrispondenze politiche ecclesiastiche, scientifiche, Letterarie; artistiche dell'Italia colla Russia, colla Polonia ed Altre parti Settentrionali ..., t. II, Firenze, 1739, p. 136-137.

ապա 1750-ականների վերջին՝ նաեւ մարկիզի տիտղոս¹, որը հետագայում ժառանգում են նաեւ նրա զավակները: Նշենք նաեւ, որ թե՛ Գրեգորիոն եւ թե՛ իր որդիները ընդգրկված են եղել եւրոպական «Ազատ որմնադիրների» մասոնական օթյակներում²:

...

Վենետոյի Նահանգային Արխիվի «5 դատավորների» (Cinque Savi) ֆոնդից Գրեգորիո Աղդոլոյի անվան հետ կապված փաստաթղթերը, վերջինիս գրագրությունը հիշյալ կառույցի հետ եւ նրա դիմումները Վենետիկի Դոժին եւ այլ իշխանավորների վերաբերվում են 1750-1786 թթ.: Փաստաթղթերից հասկանալի է դառնում, որ Գր. Աղդոլոն մեծ ջանքեր է ներդրել Վենետիկի Հանրապետության, Սաքսոնիայի եւ Լեհաստանի միջեւ միջպետական առեւտրային հարաբերությունների ստեղծման³ եւ արտոնյալ պայմաններով, դրանց պարբերաբար վերահաստատման ուղղությամբ,⁴ որը նրան հաջողվել է: Սաքսոնիայի

¹ "Gregorio Agdollo Consigliere Aulico, e di Commercio di S. M. il Re di Polonia, Elettor di Sassonia, e suo Plenipotenziario presso la Serenissima Repubblica di Venezia" (Nomi delli signori associati alla presente Opera "Il diretto della Natura e delle Genti o sia sistema generale de'principi li piu'importanti dimorale, giurisprudenza, e politica...; Venezia T.II; MDCCCLVII; p.476").

² Allgemeines Handbuch der Freimaurerei von Lennings, Encyklopädie der Freimaurerei. Herausgegeben vom Verein deutscher Freimaurer, Erster Band (A-L), Leipzig, 1900, p. 7-8

³ Տե՛ս 1950, Dec. 30 (Cinque Savi, 230):

⁴ Cinque savi alla mercanzia, Prima serie, Scritture dei deputati al commercio, b.220, c. 107 (Trattato di commercio con il re di Polonia ed elettore di Sassonia, 31 marzo 1756, con riferimenti a documenti di data precedente), Նույն տեղում, b. 205, c. 108 (memoria sul rinnovo del trattato di commercio con la Sassonia, 2 agosto 1788), Տե՛ս նաեւ Հ. Ղ. Ալիշանի ձեռագիր աւրագրությունները նույն արխիվից. 1767, տպիրի 14 (Cinque Savi, 370, f. 104) «Թագազարմ Հազարապետ Սաքսոնիոյ հաստատելով նոր օրէնս կարգաց եւ բաժից, վենետկաց սլահէ զառաջին

Կուրֆյուրստ Ֆրանց Քսավերը (Franz Xaver von Sachsen, Electeur, Կուրֆյուրստ 1763-1768) եւ Լեհաստանի թագավոր Յան Սոբե-սկի III-ը (1674-1696) շահագրգռված էին այս առեւտրական հարաբերություններում, մանավանդ, որ Վենետիկից մետաքսայա եւ այլ թանկարժեք կերպասներ էին ստացվում, որոնք մինչ այդ հազվագյուտ էին Սաքսոնիայում եւ Լեհաստանում, իսկ դրա փոխարեն սաքսոնական հախճապակյա սպասք էր ներկրվում Վենետիկ: Նրա նախաձեռնությամբ Վենետիկում հիմնվում է սաքսոնական առեւտրի տուն: Աղդոլոյի առեւտրական ակտիվու-թյան եւ վաճառականական նուրբ հոտառության շնորհիվ նաեւ նոր արտադրական տեխնոլոգիաների փոխանակում է կատար-վում եւրոպական երկրների միջեւ: Նրա միջնորդությամբ 1766 թ. Շեմնիցի վաճառականներից մեկը թել մանող իտալական հաստոց է ձեռք բերել:¹ (Նկատի ունենանք, որ մետաքսի առեւտրի իրականացման գործում ներգրավված պետք է լինեին նաեւ հայ վաճառականները, քանի որ Գր. Աղդոլոն ծանոթ էր նաեւ Եւրոպայում իրենց գործունեությունը ծավալող ջուղահայ վաճառականներին):² Գր. Աղդոլոն մաքսային դիվանագիտու-

սահմանեալ, տալ 2 % վասն վաճառաց նոցա. առ կամի զի մի՞ զիտասցին այլք եւ յանձնէ Գր. Աղտոլենց մարկիսի ծանուցանել նոցա: Գրիգոր Աղտոլենց խնդրական Ատենի եւ համակար վաճառականութիւն Սաքսոնիոյ ի Վենետիկ, ծանուցանէ 5 զիտոց զվերահաստատութիւն դաշանց 1756 ամին ի ձեռն նոր իշխանացութիւն կայսրընտրին» (Հ. Ղ. Ալիշանի հակիրճ թարգմանությամբ):

¹ Cecchini Isabella, Gregorio Agdollo (Isfahan 1707-Venezia 1789), Borean L., Mason S., Il collezionismo d'arte a Venezia. Il Settecento, Venezia, 2009, p. 236.

² 1733 թ. «Կոմս Գրեգորիո Աղդոլո Շեքրիմանը» թանկագին քարերով պատված արծաթե մի մասնատուի է նվիրել Ֆլորենցիայի Ս. Մայր Թերեզայի վանքին (տե՛ս Idea della Chiesa, e del Monestere di S. Teresa di Firenze,..."Fr. Idelfonso do S. Luigi, Vita della ven. serva di dio Suor Maria Agnese di Gesu ..., Firenze, MDCCCLXII, p. I, " p. 127): Ամենայն հավանականությամբ խոսքը երկու վաճառականների

թամբ փորձում էր հասնել այն բանին, որ սույն առեւտուրը իրականանար արտոնյալ պայմաններով. այսինքն՝ 16% մաքսատուրքի փոխարեն վճարվեր 14%:¹

Գրեգորիո Աղղոլոյի առեւտրական գործունեությունը չէր կարող կապված չլինել հայկական վաճառականական միջավայրի հետ: Արդեն խոսվեց Ռուսաստանի հետ կապված նրա ծրագրերի մասին:

Մխիթար Մեքաստացու Նամականիում Աղղոլոյի անվան հետ կապված շուրջ մեկ տասնյակ նամակներ են առկա, որոնք հիմնականում այս կամ այն վաճառականի հետ առնչությունների, առեւտրական միջնորդության մասին խնդրանքներ են: Այս նամակները վկայում են որքան Մխիթար աբբահոր ոչ անտարբեր վերաբերմունքը աշխարհասփյուռ հայ վաճառականության

կոմս Ջիովաննի (Հովհաննես) Շեհրիմանյանի և մարկիզ Գրեգորիո Աղղոլոյի մասին է:

¹ «Նաեւ 1788 մայիս 13-15 (Cinque Savi, 399, f. 1) Գր. Աղտօլ ծանուցանէ Պաշտօնէի կայսրընսօրին զվճիո ծերակուտին (ու զկնի) որ տհաճի ընդ յապաղում կնքելոյ դաշնակցութեան ընդ 1769 յամի այն չի արարելն է շնորհս ազատութեան ի սակէ 2/100 մետաքսեղինայ, ի Լիբսիա եւ մաղթեր յօդուած մի յաւելելով՝ հաստատել զդաշինսն, ի շահ հայատակաց երկրքանչիւր պետութեանց: Խնդրէ վրոթիւն փութով ծանուցանել զայս Ծերակուտին:

Վերոյիշեալ վճիո ծերակուտին. զովէ զգիտունս եւ զնուիրակս. նոցին զարելլոյ որ քննեաց զխնդիր կայսրընսօրին Սաքսոնիոյ եւ գրանդուքս որ միջնորդեաց եւ հաւանեցոյց զսեր յւր զի վաճառք Վենետիկ, ի Լիբսիա ոչ վճարեացեն զ2 առ 100. այլ զի իբր աման կիսով յառաջ իբր խնդրել նորա նորոզել զդաշինս վաճառակցութեան՝ հարցնել ինչ Վենետիկի հասարակապետութեան ահազանգեր պատասխանի ի Մեքսոնի եւ յայնմ պատասխանեցի հրամայեալ էր Ծերակուտն վերաքննել եւ կանոնել զպայմանս դաշնագրութեանց, սրժան յամարեր ի կախ թողուլ զխնդիրն մինչեւ յավարտ քննութեանց» (Հ. Ղ. Ալիշանի թարգմանությամբ):

խնդիրների (Վենետիկից Հալեպ, Լիվոռնոյից Բելգրադ...), նրա ծանոթությունների շրջանակի, վաճառականական ցանցի լուրջ իմացության մասին, այլև նրա անշահախնդիր վերաբերմունքին նրանց բազմախնդիր գործունեությանը:¹

Մեր ձեռքի տակ է Ադդոլոյի դեռևս 1731 թ. Լիվոռնոյից դեկտեմբերի 14-ի թվակիր նամակը, որն ուղղված է Մխիթար Սեբաստացուն: Նամակն առետրական բնույթ ունի եւ Ադդոլոն, գրագետ հայերենով, խնդրում է աբբահոր միջնորդությունը հալեպահայ ոմն տեր Մարտիրոսի հետ պարտամուրհակի փոխանակման գործում:

Մխիթար Սեբաստացու դիմանում առկա են Գր. Ադդոլոյին ուղղված 9 նամակներ (1731- 1739 թթ):

«Տրտմեցայ յոյժ զշփոթական աղմկէն որ ծնեալ է ի մէջ տիրացու Մարտիրոսին եւ պարոն Գրիգորին: Արդ խնդրեալ էք զթեմէսունկն², եւ ես ահա հանդերձ վկայութեամբ յղեմ զօրինակն զի խաղաղասցին...» (N° 423):

Գրիգոր Ադդոլոյի եւ տիրացու Մարտիրոսի միջեւ դրամամուրհակային այս հանգույցը լուծելու եւ այլ խնդիրներ կարգավորելու նպատակով, Մխիթար Սեբաստացին նամակներով դիմում է Դավիթ Շեիրիմանյանին՝ Լիվոռնո (1732, դեկտ. 30, N° 445), Ապա Հովհաննես դի Նազարին (Giovanni di Nazar) կրկին Լիվոռնո (1734, N° 463):

¹ Մխիթար աբբայ, *Նամականի*, հատոր Բ., համակներ N° N° 423 (էջ 152), 445 (էջ 186), 445 (էջ 186), 463 (էջ 212), 471 (էջ 220), 603 (էջ 390), 625 (էջ 416-417), հ. Գ., 1107 (էջ 383), 1114 (էջ 391):

² Թեմեսիկ - պարտքերի մուրհակ (պարտամուրհակ), տե՛ս Քիսիլեւան Ա.Զ., Բառագիրք երեքլեզուեան տաճկերէն-հայերէն-գաղղիերէն, Վիեննա, 1883, էջ 219:

Իսկ 1738 թ. նոյեմբերի 29-ի նամակում Բելգրադ¹ Շ. Միքայելին¹ ուղղված նամակում (№ 603) Աբբահայրը նշում է. «Պարոն Գրիգորն եւ իւր որդին մերձակայ ժամանակիս եկին ի Վենետիկ, եւ յաւուրս յայտոսիկ կոչելոց ենք ի վանքն. Եղիա Վ. երկիցս զնաց առ նոսա որք էին ի տան պարոն Կիւլեագին»:

Առավել հանգամանորեն քան հայ մատենագրության մեջ Գրեգորիո Աղդոլոյի կյանքին ու գործունեությանն անդրադառնում են օտար հեղինակները, որոնց ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են Գրեգորիո Աղդոլոյի կտավների հավաքածուներին, դրանց ներկայացմանն ու արժեվորմանը, զանազան ցուցահանդեսներում դրանց ներկայացմանը, դրանց հետ կապված առեւտրական գործարքներին եւ ի վերջո այդ հավաքածուների ճակատագրին:

Իտալական վերածնության արվեստի միջազգային շրջանակներում բավական հայտնի² պալեոգրաֆ եւ ֆլորենտական այիսիվների հանրագիտակ Ջինո Կորտին² 1978 թ. The Burlington Magazine-ում հրատարակել է Գրեգորիո Աղդոլոյի նկարների հավաքածուի 1741 թ. գույքացուցակը, ինչպես նաեւ որոշ տեղեկություններ³ 1789 թ. Վենետիկում վախճանված, արվեստի նմուշների առեւտրով զբաղվող հայ գործակալի եւ կոլեկցիոների կյանքի եւ գործունեության մասին: Կորտիի շարադրանքն Աղդոլոյի արվեստագիտական գործունեության մասին ավարտվում է 1760 թվականով:

¹Իմա՝ Շ. Միքայել Վարդերեսյան, Սեբաստացի, Միս. Սեբաստացու աշակերտներից, քահանայացյալ 1714 թ., վախճ. 1767թ. Ս. Ղազարում:

² Corti Gino, The Agdollo Collection of Paintings: An Inventory of 1741: The Burlington Magazine, Vol. 120, No. 904 (Jul., 1978), pp. 441-444.

Նա նշում է, որ Գրեգորիո Աղղոլոյի անունը, որպէս 1730-ական թթ. Ֆլորենցիայում արվեստի գործերի կոլեկցիոներ, ի հայտ է գալիս 1737 թ. Ֆլորենցիայի Սան Լուկա ակադեմիայիում տեղի ունեցած ցուցահանդեսի տպագիր կատալոգում: Այդ առիթով Աղղոլոն ներկայացնում է յոթ կտավ: Նրա հավաքածուի ամբողջական ցուցակը հասանելի էր մասնագետներին, եւ այն գտնվել է ֆլորենտական մի ընտանիքի փաստաթղթերի մեջ: Աղղոլոյի հավաքածուն պետք է գնվեր այդ ընտանիքի կողմից, սակայն որոշ տիպի պայմանականություններ արգելք են հանդիսացել այդ զործարքն իրականացնելու համար: 1741 թ. ապրիլի 24-ի դրությամբ, Աղղոլոյի հավաքածուն ընդգրկում էր 37 նկարիչների 78 կտավ: Նախապատվությունը տրված էր 17-18-րդ դդ. Արտիստներին՝ համապատասխանելով հատկապէս «Բարոկկո» ոճի հանդեպ ունեցած կոլեկցիոների անձնական ճաշակին: Այդուհանդերձ «Վերածնունդը» եւս ներկայացված էր մի քանի հռչակավոր անուններով, ինչպէս Չիավոնեն, Սարտոն, Վերոնեզեն, Տիցիանը: Բարոկկոն ներկայանում էր ամենահայտնի իր նկարիչներով՝ Ռենիով, Բուքենսով եւ Պուսսենով: Յուրաքանչյուր նկարիչ ներկայանում էր 1-ից 7 կտավներով:

Գնային ոչ մի հիշատակում չկար, սակայն ամենահայտնիները նշված էին կա՛մ որպէս հռչակավոր արտիստի գործ, կա՛մ որպէս որակով շատ բարձրարվեստ աշխատանք եւ կա՛մ որպէս յուրահատուկ ստեղծագործություն: Այս ցուցակի անսովոր ճշգրտությունն ու ամբողջականությունը օգտակար են կտավների հեղինակներին ճշտելու եւ դրանք տեղայնացնելու իմաստով:

Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի արվեստաբան Իզաբելլա Չեկկինիի հոդվածում¹ նշվում է, որ Գրեգորիո Աղդոլոն ծնվել է Սպահանում 1707 թ.: Կորտին եւս հիշատակում է, որ Գրեգորիո Աղդոլոն հայ վաճառական էր կենտրոնական Պարսկաստանի Սպահան քաղաքից, որը հաստատվել էր Ֆլորենցիայում եւ բնակվում էր Սանտա Ֆելիչիտա թեմին պատկանող (այն ժամանակ) Բորգո սան Յակոբո փողոցում:

Իր առետրական եւ բանկային գործարքներում Աղդոլոն գործընկեր ուներ՝ ազդեցիկ ֆլորենտացի ազնվական, մարկիզ եւ սենատոր Լորենցո Օրացիո Պուչչին², որն իր հեղինակավոր ստորագրությամբ նշանակալից գումարներ էր տրամադրել եւ կապիտալ էր ներդրել այս գործի մեջ: Երբ Աղդոլոն ժամանակավորապես անվճարունակ է դառնում, մարկիզը անկարող է լինում պատասխանել պարտատերերի միաժամանակյա պահանջներին, հատկապես երբ իր եւ այլոց կապիտալների ներդրումներով արված գործառույթները սնանկացել էին: Այս պայմաններում մարկիզը Աղդոլոյից օգնություն է խնդրում: Վերջինս 1741 թ. ապրիլի 24-ի նամակով պատասխանում է, որ փոխհատուցելու ոչինչ չունի, բացի մի պարտամուրհակից, որն իր նումինալ արժեքի կեսն էր պարունակում, սակայն տրամադրում է նկարների իր ողջ հավաքածուն, որի ցուցակը կցված էր նամակին: Մարկիզն ընդունում է «նվերը»: Երկու օր անց, ապրիլի 26-ին, Աղդոլոն հրապարակում է մի փաստաթուղթ, հայտնելով ցուցակում ներառված իր բոլոր կտավների հանձնումը մարկիզին՝ հետեւյալ ձեռնտու պայմանով.

¹ Cecchini Isabella, նշվ. հոդվածը, էջ 236:

² Ֆլորենցիայի հայտնի Պուչչի գերդաստանի մասին տե՛ս Donella Arnetoli, La familia Pucci, Firenze, 2002.

նա ողջ հավաքածուն վաճառքի էր հանել Լեհաստանի արքային եւ հաջող գործարքի դեպքում արդյունքը կհատկացվեր մարկիզին: Եթե եկամուտ չստացվեր, ապա նկարները պետք է մնային մարկիզի տրամադրության տակ՝ որպես նրա սեփականություն, մասնակիորեն հատուցելով նրա պարտքը: Փաստաթուղթը ստորագրված էր նաեւ մարկիզի կողմից՝ որպես համաձայնություն (1741 թ. հուլիսի 12-ի նամակը)¹: Մի քանի ամիս անց Ադդոլոն նկարները փոխադրում է Դրեզդեն՝ այդ մասին տեղեկացնելով իր 1741 թ. սեպտեմբերի 22-ի նամակում:² Նա դրանք (թվով 65 նկար) հանձնում է կոմս Բրյուլին³՝ 2500 ոսկիով՝ «այնքան՝ որքան դրանց արժեքն է» ինչպես ինքն է արտահայտվում նույն նամակում: Նկարներն ուղարկելուց քիչ անց Ադդոլոն եւս բնակություն է հաստատում Դրեզդենում եւ այլեւս երբեք չի վերադառնում Ֆլորենցիա:

1760 թ. երբ Վենետիկի մի հայ բնակիչ՝ կոմս Ջիովաննի Ստեֆանո Շեիրիմանն⁴ անցնում էր Ֆլորենցիայով, Պուչին,

¹ Corti, op. cit p. 444.

² Նույն տեղում:

³ Կոմս Հենրիխ ֆոն Բրյուլը Սաքսոնիայի կուրֆյուրստ Ավգուստ 3-րդի եւ Լեհաստանի արքայի առաջին մինիստրն էր, եւ թագավորական հրահրային գորքերի հրամանատարը: Ջինվորական կարիերայից զատ մեծ հետաքրքրություն էր տածում շքեղ կենցաղի, ինչպես նաեւ գրքերի եւ նկարչության հանդեպ: Նրա վախճանից հետո, նրա 62000 գրքից բաղկացած գրադարանը Դրեզդենի թագավորական գրադարանի մասը կազմեցին, իսկ 600 կտավից բաղկացած հավաքածուն գնվեց Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա 2-րդի կողմից Կայսերական էրմիտաժի համար: Մեր կարծիքով հենց այս ճանապարհով էլ Գրեզորիո Ադդոլոյի 1741 թ. հավաքածուի մեջ գտնվող Տիցիանի «Ապաշխարիող Մարիամ մագթադինացին» (Maddalena penitente, 1565) հասել է Էրմիտաժ (տե՛ս Прогулка по Императорскому Эрмитажу — Второй этаж — 45: Кабинет итальянских школ):

⁴ Ստեֆան Շեիրիմանյանի որդի Հովհաննես (վախճ. 1791 թ.), տե՛ս Aslanian S. D., p. 174.

օգտվելով առիթից, նրան է հանձնում հիշյալ գույքացուցակի պատճենը, հանձնարարելով նրան ստուգել, թե ո՞ր նկարներն են դեռ Աղդուլոյի մոտ, եւ որո՞նք արդեն չկան: Այս փուլում էլ այս հավաքածուի պատմությունն ավարտվում է արվեստաբան Ջինո Կորտիի մոտ:

Բադենի մարկգրաֆ, Ժամանակի մտավորական եւ արվեստասեր շրջանակներին հայտնի, Ժան-Էտիեն Լիոտարի աշակերտուհին համարվող Կարոլինա-Լուիզայի 1762-1764 թթ. նամակագրությունից հայտնի է դառնում, որ Գրեգորիո Աղլուլոն նոր պատկերասրահ է հիմնել Վենետիկում: Նա 82 կտավ է առաջարկում Ֆոն Բադենին վաճառքի համար, որոնց գույքացուցակները եւս հրատարակված են: Դրանք հիմնականում XVI-XV-II դդ. վենետիկյան դպրոցի հայտնի նկարիչների գործեր են: Նախկին հավաքածուից այստեղ ներկա է միայն Շիսլիոնե Պուլցոնեին վերագրվող Գրիգոր XIII պապի դիմանկարը: Ինչպես տեսնում ենք, Աղդուլոն կրկին վերսկսում է իր գործունեությունը եւ կրկին վերականգնում այդ հանրապետության քաղաքացու կոչումը՝ այս անգամ որպես Սաքսոնիայի իշխան: Գրեգորիո Աղդուլոն վախճանվել է 1789 թ. մայիսի 12-ին Վենետիկի Ս. Մոֆիայի թեմի վերակացության տակ գտնվող իր բնակարանում:

Պատմության շարունակությունը գտնում ենք «Մետրոպոլիտեն» թանգարանի իտալական արվեստի բաժնի համակարգող, եւրոպական եւ հատկապես իտալական վերածնության շրջանի մասին բազմաթիվ միջազգայնորեն հայտնի աշխատությունների հեղինակ Էլիզաբեթ Ե. Գարդների կրկին The

Burlington Magazine-ում հրատարակված հոդվածում¹: Նա անդրադարձել է 1789 թվից Ադդոլդի մահվանից հետո մնացած նկարների գույքացուցակին հիմնվելով իրեն հասանելի որոշ նոր փաստաթղթերի վրա, որոնք անշուշտ հոդվածում հղված են: Գարյոները համոզված է, որ չնայած փաստաթղթի անստորագիր լինելուն, այն գրված է Պիետրո Էդվարդսի՝ արվեստի գործերի ժամանակին հայտնի տեսուչի անհերքելի ձեռագրով՝ Մերենիս-սիմայի վերջալույսին: Ամսաթիվ եւս չկա, սակայն քանի որ այստեղ չեն կրկնվում այն բազմաթիվ նկարները, որոնք հավանաբար վաճառվել են Ադդոլդի ժառանգների կողմից, վստահաբար այն կազմված է 1789 թ. հետո: Համեմատությունը 1741 թ. գույքացուցակի հետ ցույց է տալիս, որ նախկինից միայն մեկ նկար է մնացել՝ Էմպոլիի կտավներից «Բսահակի զոհաբերությունը» (1615-1620 թթ., այժմ գտնվում է Սպենսերի արվեստի թանգարանում - Կանգասի համալսարան):

Սա թույլ է տալիս Գարդներին ենթադրել, որ Ադդոլդն բնույթով առավելապես առեստրական էր, քան կուլեկցիոներ: Վերջին գույքացուցակի ամսաթիվը վերականգնելու նպատակով Էլիզաբեթ Գարդները անդրադարձել է նաեւ Սիր Աբրահամ Հյումֆին (Լոնդոն) 1790 թ. հուլիսի 27-ին Սասսոյի գրած նամակին, ուր նշվում է, որ Ադդոլդի ժառանգներից գնել է Դոմինիկինտի մի նկարը, որտեղ պատկերված է սեւագգեստ մի հոգեւորական՝ նստած վիճակում, որը կարող էր պատկանած լինել Սանպիերի ընտանիքին՝ Բոլոնիայից, եւ ուրն Ադդոլդն Ֆլորենցիայից հետո տարել էր Վենետիկ (այն բացակայում է 1741-ի ցուցակում)...

¹ Gardner Elizabeth E., The Ardollo collection of paintings: the last chapter, The Burlington Magazine, vol. 128, No. 995 (Feb., 1986), pp. 144-146.

Հյուսիս կտավը գնել է Մասսոյից եւ ուղարկել Լոնդոն: Հետագայում Հյուսիս հասկացել է, որ դա Մորոնիի՝ «Տիցիանի ուսուցիչը» ("Titian's Schoolmaster, 1575) ստեղծագործությունն է՝ (այժմ գտնվում է Վաշինգտոնի Ազգային պատկերասրահի Վիդեներ հավաքածուում):

Գրեգորիո Աղդոլոն, ինչպես տեսանք, միջազգային առևտրական ցանցերին տիրապետելով հանդերձ, մնում է հայ վաճառական՝ հայ առևտրական կապիտալի իր մասնաբաժնով, իր ծանոթություններով: Մխիթար Աբբահոր մոտ՝ Սուրբ Ղազարում հյուրընկալությունը խոսում է այն մասին, որ նա անտարբեր չի եղել հայ կրթամշակութային արժեքների նկատմամբ: Մեզ անշուշտ հետաքրքրում է այն հարցը, թե Սուրբ Ղազարի եւրոպական կերպարվեստի նմուշներից ո՞րն է արդյոք Գրեգորիո Աղդոլոյի ձեռքով հայտնվել Հայոց Կղզում: Պարզ է միայն, որ Մխիթար Աբբահոր օրոք միայն 2-3 նկարներ են Ս. Ղազար բերվել: Եւ ս մի հանգույց, որի բացահայտումը հետաքրքիր պիտի լիներ կերպարվեստի մասնագետների համար:

Անդրադառնանք Հ. Ղ. Ալիշանի խոսքերին. «Քաղաքական տեսութեանց քննադատ գրող մեղած է՝ Վենետիկոյ տերութեան տկարութեան վրայոք՝ ընդդիմաբանութեամբ...»: Դժբախտաբար այս խոսքերի հավաստիությունը ապացուցման կարիք ունի, քանի որ համապատասխան փաստաթղթերին չենք տիրապետում, սակայն Ալիշանն առանց ձեռքի տակ փաստեր ունենալու նման վկայությունից վերապահ կմնար: Մենք սակայն ենթադրում ենք, որ այս գործունեությունն առավելապես հարիր է Գրեգորիո Աղդոլոյի ավագ որդուն՝ Ֆրանչեսկո դ'Աղդոլոյին (ծնվ.-

¹ Gardner Elizabeth E., op. cit., p. 144.

1756 թ.)¹, որը նշանակվելով Վենետիկի հանրապետությունում Սաքսոնիայի կուրֆյուրստի միջազգային կապերի խորհրդատու, իր ողջ կյանքը նվիրել է հակահեղափոխական պայքարին՝ նշելով Վենետիկյան արխիտոկրատիայի կործանման պատճառներն ու իշխանության սխալները: Բացի Սաքսոնիայի արքունիք ուղարկված գեկուցագրերից ու նամակներից, մարկիզ Ֆրանչեսկո դ'Ադդոլոյի կողմից շարադրված «Վենետիկի Հանրապետության Մահմանադրության» օրինակը պահվում է Դրեզդենի քաղաքային արխիվում²:

1792 - 1797 թթ. նա վենետիկյան պետական ինկվիզիցիայի վստահված անձն էր Վերոնայում, որտեղից, բացի իր առաջնային պարտականությունների մասին գեկուցելուց, հատուկ տեղեկագրեր էր ուղարկում Յակոբինյան շարժման եւ մասոնական խմբերի գործունեության մասին³: Իսկ 1797-ից հետո ընդհանրապես նրա կենսագրությունը ծածկված է քաղաքական գաղտնիության քողով⁴:

Հետաքրքիր է նաեւ Գրեգորիո Ադդոլոյի կրտսեր որդու՝ Մարկիզ Պետեր Ալոիզիուս դ'Ադդոլոյի⁵ կենսագրությունը: Նա Սաքսոնիայի բանակային ընտրյալ կորպուսի զինվոր էր եւ մասնակցել էր 7-ամյա պատերազմին (1756-1763): 1768 թ. արդեն զինվորական բարձր մայորի, ապա գնդապետի կոչումներ ուներ:

¹ Berengo M., Dizionario Biografico degli Italiani, Rome, vol. 1, (1960), p. 38.

² Staatsarchiv Dresden, loc. 589.

³ նույն տեղում loc. 2816. Arch. di Stato di Venezia, Inquisitori di Stato, busta 543.

⁴ G. B. Passano, Diz. di opere anonime e pseudonime, Ancona 1887, p. 285.

⁵ Paul Gautsch, „Agdollo, Peter Aloysius Marquis d'“, - Allgemeine Deutsche Biographie, herausgegeben von der Historischen Kommission bei der Bayerischen Akademie der Wissenschaften, Band 1 (1875), S. 137-138.

1769 թ. նա Սաքսոնիայի Քսավեր Մեծ Իշխանի (Կուրֆյուրստի 1-730-1806 թթ.) գլխավոր աղյուտանտն էր (*adjutant général*): Նրա ամուսնությունը իշխանուհի Լյուբոմիրսկայի՝ հետ ինչ-ինչ պատճառներով զաղտնի էր պահվում: Կրտսեր Ադոլֆի հիմնական գործունեությունը դիվանագիտական (նաեւ ֆինանսական) զաղտնի միսիաների իրականացումն էր Սաքսոնիայի արքունիքի համար: 1772-1776 թթ. պետությանը մատուցած զանազան կարեւոր ծառայությունների համար ընդգրկվել է երոպական ազատ որմնադիրների մասոնական մի քանի օթյակներում:² Սակայն 1776 թ. նա անակնկալ ձեռով ցմահ բանտարկության է ենթարկվում Քյոնիգստեյն ամրոցում, որի պատճառները հայտնի էին միայն Սաքսոնիայի Կուրֆյուրստին եւ նրա մորը: Փաստեր կան, որ Մեծ Իշխանի հատուկ գործերով քարտուղար (*secrétaire des commendements*) Հեմվալդի կողմից իրականացված 120.000 էկյու հնչուն դրամի եւ Կուրֆյուրստի մոր զարդեղենի անհայտացման առնչությամբ է իրականացվել Ալոիզիուս Ադոլֆի ձերբակալությունը:³ Այս գործին առնչվող փաստաթղթային կորպուսը ոչնչացվել է Մեծ Իշխանի կողմից: Որպես պետական հանցագործ մահացել է բանտում 1800 թ. օգոստ. 27-ին:⁴

¹ St u Ludovika Amelia Rutowski (Lubomirski) (1722-1778):

² Allgemeines Handbuch der Freimaurerei. von Lennings, Encyclopädie der Freimaurerei. Herausgegeben vom Verein deutscher Freimaurer, Erster Band (A-L), Leipzig, 1900, p. 7-8. [Vgl. Peuckert, Gesch. der Loge Zu den drei Schwertwrm u.s.w. (Lpz. 1883) Bülau, Geh. Gesch., 196 fg.].

³ Correspondance inédite du Prince François-Xavier de Saxe ..., Paris, DCCC LXXIV, p. 154.

⁴ Quellen und Forschungen aus italienischen archiven und Bibliotheken herausgegeben vom Koenigl. Preussischen Historischen institut in Rom. Band V, Rom, 1903 p. 256-257. St u նաեւ Paul Gautsch, նշվ. հոդվածը:

Մշուշոտ այս կենսագրության մանրամասների վերաբերյալ պատմությունն անշուշտ հետազայում անակնկալներ կմատուցի, սակայն այն փաստը, որ Գրեգորիո Աղդուլոյի երկու որդիներն էլ, ունենալով բարձր կրթական ցենզ, տիրապետելով օտար լեզուների, լինելով հմուտ դիվանագետներ եւ իրավունքի մասնագետներ, Եւրոպայի պատմության համար ոչ անհայտ հեղինակություններ են եղել:

Գրեգորիո Աղդուլոյի վեց երեխաներից հայտնի է նաեւ դուստրը՝ Մարիաննան, որը 1780 թ. ամուսնացել է վենետիկյան հայտնի Բարբարիգո գերդաստանի՝ Ժառանգներից մեկի՝ Նիկոլո Բարբարիգո Սան Պոլոյի հետ:

Աղդուլո գերդաստանին անդրադարձել է նաեւ Ալեքսանդր Հերմեստն իր «Հայերի Վենետիկը» աշխատության մեջ, նշելով, որ որոշ ժամանակ այս գերդաստանին է պատկանել Վենետիկի Մեծ Ջրանցքի (Canal Grande) վրա գտնվող մարգարտահրաշ պալատներից մեկը՝ «Կա Դարիոն»: Վենետիկի պատմության եւ ճարտարապետության բազմաթիվ գիտական խոսելով 1479 թ. կառուցված այս պալատի մասին, նշում են ում մարկիզ Արքիտ Արդուլլի մասին, ով 1700-ականների վերջին զնել է այս պալատը, սակայն սնանկանալով, 1833 թ. (որոշ տվյալներով 1838 թ.) ստիպված է եղել 480 անգլիական ոսկով այն վաճառել անգլիացի հնագետ Ռոդոն Բրաունին:² Նշվում է որ Արքիտ Արդուլլ աղամա-

¹ Cecchini Isabella, նշվ. հոդվ.:

² Հերմեստ Ա., Հայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 194: D'Annunzio G., Ca'Dario, Canale Grande di Venezia, (Catalogo illustrato), Pasqualetto Cl., Le leggende intorno a Ca' Dario, Leggende Veneziane, 1985, p. 9. Beatrice Traversin, Ca' Dario, la casa maledetta di Venezia, La tela Nera, 04.12.2010.

նդների հայտնի վաճառական է եղել, իսկ դոյակի վաճառքի թվականը հուշում է, որ նա Աղղոլոնների երրորդ սերնդի ներկայացուցիչը պետք է լիներ:

Այսպիսի շատ հետաքրքիր մի անձնավորություն՝ Մարկիզ Գրեգորիո դ'Աղղոլո, որին չենք գտել Յարութին Տէր Յովհաննեանցի «Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան»¹ ստվարածավալ աշխատության Զուղայի հայ վաճառականների ընտանիքների ցուցակներում եւ որի, ինչպէս նաեւ նրա ժառանգների գործունեության ուսումնասիրումը եւս հայագիտության խնդիրներից մեկն է:

Նշենք միայն, որ այս Գրիգոր Աղղոլոն բացի Արեւելք-Արեւմուտք առեւտրական գործունեությունից, այն հազվագյուտ առեւտրականներից է, որոնք կարողացել են ներդրվել արեւմտյան առեւտրատնտեսական հարաբերությունների մեջ այնպէս, որ կարողացել է միջպետական առեւտրական պայմանագրերի հաստատման առիթ հանդիսանալ: Նրա արվեստաբանական

Բոլոր հեղինակները նշում են այն փաստը, որ 15-րդ դարում կառուցված այս պալատի բոլոր տերերը դարեր շարունակ, ղժբախտ ճակատագիր են ունեցել: Նույնիսկ նրա առաջին տերերը կամ գոհվել են պատերազմում, կամ սնանկացել են, կամ մահացել անհավանական պայմաններում: Նույն Բրաունը, փորձելով դոյակում վերականգնողական աշխատանքներ կատարել, սնանկացել է, եւ հուսահատվելով ինքնասպանություն գործել: Այս դոյակին է սիրահարված եղել նաեւ մեծ տենոր Մարիո դել Մոնակոն եւ ցանկացել է այն զնել: Սակայն դեռ գնման գործարքը չավարտված, 1964 թ. Տրեվիզոյից վերա-դարձին ողբերգական ավտովթարի արդյունքում կորցրել է իր պրոֆեսիոնալ ակտիվությունը եւ պահանջել պալատի գնման պայմանագիրը չեղյալ համարել: Այս օրինակների շարքը բազմաթիվ է, եւ պալատը տխրահռչակ լեգենդ է դարձել Վենետիկի պատմության մեջ: Կոդ Մոնեի հայտնի նկարը (*Palazzo Dario* - 1908) մշտապես հավերժացրել է պալատը համաշխարհային կերպար-վեստում: Լինելով մասնավոր սեփականություն, այսօր այն ծառայում է որպէս արվեստի ժամանակավոր ցուցասրահ:

¹ Տէր Յովհաննեանց Զ., *Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան*: Նոր Զուղա 1880:

գիտելիքները, առևտրական հմտություններն ու հոտառությունն այն մակարդակն են ունեցել, որ թույլ են տվել նրան ժամանակի ամենահայտնի արվեստի գործերի հավաքմամբ ու վաճառքով զբաղվել: Սա որքան հիմնված է գիտելիքի, նույնքան հեղինակության, հայ եւ միջազգային առևտրական ցանցերի իմացության, ժամանակի ու տարածության զգացողության ամենապրոֆեսիոնալ կարողության վրա:

Հուսանք որ Աղդոլոների գերդաստանը, ինչպես Լազարյաններինը, Գերաքներինը, Շեիրիմանյաններինը եւ այլոց, նույնպես կուտումնասիրվի առևտրատնտեսական, մշակութային, քաղաքական տեսանկյուններից եւ մեկ անգամ եւս թույլ կտա ոչ միայն մեզ, հայերիս, այլեւ այս շրջանի մասնագետներին զարմանալ 17-18 դդ. «Զուղա - Նոր Զուղա - Արեւելք - Արեւմուտք» ֆենոմենի ուսումնասիրման դեռեւս ... անկատարության վրա:

MARQUIS GREGORIO D'AGDOLLO (1707-1789)

(Summary)

ELIZABETH TAJIRYAN

Gregorio Agdollo, Merchant of New Julfa, Abbot Mkhitar Sebastatsi, The Ardollo collection of paintings, Venice, Florence, Francesco d'Agdolo, Peter Aloysius d'Agdolo.

Gregorio Agdolo, merchant of New Julfa, owner of art galleries in Venice and Florence, who triggered the interest of modern arts critics, has a special role among the Armenian merchants of Venice of the first half of the 18th century.

The written heritage of the era reveals the close ties of Agdolo's family with the Mekhitarist Congregation of Venice and its Abbot Mkhitar Sebastatsi.

Gregorio Agdolo, one of the fathers of unified inter-European trade-economic and tax affairs, effectively managing an international trade network due to his reputation and experience, achieved signing of an inter-governmental trade agreement between the Republic of Venice, Saxonia and Poland in 1750.

His sons, marquises, like their father, were engaged in the political life of Europe. The older, Francesco d'Agdolo, who was not indifferent about the political peripetia of the Republic of Venice, participated in writing the constitution of the Republic of Venice. The young brother - Peter Aloysius d'Agdolo - was responsible for the external affairs of Saxonia for long years and served as the representative and trusted person of the Elector of Saxonia.

ՀԱՅԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԵՐԶԲԱԼԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԻ ՓՈԻԼՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

XIV դարում սկիզբ առած լեհահայ գաղութի պատմությունն անջնջելի հետք է թողել ինչպես հայ ժողովրդի ու Հայաստանի, այնպես էլ հյուրընկալ երկրի պատմության ու մշակութային ժառանգության մեջ: Ավելի քան 650-ամյա գոյության ընթացքում լեհահայ համայնքը գտնվել է տարբեր հասարակական-պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային ու կրոնական պայմաններում, ինչն օրինաչափորեն ուժեղ ու տևական ներգործություն է ունեցել հայության կյանքի վրա, ապա հանգեցրել ազգային դիմագծի աստիճանական կորստին:

Նորագույն պատմական ժամանակաշրջանում, երբ վերականգնվել էր Լեհաստանի անկախությունը (1918 թ.) լեհահայ համայնքն ազգային-մշակութային վերելք է ապրել, հիմնվել են լեհահայ ընկերություններ, բացվել է լեհահայոց պատմության թանգարան (Լվովի Մայր տաճարին կից), հրատարակվել են ամսագրեր: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում և դրան հաջորդող տարիներին Լեհաստանն անցավ մեծ փորձությունների միջով, իսկ լեհահայ համայնքը զգալիորեն նոսրացավ, բռնությունների ենթարկվեցին Ուկրաինական ԽՍՀ-ին անցած տարածքներում, մասամբ էլ արտագաղթեց արևմուտք լեհական

Միլեզիա: Համայնքի ներսում նոր թափ հավաքեց ուժացումը, բացակայում էին դպրոցներն ու հայեցի միջավայրը:

Բայցևայնպես, Լեհաստանում հետպատերազմյան տարիներին ստեղծվել են կաթոլիկ հայ հավատացյալներին միավորող և փաստացիորեն լեհահայությանը համախմբող երկու եկեղեցական թեմեր՝ Հյուսիսային թեմը Գդանսկ կենտրոնով (1950-ական թթ.) և Հարավային թեմը՝ Գլիվիցի կենտրոնով (1980-ական թթ.):

Արդեն 1958 թվականին Լեհաստանի լեհահայ կաթոլիկների Հյուսիսային թեմի հայ հավատացյալների ջանքերով (Կազեմիր Ֆիլիպիակ-Ստանիսլավի նախկին հոգևորական) նրանց է տրվել Գդանսկի Սբ. Պողոս-Պետրոս առաքյալների եկեղեցին, որը նորոգվել է և ծառայել լեհահայերի հոգևոր կարիքներին: 1976 թ. հիշյալ եկեղեցին ետ է վերցվել և հայերի տնօրինության տակ է մնացել եկեղեցուն կից Ս. Մարիայի մատուռը:

Հարավային Լեհաստանում հայերին համախմբող կենտրոն է դարձել Գլիվիցիի Սբ. Երրորդություն հայ կաթոլիկ եկեղեցին (հատկացվել է 1945 թ.), իսկ 1975 թ. Կրակովի հայերին է տրամադրվել դոմինիկյան Ս. Իդձեի եկեղեցուն կից մատուռը: Հարավային թեմի առաջին թեմակալն էր Կրակովի հայտնի յազեյլոնյան համալսարանում հայերեն դասավանդող Կազիմեժ քին. Ռոշքոն:

Այդուհանդերձ, շուրջ 30 տարի լեհահայերը հիմնականում ինտեգրվեցին լեհական հասարակության մեջ և ազգային զարթոնք ապրեցին միայն 1980-ական թթ.: Այս շրջանում լեհահայ համայնքն ուներ շուրջ 15 հազար անդամ, որոնք հիմնականում հնաբնակ լեհահայերն էին, հետպատերազմյան

շրջանի վերաբնակիչները, ինչպես նաև խառնամուսնություններից ծնվածները:

1980-ական թթ. Լեհաստանի տարբեր քաղաքներում հիմնվել են Հայ մշակույթի համակիրների ընկերություններ (խմբակներ): Առաջին ընկերությունը հիմնադրվել է Կրակովում (1980 թ.), որի նախագահն էր սլատմաբան, իրավաբան ու թարգմանիչ Միխալ Բոհուսևիչը (Բոդոսևիչ), իսկ քարտուղարը՝ Թերեզա Պասսակասը:

Հիմնադրման գործում մեծ էր Կրակովի Ազգագրական թանգարանի համակարգող դոկտոր Յանուշ Կամոցկու, մագիստրոս Ալեքսանդրա Յախեր-Տիշկովայի և Լեհաստանի ազգաճանաչության ընկերակցության ղեկավար դոկտոր Աննա Կովալսկա-Լևիցկու և այլոց բազմակողմանի օգնությունն ու աջակցությունը:

Նույնանուն ընկերություններ են հիմնվել Վարշավայում (1980 թ. դեկտ. – 1981 թ.) և Գդանսկում (1984 թ., հիմնադիր Մարիա Արգարովիչ), որոնց նպատակն էր համախմբել լեհահայերին, ներկայացնել գաղութի և Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Կրակովում 1980 թ. և 1983 թ. գումարվել են երկու գիտական նստաշրջաններ, 1980–1982 թթ. կազմակերպվել են հայերեն լեզվի դասընթացներ:

Փաստացիորեն արդեն մի քանի ամիս անց Հայ մշակույթի համակիրների խմբակը Կրակովում կազմակերպել է Լեհահայերի առաջին համաժողովը և գիտական նստաշրջանը: 1980 թվականի նոյեմբերի 8–9-ի կրակովյան PAX-ի պատերից ներս և հայր դոմինիկյանների տաճարում հանդիպել են լեհահայերի

մոտ 500 ներկայացուցիչներ, որոնք ժամանել էին Լեհաստանի ողջ տարածքից¹:

Իր ակտիվ ու բեղուն գործունեությամբ հատկապես նշանակալի աշխատանք է ծավալել Վարշավայի ընկերությունը, որը 1990-ական թթ. ուներ հարյուրավոր համակիրներ ու անդամներ: Այս ընկերության հիմնադիրն ու ավելի քան քսանամյա խնամակալը Վարշավայի համալսարանի դասախոս Լևոն Տեր-Օհանյանն էր: Ընկերության ջանքերով լեհերենով հրատարակվել են ավելի քան երեսուն գրքույկներ, այդ թվում՝ Զբիգնև Կոշչովի «*Լեհահայ երաժշտության ակնարկներ*», Յուլիուշ Գլոդեկի «*Արցախ*», Կատաժինա Ռաչկովսկու և Լևոն Տեր-Օհանյանի «*Մատենագրություն. Հայերը Լեհաստանում*» և այլն:

Լեհահայ Ադամ Տերլեցկու կողմից 1985 թ. հիմնադրված Կրակովի «Հայ մշակութային ընկերությունը» հրատարակել է *Տեղեկագիր*, որում ներկայացվել են ինչպես լեհահայ գաղութի, այնպես էլ Հայաստանի պատմությունը, մշակույթը, վեր են հանվել նրանց շուրջ առկա հիմնահարցերը:

Լեհահայերը գործուն աջակցություն են ցուցաբերել Սպիտակի 1988 թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժի և Ադրբեջանից փախստական հարյուրավոր կարիքավորներին, կազմակերպել են ամառային ճամբար Ադետի գոտու հայ երեխաների համար:

Այս նույն շրջանում Լեհաստանը թևակոխել էր վերափոխումների շրջան, դրվում էին Երրորդ հանրապետության հիմքերը: Երրորդ հանրապետության տարիներին էլ լեհահայ

¹ <http://www.awedis.ormianie.pl/>, Awedis-Աւետիս, Warszawa, Nr 25 - Zima 2015, էջ 1-5:

համայնքը կազմակերպական նոր որակ ստացավ, բազմակի անգամ համալրվեց Հայաստանից և հետխորհրդային այլ հանրապետություններից դեպի Լեհաստան եկած հազարավոր հայերով:

Անհրաժեշտություն առաջացավ հիմնել հայկական նոր կազմակերպություններ, քանի որ Կրակովի լեհական ազգագրական ընկերությանը կից ձևավորված հայ մշակութային ընկերությունները իրավական առումով սահմանավանդ էին, չէին կարող լինել հայ համայնքի ներկայացուցչական մարմիններ: 1990 թ. սեպտեմբերին Կրակովում հիմնվում է Հայ մշակութային ընկերությունը, որն էլ 1991 թ. հունիսի 15-ին գումարում է լեհահայ համայնքի առաջին ազգային ժողով-հավաքը, 1993 թ. կազմակերպեց Բյուլլետենի հրատարակություն (խմբ. Աննա Քշիշտոֆովիչ), տպագրեց 50-ից ավելի գրքեր ու բրոշյուրներ:

Հետագայում հիմնվեցին նաև Գլիվիցի «Արքեպիսկոպոս Թեոդորովիչի անվան Լեհահայերի ասոցացիան», իսկ Հայաստանից ներգաղթած հայերի կողմից կազմակերպվեցին լեհահայերի «Արարատ» ասոցացիան (Ararat Association of Armenians in Poland), «Լեհաստանի հայերի ասոցացիան» (Association of Armenians in Poland):

2005 թվականին մի խումբ լեհահայերի նվիրվածության և սրտացավության շնորհիվ հաջողվեց Պարադիժից Գդանսկ և Վարշավա տեղափոխել լեհահայոց ժառանգությունը՝ հնագույն ձեռագրեր և արվեստի գործեր, որոնք հիմնականում պատկանել էին Ռեչպոսպոլիտայի Կրեսների հայկական եկեղեցիներին¹: Պետք է նշել, որ այդ ջանքերն ուղղված էին ոչ միայն հայ այլև

¹ <http://www.awedis.ormianie.pl/>, Awedis-Աւեժիւ, Warszawa, Nr 27-Lato 2016, էջ 1-6:

համալեհական փոքրամասնության ժառանգությունը փրկելուն: Հայտնի չէ, թե ինչ կարող էր պատահել այդ գրքերի, հագուստների, նկարների, եկեղեցական պարագաների և այլ արժեքավոր իրերի հետ, եթե չլիներ այդ խմբի գործուն միջամտությունը: Բարեբախտաբար ոչ մի անվերականգնելի վնաս չարձանագրվեց, իսկ համատեղ գործադրված ջանքերը լեհահայերի համար ազդակ հանդիսացան համապատասխան կազմակերպություն ստեղծելու համար, որը կգրադվի լեհահայոց ժառանգությամբ և վտանգված մշակութային հուշարձաններով:

Այսպես, 2006 թ. ապրիլի 13-ին Վարշավայում հիմնվել է Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը, նախագահ Էվա Աբգարովիչ (2006–2012 թթ.)¹:

¹ Տե՛ս նաև Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, Նորավանք ԳԿՀ, 2014, էջ 84-86: Եվրոպայում գործող հայագիտական հաստատությունների մեջ յուրահատուկ է Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի (Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich) գործունեությունը: Հիմնադրամը ստեղծվել է 2006թ. Հայ կաթոլիկ թեմի նախկին առաջնորդ Յուզեֆ Գլեմպի կողմից: Իրականացնում է աշխատանքներ Լեհաստանի հայերի պատմության վերաբերյալ փաստաթղթերի, վավերագրերի, լուսանկարների և ձեռագրերի հավաքման ու պահպանման ուղղությամբ: Վերը հիշատակված աշխատանքների արդյունքում հիմնադրամում ձևավորվել է հայագիտական մեծ արխիվ: Հիմնադրամն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել հավաքված հայագիտական արխիվային նյութերը ցույց տալով հայերի դերակատարությունը Լեհաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական-մշակութային կյանքում և պահպանել լեհահայերի ավանդույթները: Թվյանացնելով լեհահայերի՝ հիմնադրամի տրամադրության տակ գտնվող ժառանգությունը՝ փորձ է արվում տարածել հայկական մշակույթի մասին գիտելիքները Լեհաստանում և նրա սահմաններից դուրս: Ուշադրության կենտրոնում է պահում Լեհաստանի «հին» ու «նոր» համայնքների կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք արտացոլվում են սոցիալ-մշակութային ուղղվածություն ունեցող «Ավետիս» ամսագրում: Հիմնադրամը նաև աշխատանքներ է իրականացնում Լեհաստանի հայկական հուշարձանների վերա-

Լեհահայոց վերոհիշյալ ժառանգությունը Հայ կաթողիկե եկեղեցու սեփականությունն էր հանդիսանում, ուստի լեհահայերը խնդրանքով դիմել են Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ կարդինալ Գլեմպին, որն ընդառաջել է այդ խնդրանքին: Այսպես, 2006 թ. «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը» ստանձնեց լեհահայոց ժառանգության պահպանության պարտականությունը: Կարդինալ Կազիմեժ Նիչը դարձավ Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ և շարունակեց այդ գործը: Հիմնադրամի գլխավոր նպատակներն են առանձնահատուկ ուշադրությունը լեհահայոց ժառանգությանը, Ռեչպոսպոլիտայի Կրեսների մշակույթի և պատմության տարածումը՝ ուշադրություն դարձնելով լեհահայոց պատմությանը և մշակույթին: Պետք է շեշտել, որ Հիմնադրամը չի սահմանափակվել միայն գրքերի հավաքմամբ, վերականգնմամբ ու պահպանմամբ, այլև կազմակերպել է բազմաթիվ գիտաժողովներ

նորոգման և վերականգնման ուղղությամբ: Ուշագրավ է նաև, որ հիմնադրությունն իր աշխատանքի արդյունքները լավագույնս ներկայացնում է համացանցում՝ դրանք հասանելի դարձնելով գիտական և ընդհանրապես դրանցով հետաքրքրվող շրջանակների համար: Հիմնադրամի աշխատանքներից երևում է, որ այն կրթական գործառույթներ չի իրականացնում, հրատարակում է գիտական և գիտահանրամատչելի աշխատություններ, կազմակերպում կամ համակազմակերպում է գիտաժողովներ: Հիմնադրամից ի վեր ակտիվ համագործակցում է հայաստանյան գիտական օջախների (Մատենադարան, ԵՊՀ) և ՀՀ պետական կառույցների, արևմտյան հայկական համալսարանների կազմակերպությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բելգիայի անհատ հայազետների հետ: Հատկանշական է, որ հիմնադրամի գործունեությունը գտնվում է պետական հոգածության ներքո: Դրա վկայությունն է այն, որ հաստատության կողմից իրականացվող 2013 թ. Մրագրերը ֆինանսավորվել են Վարչարարության և թվայնացման, Մշակույթի և Ազգային ժառանգության նախարարությունների, ինչպես նաև Լեհաստանի Պատմության թանգարանի կողմից («Վաղվա հայրենասիրությունը» ծրագրի շրջանակում):

ու ցուցահանդեսներ, իրականացրել է բազմազան ծրագրեր և հրատարակություններ, այդ թվում *Աւետիս* թերթը (2009 թվականից, խմբ.՝ Արմեն Արտվիխ): Հատկանշական է, որ թերթի հրատարակությունը ոգևորիչ արձագանք է գտել նաև հայկական մյուս համայնքներում, մասնավորապես Ռուսաստանի հայերի շրջանում մեծ համբավ ունեցող համառուսաստանյան «*Երկրամաս*» պարբերականի ինֆորմացիոն կենտրոնի հաղորդագրությունում նշվում էր, որ այս թերթը դեռևս 1939 թ. իր գոյությունը դադարեցրած լեհահայերի վերջին գրավոր օրգանի՝ «*Գր. Լուսավորչի պատվիրակ*»-ի շարունակողն է, որը հրատարակվել էր Լվովում (մինչև Ուկրաինական ԽՍՀ մաս կազմելը) և, փաստացիորեն, ազդարարում էր լեհահայոց վերածնունդը¹: Այնուհետև շարունակելով միտքը՝ «*Երկրամաս*»-ը մանրամասնում է, որ երկլեզու այս թերթը սոցիալ-մշակութային ուղղվածություն ունի, այն 70-ամյա բացակայությունից հետո ներկայացնելու է լեհահայ կյանքը, իր շուրջը համախմբելով լեհահայերի տարբեր հասարակական խմբերի, հնարավորություն ընձեռելով հաղթահարել լեզվական, մշակութային ու պատմական խոչընդոտներն ու արգելքները:

Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության հիմնադրամը ձեռնարկել է Լեհահայոց Վիքտուալ Արխիվի (ԼՎԱ) ծրագիրը²: Այն Ժամանակակից թվային հիմք ունի, ուր պետք է բոլոր հետաքրքրվող անձանց մատչելի լինեն Վարչավայում գտնվող Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության հիմնադրամի բոլոր տիպի ժողովածուները: Դրանք ներառում են ձեռագրեր, հնստիպ

¹ http://yerkramas.do.am/news/avedis_avedis_gazeta_armjan_polshi/2009-11-15-12459

² <http://www.awedis.ormianie.pl/>, Awedis-Աւետիս, Warszawa, Nr 5-Zima 2010, էջ 1-5:

գրքեր, թերթեր և ամսագրեր, նկարներ, արխիվային լուսանկարներ, պաշտամունքի իրեր, անգամ ձայնագրություններ եւ ժապավեններ, որոնք կազմում են բանավոր պատմության արխիվ:

Հիմնադրամի տասնամյակի առիթով (2016 թ.) լույս է ընծայվել պատկերազարդ ժողովածու «Լեհահայեր. Մշակույթ և ժառանգություն» վերնագրով:

Վերջին քառորդ դարում դեպի Լեհաստան հայերի արտահոսքը չի դադարել, շարունակվել է տարբեր տեմպերով: Տարբեր գնահատականներով այդ տարիներին Լեհաստան են տեղափոխվել մինչև 100 հզ մարդ, սակայն Լեհաստանում անցկացված պաշտոնական մարդահամարների տվյալները հայ էթնիկ փոքրամասնության վերաբերյալ արձանագրել են ցածր թվական ցուցանիշներ. այսպես, 2002 թ. մարդահամարով՝ 1082, 2011 թ.՝ 3000 հայ: Սա որոշ հեղինակներ բացատրում են այն հանգամանքով, որ հայ բնակչությունը հավանաբար արձանագրվում է որպես լեհեր, այլապես հայության թվաքանակը մի քանի տասնյակ անգամ ավելին է¹: Այսօր Լեհաստանում հստակ տարբերակելի են հայության երեք ենթախմբեր

- Հնաբնակ և առավել ասիմիլացված հայեր, որոնք այլևս լեհական հանրույթի լիարժեք մասնիկն են, չեն ժխտում իրենց հայկական արմատները,

- Հայեր, որոնք Լեհաստան են գաղթել ժամանակակից Արևմտյան Ուկրաինայից կամ Կրեմլից,

¹<http://www.mirrorspectator.com/2011/07/08/treasures-of-armenian-culture-in-poland/>
George Bournoutian, Treasures of Armenian culture in Poland, The Armenian Mirror-Spectator, Watertown, September 8, 2011.

- Վերջին քառորդ դարում ՀՀ-ից և հետխորհրդային տարածքից այստեղ վերաբնակեցվածներ¹:

Լեհահայ համայնքում այս խմբերի առկայությունը չի խոչընդոտում այդ հյուրընկալ երկրում ամուր կապերի ձևավորմանը, ազգային մշակույթի ու պատմության նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորմանը:

Լեհաստանի հայ համայնքի 650-ամյակի միջոցառումների շրջանակներում Լեհահայ համայնքի ներկայացուցիչները 2017 թ. մարտի 29-ին հյուրընկալվել են Լեհաստանի նախագահի նստավայր Բելվեդերում, ուր, դիմելով ներկաներին, Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդան նշել է. «Հայ ժողովրդի պատմությունը զրանցված է նաև Լեհաստանի, մեր ժողովրդի պատմության մեջ, այն անբաժանելի կեպով կապված է մեր ժողովրդի պատմության հետ: Հարյուրամյակների ընթացքում իրար խառնված մեր արյունը Լեհաստանի մեծ ձեռքբերումն է: Հնարավոր չէ սլափկերացնել Լեհաստանի պատմությունը առանց դրանում, մեր մշակույթում, մեր ավանդույթներում հայերի բազմադարյա ներդրման: Հայերն իրենց ավանդույթով, իրենց մտավորականությամբ, իրենց արվեստով, մշակույթով ու հավատով միշտ հյուրընկալվել են Լեհաստանում: Հայերի ներդրումն անգնահատելի է մեր երկրի կյանքում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նրանք մշտապես ներգրավված են եղել հասարակական կյանքում, իրենց նոր հայրենիքի կյանքում՝ մշտապես հիշելով Հայաստանի մասին: Այս հարյուրամյակներին

¹ Grzegorz Pelczyński, Armenians in Poland in the period of communism and in the "Third Polish Republic", Our Europe. Ethnography – Ethnology – Anthropology of Culture, Vol. 1/2012, Poznań, 2012, pp. 45-54.

նայելով՝ ես որպես Լեհաստանի Հանրապետության Նախագահ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ այդ ներդրման համար»¹:

2017 թ. հոկտեմբերի 19-ին Լեհաստանի Սենատը (ՀՀ ԱԺ պատվիրակության ներկայությամբ) ընդունեց պատմական բանաձև, իրավական ակտ, որով աննախադեպ քայլ կատարեց երախտիք հայտնելով լեհահայերին իրենց այդ երկրում 650-ամյա ներկայության և անփոխարինելի վաստակի համար: Այս խոստուն գնահատականները լիովին արտացոլում են լեհահայ համայնքի պատմական անցյալն ու ներկան:

Ներկայումս Լեհաստանում գործում են մի քանի հայկական դպրոցներ Գդանսկում (դասընթացներն ընթանում են թիվ 58 հիմնական դպրոցում), Կրակովում (դասընթացներն ընթանում են Վոյեվոդային հասարակական գրադարանում), Վարշավա-Պլոցկում (դասընթացներն անցկացվում են թիվ 210 միջնակարգ դպրոցում): Հայ առաքելական եկեղեցու լեհահայոց հոգևոր հովիվն է Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը, իսկ հայ կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչներն են Ցեզարե Աննուսինյը (Հյուսիսային ժողովրդապետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Գդանսկ), Ռաֆալ Կրավչիկը (Կենտրոնական ժողովրդապետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Վարշավա), Տադեուշ Իսակովիչ-Ջալեսկին (Հարավային ժողովրդապետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Գլիվիցե): Լեհաստանի հանրապետության կառավարության ազգային ու էթնիկական փոքրամասնությունների

¹ <http://www.iragir.am/index/arm/0/societv/view/150586>

համատեղ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչն է եղվարդ Միեր-Ենդժեյովիչը:

Մերձբալթյան հանրապետություններ: Մերձբալթյան հանրապետություններում բնակվող հայությանը¹ ավանդական, կազմակերպված համայնք չի կարելի համարել, ինչպիսիք են տարածաշրջանի գերմանական կամ ռուսական էթնիկ խմբերը: Հայերի մասին հիշատակությունների հանդիպում ենք դեռևս Լիտվական Մեծ իշխանության, Լեհ-լիտվական միացյալ պետության շրջանից: Մասնավորապես, լեհ-լիտվական միացյալ ուժերի կազմում հայկական երկու ջոկատներ մասնակցել են 1410 թ. նշանավոր Գրյունվալդի կամ Ժալգիրիսի ճակատամարտին: Համեմատաբար մեծ հոսքերով հայերը Մերձբալթիկայում սկսել են հաստատվել XX դ. երկրորդ կեսից, երբ այստեղ գործուղվեցին հիմնականում հայ զինվորականներն ու մասնագետները: Հատկանշական է, որ Սալիտակի երկրաշարժից հետո մոտ 5 հազար հայեր տեղափոխվել են Լատվիա, որոշ քանակությամբ նաև Լիտվա և Էստոնիա, այստեղ են հանգրվանել նաև հայ փախստականներ Ադրբեջանից ու Վրաստանից²:

1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով մերձբալթյան հանրապետություններում ընդհանուր թվով բնակվում էին 6.393 հայեր, որից³ Լիտվական ԽՍՀ-ում՝ 1.655, Լատվիա-

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր IV, Գիրք II: Նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.), խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Երևան, 2016, էջեր 259–262:

² Армяне в Прибалтике. История и современности, «Носв Копчег», Москва, № 22–23 (205–206) Декабрь 2012 года.

կան ԽՍՀ-ում՝ 3.069, Էստոնական ԽՍՀ-ում՝ 1.669 հայ¹։ Մերձբալթյան հանրապետություններում 1980-ական թթ. վերջին 1990-ական թթ. սկզբին սկսեցին ձևավորվել հայկական ազգային-մշակութային կառույցներ։

1988 թ. Լիտվայում հիմնվել է «Գարուն» հայ մշակութային միությունը (նախագահ՝ Օ. Իսան), ապա նաև Լիտվա-Հայաստան ընկերությունը։ 1989 թվականից Վիլնյուսում, հետագայում նաև Վիսագինասում և Կաունասում գործել են հայկական կիրականօրյա դպրոցներ։

1988 թ. նոյեմբերին Լատվիայի հայության համընդհանուր համագումարում հիմնվել է հայ ազգային-մշակութային կազմակերպություն՝ Լատվիա-հայկական ընկերությունը (նախագահ՝ զիտության վաստակավոր գործիչ Ս. Գասպարյան, ապա՝ Ռ. Խարաջանյան, Ս. Վարդանյան, Ե. Հարությունյան, Հ. Համբաձումյան)², որի նախաձեռնությամբ 1989 թ. գործում էր Ռիգայի հայկական կիրականօրյա դպրոցը (N 1 գիմնազիայում), հրատարակվում «Լույս» տեղեկատվական բյուլետենը։

Վերոնշյալ ընկերությունը հայկական մշակույթը Լատվիայի հայ համայնքի մեջ քարոզելու ու հասարակայնացնելու նպատակով տարիներ շարունակ կազմակերպել է գրական-երաժշտական երեկոներ, գեղարվեստական և բարեգործական ցուցահանդեսներ, որից ստացված հասույթը փոխանցել է հայկական հիմնադրամներին։

1989 թ. Յիթուլիշիում կառուցվել է առաջին հայկական հուշարձան-աղբյուրը, իսկ 1990 թ. Ռիգայում կանգնեցվել է քանդա-

¹Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների, Սփյուռքագիտություն տարեգիրք, Երևան, 2013, էջ 53։

² avitas.ru/article.php?n=70&a=018 (Армяне в Латвии . От общества - к общине).

կազոր՝ Ս. Մուրադյանի հուշարձան-խաչքարը նվիրված Հայոց մեծ եղեռնի 75-ամյակին: Հետադարձորդային տարիներին Լատվիայում հիմնվել են հայկական նոր կազմակերպություններ, որոնք զգալի աշխատանք են կատարել համայնքային կյանքի ակտիվացման գործում: Ռիգայի հայ համայնքը հիմնադրվել է 2001 թվականին Լատվիա-հայկական մշակութային ընկերության հիմքի վրա: Համայնքը սնդամակցում է Լատվիայի ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների «Համագործակցություն» միությանը և պետությունից ֆինանսավորում ստանում¹:

Էստոնիայում 1987 թ. սկզբնապես հիմնվել է Տալլինի և Էստոնիայի հայերի միավորումը (նախագահ՝ Ա. Դավիդյանց), որի նախաձեռնությամբ Հաապսալու քաղաքի այն տան պատին, որտեղ բնակվել է հայ ժողովրդի բաբեկամ, Էստոնոսի միսիոներ Աննա Հեդվիգ Բյուլը, փակցվել է հուշատախտակ: 1989 թ. հիմնվել է Տարտուի Խ. Աբովյանի անվան հայկական մշակութային ընկերությունը (նախագահ՝ Ռ. Գրիգորյան), որը հայոց պատմության և արդի հայկական խնդիրների լուսաբանման ուղղությամբ հայ համայնքի մեջ ծավալել է լայն գործունեություն: Հայկական կազմակերպությունների մասնաճյուղեր են գործել նաև Պայդեում և Վալգայում²:

1991 թ. Տալլինում կազմակերպվել է «Հայաստանի տուն» փառատոնը, որի շրջանակներում իրականացվել են տարաբնույթ մշակութային միջոցառումներ: 1989–1991 թթ. Տալլինում հրատարակվել է տեղի Հայկական մշակութային ընկերության «Վահագն» ամսաթերթը: Հայկական այս ընկերություններին կից Տալլին և

¹ https://www.armenianow.com/hy/features/5785/baltic_vans_a_visit_with_the

² Տե՛ս Всемирный армянский атлас, М., 2015, էջ 423:

Տարտու քաղաքներում բացվել են հայկական կիրականօրյա դպրոցներ¹:

2000 թ. Էստոնիայում անցկացված մարդահամարով հանրապետության հայ բնակչության թվաքանակը կազմում էր 1444 հայ, իսկ Լիտվայում 2001թ. 1477 հայ: Լատվիայի բնակչության ռեեստրի տվյալներով 2011 թ. դրությամբ հանրապետությունում արձանագրվել է 2700 հայ բնակիչ, որոնց 43%-ն ուներ քաղաքացիություն: Այլ տվյալներով այս երեք հանրապետություններում միասին բնակվում են շուրջ 10 հազար հայ:

2009 թ. հիմնվել է Բալթիայի հայկական կոնգրեսը, որը միավորում է երեք հանրապետությունների հայ համայնքները, իսկ 2013 թ. լույս է տեսնում նրանց «Կոունկ» հանդեսը: Այստեղ անկանոն պարբերականությամբ հրատարակվում են նաև այլ պարբերականներ, առկա են հեռուստառադիոժամեր, մշակութային ու մարզական կառույցներ:

Արդեն 1990-ական թթ. գրանցվել են հայ առաքելական եկեղեցու համայնքներ, բալթյան երկրների մայրաքաղաքներում գործում են եկեղեցիներ²: Վերջին շրջանում իր ակտիվությամբ աչքի է ընկնում Վիլնյուսում ՀՀ դեսպանությունը, որը տարատեսակ միջոցառումներով ակտիվացրել է հայ համայնքը: Մեծ Եղեռնի 100-ամյակին ընդառաջ Լիտվայում, որը ցեղասպանությունը ճանաչած միակ մերձբալթյան երկիրն է, հրավիրվել է ժողով հայ համայնքների (Վիլնյուս, Կաունաս, Վլայայեդա, Շյաուլյայ, Վիսագինաս) ներկայացուցիչների, Նոր Նախիջևանի և

¹ Տե՛ս Հայ Սիիոտք հանրագիտարան, Ե., 2003, էջ 171:

² https://www.armenianow.com/hy/features/5785/baltic_vans_a_visit_with_the_armenians_in_Pribaltike: Армения в Прибалтике. История и современность, Ноев Ковчег. М., № 22–23 (205–206) Декабрь 2012 года.

Ռուսաստանի եկեղեցական թեմի Բալթիկայի հայ համայնքների հայոց հոգևոր հովիվ Գերաշնորհ Եպս. Խոսրով Ստեփանյանի մասնակցությամբ¹ քննարկելու և իրականացնելու նախապատրաստական աշխատանքներ, ձևավորելու բալթյան համայնքների կոորդինացիոն մարմին¹: Հայոց պատմության այդ սգալից իրադարձության տարելիցը նշվել է բալթյան հայության և տեղի հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների, քաղաքացիների լայն մասնակցությամբ:

2017 թ. ապրիլին Ռիգայում մեծ շուքով անցել է միջնադարյան հայ հոգևորական, փիլիսոփա և տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» լատիշերեն հրատարակության շնորհանդեսը, իսկ Ռիգայի համալսարանի գրադարանում Արմենապրես լրատվական գործակալության լուսանկարչական ցուցահանդեսը՝ նվիրված հայ միջնադարյան ավելի քան երեք տասնյակ եկեղեցական ճարտարապետական կոթողներին: 2017 թ. հունիսի 6-ին Լիտվայում ՀՀ դեսպանության կազմակերպմամբ Վիլնյուսի քաղաքային սրահում տեղի է ունեցել Հայաստանի պատմական քարտեզներին (51 քարտեզ) նվիրված ցուցահանդես, որին ներկա են գտնվել Լիտվայի մշակույթի նախարարը, բազմաթիվ պատգամավորներ, Լիտվայում հավատարմագրված դեսպաններ, լրագրողներ և հայ համայնքի ներկայացուցիչներ: Ցուցադրված քարտեզները ներկայացրել են Հայաստանի պատմական զարգացումն ու այդ ընթացքում երկրի սահմանների փոփոխությունը:

Լեհաստանի և Մերձբալթիկայի հայ համայնքներն այսօր կարևոր դերակատարություն են հասնում այդ երկրների և ՀՀ հարաբե-

¹ <http://havernaysor.am/> (11/02/2014).

րություններում: Ազգային արժեքների պահպանումը, հայրենիքի հետ սերտ կապերը այս համայնքների երկարատև գոյության գրավականն են:

ARMENIANS IN POLAND AND BALTIC STATES IN MODERN STAGE

(Summary)

HOVHANNES ALEKSANYAN

After the collapse of the USSR tens of thousands of Armenians arrived in Poland and Baltic states (former Soviet republics of Lithuania, Latvia, Estonia) were actively engaged especially in the trading business. There are also many renowned public, arts, cultural figures who have established themselves in the societies of these countries.

Poland's Armenian community is one of the unique manifestations of the Armenian Diaspora, with its rich history and important roles in Poland's and Baltic region's life. Armenians live in Poland for more than 650 years and the Armenian community celebrated this anniversary with great enthusiasm in 2017. In cooperation with Polish authorities and partner organizations, as well as Armenian organizations of Poland, the Armenian Embassy has organized more than two dozen events on the 650th anniversary of the privilege granting to the Armenian community.

The Polish Sejm and Senate adopted resolutions marking the 650th anniversary of the establishment of Armenian community in Poland. The Senate resolution congratulates the Armenians for the achievements and "contribution to the Polish culture and creative presence in the country's history." In the resolution, the Polish Sejm members underscored the Armenian community's part in the history of

Poland, and paid tribute to those who gave lives for the independence of the country.

The Armenians living in the Baltic states are not traditional communities. Armenians with relatively large flows have been established in the Baltic states during the Soviet era, when mainly Armenian soldiers and specialists were sent there. It is noteworthy that after the Spitak earthquake in 1988, about 5 thousand Armenians were taken to Latvia, and some to Lithuania and Estonia. From the 1990s a number of Armenian refugees from Azerbaijan and Georgia have also been here. Small communities formed here, but there are different organizations that work hard in social and cultural spheres.

The Armenian communities of Poland and Baltic states have an important role today in the relations of these countries and Armenia. Preservation of national values and close ties with the homeland are the guarantee of long-term existence of these communities.

ՊԱՂՏԱՏԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ
ԴՊՐՈՑՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՄԻՆ

ՍԵՐԱ ՕԶԱՆԵԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Քրիստոնեությունը մուտք գործած է հիւսիսային Միջագետք IV դարուն, երբ այդ տարածաշրջանը մաս կը կազմէր Հռոմէական Կայսրութեան, իսկ հարաւային Միջագետքը կը գտնուէր պարսկական տիրապետութեան ներքոյ:

V դարու առաջին կէսին, Պարսկաստանի եկեղեցին կ'անջատուի օրթոդոքս քրիստոնեայ ընտանիքէն եւ ինքզինք կը հռչակէ ինքնավար: Իսկ Եփեսոսի Ժողովին (431 թ.) կ'ընդունի Նեստորական Վարդապետութիւնը¹: Հակառակ 451 թ. Քաղկեդոնի Ժողովի որոշումներուն, Միաբնակներու երկու խմբաւորումներ – Ասորական ազգային կամ Յակոբիկեան Եկեղեցին եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին – կը հաստատուին Միջագետքի մէջ եւ կ'ունենան իրենց ուրոյն նուիրապետութիւնները: Հետագային, սակայն, վերոյիշեալ երեք եկեղեցիներուն պատկանող որոշ թիւով խումբեր նոյնպէս կ'անջատուին իրենց

¹ Առաջին Համաշխարհային պատերազմէն առաջ, Նեստորական եկեղեցին, ինչպէս միւս եկեղեցիները ենթարկուած էր Լենկթիմուրի հալածանքներուն եւ քանդուած: Իրաքի Նեստորականներէն մեծ մաս մը միացած էր Քաղղէական Եկեղեցիին: Իսկ պատերազմէն ետք, այս եկեղեցւոյ անդամներէն շուրջ 25.000 հոգի, բրիտանական իշխանութիւններու կողմէն 1920 թ. Պաքուբայի գաղթակայանէն փոխադրուեցան Իրաքի հիւսիսային շրջան: 1933 թ. Սումէլի (Իրաք - Դըհօք նահանգի գիւղերէն մէկը) մէջ ասորիներու կոտորածներէն ետք, անոնցմէ 6000 հոգի անցան Սուրիա եւ հոն ալ հաստատուեցան:

ազգային եկեղեցիներէն ընդունելով Վատիկանի գերիշխանութիւնը, պահելով հանդերձ իրենց ազգային ծեսերն ու սովորութիւնները¹: Ասոնք են Քաղղէական, Ասորի Կաթոլիկ եւ Հայ Կաթոլիկ եկեղեցիները:

Իրաքի քրիստոնէայ համայնքներու մեծամասնութիւնը քաղաքաբնակ են եւ կը զբաղին առետտուրով եւ արհեստներով, բացառութեամբ Մուսուլի շրջանին մէջ գտնուող գիւղական կարեւոր համայնքներ – քաղղէական, հայ, ասորի ազգային եւ կաթոլիկ², որոնք կը զբաղին անասնաբուծութեամբ եւ հողամշակութեամբ:

Դարերու ընթացքին Մուսուլի, Պաղտատի եւ Պասրայի մէջ քրիստոնէաները կազմած են այս քաղաքներու բնակչութեան կարեւոր տոկոսը: Սյսպէս, XIX դարուն իրաքցի քրիստոնէաներու մեծամասնութիւնը կեդրոնացած էր Մուսուլի մէջ՝ 75.3%, Պաղտատի մէջ՝ 17.5% եւ Պասրայի մէջ 7.2%³:

Ներկայիս Իրաքի մէջ պաշտօնապէս ընդունուած քրիստոնէայ համայնքներն են Քաղղէացիներ, Ասորիներ, Հայեր (Առաքելական եւ Կաթոլիկ), Բողոքականներ իրենց տարբեր

¹ Գեորգեան Կարօ, Ամենուն Տարեգիրք, Պէյրութ 1957, էջ 379-380:

² Ա. Համաշխարհային Պատերազմէն Էտք, 1929 թուականին այստեղ կը իյմնադրուի մի քանի զուտ հայաբնակ գիւղեր եկալարութեամբ՝ Լեւոն Շաղոյեանի, ուր պիտի բնակէին որոշ թիւով վանեցի հայ գաղթականներ, մեծամասնութեամբ խողամշակներ:

³ Ըստ 1890 թ. մարդահամարին Իրաքի երեք վիլայիթներու բնակչութեան թուաքանակը հետեւեալն էր.

Պաղտատի վիլայէթ՝ 850.000 շունչ, որմէ 7.000 քրիստոնէայ,

Մուսուլի վիլայէթ՝ 300.000 շունչ, որմէ 30.000 քրիստոնէայ,

Պասրայի վիլայէթ՝ 680.000 շունչ, որմէ 2.850 քրիստոնէայ (Guinet V., La Turquie d'Asia, Paris 1894, pp. 17, 220):

ճիւղաւորումներով (Աւետարանականներ, Ասորական Ազգային-Աւետարանական եւ Շաբաթապահ-Աղւենթիաթ): Սակաւաթիւ համայնքներ են Յունածէս Օրթոդոքս, Յունածէս Կաթոլիկ, Լատիններ եւ Ղպտի Օրթոդոքս եկեղեցիներուն հետեւողները¹:

Սկզբնական շրջանին, Իրաքի քրիստոնեաները իրենց առաջին դպրոցները հիմնած են եկեղեցիներու շրջափակէն ներս, ուր դասաւանդուող առարկաներն էին գրաճանաչութիւնը եւ կրօնական տարրական գիտելիքները: Սակայն, կարգ մը դպրոցներուն մէջ կրօնագիտութեան կողքին կ'ուսուցանուէր նաեւ Աստուածաբանութիւն, որոշ լեզուներ ու տարբեր գիտելիքներ՝ հոգեւորականներ պատրաստելու համար²: Դպրոցները աստիճանաբար զարգանալով կ'անջատուին եկեղեցիէն եւ կը հիմնադրուին անկախ կրթական օժախներ՝ կիրարկելով ուսուցման նոր եղանակներ: Այս տիպի դպրոցներ հիմնուեցան Պաղտատի եւ Մուսուլի «վիլայէթներուն» մէջ XIX դարու սկիզբը: Սակայն, մինչև տոյն դարու վերջը Մուսուլի կարգ մը գիւղերուն մէջ տարրական դպրոցները տակաւին կը պահպանուէին եկեղեցիներէն ներս³: Դասաւանդուող առարկաներն էին գրաճանաչութիւն, կրօնագիտութիւն եւ հոգեւոր երգեցողութիւն: Սակայն, պատկերը հիմնովին փոխուեցաւ Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակաշրջանին, որ պայմանաւորուած էր օտար-

¹ Soppe, Սա'ադ Սալլում, (الدكتور سعد سلوم – المسيحيون في العراق – بغداد 2014 صفحة 306-307, Իրաքի Քրիստոնեաները, Պաղտատ, 2014, էջ 306-307):

² بابو اسحق روفائيل، تاريخ نصارى العراق، مطبعة المنصور، بغداد 1948 ص 7 Բուֆայիլ Բաբու Իսհակ, Իրաքի Քրիստոնեաներու Պատմութիւն, Էլ-Մանսուր հրատ., Պաղտատ, 1948, էջ 7):

³ م. التعاليم في العراق في العهد العثماني الاخير، بغداد 2002، صفحة 228 (Էլ-Նաճճառ Ջ.Մ., Կրթութիւնը Իրաքի մէջ Օսմանեան վերջին ժամանակաշրջանին, էջ 228):

ազգի դպրոցներու ներթափանցմամբ, եւ հովանաւորութեամբ եւրոպական երկիրներու, որոնք ջանք ու եռանդ չէին խնայեր օժանդակելու վերոյիշեալ դպրոցները թէ՛ նիւթապէս եւ թէ՛ սաքաւորումներով¹:

Ինչպէս յայտնի է, Օսմանեան կայսրութիւնը իր գրաւած տարածքներուն մէջ ստեղծեց «միլլէթներ»-ի դրութիւնը, ուր տուեալ երկրի բնակչութիւնը կը ստանար որոշ ընկերա-քաղաքական «իրաւունքներ», ներառեալ եկեղեցիներուն կից դպրոցներ ունենալու իրաւունքը: Մինչեւ XVIII դար, այս իրաւունքը վերապահուած էր հոգեւորականներուն, որոնց զլիաւոր պարտականութիւնն էր վերոյիշեալ դպրոցներուն մէջ հոգեւորականներ նախապատրաստել: Սակայն, ժամանակի ընթացքին եւ պարագաներու բերումով, անհրաժեշտ էր աշխարհիկ դպրոցներ եւս ունենալ, քանի որ երթալով աւելի կը շեշտուէր միսիոներներու գործունէութիւնը, որոնք իրենց հովանաւորութեան տակ գործող դպրոցներուն մէջ ուղղակի եւ անուղղակի կերպով կը սատարէին բողոքական եւ կաթոլիկ դաւանանքներու տարածումը քրիստոնէաներուն մէջ, որոնցմէ զերծ չմնացին նաեւ Հայ Առաքելական եկեղեցւոյն պատկանող հայերը²:

XIX դարու վաթսուսականներուն վերջերը, Օսմանեան իշխանութիւնները ձեռնարկեցին տեղական սեփական ազգային դպրոցներու կանոնակարգումը, ներառեալ քրիստոնէական (տեղացի) եւ օտար ոչ-իրաքեան դպրոցները, «Ընդհանուր Կրթական

¹ Cuinet V., նշ. աշխ. էջ 101:

² Մինչեւ XIX դարու վերջը հայերու մէջ բողոքականներու թիւը կը հասնէր 70,000-ի, իսկ միսիոներական դպրոցներու թիւը 170 էր: Ութումեան Կ.Ս., Ծագումն եւ Ընթացքը Աւետարանականութեան Ի Հայոց, Կ.Պոլիս 1914, էջ 250, Sarafian K., History of Education in Armenia, Calif. 1930, p. 171.

Կանոնադրութեան» միջոցաւ, որու թիւ 129 յօդուածը կը պարտադրէր նախապէս ունենալ տուեալ «վիլայէթի» (նահանգի) «վալի»-ի (նահանգապետի) արտօնութիւնը դպրոց բանալու այդ շրջանին մէջ, ինչպէս նաեւ, դասաւանդող ուսուցիչներու վկայուածութեան աստիճանը, եւ յատկապէս դասաւանդող առարկաներու մասին յստակ տեղեկատուութեան հաղորդումը պատկան մարմիններուն: Սակայն, 1875 թ., Բարձր Դուռը իրեն պիտի վերապահէր արտօնութիւն տալ որեւէ դպրոց բանալու եւ շատ աւելի խիստ պայմաններով:

Հարկ է նշել, որ քրիստոնեայ դպրոցներու ֆինանսաւորումը, մատակարարումը եւ բոլոր ծախսերը կը հոգացուէին համայնքներու կողմէն, մանաւանդ ունեւոր դասակարգի նուիրատուութիւններէն²: Այնուամենայնիւ, 1885 թ. պետութեան կողմէն արգիլուեցաւ որեւէ դրամահաւաք կազմակերպել եկեղեցի կամ դպրոց կառուցանելու նպատակով առանց կեդրոնական կառավարութեան թոյլտուութեան: Կառավարութեան կողմէն այս սահմանափակումը պատճառ դարձաւ կարգ մը դպրոցներու վերջնական փակման կամ ժամանակաւոր դադարեցման³:

Նիւթական նուիրատուութիւններու կողքին, համայնքներու ազգային երեւելիները անշարժ գոյքեր եւ կալուածներ

¹ 229 النجار ج.م. نفس المصدر صفحة - Իրականութեան մէջ, Օսմանեան իշխանութիւններու նպատակը սեփական դպրոցները կանոնակարգել չէր, այլ աւելի խիստ հսկողութեան տակ վերցնել օտարազգի ինչպէս նաեւ տեղացի քրիստոնէաներուն պատկանող դպրոցները եւ այնտեղ ուսուցանող առարկաները:

² 352 مجلة الحرية، بغداد 15 كانون الأول 1924، ص 352 (Էլ-Հուրիյէ պարբերաթերթ, Պաղտատ, 15 Դեկտ. 1924, էջ 352)

³ Cuine: L., նշ. աշխ. էջ 784:

գնելով եւ կտակելով տուեալ համայնքին, կը սատարէին դպրոցներու գոյատեւման եւ ուսումնառութեան յարատեւման առանց անհարկի ընդմիջումներու: Օրինակի համար, Մուսուլի մէջ տեղակայուած Տոմինիքեանները ամէն ջանք կը թափէին շրջանի կաթուղիկ դպրոցներու ծախսերը հոգալ, գերծ պահելու զանոնք փակուելու վտանգէն¹: Քրիստոնեայ համայնքներու դպրոցներու առանձնայատկութիւններէն մէկն էր նաեւ տարբեր լեզուներու ուսուցումը տուեալ համայնքի ազգային լեզուին առընթեր: Օրինակի համար, քաղդէական դպրոցներուն մէջ քաղդէերէնի կողքին կը դաստիարակուէր արաբերէնը՝ որպէս բնակչութեան մեծամասնութեան լեզուն: Նոյնն էր պարագան սիրիաք եւ հայկական դպրոցներուն մէջ: Արաբերէնը ընդհանրապէս կ'ուսուցանուէր տեղացի քրիստոնեայ ուսուցիչներու կողմէն²: Իսկ երկրի պետական լեզուն՝ թրքերէնը, պարտադիր էր բոլոր դպրոցներուն մէջ: Այս կապակցութեամբ պետութիւնը ուսուցիչներ կը տրամադրէր իր քաղաքացի պաշտօնեաներէն, երբեմն ալ բանակային սպաները կը ստանձնէին այս պարտականութիւնը՝ իրենց հսկողութեան տակ պահելու ընդհանրապէս բոլոր ազգային սեփական դպրոցները, յա՛տկապէս քրիստոնեայ համայնքներուն պատկանող դպրոցները:

Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակաշրջանին Պաղտատի մէջ կը գործէին հետեւեալ քրիստոնեական տեղական ազգային դպրոցները:

¹ 144, *ياہو احق نفس المصدر من* (Նշ. աշխ. էջ 144):

² Սալնամէ Պաղտատ Վիլայէթի 1317 հիճրէթի, էջ 173: (Սալնամէները տարեկան տեղեկագիրներ էին, որոնք կը պատրաստուէին իւրաքանչիւր «վիլայէթ»ի տեղական գերատեսչութեան պատկան իշխանութիւններու կողմէն եւ կը հասցեագրուէին Վ.Պոլիս):

1- Հայ Առաքելական համայնքին պատկանող «Ս. Մեսրոպ» դպրոցը, հիմնադրուած 1790 թ., առաջին քրիստոնեայ դպրոցն էր Պաղտատի մէջ, որ տեղակայուած էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակէն ներս: Այս դպրոցին մէջ, ընդմիջումներով կը դասաւանդէին գլխաւորաբար հայ հոգեւորականներ: Սակայն, դասաւանդումը կը կանոնաւորուի XIX դարու երկրորդ կէսին (1853 թ.)¹, երբ դպրոցի գոյատեւման եւ զարգացման համար մասնաւոր պիտոճէ մը կը յատկացուի համայնքի երեսնի ազգայիններու կողմէն: Յիշատակութեան արժանի է, որ 1847 թ. Իրաքի թեմը պաշտօնապէս կը կապուի Կ.Պոլսոյ պարտիարքարանին, եւ 1848 թ. Պաղտատ կը ժամանէ Տէր Մեսրոպ Ժ. Վարդապետ Կ. Պոլսեցին, որու ջանքերով կը հիմնուի Ս. Երրորդութիւն եկեղեցին եւ կից Ս. Թարգմանչաց դպրոցը: Երջանկայիշատակ վարդապետի թելադրութեամբ 1848-1849 թթ. էջմիածին կ'առաքուին երկու ուսեալ հայեր՝ Պաղտատար Դաւիթեանը եւ Մանուէլ Տիլանեանը: Քանի մը տարի ետք կը վերադառնան, առաջինը իբրեւ Մեսրոպ քահանայ Դաւիթեան եւ միւսը իբրեւ ուսուցիչ: Վերջինս կը հանդիսանայ Ս. Թարգմանչաց դպրոցի առաջին տնօրէնը:

Այս դպրոցին իբր ուսուցչապետ 1876 թ. կը հրաւիրուի Միհրան Սվաճեանը, որ Իրաքի կրթական կեանքին մէջ պատուով յիշուելու արժանի դէմք մըն է: Ան անձնուիրութեամբ կը գործէ եւ հիմնադիրը կը հանդիսանայ Պաղտատի հայ գաղութին կրթական գործին: Սվաճեանը ոչ մէկ ջանք կը խնայէ անոր զարգացման համար: Իր աշակերտներուն մէջ կ'արծարծէ ազգային ինքնագիտակցութեան ոգին եւ ազգասիրական

¹ . 144 صفحة السابق، نفس المصدر السابق، (Ռ. Բարու Իսխակ, նշ. աշխ., էջ.144):

գգացումներ: 1880-ական թուականներուն դպրոցին մակադասը այնքան կը բարձրանայ, որ պետութեան կողմէ կը դասուի Էլ-Ռուշդիյէ՝ դպրոցներու շարքին, չորս տարի կրթաշրջանով, ուր շատ չանցած կը յաճախեն նաեւ օտար աշակերտներ: Այս դպրոցին մէջ կը դասաւանդուէր հայերէն, թրքերէն, պարսկերէն, անգլերէն, ֆրանսերէն², քերականութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, ուղղագրութիւն, շարադրութիւն եւ գեղագրութիւն: 1905 թ. այս առարկաներուն կ'աւելնայ նաեւ տարրաբանութիւն առարկան: 1882-1907 թթ., աշակերտութեան թիւը 67-92 էր, որոնց կը դասաւանդէին 6 ուսուցիչներ: Յիշատակութեան արժանի է, որ միայն հայկական դպրոցին մէջ կ'ուսուցանուէր պարսկերէնը, որ պայմանաւորուած էր հայ վաճառականներու առետրային սերտ կապերու առկայութեան Պարսկաստանի իրենց գործակիցներուն հետ:

2- Միրիաք Կաթողիկոսներու դպրոց. հիմնուած սոյն համայնքի կողմէն 1842 թ., ուր դասաւանդումը կը շարունակուի մինչեւ 1878 թ., երբ այս համայնքին կը միանան կաթողիկ քաղղեացիները եւ կաթողիկ հայերը՝ հիմնադրելով «Արեւելեան Կաթողիկ Համաձայնութեան դպրոց», որ սակայն, կը դադրի գործելէ 1893 թ.: Իսկ Միրիաք Կաթողիկոսներու դպրոցը կը շարունակուի «Էֆրամ Համայնքային դպրոց» անուան տակ, որ պաշտօնապէս

¹ Էլ-Ռուշդիյէ դպրոցները պետական երկրորդական (միջնակարգ) դպրոցներ էին, ուր քրիստոնէայ աշակերտներուն մուտքը արգիլուած էր: النجار ج. م. نفس المصدر صفحة 237 (Էլ-Նաճճառ Ջ.Մ., նշ. աշխ. էջ 237):

² Ֆրանսերէնի ուսումնառութիւնը պարտադիր չէր, եւ կը դասաւանդուէր միայն ըստ աշակերտի փափաքին: Diskin J.J., The Genesis of the Government Educational System in Iraq, A Doctoral Dissertation Submitted to the Graduate Faculty in the School of Education, University of Pittsburgh, 1971 239 نفس المصدر ص 239 (Էլ-Նաճճառ Ջ.Մ., նշ. աշխ., էջ 239):

արտօնուեցաւ պետութեան կողմէն 1893-1894 թթ., եւ դպրոցն ալ համարուեցաւ Էլ-Ռուշդիյէ (երկրորդական): Դպրոցի աշակերտութեան թիւն էր 40-75 աշակերտ, իսկ ուսուցչութեան թիւը 4-6 ուսուցիչ:

3- Քաղղէացի Կաթոլիկներու դպրոց. հիմնուած է 1843 թ., որ սկզբնական շրջանին սոյն համայնքի եկեղեցւոյ կից էր: Այնուհետեւ ընդարձակուելով՝ 1875 թ. կը դառնայ Էլ-Ռուշդիյէ, որ կը փակուի 1878 թ. վերոյիշեալ «Արեւելեան Կաթոլիկ Համաձայնութեան դպրոց»ի հիմնադրմամբ: Վերջինիս գործունէութեան վերջնականապէս դադրելէ ետք, 1894 թուականի վերջերը կը վերաբացուի Քաղղէացի Կաթոլիկներու դպրոցը աւելի ընդարձակ շէնքի մը մէջ: 1906թ. այս դպրոցը կը բաժնուի երկու կրթաշրջանի՝ նախակրթարան եւ երկրորդական (Էլ-Ռուշդիյէ): Աշակերտութեան թիւը 1894 թ. 103 էր, իսկ 1907 թուականին արդէն կը գերազանցէր 180-ը, որոնց կը դասաւանդէին 8 ուսուցիչներ: Իսկ դասաւանդուող առարկաներն էին՝ աշխարհագրութիւն, պատմութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, հաշուապահութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն ինչպէս նաեւ լեզուներ՝ քաղղերէն, արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ այլ առարկաներ¹:

4- Հայ Առաքելական եկեղեցւոյն պատկանող Աղջկանց դպրոց: Հիմնադրուած է 1853 թ.,² եւ կը համարուի առաջին աղջկանց դպրոցը ամբողջ Պաղտատ վիլայէթին մէջ:

¹ Պաղտատ վիլայէթի սալնամէներ՝ 1312 հիճրէթի էջ 174-175, 1325 հիճրէթի էջ 325: (Էլ-Նաճճառ Ջ.Մ., նշ. աշխ. էջ 241-242):

² Պաղտատ վիլայէթի սալնամէ՝ 1319 հիճրէթի էջ 478-479: Թէւ Ջօն Դիսքինը իր աւարտաճառին մէջ կը նշէ որ այս դպրոցը բացուած է 1900 թ., այնուամենայնիւ, 1892 թ.ի պաշտօնական սալնամէներու մէջ արդէն կը յիշուի այս դպրոցին

Դպրոցը նախակրթարան էր, ուր կը դասաւանդէին երկու ուսուցչուհիներ միայն մինչեւ 1898 թ.: 1899 թ. կ'աւելնայ նաեւ ֆրանսերէն լեզուի ուսուցումը, զոր կը դասաւանդէր Պաղտատի Ս. Թարգմանչաց տղայոց դպրոցի տնօրէն Միհրան Սվաճեան¹: Իսկ 1907 թուականին երրորդ ուսուցչուհիի համալրումով՝ նաեւ գործնական ասեղնագործութիւն եւ ձեռագործ: 1892 թուականին աշակերտուհիներուն թիւը 45 էր, իսկ 1907 թուականին՝ արդէն 70-ը:

1901 թուականին կը կառուցուի նոր շէնք մը, ազգային բարերար Յովհաննէս Իսքէնդերեանի կողմէն եւ կը կոչուի Զապէեան Մղջկանց վարժարան՝ բարերարի վաղամեռիկ դստեր յիշատակին:

Ս. Սվաճեան, օրուան Առաջնորդին հետ տարակարծութեան մը պատճառով, 1906 թուականին կը հրաժարի թէ՛ Ս. Թարգմանչացի եւ թէ՛ Զապէեանի տնօրէնութենէն: Ուստի, աղջկկներու վարժարանին համար Պոլսէն 1908 թուականին Պաղտատ կը հրաւիրուի Օր. Թերեզա Շալճեանը, որ մեծապէս օգտակար եղաւ հայ աղջկկներու դաստիարակութեան գործին:

1917 թուականին, Պաղտատի գրաւումէն ետք դաշնակիցներու կողմէն, տղայոց Ս. Թարգմանչացը եւ աղջկանց Զապէեան վարժարանները կը միացուին եւ հաստատութիւնը կը կոչուի «Ս. Թարգմանչաց Երկսեռ Վարժարան»: Այս վարժարանը 1923–1924 կրթաշրջանին կը բաժնուէր 7 կարգերու՝ 189 աշակերտ-աշակերտուհիներով, որոնցմէ 116ը՝ տարագիր, 10 ուսուցիչներով

անունը: Տե՛ս Պաղտատ վիլայէթի սալնամէ 1312 հիճրէթի էջ 139, նաեւ ասոր յսջորդող սալնամէները: (Էլ-Նաճճառ, նշ. աշխ. էջ 242):

¹ Պաղտատ վիլայէթի Սալնամէ 1317 հիճրէթի, էջ 173: Տե՛ս նաեւ Օհանեան Ս.Տ., Իրաքի Հայ Համայնքը 20-րդ դարուն, Երեւան 2016, էջ 160-161:

եւ միայն 21,350 ռուբլի¹ պիտճեով: Խմբագրուած ծրագիր չունէր: Մանկապարտեզի բաժինը Ա-Բ բաժանմունքով՝ կը բաղկանար 92 երկսեռ աշակերտներէ²:

5- Արեւելեան Կաթոլիկ Համաձայնութեան դպրոց. Հիմնուած է 1878 թուականին երեք կաթոլիկ համայնքներու՝ յանձինս քաղդեացիներու, սիրիաք եւ կաթոլիկ հայերու համախմբումով³: Դպրոցը սկզբնական շրջանին բաւական յառաջընթաց արձանագրեց, երբ 1882 թուականին աշակերտութեան թիւը գերազանցեց 220-ը՝ 12 ուսուցիչներով: Դպրոցի ուսուցման շրջանը չորս տարի էր, և թէեւ կը համարուէր Է-Ռուշիէ դպրոցներու շարքին, սակայն, դասաւանդուող առարկաները շատ աւելին էին, քան Պաղտատի մէջ նոյն կրթական մակարդակն ունեցող միւս դպրոցները: Այստեղ, առարկաները բազմազան էին. Հայերէն, թրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, քաղդէերէն, սիրեանիներէն, տարրական կրօնական գիտելիքներ, քերականութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, աստղագիտութիւն, տրամաբանութիւն, բառագիտութիւն, երկրաչափութիւն, գրահաշիւ, ուղղագրութիւն եւ շարադրութիւն: Մակայն, ժամանակի ընթացքին կարգ մը առարկաներ կը կրճատուին, քանի որ XIX դարու վերջերուն Արեւելեանը որոշ թիւով աշակերտներ կ'առաքէր Մուսուլի կրօնական հաստատութիւնները ապագայի հոգեւորականներ պատրաստելու համար, եւ կրճատուած առարկաներու ուսուցումը աւելորդ եւ ծախսատար համարելով:

¹ 50 ռուբլին հաւասար էր 15 ԱՄՆ դոլարի:

² Նոյն, էջ 161:

³ *بابو اسحق روفائيل، نفس المصدر السابق، ص. 143.*

Այնուամենայնիւ, XIX դարու վերջերը նիւթական եւ այլ պատճառներով, դպրոցը աստիճանաբար կը կորսնցնէ երբեմնի յաջող ընթացքը, կարող ուսուցիչներուն թիւը կը պակսի, աշակերտութեան թիւն ալ կը նուազի¹, որ բնականաբար պատճառ պիտի հանդիսանար դպրոցի վերջնականապէս փակման՝ 1893 թուականին:

Ինչպէս վերը նշեցինք, Իրաքի մէջ բոլոր սեփական կամ ազգային դպրոցները կը ֆինանսատրուէին տուեալ համայնքի կողմէն, որ բնականաբար քաղաքական վերիվայրումներով կամ աւելի յաճախ նիւթական միջոցներու սղութեան պատճառով, ազդելու էր դպրոցի շարունակականութեան, ուսուցման գործընթացի տատանման եւ ի վերջոյ պիտի յանգեր անխուսափելի տխուր վախճանին:

Վերոյիշեալ հինգ դպրոցները կը ներկայացնեն XIX դարուն Պաղտատ վիլայէթի մէջ գտնուող տեղացի ազգային քրիստոնեայ համայնքներուն պատկանող դպրոցները, որոնց մէջ չեն մտներ օտար միսիոներական դպրոցները: Մենք նշեցինք Պաղտատի դպրոցները միայն, քանի որ ուրիշ բնակավայրերուն մէջ (Պասրա, Մուսուլ) Առաջին համաշխարհային պատերազմէն առաջ, հայկական կանոնաւոր և պաշտօնապէս ճանչցուած դպրոցներ գրեթէ գոյութիւն չունէին, եւ ասոնց յիշատակութիւնը չենք գտներ պաշտօնական սալնամէներուն մէջ:

Վերջապէս, ուշադրութեան արժանի է, որ 1890 թուականին Պաղտատի քրիստոնեաներու թիւն էր 7000 անձ, որմէ հայերը կը

¹ Աշակերտութեան թիւը 1891 թ., նուազած էր մինչեւ 60, ուսուցիչները հինգն էին, իսկ յաջորդ տարին միայն 13 աշակերտ կը յաճախէր այս դպրոցը: بابو اسحق، نفس المصدر صفحة 143

կազմեին շատ չնչին տոկոս մը¹: Այնուամենայնիւ, ունէին տղայոց դպրոց մը, հիմնուած՝ 1790 թ., որ աստիճանաբար զարգացած, եւ XIX դարու երկրորդ կէսին հասած էր Էլ-Ռուշդիյէ մակարդակին (երկրորդական): Իսկ հայ Առաքելական համայնքին պատկանող Զապլէեան դպրոցը՝ հիմնուած 1853 թ., ինչպէս վերը նշեցինք, առաջին աղջկանց դպրոցն էր ամբողջ Պաղտատ վիլայեթին մէջ: Եթէ հայկական դպրոցներուն ֆինանսաւորումը եւ կրթական զարգացումը կը հոգացուէր միմիայն ժողովրդեան հանգանակութիւններով, նաեւ՝ բարեկեցիկ եւ նուիրեալ ազգայիններու նիւթական օժանդակութիւններով, ապա միւս քրիստոնեայ համայնքներուն մեծապէս կ'օժանդակէին միսիոներական հաստատութիւնները եւ տարբեր օտար կազմակերպութիւնները, ըլլան կաթոլիկ կամ յողոքական:

XX դարու երկրորդ տասնամեակին, հայկական ազգային դպրոցներու թիւը Իրաքի մէջ կը բազմապատկուի, որ պայմանաւորուած էր Մեծ Եղեռնէն մազապուրծ արեւմտահայ գաղթականութեան ժամանումով: Ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը ապահովելէն ետք, համայնքի հոգեւոր եւ ազգային մարմինները լծուեցան դպրոցաշինութեան ազգանուէր աշխատանքին: Դպրոցներ բացուեցան բոլոր հայաշատ բնակավայրերուն մէջ, ուր Մայրենին կը ջամբուէր մատաղ սերունդին՝ եւ ազգային դաստիարակութիւնը պարտադիր էր, որու զինումով Իրաքի հայ համայնքը կրցաւ ընդառաջ երթալ օտար միջավայրի մէջ առկայ տարատեսակ մարտահրաւերներուն:

¹ XIX դարու երկրորդ կէսին, ըստ Առաջնորդարանի տուեալներուն՝ Պաղտատի մէջ հայերու թին էր 174 ընտանիք միայն:

National Schools of Christian Communities of Baghdad in the
second half of the 19th Century
(Summary)

SEDA OHANIAN

Christian faith spread throughout northern Mesopotamia during the II century and in time formed a significant part of its population.

In the second half of XIX century, native Christian communities in Baghdad (excluding the missionary schools) had their own national schools, two of which belonged to the followers of the Armenian Apostolic Church, sponsored and funded by the community itself. The first school – St. Mesrop boys school was established in 1790 as per the official *salnames* of the central government. The second school was Zabelian Girls' school, which was the first girls school in the whole of Baghdad *villayet*. After liberation of Iraq from the Ottoman yoke on the hands of allied forces, these two schools were united into one co-educational institution, eventually forming and preserving the Armenian national identity.

ԶԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1991 Թ. ՄԱՐՏԻ 17-Ի
ԽՍՀՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՔՎԵՒ ՆԿԱՏՄԱՄԲ
(ՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ)

ՎԱՀԵ ՄԱՐԳՍՅԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԽՍՀՄ-ը 20-րդ դարի վերջին տասնամյակի սկիզբ
թևակոխեց լրջորեն խորացած ճգնաժամային վիճակում: Երկրի
ներսում եղած բազմապիսի լուրջ հակասությունները ստիպեցին
ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Մ.Ս. Գորբաչովին 1990թ.
նոյեմբերի վերջին միութենական հանրապետությունների գերա-
գույն խորհուրդներին, ինքնավար հանրապետությունների
գերագույն խորհուրդներին, ինքնավար մարզերի և ինքնավար
օկրուգների ժողովրդական պատգամավորների խորհուրդներին
ուղարկել միութենական նոր պայմանագրի նախագիծը: Վերո-
հիշյալ նախագծով նախկին ԽՍՀՄ-ը դառնալու էր նոր տիպի
պետություն՝ Սուվերեն Խորհրդային Հանրապետությունների
Միություն¹:

Նախագծին ԽՍՀՄ 15 հանրապետություններից յուրա-
քանյուրն արձագանքեց յուրովի: Երկու օր անց՝ նոյեմբերի 27-ին,
ստացվեց Վրաստանի Գերագույն Խորհրդի՝ ԽՍՀՄ պրեզիդեն-
տին ուղղված հաշտարարությունը, ըստ որի՝ անկախության
ուղին բռնած Վրաստանը նույնիսկ հրաժարվում էր քննության
առնել միութենական՝ նոր դաշնագրի հայեցակարգը, քանի որ,

¹ «Հայաստանի Հանրապետություն», 25.11.1990:

ինչպես ասված էր հայտարարության մեջ. «...դրա ցանկացած ձևը անընդունելի է Վրաստանի հանրապետության համար, որը պետական լիակատար անկախության հասնելու ճանապարհին սոսկ անցումային ժամանակաշրջանի սկզբում է գտնվում¹։ Դրա հետ մեկտեղ,– ասված է փաստաթղթում,– նման մոտեցումը չի նշանակում, թե Վրաստանը հրաժարվում է մյուս երկրների հետ (խոսքը մնացած միութենական հանրապետությունների մասին է – Վ.Ս.) տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային համագործակցության ոլորտներում պարտավորություններ ստանձնելու որևէ ձևից, որոնց հետ այսօր էլ արդյունավետորեն համագործակցում է։ Ելնելով դրանից՝ հանրապետության Գերագույն Խորհուրդը պատրաստ է գործընկերական կապերի մեջ մտնել լիակատար իրավահավասարություն ու փոխշահավետություն նախատեսող նոր քաղաքական պայմաններում, որակապես նոր իրավական հիմքի վրա»²։

Մինչ այս ամենին անդրադառնալը՝ նշենք, որ ամբողջ խորհրդային տարածքում ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեն (որով, ինչպես վերը նշեցինք, ԽՍՀՄ-ը դառնում էր նոր տիպի ֆեդերացիա) նշանակվեց մարտի 17-ին։ Վրաստանը, ինչպես տեսանք, ի սկզբանե որևիցե ձևով հրաժարվել էր մնալու ԽՍՀՄ կազմում։ Իր տարածքում ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն չանցկացնելու մասին որոշում ընդունեց նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը³։

¹ Նույն տեղում, 27.11.1990:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, 5, 3, 1991:

Ինչևէ, մարտի 17-ի ընտրությունների արդյունքում ԽՍՀՄ-ում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 185.647.355 մարդուց քվեարկությանը մասնակցեց 148.574.606 մարդ, կամ 80 տոկոսը, որոնցից «Այո» պատասխանեցին 76,4%-ը, «Ոչ»՝ 21,7%-ը¹: Հանրաքվեի կենտրոնական հանրապետական հանձնաժողովներ չստեղծվեցին Վրաստանում, Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Հայաստանում (այս երկրները փաստացի դուրս եկան ԽՍՀՄ կազմից):

Առաջ անցնելով նշենք, որ, մի քանի օր անց՝ մարտի 31-ին, Վրաստանի հանրապետության բնակչությունը քվեարկեց Վրաստանի անկախ պետականության վերականգնման օգտին: Հանրաքվեին մասնակցեց ողջ բնակչության 90,3%-ը, որից 98,9 %-ը «Այո» ասաց անկախությանը²: Հայաբնակ Ջավախքի շրջաններից Ախալքալաքում հանրաքվեին մասնակցեց բնակչության 90%-ը, որից կողմ քվեարկեց 95%-ը, Բոզդանովկայում 90% մասնակիցներից կողմ քվեարկեց 92 %-ը³: Ապրիլի 1-ի մամուլի ասուլիսի ժամանակ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ակակի Ասաթիանին շնորհակալություն հայտնեց Վրաստանի հայ բնակչությանը:

ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ համաժողովրդական հանրաքվեին տարբեր կերպ արձագանքեցին նաև առանձին հանրապետությունների ինչպես մի շարք ինքնավար հանրապետություններ ու մարզեր, այնպես էլ ազգային փոքրամասնություններով բնակեցված և հիմնախն-

¹ Նույն տեղում, 30, մարտ, 1991թ.:

² Նույն տեղում, 3 ապրիլի, 1991թ.:

³ Նույն տեղում:

դիրներով հարուստ տարածաշրջաններ: Կարևոր է նշել, որ Վրաստանի ինքնավար շրջաններից Աբխազիան (Ինքնավար Հանրապետություն) և Հարավային Օսեթիան (Ինքնավար Մարզ) այս հարցում չմիացան Վրաստանին: Նույն սցենարը տեղի ունեցավ նաև Մոլդովական Հանրապետության պարագայում: Վերջինիս լարված օջախներից մեկը՝ Մերձդնեստրյան շրջանի աջափնյա անկլավը՝ Բենդերյան շրջանը, ևս ձայների 98,9%-ով հանդես եկավ ԽՍՀՄ-ի պահպանման օգտին: Սա այն դեպքում, երբ ինքը՝ Մոլդովան, բոյկոտեց վերոնշյալ հանրաքվեն: Ըստ որոշ հեղինակների՝ վերջիններս քվեարկեցին ոչ թե ԽՍՀՄ պահպանման, այլ Ռուսաստանի կազմում մնալու օգտին:

Այս թոհուրոհի մեջ վերոնշյալ հարցադրման վերաբերյալ իրենց դիրքորոշումներով հանդես եկան նաև Վրաստանի հարավային տարածաշրջաններից երկուսը՝ հայաբնակ Ջավախքը² և ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլին³: Այս երկու տարածաշրջանների դիրքորոշումները այս հարցում նույնն էին՝ Վրաստանի հետ հանդես գալ նույն դիրքորոշմամբ և չմասնակցել ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ

¹ Տես՝ Мяло К.Г., Россия и последние войны XX века (1989-2000). К истории падения сверхдержавы, М., 2002, էջ 110, 189:

² 1994 թ. Ջավախքի՝ խորհրդային տարիներին ձևավորված շրջանների հենքի վրա (բացի հարևան և կրկին նորաստեղծ Քվեմո Քարթլի նահանգի մեջ արհեստականորեն ներառված Ծալկայի հայաբնակ-հունաբնակ շրջանից) ձևավորվել է Սամցխե-Ջավախք նահանգը:

³ Կարևոր է նշել, որ այս տարածաշրջանները դեռ չունեին այսօրվա ձևակերպումները, որոնցով վերջիններս ներառում են տարբեր վարչական շրջաններ, ուստի այս տարածաշրջանների մասին մեր հիշատակումները պայմանական են և մատնանշում են ոչ թե այսօրվա նահանգները, այլ հայերի և ադրբեջանցիների զբաղեցրած բուն տարածքները:

համաժողովրդական հանրաքվեին: Հետաքրքրական է, որ այս կապակցությամբ հասարակական տարբեր շրջանակներ և քաղաքական գործիչներ հետագայում արտահայտել են տարբեր կարծիքներ, տվել տարբեր գնահատականներ: Այսպես, 2008 թ. սեպտեմբերին՝ վրաց-օսական հնգօրյա պատերազմից անմիջապես հետո, «Правда.Ру» տեղեկատվական պորտալին տված իր մեկնաբանությունում Հարավայն Օսիայի Հանրապետության Հատուկ հարցերով նախարարության տեղեկատվական բաժնի ղեկավար Ինալ Պլինը նշել էր. «*Ի տարբերություն Հարավային Օսիայի, որը ԽՍՀՄ կազմալուծումից առաջ հայտարարեց, որ չի ընդունում անջատողականությունը (խոսքը Վրաստանի՝ ԽՍՀՄ-ից անջատվելու մասին է՝ Վ.Ս.)՝ հրաժարվելով դուրս գալ նրա (ԽՍՀՄ-ի՝ Վ.Ս.) կազմից, Վրաստանի աղբյուրները և հայերը թույլ տվեցին ճակատագրական սխալ: Նրանք, հույս դնելով Վրաստանի ղեկավարության քաղաքակիրթ լինելու վրա, ցանկացան նրա հետ կառուցել մեկ պետություն: Եվ երբեք ընդդեմ նրա (Վրաստանի ղեկավարության՝ Վ.Ս.) հանդես չեն եկել: Մակայն «Վրաստանը վրացիների համար» նշանաբանով առաջնորդվող Թբիլիսին երկրի «ազգային փոքրամասնությունների», այդ թվում նաև Ջավախքի և Մառնեուլիի շրջաններում բնակվող աղբյուրների և հայերի համար ստեղծեց կյանքի անտանելի պայմաններ»¹:*

Մինչ այս տարածաշրջանների ազգաբնակչության կողմից վերոնշյալ որոշումներին անդրադառնալը՝ մանրամասնեք, որ Ինալ Պլինի մեկնաբանությունները մատնանշում են 1990-ական

¹На месте Грузии может появиться несколько государств, <https://www.pravda.ru/world/formerussr/georgia/02-09-2008/281575-gogia-0/>.

թթ. Ջավախքում գործող կազմակերպությունների՝ «Ջավախք»¹ և «Փարվանա»² ժողովրդական շարժումների կողմից Ջավախքի ազգաբնակչությանն ուղղված կոչը, որով վերջիններս պահանջում էին ժողովրդից՝ չմասնակցել ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ համաժողովրդական հանրաքվեին՝ այն (մասնակցությունը) համարելով սխալ. «...քանզի ԽՍՀՄ-ը այն կայսրությունն է, որի գոյությունը ինքնըստինքյան հակաժողովրդավարական է, վարում է ամբողջատիրական քաղաքակ-

¹ Ջավախքում «Ջավախք» ժողովրդական շարժման սկզբնավորման, գործունեության ընթացքի և կազմակերպությանն առնչվող այլ մանրամասների մասին տես՝ Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թեթըքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, 2006:

² «Փարվանա» հասարակական կազմակերպությունը ծնունդ է առել Բոզդանովկայում՝ 1989թ., ժողովրդի շրջանում ազգային ինքնագիտակցության վերածննդի շրջանում, միտինգային թոհուփոհի մեջ: Կազմակերպությունը ակտիվորեն հակադրվեց նախ՝ կոմունիստական, ապա՝ զվիադիստական իշխանությունների նկրսումներին: Համագործակցելով «Ջավախք» ժողովրդական շարժման հետ և ստանալով վերջինիս օժանդակությունը՝ «Փարվանան» Բոզդանովկայի շրջանում (Գորելովկայում շուրջ 7 տասնյակ, Եֆրեմովկայում՝ երեք տասնյակ, Օդովկա, Մպատովկա, Կալինինո գյուղերում՝ մեկական տասնյակ) տներ գնեց կարիքավոր հայ ընտանիքների, Գյումրիի երկրաշարժից տուժածների և այլոց համար: Դա այն ժամանակ էր, երբ «Մ. Կոստավա» հիմնադրամը նույնպես սկսել էր վերոնշյալ գործընթացը (տներն ազատվում էին ռուս դոկտորների այս շրջանից արտագաղթելու պատճառով): Ինչպես արտաքին (իշխանական) ճնշումների, այնպես էլ ավելի շատ իր անդամների միջև առաջացած հակասությունների պատճառով կազմակերպությունը 1990-ական թթ. կեսերին փաստացի դադարեց գոյություն ունենալուց: Վերջինիս անդամներից մեկի կողմից այս ընթացքում հիմնադրվեց Ջավախքի քաղաքական կյանքում քիչ թե շատ դերակատարություն ունեցող մեկ այլ կազմակերպություն՝ «Օդան»: «Փարվանա» կազմակերպության կողմից 1991թ. Հիմնադրվեց և հրատարակվեց «Փարվանա» անունով չորս համար թերթ: Տես՝ «Ջավախք», ապրիլ, 1995, N 3 (9), հմմտ. Բոզդանովկայի շրջան, Տեղեկագիրք, էջ 99:

անություն, խեղդում ամեն մի ազգային-դեմոկրատական շարժում»¹:

Վրաստանի կազմից դուրս եկած հարավօսական հանրապետության պաշտոնյայի կողմից ջախխաբհայերի և աղբրեջանցիների մասին հնչեցրած քննադատական մտքերը միանգամայն հասկանալի են, եթե հարցին նայենք այդ պետության կամ օս հասարակության տեսանկյունից: Հասկանալի է նաև, որ 1991 թվականի Ռուսաստանը դեռևս ինչ-որ տեղ նույնացվում էր Խորհրդային Միության հետ, և այս հոդվի վրա ցանկացած հակախորհրդային քայլ առաջին հայացքից ուղղակի կամ անուղղակի կարող էր դիտվել նաև հակառուսական քայլ (այս ձևի վրա արցախյան խնդրում հայկական կողմի համար մեծ վնաս բերեցին ժամանակի քաղաքական որոշ դրսևորումներ, որոնք միտում ունեին հակախորհրդային քայլերը վերածելու հակառուսական քայլերի): Իրականում ջախխաբհայերը, կատարելով այս քայլը, դեմ են դուրս եկել ոչ թե Ռուսաստանին, այլ ԽՍՀՄ-ին: Իսկ ԽՍՀՄ-ին դեմ հանդես գալու հիմնավոր պատճառներն իրականում շատ էին. խորհրդային կուսակցական մարմինների 1921 թ. հուլիսյան որոշումներից սկսած մինչև Ախալքալաքի և Ախալցխայի գավառների արհեստական մասնատում և վերաբնակեցման միջոցով ժողովրդագրական պատկերի կտրուկ փոփոխում, մինչև սահմանային այցագրային ռեժիմի ստեղծում և տասնամյակներ շարունակ Ջավախք այցաւորների առջև բազմապիսի խոչնդոտների ստեղծում և այլն: Հետևաբար, ջախխաբհայերի այդ քայլը կարելի է որակել որպես պատմական արդարությունը վերականգնելու մի փորձ:

¹ Տե՛ս Կոչի բովանդակությունը (տողեր - Կոհնակի անձնական արխիվ):

Դեմ դուրս գալով 1991 թ. մարտի 17-ին տեղի ունեցած հանրաքվեին և հանդես գալով ժողովրդին ուղղված հաստուկ կոչով՝ Ջավախքի հասարակական-քաղաքական վերնախավն իր այդ քայլով հերքական անգամ հավատարիմ մնաց Վրաստանի որդեգրած քաղաքական ուղուն, չգնաց իրավիճակի սրման կամ առճակատման ճանապարհով: Ռուսական խոշոր ռազմաբազայի առկայությունն Ախալքալաքում և ջավախահայության տնտեսական մեծ կախվածությունն այդ ռազմաբազայից հետ չպահեցին ջավախահայությանը՝ գնալու այդ քայլին անգամ այն պարագայում, երբ, ինչպես վերևում նշեցինք, պատմական տվյալ շրջանում ցանկացած հակախորհրդային քայլ կարող էր ընկալվել որպես հակառուսականություն: Կատարելով իր քաղաքացիական պարտքը և դեմ դուրս գալով 1991 թ. մարտի 17-ի հանրաքվեին՝ ջավախահայությունը ցանկացավ տեսնել նոր արժեհամակարգով առաջնորդվող Վրաստան, նոր որակի պետական համակարգ, որտեղ կգերիշխեն արդարությունը, որտեղ կստեղծվեին երկրի բոլոր ազգությունների համար զարգացման հավասար պայմաններ: Թե որքանով արդարացան ջավախահայության ակնկալիքները՝ ցույց տվեց հետագան:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Ջավախք» և «Փարվանա» ժողովրդական շարժումների կոչն ուղղված ջավախահայությանը

ԽՍՀՄ պահպանելու մասին 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ համաժողովրդական հանրաքվեին (ռեֆերենդում) Ջավախքի ազգաբնակչության մասնակցությունը համարում ենք սխալ,

քանզի ԽՍՀՄ-ը այն կայսրությունն է, որի գոյությունը ինքստինքյան հակադեմոկրատական է, վարում է ամբողջատիրական քաղաքականություն, խեղդում ամեն մի ազգային-առաջադիմական ու դեմոկրատական [շարժում]:

Կոչ ենք անում չմասնակցել այդ հանրաքվեին:

«Ջալալաբ» ժողովրդական շարժում

«Փարվանա» ժողովրդական շարժում

JAVAKHK ARMENIANS' POSITION ON A REFERENDUM ON THE
FUTURE OF THE SOVIET UNION ON 17 MARCH, 1991
(A DOCUMENT STROY)

(Summary)

VAHE SARKISYAN

Republics, autonomous republics and regions which were a part of the USSR, as well as a number of regions inhabited by indigenous people and ethnic minorities and with sets of problems have differently reacted on a nationwide referendum on the future of the Soviet Union on 17 March, 1991. In Georgia, Lithuania, Latvia, Estonia, Moldova and Armenia the central republican commissions on a referendum haven't been created (actually, these countries left the USSR). Some autonomous regions of Georgia, Abkhazia (Autonomous republic) and South Ossetia (Autonomous region) have not joined Georgia on this matter. The public and political elite of Javakhk, Armenian - populated region in Georgia, has decided to act on the

same position with Georgia and not to take part in a nationwide referendum on the preservation of the USSR on March 17, 1991. The call of "Javakhk" and "Parvana" public movements to inhabitants of Javakhk not to participate in a referendum on preservation of the USSR on March 17, 1991 is still stored in our personal archives. The call says that "the USSR is that empire which existence in itself is antidemocratic and it conducts policy of absolute power". In this article we touch themes such as a referendum on the future of the Soviet Union on 17 March, 1991, the position of people in Javakhk, Armenian - populated region in Georgia, on this referendum as well as the public reaction concerning this position.

ՀԱՅ-ՀՐԵԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱՄԱՆՅԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հայ-հրեական առնչությունների և շփումների պատմությունն ու խնդիրը ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունեն գույզ ժողովուրդների կյանքում: Հայերի և հրեաների միջև պատմության վաղ շրջանից կատարված շփումների մասին վկայում են ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրները: Ուշագրավ է, որ դեռևս հնագույն ժամանակներից Հայաստանում ձևավորվել էին հրեական համայնքներ: Մասնավորապես, հրեական դավանաբանական բնույթի պատմություններից մեկի համաձայն՝ Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի կողմից մ. թ. ա. 5-րդ դարում հրեական Առաջին տաճարի ավերումից հետո հրեաների մի մասը գաղթել է Հայաստան¹:

Մ. թ. ա. 4-րդ դարում արդեն Արմավիր քաղաքն ունեցել է հրեա ստվար բնակչություն: Մովսես Խորենացին հաղորդում է, որ հայոց արքա Երվանդ 4-րդի օրոք Արմավիրում բնակվող հրեաները բնակության էին տեղափոխվել Երվանդաշատ մայրաքաղաք, իսկ Արտաշեսի՝ Հայաստանի թագավոր հռչակվելուց և Արտաշատը հիմնադրելուց հետո՝ արքայանիստ այդ նոր քաղաք: Պատմահայրը տվյալ իրադարձությունները ներկայացրել է հետևյալ տողերով.

¹ Элиягу Эссас, «Армяне и евреи — есть ли связь?», <http://www.evrey.com/sitep/askrabbi1/q.php?q=ot vet/q660.htm>.

«...Եվ Երվանդի քաղաքից (Երվանդաշատից – Վ. Ղ.) դուրս է բերում գերի հրեաներին (Արտաշեսը – Վ. Ղ.), որոնք այնտեղ էին տարվել Արմավիրից, և նրանց բնակեցնում է Արտաշատում»¹:

Հայ-հրեական առնչություններին նվիրված «Հրեաները հեթանոսական Հայաստանում» վերտառությամբ արժեքավոր հոդված է հրապարակել ամերիկացի հետազոտող Ջաքոբ Նյուսները²: Հեղինակը նշում է, որ միջնադարյան Հայաստանում հրեաները բնակություն էին հաստատել անտիկ շրջանից³: Ըստ Նյուսների՝ հրեա բնակչությամբ առանձնապես աչքի էին ընկնում Մծբինն ու հարակից բնակավայրերը. «Փաստը, – գրում է Նյուսները, – որ Տիգրանի (նկատի ունի Տիգրան Բ-ին – Վ. Ղ.) ու նրա հաջորդների օրոք՝ մինչև մ. թ. 1-ին դարի կեսերը Հայաստանի մասը կազմող Մծբինն ու այդ քաղաքին հարող տարածքներն ունեին սովորածավալ հրեա բնակչություն նույնպես կարևոր է, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես հետագա տեղաշարժը (հրեաների – Վ. Ղ.) կարող էր մեծացնել նախկին բռնագաղթերի միջոցով այնտեղ տեղափոխված հրեաների թիվը»⁴:

Հայաստանում հրեաների զանգվածային վերաբնակեցում է կատարվել Տիգրան Բ Մեծի օրոք (մ. թ. ա. 95–55 թթ.): Խոսքը Պաղեստինից հայոց արքայի կողմից մ. թ. ա. 69 թ. Հայաստանում վերաբնակեցված հրեաների մասին է: Այդ մասին Խորենացին հաղորդում է. «Ապա անմիջապես գնում է պաղեստինցիների

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Ե., 2003, էջ 176:

² The Jews in Pagan Armenia, Journal of the American Oriental Society, vol. 84, No. 3 (Jul.-Sep., 1964), pp. 230-240.

³ Նույն տեղում, էջ 234:

⁴ Նույն տեղում:

աշխարհը (Տիգրան Բ – Վ. Ղ.)՝ Պտղոմեյան Կլեոպատրայից վրեժ լուծելու՝ իր հոր (Արտաշեսի) դեմ նրա որդի Դիոնիսի գործած հանցանքների համար։ Եվ հրեաներից անհամար գերիներ վերցնելով՝ պաշարում է Պտղոմայիդ քաղաքը։...Հայոց թագավոր Տիգրանը հրեա գերիներին թողնելով Արմավիրում ու Վարդգեսավանում, որ գտնվում է Քասախ գետի վրա, ելուզակներին բնաջնջելով լեռներում ու Միհրդատի սուզն առնելով՝ շարժվում, գնում է Ասորիք՝ հռոմայեցիների զորքերի՝ վրա՝ նրանցից վրեժ հանելուն¹։ Ուշագրավ է նաև Խորենացու հետևյալ տեղեկությունը. «...Հրեից Ալեքսանդրիա, այսինքն՝ Մեսալինա թագուհին, որ Հուդա Մակաբեի եղբայր Շմավոնի որդի Հովհաննեսի որդի Ալեքսանդրի կինն էր եղել և այդ ժամանակ Հրեից թագավորության գահակալն էր, մեծ փրկագին տալով նրան (Տիգրանին – Վ. Ղ.)՝ այնտեղից հետ դարձրեց»²։

Տիգրան Բ Մեծի կողմից Հայաստանում հրեաների վերաբնակեցնելու վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաև Հովսեփոս Փլավիոսի «Հուդայական հնություններ» գրքում. «...լուր եկավ,– գրում է պատմիչը,– որ հայոց արքա Տիգրանը երեքհարյուրհազարանոց բանակով ներխուժել է Ասորիք և պատրաստվում է շարժվել դեպի Հուդա։ Միանգամայն բնական է, որ այդ լուրը վախեցրեց թագուհուն և ժողովրդին (Հուդայի թագավորության – Վ. Ղ.), և քանի դեռ արքան պաշարման մեջ էր պահում Պտղոմյայիսը, նրա մոտ ուղարկվեց մի պատվիրակություն՝ արժեքավոր բազում նվերներով։ ...Եվ ահա, պատվիրակները գալիս են Տիգրանի մոտ և սկսում նրան խնդրել՝ խնայել թագուհուն և նրա

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, զիրք երկրորդ, զլ. ԺԴ, էջ 144, զլ. ԺԶ, էջ 145։

² Նույն տեղում, զլ. ԺԴ, էջ 144։

ժողովրդին, իսկ նա պատվավոր կերպով ընդունում է նրանց, քանի որ նրանք իրենց հնազանդությունը հայտնելու նպատակով եկել էին այդքան հեռվից, և խոստանում գթասրտություն ցուցաբերել նրանց նկատմամբ¹:

Փաստորեն, թե՛ Խորենացին, թե՛ Փլավիոսը վկայում են, որ հայոց և հրեից թագավորությունների միջև ձեռք էր բերվել չհարձակվելու համաձայնություն, որով հրեական թագավորության տիրուհին Տիգրան Բ-ին փրկագին վճարելուց զատ, ճանաչել է նրա գերագահությունը:

Խորենացու և Փլավիոսի երկերում տեղեկություններ են պահպանվել նաև հայ-հռոմեական պատերազմի ավարտից՝ մ. թ. ա. 66 թ.-ից շուրջ երկուս ու կես տասնամյակ անց տեղի ունեցած հայ-հրեական առնչությունների վերաբերյալ: Ըստ Փլավիոսի՝ երբ պարթևական թագավորության թագաժառանգ Բակուրը և նրա զինակից Բարգափառնան, որին Խորենացին ներկայացրել է իբրև հայ Բարգավիրան Ռշտունի, գրավելով Ասորիքն ու Փյունիկիան, հասնում են Պաղեստինի սահմաններին՝ Պաղեստինի քահանայապետ Հյուրկանոսի եղբայր Անտիգոնոսն իրեն Հուդայում թագավոր կարգելու պայմանով առաջարկում է նրանց հազար տաղանդ և հինգ հարյուր կին²: Բակուրն ու Բարգափառնան ընդունում են արված առաջարկը, գրավում Երուսաղեմը, որից հետո Պաղեստինում թագավոր է հռչակվում Անտիգոնոսը,

¹ Иосиф Флавий, Иудейские древности, Книга тринадцатая, гл. первая- <http://www.vehi.net/istoriya/israil/flavii/drevnosti/13.html>.

² См у Иосиф Флавий, Иудейские древности, Книга четырнадцатая, гл. Тринадцатая- <http://www.vehi.net/istoriya/israil/flavii/drevnosti/14.html>.

իսկ Հյուրկանոսը, ըստ Փլավիոսի, գերեվարվում է պարթևների կողմից, ապա հանձնվում Անտիգոնոսին¹:

Այդ իրադարձությունների մասին տեղեկություններ է հաղորդում նաև Խորենացին, որը, հավանաբար, օգտվել է Փլավիոսի երկից: Այդուհանդերձ, Խորենացին ամբողջությամբ չի կրկնել Փլավիոսի պատմությունները, և, ինչպես Գ. Խ. Սարգսյանն է նշում, թույլ է տվել մի կարևոր և չափազանց հետաքրքրական շեղում²:

Խորենացու հաղորդման համաձայն՝ հայոց արքա Տիգրանը՝ հաշտվելով պարսից (պարթև) Արտաշես արքայի հետ, նրանից օգնական զորք է ստանում և հայ-պարթևական միացյալ բանակի հրամանատար է կարգում Ռշտունյաց նախարարության նահապետ Բարգափրանին, որին ուղարկում է հռոմեական զորքերի դեմ ու միաժամանակ կարգադրում հաշտություն կնքելու նպատակով բանակցություններ վարել Ասորիքի և Պաղեստինի բնակչության հետ³: Այնուհետև Խորենացին տեղեկացնում է, որ հայ-պարթևական միացյալ ուժերի ակտիվ մասնակցությամբ գահընկեց է արվել հրեաների քահանայապետ Հյուրկանոսը և նոր քահանայապետ հռչակվել Անտիգոնոսը⁴:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, ՀՍՍՀ ԳԱ, հրատ., հտ. 1, Երևան, 1971, էջ 613:

³ Խնդրո՞ւ առարկա իրադարձությունների ժամանակ Մեծ Հայքի թագավոր էր Արտավազդ Բ (մ. թ. ա. 55-34 թթ.), և Խորենացին, ամենայն հավանականությամբ, շփոթել է Տիգրան Բ-ի ու Արտավազդ Բ-ի կառավարման շրջանները՝ վերջինիս ներկայացնելով իբրև Տիգրան թագավոր: Այդ հանգամանքը Գ. Խ. Սարգսյանը պայմանավորում է Տիգրան Մեծի փառքով ու զանգվածային գերեվարություններով:

⁴ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք երկրորդ, զլ. ԺԹ, էջ 146-147:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 147-148:

Գաղտնիք չէ, որ Հռոմը և Պարթևական թագավորության՝ Արևելքի համար հակամարտության մեջ մ. թ. ա. 1-ին դարի 1-ին կեսին կատարվել էին էական փոփոխություններ. ընդ որում, միջազգային ասպարեզում ամրապնդվել էին Պարթևական թագավորության դիրքերը: Մասնավորապես, պարթևներին հաջողվել էր իրենց կողմը գրավել Հայոց թագավորությունը և նման ձևով Արևելքում ուժերի հարաբերակցությունը փոխել իրենց օգտին, քանի որ մ. թ. ա. 1-ին դարի կեսերին Հայաստանն իր ռազմա-քաղաքական հզորությամբ միջազգային ասպարեզում զիջում էր միայն Հռոմին ու Պարթևստանին:

Մ. թ. ա. 40 թ. պարթևա-հայկական ուժերը կարողանում են գրավել Ասորիքն ու Փյունիկիան: Հաջորդ թիրախը Պաղեստինն էր, որի գրավումը կամ այդ երկրում պարթևական ազդեցության հաստատումը հնարավոր չէր, քանի դեռ Հուդայում իշխանության զուլա էր կանգնած հռոմեամետ տիրակալ Հյուրկանոսը: Ուստի, միանգամայն հասկանալի է, թե ինչու պարթևներն ընդունեցին Հյուրկանոսի եղբորորդու՝ Անտիգոնոսի պատվիրակներին: Վերջինս դիտարկվում էր իբրև պարթևական շահերի՝ Հուդայում առավել շահագրգիռ պաշտպան, որի միջոցով հնարավոր էր Պաղեստինում պայքարել հռոմեական ազդեցության դեմ:

Ուշագրավն այս պարագայում հայերի դերակատարությունն էր: Ինչպես Խորենացին է հաղորդում՝ Հուդայում իշխանափոխություն կատարելու գործում վճռական դեր են ունեցել երկու հայեր՝ հայ-պարթևական զորքերի հրամանատար Բարզափրանը կամ Բարզափառնան և հայոց արքայի տակառապետը, որի անունը պատմահայրը ներկայացրել է իբրև Գնել՝ Գնունյաց տոհմից. «Եվ նա (Բարզափրանը – Վ. Ղ.) Գնունյաց տոհմից Գնել անունով մեկին, որ

հայոց արքայի տակառապետն էր, հեծելագործով ուղարկում է Երուսաղեմ՝ իբր թե խաղաղություն կնքելու, սակայն գաղտնաբար՝ օգնելու Անտիգոնոսին»¹:

Բարգավառնային և Գնելին հաջողվում է Հուդայում իրագործել իշխանավախության ծրագիրը: Ընդ որում, հիշարժան է, որ հայ-պարթևական կողմը բավարարվում է միայն հրեական թագավորությունում իրենց հավաստարմության երդում տված Անտիգոնոսին իշխանության բերելու գործով: Հրեաների երկիրը չի նվաճվում: Ավելին, այնտեղ մտած հայկական գորքերը «ոչ որի վնաս չտվին բացի նրանից, որ առան Հյուրկանոսի ունեցվածքից՝ ավելի քան երեք հարյուր քանքար: Եվ այն գավառն ասպատակելով՝ Հյուրկանոսի (կալվածքներն) առան ու ավերեցին: Մարիսացիների քաղաքը նվաճելով՝ (այնտեղ) թագավոր կարգեցին Անտիգոնոսին»²:

Փլավիոսը տեղեկություններ չի հաղորդում այդ իրադարձություններին հայերի մասնակցության և հայ-հրեական շփումների վերաբերյալ, սակայն այդ փաստը չի վրիպել հայ պատմիչների ուշադրությունից: Հատկանշական է, որ Խորնեացու տեղեկությունների համաձայն՝ մ. թ. ա. 40 թ. Պաղեստին հասած հայկական ուժերն իրենց հետ Հայաստան էին տարել Մարիսա քաղաքից գերված հրեաների, որոնց սերունդները նոր արմատներ ձգեցին Հայաստանում³: Հայկական թագավորությունում հրեա բնակչության վերաբնակեցման կապակցությամբ միանգամայն իրավացի է Գ. Մարգարյանը, որը, հիմք ընդունելով Փավստոս Բուզանդի՝ Հայաստանից Իրան Շապուհ Բ արքայի կողմից 4-րդ դարում

¹ Տե՛ս նույն տեղում, գլ. ԺԹ, էջ 147:

² Նույն տեղում, էջ 148:

³ Տե՛ս նույն տեղում:

իրականացված հրեաների բռնագաղթի մասին տեղեկությունները, նշում է, թե Հայաստանում ակներևաբար գոյություն է ունեցել մի ավանդություն Հյուրկանոսի գերեվարման ու դրան հարակից խնդիրների վերաբերյալ¹: Այդ իսկ պատճառով հեղինակը պատահական չի համարում այն հանգամանքը, որ Հուդայի թագավորությունում մ. թ. ա. 40 թ. տեղի ունեցած իրադարձությունների մասին Փլավիոսի հաղորդումները թերի համարելով՝ Խորենացին կատարել է որոշակի շտկումներ ու սրբագրումներ², որոնք կարևոր են մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի ռազմա-քաղաքական դերակատարության և հայ-պարթևա-հրեական եռակողմ հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Խորենացին հաղորդում է նաև, որ Մարիսա քաղաքից գերված հրեաներին հայ զինվորները բերին Տիգրան թագավորի (Արտավազդ Բ-ի) մոտ, որը «Բարգավրանին հրամայեց մարիսացիների քաղաքից բերված հրեա գերիներին բնակեցնել Շամիրամի քաղաքում (Վանում – Վ. Ղ.)»³: Նշված դրվագը հետաքրքրական է ոչ միայն այն առումով, որ վկայում է Հայաստանում հրեաների վերաբնակեցման մի նոր ակտի մասին, այլև վեր է հանում հայ-պարթևա-հրեական հարաբերությունների որոշակի կողմեր: Մասնավորապես, հայկական զինված ուժերը դեպի Ասորիք, Փյունիկիա և Պաղեստին պարթևական բանակների կատարած արշավանքին մասնակցում էին իբրև առանձին, անկախ, պարթևական տերության դաշնակից պետության զորքեր՝ այդ ամենից բխող բոլոր իրավունքներով ու պարտականություններով,

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, էջ 613:

² Տե՛ս նույն տեղում:

³ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք երկրորդ, գլ. ԺԹ, էջ 148:

որոնք, հավանաբար, ձևակերպվել էին դեռևս մ. թ. ա. 54 թ. Արտաշատում նորոգված հայ-սյարթևական դաշնակցային պայմանագրի կետերով: Նշված դեպքերը վկայում են, որ եթե Հուդայում իշխանափոխությունը կատարվել էր առավելապես Պարթևստանի շահերի համար, ապա հրեաների վերաբնակեցման դեպքում սյարթևները հաշվի էին նստել Հայաստանի հետ և դեմ չէին գերեվարված բնակչությանը հայկական քաղաքներում վերաբնակեցնելու ծրագրին¹:

Հայ-հրեական շփումների և առնչությունների վերաբերյալ Խորենացու հաղորդումները ներկայացվածով չեն սահմանափակվում: Պատմահայրը խոսում է նաև Արտավազդի կառավարման շրջանից հետո տեղի ունեցած հայ-հրեական հարաբերությունների և Հայաստանում վերաբնակեցված հրեաների սերունդների ճակատագրի մասին:

Հայ-հրեական շփումների ուսումնասիրման տեսանկյունից արժեքավոր են հատկապես Խորենացու «Պատմության» հետևյալ գլուխները՝ ԻԴ - «Արշամի թագավորելու մասին, առաջին անգամ հայոց մասնակիորեն հռոմայեցիներին հարկատու դառնալը, Հյուրկանոսի ազատվելը և նրա պատճառով Բագրատունյաց սոհմին սպառնացած վտանգը», ԻԳ - «Արշամի գծությունը Հերովդեսի հետ և ականա հնազանդությունը», ԻԶ - «Արգարի թագավորությունը և Հայքի ամբողջապես հարկատու դառնալը հռոմայեցիներին, պատերազմը Հերովդեսի զորքերի դեմ և նրա

¹ Ուշագրավ է, որ հայերն ունեցել են նման նախադեպ, երբ մ. թ. ա. 94 թ. կնքված հայ-պոնտական դաշնագրով գրավվելիք Կապադովկիայի տարածքն անցնելու էր Պոնտոսին, իսկ գերիներն ու շարժական գույքը՝ Հայաստանին:

եղբորորդի Հովսեփին սպանելը»¹: Թեպետ այս զլուխներում Խորենացին շփոթել է պատմական շրջանները, անձանց անուններն ու նրանց կառավարման շրջանները, սակայն պատմահոր տեղեկությունները զգալի արժեք են ներկայացնում հայերի և հրեաների փոխհարաբերություններն ուսումնասիրողների համար:

Մասնավորաբար, պատմահոր տեղեկությունների համաձայն՝ հայոց Արշամ թագավորը (Տիգրան Գ-ը) հռոմեացիների հետ խաղաղություն պահպանելու է պատակով հրեաների արքա Հելավդեսի միջոցով նրանց հարկ է տվել, որը հավաքվում էր Միջագետքից և Կեսարիայի կողմերից²: Հետաքրքրականն այս պարագայում ոչ այնքան Հռոմին Հայաստանի հարկատվության պարագան է, այլ Հերովդեսի՝ միջնորդի կարգավիճակը հայ-հռոմեական հարաբերություններում: Եթե հիմք ընդունվեն պատմահոր տեղեկությունները, ապա պարզ է, որ Հայաստանը Հուլայի հետ Տիգրան 3-րդի օրոք հաստատել էր դիվանագիտական որոշակի շփումներ, անգամ ճանաչել այդ պետության տիրակալին իբրև հռոմեացիների հետ հարաբերություններում միջնորդի:

Հետաքրքրական են նաև Խորենացու հաղորդումները Հյուրկանոս քահանայապետի՝ Հայաստանից ազատ արձակման կապակցությամբ: Ըստ այդ հաղորդումների՝ Ենանոս անունով թագադիր ասպետը, որը Խորենացու ներկայացմամբ հրեա էր, ազատ էր արձակել հրեա Հյուրկանոս քահանայապետին՝ նման ձևով բարկացնելով հայոց արքային: Արքան իր մոտ է կանչում Ենանոսին և հարցնում, թե ինչու է ազատել Հյուրկանոսին: Վերջինս

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք երկրորդ, գլ. ԻԴ, էջ 151-152, գլ. ԻԵ, էջ 152-153, գլ. ԻԶ, էջ 153-154:

² Տե՛ս նույն տեղում, գլ. ԻԴ, էջ 151:

պատասխանում է, որ քահանայապետն իրեն խոստացել էր հարյուր քանքար փրկագին տալ: Ենանոսն, իր հերթին, խոստանում է այդ գումարը տալ հայոց արքային: Հայոց թագավորը նրան որոշ ժամանակ է տալիս նշված փրկագինը ձեռք գցելու և իրեն հանձնելու համար, որից հետո Ենանոսն իր Մենեքիա եղբորն ուղարկում է Հրեաստան՝ Հյուրկանոսի մոտ՝ վերջինից փրկագինն ստանալու նպատակով: Գնալով Հրեաստան՝ Մենեքիան տեղեկանում է, որ Հերովդեսը սպանել էր Հյուրկանոսին, որպեսզի վերջինս դավեր չնյութեր իր թագավորության դեմ: Խորենացին նշում է, որ երբ ժամկետը լրանում է և Ենանոսը չի կարողանում հայոց արքային տալ նշված փրկագինը՝ Արշամը բարկանում է և պատվազրկելով Ենանոսին՝ նետում է բանտ¹:

Այս նկարագրությունից հետո Խորենացին տեղեկություններ է հաղորդում Հայաստանում վերաբնակեցված հրեաների և նրանց հետևորդների սոցիալ-քաղաքական դրության ու դավանավոր-խության վերաբերյալ: Քանի որ Խորենացու՝ խնդրին առնչվող տեղեկություններն օգնում են որոշակի լույս սփռել մ. թ. ա. 1-ին և մ. թ. 1-ին դդ. հայ-հրեական հարաբերությունների վրա, ապա նախընտրելի է մեջքերել մի հատված այդ տեղեկություններից: «...Գնթունյաց տոհմի նահապետ Ջորան նրա դեմ (Ենանոսի – Վ. Ղ.) քսություն է անում արքային՝ ասելով. «Իմացի՛ր, արքա, որ Ենանոսը կամենում էր ապստամբել քո դեմ և ինձ հետ խորհուրդ էր անում, որ Հրեաստանի թագավորից երդումն խնդրենք այն առթիվ, թե նա մեզ կընդունի և ժառանգական (կալվածքներ) կտա մեր բնիկ երկրում, քանի որ այս երկրում (Հայաստանում – Վ. Ղ.) նորանոր տանջանքների ու խայտառակությունների ենթարկվեցինք: Եվ ես,

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, գլ. ԻԴ, էջ 151:

նրա հետ չհամաձայնելով, ասացի. ինչու՞ մենք մեզ խաբում ենք հնացած զրույցներով ու պառաված առասպելներով՝ մեզ համարելով պաղեստինացիներ: Եվ նա ինձնից հույսը կտրելով՝ նույն խնդրով Հյուրկանոս քահանայապետին ուղարկեց (Հերովդեսի մոտ), բայց առավել ևս Հերովդեսից հաւսախաբվեց»¹:

Խորենացին չի նշում, թե հիշյալ սլատմությունը կեղծ էր ու բանասերություն, ինչը թույլ է տալիս ասելու, որ հայոց արքայի դեմ նախապատրաստվում էր դավադրություն ու պալատական հեղաշրջում, որը չի իրականանում, քանի որ Հուդայի թագավոր Հերովդեսը սպանում է դավադիրների բանագնացին՝ Հյուրկանոսին: Փաստորեն, Հայաստանում ծրագրված պալատական հեղաշրջումը աջակցություն չի ստացել դրսից՝ մասնավորապես Հուդայից. շատ հավանական է նաև, որ Հայաստանի և Հուդայի միջև մ. թ. ա. 1-ին դարում հաստատված լինեին որոշակի կապեր, որոնք հրեաների տիրակալը չի ցանկացել կտրել:

Խորենացուց կատարված մեջբերումն ուշագրավ է նաև մեկ այլ առումով: Խոսքը Հայաստանում վերաբնակեցված հրեաների ձուլման մասին է: Ելնելով պատմահոր հաղորդած տեղեկություններից՝ կարելի է կարծել, որ Հայաստանում որոշ տիրակալների կողմից հրեաների նկատմամբ իրականացվել է ձուլման քաղաքականություն, որը երբեմն արտահայտվել է հարկադրանքով և որոշակի բռնի մեթոդներով: Այդ մասին է վկայում Խորենացին՝ նշելով, որ Արշամ թագավորը հրամայել էր տանջանքների ենթարկել Ենանոսին և ստիպել նրան վերջնականապես թողնել հրեական հավատն ու երկրպագել արեգակին, ինչպես նաև թագավորի կոտորելին: Հակառակ սլարագայում Ենանոսին ու նրա

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, գլ. ԻԴ, էջ 151-152:

հարազատներին սպառնում էր մահապատիժ¹: Ինչպես Խորենացին է նշում՝ երբ Ենանոսի աչքի առաջ սպանում են նրա տոհմակիցներից մեկին՝ Սարիային, և պատրաստվում էին սպանել նրա որդիներ Սափատիային և Ագարիային, Ենանոսն իր «որդիների մահվան երկյուղից ու կանանց թախանձանքից կատարում է արքայի կամքն ամբողջ ազգա-տոհմի հետ միասին և հաստատվում իր պատվի մեջ»²: Ուշագրավ է նաև, որ Հայաստանի հրեաները բաժանվել էին հակադիր ճամբարների, որոնցից մեկը կոչվում էր ձուլմանը, մյուսը՝ դեմ³:

Անկասկած, այս դեպքում կարևոր չէ, թե Խորենացին շփոթել է պատմական ժամանակաշրջանները և գործող անձանց անունները: Խնդիրը երևույթն է, երբ պատմահայրը խոսում է Հայաստանում Արտավազդ թագավորի օրոք իրականացված ձուլման քաղաքականության մասին. բացի այդ, հարկ է նշել, որ ձուլման գործընթացը բնականոն մի երևույթ էր, որից զերծ չէին կարող մնալ նաև հրեաները: Հանգամանքների բերումով Հայաստանում վերաբնակված օտարազգիներից շատերը, կասկածից դուրս է, որ ժամանակի ընթացքում յուրացրել են տեղի ժողովրդի լեզուն, բարբերն ու սովորույթները՝ ենթարկվելով հայկական մշակույթի ազդեցությանը: Կասկածից դուրս է նաև, որ տեղացիները, շփման մեջ մտնելով Հայաստանում վերաբնակված օտար ժողովուրդների ներկայացուցիչների հետ, ազդվել են նրանց մշակույթի որոշակի՝ առավել կենսունակ գծերից: Այդուամենայնիվ, Հայաստանի հրեական համայնքները խիստ ավանդապահ էին, ինչի շնորհիվ պահպանեցին

¹ Տե՛ս նույն տեղում, գլ. ԻԴ, էջ 152:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Մովսես Խորենացի, գլ. ԻԴ, էջ 152:

բազում հոգևոր-մշակութային ինքնատիպ գծեր: Ավելին, Հայաստանի հրեական համայնքները շատ դեպքերում ազատ են եղել իրենց դավանանքի, լեզվի և առևտրական գործունեության մեջ: Պատահական չէ, որ Հովսեփոս Փլավիոսը մի առիթով նշել է, թե Հայաստանում հրեաները լավ էին ապրում¹:

Խորենացին հիշատակություններ է թողել նաև մ. թ. ս. 1-ին դարի երկրորդ կեսին թագավորած հայ և հրեից թագավորների հարաբերությունների մասին, որոնք, դատելով պատմահոր հաղորդումներից, գերազանցապես լարված բնույթ էին կրում: Խորենացու տեղեկությունների համաձայն՝ հայոց Արշամ թագավորը չի ընդունում Հերովդեսի պահանջը՝ անարիեստ գործավորներ տրամադրել Ասորիքի Անտիոք քաղաքի՝ աղտեղություններից ու տիղմներից անանցանելի դարձած հրապարակները մաքրելու համար և գորքեր է հավաքում Հերովդեսին դիմադրելու նպատակով²: Ըստ Խորենացու՝ Արշամը պատգամավորներ է ուղարկում նաև Հռոմի կայսեր մոտ՝ նրան խնդրելով իրեն ազատել Հերովդեսի իշխանությունից, որը, սակայն, կայսրը չի կատարում: Արշամը ստիպված է լինում հպատակվել Հերովդեսին և նրան տալ խնդրած գործավորներին³:

Այնուհետև պատմահայրը նշում է, որ Արշամ թագավորի որդու՝ Աբգարի գահակալության տարիներին Հերովդեսի և հայոց արքայի հարաբերությունները կրկին լարվել էին, ինչի հետևանքով հրեից արքան Աբգարի դեմ է ուղարկում իր եղբորորդի Հովսեփին,

¹ Տե՛ս **Лион Фейхтвангер, Иудейская война-** http://www.lib.ru/INPROZ/FEIHTWANGER/joseph_1.txt.

² Տե՛ս **Մովսես Խորենացի**, գլ. ԻԵ, էջ 152-153:

³ Տե՛ս նույն տեղում, գլ. ԻԵ, էջ 153:

որը զույթի բազմությունն առած գալիս, հասնում է Միջագետք և Աբգարին հանդիպում Բուզնան զորանիստ գավառում: Այնտեղ տեղի ունեցած ճակատամարտում նա զոհվում է, իսկ նրա զորքը դիմում է փախուստի¹: «Հենց այդ ժամանակ էլ, — գրում է Խորենացին, — մեռնում է Հերովդեսը, և Օգոստոսը Հրելից ազգապետ է նշանակում նրա Արքեդայոս որդուն»²:

Ինչպես երևում է Խորենացու հաղորդումներից, երբ Հայաստանը մ. թ. ա. 1-ին դարի երկրորդ կեսին ընկել էր հռոմեական ուժեղ ազդեցության տակ և այստեղ իշխում էին Արտավազդ Բ-ի՝ Հռոմում դաստիարակված և մեծացած որդիները, հայ-հրեական հարաբերություններն ընթացել են որոշակի վայրիվերումներով, քանի որ հրեական կողմը, հենվելով Հռոմի աջակցության վրա, փորձում էր հայ-հրեական հարաբերություններում հանդես գալ թելադրողի դերում:

Հայ-հրեական առնչությունների դիտանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մ. թ. 1-ին դարը: Խոսքը, մասնավորապես, երեք իրադարձությունների մասին է, որոնց վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում՝ 1/ Աբգար թագավորի նամակը Հիսուս Քրիստոսին և վերջինիս պատասխանը նրան³, 2/ Հրեաստանի Հերովդես Ա Մեծի (մ. թ. ա. 70-4 թթ.) թոռ Տիգրան Ե-ի գահակալությունը Հա-

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, գլ. ԻԵ, էջ 154:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, գլ. Լ, էջ 157-158, գլ. ԼԱ, էջ 158-159, գլ. ԼԲ, էջ 159:

յաստանում¹, 3/ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը Հայաստանում²:

Նշված իրադարձություններից, թերևս, Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունն էր, որ Հայաստանի ինչպես հոգևոր, այնպես էլ մշակութային և քաղաքական կյանքում աննախադեպ ու դարակազմիկ նշանակություն ունեցավ՝ երկրում ստեղծելով քրիստոնեական վարդապետության առաջին համայնքները:

Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությանը նվիրված իր մի ընդարձակ հոդվածում Բաբկեն Հարությունյանը նշում է, թե այդ առաքյալների՝ Հայաստանում կատարած քարոզչությունը ծայրե ի ծայր առասպել չէ, այլ իրողությունների մի շարք, որի մասին խոսելիս ու գրելիս միջնադարյան առանձին հեղինակներ, գուցե, ինչ-որ ընդմիջարկումներ և պատվաստումներ են կատարել, ինչը, սակայն, հիմք չէ հերքելու ամբողջ իրողությունը³: Բ. Հարությունյանի պնդմամբ, որը չընդունելու որևէ հիմք չկա, Խորենացու՝ Թադեոս առաքյալի վերաբերյալ հաղորդումները գե-

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. 1, էջ 710, <http://www.vehi.net/-istoriya/israil/flavii/drevnosti/18.html>.

² Տե՛ս Սովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գլխ. երկրորդ, գլ. ԼԳ, էջ 159-160, գլ. ԼԴ էջ 163-164, Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Սո. Մալխասյանցի, Ե., 1987, Երրորդ դպրություն, էջ 13, Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դաբլիսյան-Մելիքյանի, Ե., 2006, դպրութիւն առաջին, գլ. Զ, էջ 55, Ստեփանոս Օրբելյան, Մյունխի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Ե., 1986, գլ. Զ, էջ 76, 77, 79 և այլն:

³ Տե՛ս Հարությունյան Բ., Քրիստոնյա Հայաստան, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը, էջմիածին, 06.12.2011 թ.:

րակշիռ մատով պատմական իրողություններ են և հայ-հրեական առնչությունների առումով ևս խիստ կարևոր նշանակություն ունեն:

Մասնավորաբար, պատմահայրը հաղորդում է, որ Թադեոսը «եկավ, մտավ հրեա իշխան Տուբիայի տունը, որ ասում են՝ բազրատունյաց տոհմից է եղել, և Արշամից խոյս տալով, իր մյուս ազգակիցների հետ միասին չի ուրացել իրերությունը, այլ նրանց հավատին է մնացել մինչև Քրիստոսին հավատալը: Եվ Թադեոսի համբավը տարածվեց ամբողջ քաղաքում»¹:

Խորենացու տեղեկությունը որոշ եզրահանգումների տեղիք է տալիս՝ Հայաստանում հրեական համայնքների՝ քրիստոնեության տարածման գործում ունեցած նշանակալի դերակատարության մասին: Ինչպես պատմահայրն է նշում՝ ոչ միայն Տուբիան, այլև Հայաստանի նրա ազգակիցները չէին ուրացել հրեական հավատը մինչև քրիստոնեություն ընդունելը: Բացի այդ, Հայաստանի քաղաքներից պարսից շահ Շապուհ Բ-ի գերեվարած հրեաների թիվը վկայում է, որ նրանք ստվար և կուտ համայնքներ էին ստեղծել Հայաստանում:

Մասնավորապես, Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ Արտաշատից Շապուհի հրամանով Խրան գերի բռնեցին քառասուն հազար տուն հայեր և ինը հազար տուն հրեաներ, Վաղարշապատից՝ միասին տասնինը հազար տուն հայեր և հրեաներ, Երվանդաշատից՝ քսան հազար տուն հայեր և երեսուն հազար տուն հրեաներ, Բագրևանդի Զարեհավան քաղաքից՝ հինգ հազար տուն հայեր և ութ հազար տուն հրեաներ, Աղիովիտ գավառի Զարիշատ քաղաքից՝ տասը հազար տուն հայեր և տասնչորս հազար տուն հրեաներ, Վանից՝ հինգ հազար տուն հայեր և տասնութե հազար տուն հրեաներ, Նախճավանից՝ երկու հազար տուն հայեր և տասնվեց հազար տուն

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք երկրորդ, գլ. ԼԳ, էջ 159:

հրեաներ¹: Ընդ որում, դատելով այն հանգամանքից, որ գերեվարությունից հետո պարսիկները հիմնովին ավերեցին բոլոր նշված քաղաքները՝ Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը և Նախճավանը, կարելի է ասել, թե գերեվարվել էր հիշյալ քաղաքների գրեթե ողջ բնակչությունը, ինչի հետևանքով ամայացան Հայաստանի խոշորագույն բնակավայրերից շատերը: Փաստորեն, Արտաշատը 4-րդ դարի երկրորդ կեսին ունեցել է ավելի քան 49 հազար տուն բնակչություն, Վաղարշապատը՝ 19 հազար տուն, Երվանդաշատը՝ 50 հազար տուն, Զարեհավանը՝ 13 հազար տուն, Զարիշատը՝ 24 հազար տուն, Վանը՝ 23 հազար տուն, Նախճավանը՝ 18 հազար տուն:

Հայաստանից պարսիկների գերեվարած հրեաների մասին տեղեկություններ են հաղորդում նաև Մովսես Խորենացին ու Թովմա Արծրունին: Եվ եթե Խորենացին չի նշել գերվածների թիվը, ապա Թովմա Արծրունին այն ներկայացրել է բավականին հստակ՝ ընդ որում, ոչ թե ծխերով, այլ մարդկանց թվով: Պատմիչն այդ թիվը նշել է «Ն բիւր»՝ 400 հազար²:

Եթե պայմանականորեն ընդունվի, որ Բուզանդի ներկայացրած մեկ երդը կամ ընտանիքը կարող էր բաղկացած լինել չորս հոգուց, ապա Արծրունու և Բուզանդի՝ գերեվարված հրեաների վերաբերյալ տվյալները միմյանցից գրեթե չեն տարբերվում: Մասնավորապես, չհաշված Վաղարշապատի գերիների մասին Բուզանդիի հաղորդած թիվը, որը ներառում էր և՛ հայերին, և՛ հրեաներին, մնացած

¹ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, չորրորդ դպրություն, գլ. ԾԵ, էջ 264-268:

² Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, դպրութիւն ստաջին, գլ. Ժ, էջ 74:

քաղաքներից պարսիկների գերեվարած հրեաների թիվը կազմում էր 95 հազար երդ, որը չորսով բազմապատկելու դեպքում կստացվի 380 հազար մարդ:

Արդյունքում, կրկին հիմք ընդունելով մեկ երդի՝ չորս հոգուց բաղկացած լինելու պայմանական բաժանումը, կստացվի վաղ միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքների բնակչության թվային մոտավոր պատկերը, որը, թերևս, հեռու չէ իրականությունից: Ըստ այդմ, 4-րդ դարի երկրորդ կեսին Արտաշատն ունեցել է 196 հազար բնակչություն (49 հազար տուն), որից 160 հազարը կազմել են հայերը, 36 հազարը հրեաները, Վաղարշապատը՝ 76 հազար բնակչություն (19 հազար տուն), որից շուրջ 50 հազարը հայեր, մոտ 20 հազարը հրեաներ, Երվանդաշատը՝ 200 հազար բնակչություն (50 հազար տուն), որից 80 հազարը հայեր, 120 հազարը հրեաներ, Ջարեհավանը՝ 52 հազար բնակչություն (13 հազար տուն), որից 20 հազարը հայեր, 32 հազարը հրեաներ, Ջարիշատը՝ 96 հազար բնակչություն (24 հազար տուն), որից 40 հազարը հայեր, 56 հազարը հրեաներ, Վանը՝ 92 հազար բնակչություն (23 հազար տուն), որից 20 հազարը հայեր, 72 հազարը հրեաներ, Նախճավանը՝ 72 հազար բնակչություն (18 հազար տուն), որից 8 հազարը հայեր, 64 հազարը հրեաներ:

Թեպետ ասվեց, որ նշված թվերը մոտավոր են, սակայն պետք է ընդգծել նաև, որ դրանք չափազանց ուռճացված չեն, ինչպես նշել են մի շարք հետազոտողներ: Օրինակ, Հակոբ Մանանդյանն այն կարծիքին էր, որ Շուպուհի կողմից Իրան գերեվարված հայերի ու հրեաների թվի վերաբերյալ Բուզանդի հաղորդած տվյալները պատմական արժեք չունեն¹: Արդի ուսումնասիրողներից Արամ Թովքյանը, իր հերթին, նշում է, որ Փավստոսի հաղորդումը, ամենայն հավա-

¹ Տե՛ս Հակոբ Մանանդյան, Երկեր, հատոր 2, Ե., 1985, էջ 86:

նականությամբ, բանավոր ծագում ունի և պատմիչը հրեաների քանակը մեծապես չափազանցել է¹: Այդուհանդերձ, թե՛ Հակոբ Մանանյանը, թե՛ խնդրով հետաքրքրված բազում այլ հետազոտողներ համակարծիք են եղել այն հարցում, որ Հայաստանի հրեական բնակչությունն զգալի թիվ է կազմել և լուրջ ազդեցություն ունեցել առևտրի ու արհեստագործության բնագավառներում:

Ինչ վերաբերում է Փավստոսի՝ վերը բերված թվերին, գոտողներն իրենց տեսադաշտից բաց են թողել, թերևս, երկու կարևոր հանգամանք:

1) Թեպետ անմիջական վկայություններ չկան, սակայն միանգամայն հավանական է, որ պարսից Շապուհ Բ արքան Հայաստանի՝ հիշյալ խոշոր քաղաքները գրավելուց հետո գերեվարել է թե՛ այդ քաղաքների, թե՛ դրանց շրջակա բնակավայրերի բնակչությանը:

Այն, որ գերիների վերաբերյալ պատմիչի հաղորդած տվյալները կարող էին ներառել ոչ միայն բուն քաղաքի, այլև դրա հարակից շրջաններից գերված բնակչության ընդհանուր քանակը, կարծում ենք՝ միանգամայն հնարավոր էր (Օրինակ, կարելի է նշել, որ որոշ հետազոտությունների համաձայն՝ ուրարտական շրջանում Վան քաղաքն ունեցել է շուրջ 25 հազ.-ից 40 հազ.², իսկ Արտաշատն իր ծաղկման շրջանում՝ մոտ 150 հազ. բնակչություն³: Համեմատելով

¹ Տե՛ս Հրեաները Հայաստանում. միջնադար, գիտաժողովի սեղմագրեր, Ե., 2009, Արամ Թափյան, Հրեաները հին և միջնադարյան Հայաստանում (մ. թ. ա. 1-ին-մ. թ. 13-րդ դդ.), էջ 12:

² Տե՛ս Tertius Chandler, Four Thousand Years of Urban Growth. An Historical Census, Second Edition, The Edwin Mellen Press., 1987, Tables of World's Largest Cities 2250 B.C. - 1975- <http://abuss.narod.ru/Biblio/AncientCities.htm>.

³ Տե՛ս Խաչատրյան Ժորես, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, Պատմա-բանասիրական հանդես, 2007, N 2, էջ 8 (3-36):

Վանի և Արտաշատի բնակչության՝ մեր կողմից բերված թվերն այս տվյալների հետ՝ կունենանք թվերի հետևյալ հարաբերակցությունը՝ Վանի դեպքում՝ 92 հազ. և 40 հազ., Արտաշատի դեպքում՝ 196 հազ. և 150 հազ.: Զույգ քաղաքների բնակչության՝ հնագույն և միջնադարյան շրջանների թվային տարբերությունը կազմում է ավելի քան 40 հազ.):

2) Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանից Շապուհի գերեվարած հրեաների թիվը Թովմա Արծրունին հաղորդում է ոչ թե ծխերով, այլ մարդկանց թվով՝ Ն բյուր (400 000), որը գրեթե համընկնում է Փավստոս Բուզանդի տվյալների հետ: Կարծում ենք՝ զուգադիպություն չէ, և, ամենայն հավանականությամբ, Փավստոս Բուզանդն ու Թովմա Արծրունին Հայաստանից գերեվարված հրեաների թիվը ներկայացնելիս օգտվել են որևէ հստակ աղբյուրից կամ աղբյուրներից, որը/որոնք հավանաբար հետազայում չեն պահպանվել:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Բուզանդը Հայաստանի յոթ քաղաքներից գերեվարվածներին ներկայացնում է իբրև միայն հայեր ու հրեաներ: Այդ կապակցությամբ իր մի դիտարկման մեջ Ա. Թովիյանն իրավացիորեն նշում է. «...այետք է ենթադրել, որ «հրեա» բառը նշանակում է ինչպես «ազգությամբ հրեա», այնպես էլ «հրեական կրոնի հետևորդ» (այդ թվում՝ պրոգելիտներ, այսինքն՝ հավատափոխներ, հավանաբար՝ տարբեր ազգությունների կամ զուտ «համակիրներ»), և ոչ պարզապես էթնիկ հրեաներ, այլապես դժվար կլիներ հասկանալ «հրեա» գերիների մեծ

թիվն ու քաղաքացիների տարօրինակ բաժանումը երկու խմբի՝ «հայերի» և «հրեաների»¹:

Գտնում ենք, որ միանգամայն ընդունելի է Ա. Թուփչյանի այս տեսակետը, քանի որ պարզապես անհնար էր, որպեսզի վաղ միջնադարյան Հայաստանի քաղաքներում բնակվեին միայն հայեր ու հրեաներ. առավել նա, որ աղբյուրները հաղորդում են այդ քաղաքների ասորի, հույն և այլ ժողովուրդների ներկայացուցիչ-բնակիչների մասին: Ընդ որում, հետաքրքրական է խնդրո առարկա քաղաքներում հայերի և հրեաների (և՛ էթնիկ հրեաների, և՛ հրեական կրոնի հետևորդների) թվային հարաբերակցությունը: Ինչպես վկայում են տվյալները՝ Երվանդաշատում, Զարեհավանում, Զարիշատում, Վանում, Նախճավանում հրեաները բնակչության թվով նույնիսկ նշանակալի չափով գերակշռել են հայերին: Մտացվում է, որ վաղմիջնադարյան Հայաստանի խոշորագույն յոթ *քաղաքներից* միայն Երկուսում են հայերն իրենց թվաքանակով գերազանցել հրեաներին՝ բուն մայրաքաղաքում և նախկին մայրաքաղաքում, ինչը թույլ է տալիս ասելու, որ Հայաստանի պետական-քաղաքական վերանախավը Արտաշատն ու Վաղարշապատը համարում էր ռազմավարական անփոխարինելի նշանակության բնակավայրեր, որոնցում ձգտում էր ապահովել հայերի թվական գերակշռությունը մյուս ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ:

Փաստորեն, այն իրողությունը, որ հայկական՝ ժամանակի խոշորագույն յոթ քաղաքներից հինգում հայերի նկատմամբ թվական լուրջ գերակշռություն ունեին հրեաներն ու հրեական կրոնի հետևորդները, չէր կարող անհետևանք մնալ Հայաստանի թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ հոգևոր-մշակութային, և թե՛ քաղաքական

¹ Տե՛ս Հրեաները Հայաստանում. միջնադար, էջ 13:

կյանքում: Ուստի, անհնար է, որ նրանց հետ հաշվի չնստեին ոչ միայն Հայաստանի կառավարողները, այլև մի այնպիսի կարևոր վարդապետության, ինչպիսին է քրիստոնեությունը, Հիմնադիրն ու Նրա քարոզիչները: Հետևաբար, անհնար էր, որ վերջիններս հեթանոսական այն երկրներում, որտեղ հրեական համայնքներ էին ստեղծվել (այդ թվում Հայաստանում), իրենց քարոզչության ընթացքում հաշվի չառնեին հետևյալ իրողությունը. հրեական միաստվածային կրոնը որոշակի ազդեցություն էր ձեռք բերել հեթանոսական երկրներում՝ յուրօրինակ ձևով ճանապարհ հարթելով այնտեղ քրիստոնեության մուտքի ու տարածման համար: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի հրեաներից շատերը անդավաճան էին իրենց դավանանքի հարցում. նույնիսկ Տրդատ 3-րդի և Գրիգոր Լուսավորչի օրոք, նրբ քրիստոնեությունը ոչ միայն առաջարկվում էր, այլև պարտադրվում Հայոց թագավորության հպատակներին, հավանաբար, հրեաներից շատերն այն ընդունեցին միայն ձևականորեն, քանի որ, փաստորեն, 360-ական թվականներին, երբ Շապուհը բազում մարդկանց գերեց Հայաստանում, այստեղի բնակչության մի ստվար զանգված հրեական դավանանքի հետևորդներ էին, որի վերաբերյալ խոսք եղավ վերը և որը խոստում է երկրում հրեական ուժեղ մշակույթի, ինչպես նաև լուրջ ազդեցության մասին: Պատահական չէ, որ նույնիսկ Շապուհ Բ-ի կողմից բազմահազար հրեաների գերեվարությունից և Իրան տարվելուց հետո Հայաստանում հրեական համայնքները շարունակեցին ոչ միայն գոյություն ունենալ, այլև պահպանեցին իրենց ազդեցությունն ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական և մշակութային ասպարեզներում, ինչի վերաբերյալ իր պատմություններով ու եզրակացություններով վկայում է Մովսես Խորենացին:

Մասնավորաբար, պատմահայրը հետաքրքիր տվյալներ է հաղորդում հայ նախարարական տոհմերից՝ Բագրատունիների և Ամատունիների՝ հրեական ծագման վերաբերյալ: Բագրատունիների մասին Խորենացին գրում է, որ երբ Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսոր Բ-ը (մ. թ. ա. 605-561 թթ.) գրավեց Երուսաղեմը և հրեաներին գերեվարեց Բաբելոն, թույլատրեց հայոց Հրաչյա թագավորին գերված հրեա առաջնորդներից մեկին՝ Շամբատին բնակեցնել Հայաստանում¹: Հենց այս Շամբատից էլ, Խորենացու խոսքով, սերել են Բագրատունիները²: Պատմահայրն իր «Պատմության» մեջ մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Բագրատունիների՝ հրեական ծագման հարցին և նշել, թե իրենց կրոնի պատճառով նրանք ժամանակ առ ժամանակ հալածանքների են ենթարկվել հայոց թագավորների կողմից³:

Չնայած մինչև օրս բազմում հետազոտողներ են անդրադարձել Բագրատունյաց և Ամատունյաց տոհմերի սերման խնդիրներին՝ շատ դեպքերում եզրակացնելով, որ մասնավորապես Բագրատունիները չէին ծագում հրեաներից և հայկական արմատներ ունեին⁴, սա-

¹ Տե՛ս **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, գիրք առաջին, գլ. ԻԲ, էջ 112:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, գիրք երկրորդ, գլ. Է, էջ 132, 138, գլ. ԻԴ, էջ 151-152 և այլն:

⁴ Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 458-459, նույն հեղինակի՝ Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 495-501, **Լեռ**, Երկեր, հ. Բ, Ե., 1967, էջ 490-491, **Շահնազարյան Ա.**, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, առանձնատիպ Պետական պատմական թանգարանի Աշխատություններ, հ. 1, Ե., 1948, **Գարագաշյան Ա.**, Քննական պատմություն հայոց, մաս Ա., Թիֆլիս, 1895, էջ 169-173, **Ղափանցյան Գ.**, Ուրարտուի պատմությունը, հ. 1, Ե., 1940, էջ 203, 219, **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունիներ, պատմա-տոհմաբանական հանրագիտարան, Ե., 1997, **Վարդանյան Վ.**, Բագրատունի տոհմի ծագմանը և գործառույթներին առնչվող մի քանի հարցերի շուրջ - Պատմաբանասիրական հանդես (այսուհետև ՊԲՀ), 2008, № 1, **Периханян А.**, Армянская надпись из Зангезура - ՊԲՀ, № 4, 1965, էջ 108, 110-111, **Գրիգորյան Մ.**, Բագրատունիների ծագման հարցի շուրջ - ՊԲՀ, 2010, № 2, էջ 116-129, **Март Н.**, Ани, Е., 1939, с. 41-

կայն գտնում ենք որ ինչպես Բագրատունիների, այնպես էլ Ամատունիների հրեական ծագման վերաբերյալ Խորենացու տեսակետը ներկայումս հնարավոր չէ ոչ անվերապահորեն ընդունել, ոչ ժխտել, քանի որ, ինչպես Ա. Թոփչյանն է նշում. «...Խորենացու պատմածը հաստատող կամ դրան հակասող վստահելի աղբյուրներ չկան»¹: Համամիտ ենք նաև հեղինակի այն տեսակետին, որ Բագրատունիների՝ հրեական ծագման վարկածի հեղինակ կարող էին լինել հենց իրենք՝ Բագրատունիները, ինչի պատճառով տվյալ վարկածը տեղ է գտել այդ իշխանական տան պատմիչ Մովսես Խորենացու գրքում²:

Հայ-հրեական առնչությունների հիմնախնդրում մի առանցքային նշանակություն է ունեցել երկու ժողովուրդների պատմության այն դարաշրջանը, երբ կորսվել է պետականությունը: Պետականության բացակայության պայմաններում թվում էր, թե անկում կապրեն նաև հայ ու հրեա ժողովուրդների հարաբերությունները: Այդուհանդերձ, պատմությունը վկայում է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Երուսաղեմում հայ-հրեական շփումները բավականին սերտ են եղել:

2000-2002 թթ. Եղեգիսում (Վայոց ձորի մարզ) կատարված պեղումները բացահայտեցին հրեական մի բնակավայրի հետքեր, որը լիջնադարում՝ 13-14-րդ դարերում ծաղկուն, կենսունակ և ազդեցիկ համայնք է եղել: Հրատարակվեցին մի շարք ուշագրավ և արժեքավոր հոդվածներ ու ժողովածուներ³, որոնցում անդրադարձ է

42, Халатянц Г., Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. 1, М., 1896, с. 83-84 և ուրիշներ:

¹ Հրեաները Հայաստանում. միջնադար, էջ 19:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս *Stones from the River – Jerusalem Report*, 24 Sept., 2001, *Brook K.*, *The Unexpected Discovery of Vestiges of the Medieval Armenian Jews – Los Muestros*:

կատարված ոչ միայն Եղեգիսի հրեական բնակավայրին, միջնադարյան Հայաստանում հրեական այդ համայնքի պատմությանը, այլև հայ-հրեական միջնադարյան առնչություններին: Բացահայտման գիտական արժեքը նաև այն է, որ ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրները խիստ կցկսուոր տեղեկություններ են հաղորդում միջնադարյան շրջանում տեղի ունեցած հայ-հրեական շփումների վերաբերյալ:

Վկայակոչելով Թովմա Արծրունու, Մտեփանոս Օրբելյանի, ինչպես նաև որոշ այլ աղբյուրների տեղեկություններ՝ պետք է ասել, որ 9-12-րդ դդ. Հայաստանում շարունակում էին գոյություն ունենալ հրեական համայնքներ: Բացի զրավոր աղբյուրներից, Հայաստանի հրեաների մասին խիստ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև, ինչպես արդեն նշվեց, Եղեգիսում հայտնաբերված հրեական գերեզմանաքարերն ու բնակավայրը: Քննելով այդ քարերի զարդանախշերը և դրանց մեջ հայկական զարդանախշերի՝ որոշ ձևերի առկայությունը, ինչպես նաև այլ տվյալներ՝ դոկտոր Մայքլ Սթոունը նշում է, որ «Եղեգիսը միջնադարյան Հայաստանում մեկուսացած հրեական համայնք չի եղել»¹:

14-րդ դարից սկսած՝ Հայաստանում նկատվում է հրեական համայնքների նվազում, որը լերագանցապես օտար նվաճողների գործած ավերածությունների և արտագաղթի հետևանք էր: Չնայած հարկ է ասել նաև, որ հիշյալ դարաշրջանից ի վեր Հայաստանի հրեաներից շատերն ընդունեցին քրիստոնեություն և աստիճանաբար ձուլվեցին հայ ժողովրդին: Արդեն 20-րդ դարի սկզբներին Վա-

The Sephardic Voice, No. 45 (December 2001), Daphna Lewy, The lost Jews of Armenia, Ha'aretz, 4 February 2001, Հրեաները Հայաստանում. միջնադար և այլն:

¹ Հրեաները Հայաստանում. միջնադար, էջ 29:

նից մինչև Մոսկով ընկած շրջաններում բնակվող հինգ հազար հրեաներից հուդայական դավանանքի հետևորդների թիվը կազմում էր 360 մարդ. մնացածներն ընդունել էին քրիստոնեություն¹:

17-րդ դ. պարսկա-թուրքական պատերազմների ընթացքում, երբ Իրանի շահ Աբասն ստիպված էր Հայաստանը 1603 թ. գրավելուց հետո նահանջել, հրամայում է թուրքական զորքի երթուղուն հարող բնակավայրերի բնակչությանը՝ քրիստոնյաներին և հրեաներին գաղթեցնել Իրան՝ փորձելով նման ձևով ամայացնել արշավող թուրքական Բանակների ճանապարհը և նրանց զրկել պարենի հնարավորությունից: Այդ իրադարձությունները ներկայացրած պատմիչ Առաքել Դավրիժեցին համակրանքով ու կարեկցանքով է խոսում Իրանի շահերի տիրապետության տակ ընկած հրեաների մասին²: Այդ բռնագաղթից հետո Հայաստանում հրեաներ գրեթե չմնացին:

• 1840 թ. Երևանի նահանգում գոյություն ունեին հրեական երկու համայնքներ: Դրանցից մեկը հիմնել էին եվրոպական ծագմամբ կամ աշքենագյան հրեաները, մյուսը՝ իրանական: Աշքենագյան հրեաների համայնքն ուներ ալոթասրահ, իսկ իրանական ծագմամբ հրեաները հիմնել էին «Շեյխ Մորդեխայ» սինագոգը, որը սկսել էր գործել 1860 թվից: Վերջիններիս համայնքում գործածվում էր ինչպես եբրայերենը, այնպես էլ պարսկերենը:

1897 թ. անցկացված Ռուսական կայսրության բնակչության համընդհանուր մարդահամարի տվյալներով՝ Երևանի նահանգում բնակվող հրեաների թիվը կազմում էր 850 մարդ³: Ընդ որում, նրանց

¹ Տե՛ս Еврейская энциклопедия, 1901-1906...

² Տե՛ս http://armenianhouse.org/davrizhetsi/history-ru/chapter1_6.html.

³ Տե՛ս Первая всеобщая перепись населения Российской Империи 1897 г. Распределение населения по родному языку и уездам, данные по Эриванской губернии- http://demoscope.ru/weekly/ssp/emp_1an_97_uezd.php?reg=566.

մեծամասնությունը կազմում էին քաղաքաբնակները: Մինչև 1926 թ. Հայաստանի հրեաների թիվը նվազել էր՝ կազմելով 335¹: Հրեա հետազոտող Աբրահամ Գալանթու տվյալներով՝ 20-րդ դարի սկզբներին Ակն քաղաքում գոյություն է ունեցել հուդայական-հայկական կրոնական համայնք, որը կոչվում էր Բագրատունիս»²: Այդ նույն զիտնականի կարծիքով՝ Հայաստանում հրեական բնակչության գոյության մասին է փաստում նաև երկրում տարածված Իսրայելյան ազգանունը, որը նշանակում է Իսրայելի տոհմից³:

Հայ-հրեական կապերի և առնչությունների գործում կսարևոր դեր է խաղացել և ներկայումս նույնպես խաղում է Երուսաղեմի հայկական համայնքը, որի գոյության մասին աղբյուրները խոսում են դեռևս վաղ ժամանակներից: Պետք է ասել, որ հայերի և Երուսաղեմի միջև պատմական կապը հաստատվել է քրիստոնեության տարածումից հարյուրամյակներ առաջ՝ դեռևս Ասորեստանի ու Բաբելոնի թագավորությունների գոյության ընթացքում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո բազում հայեր սկսեցին ուխտագնացության մեկնել Սուրբ Երկիր, որոնց մի մասը մնաց Երուսաղեմում և բնակություն հաստատեց Հայոց պատրիարքարանին հարող տարածքներում⁴: Երուսաղեմում հայերը գերազանցապես հաստատվում էին Հին քաղաքի հարավ-արևմտյան մասում, որտեղ էլ ձևավորվեց հայկական թաղամասը: Ներկայումս այն զբաղեցնում է Հին քաղաքի պատից ներս ընկած տարածության մեկ

¹ Տե՛ս *Журнал «Лехаим июль 2008 Тамуз 5768-7(195). Илья Карпенко «В стране многоцветного туфа»* <http://www.lechaim.ru/ARHIV/195/karpenko.htm>.

² Տե՛ս <http://www.e-slovo.ru/313/6poll.htm>.

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս *Hintlian Kevork, History of the Armenians in the Holy Land, Jerusalem, 1976.*

վեցերորդ մասը: Հայ ուխտավորները եկեղեցիներ, մենաստաններ ու տներ են կառուցել Սուրբ Երկրի այլ վայրերում ևս:

Ամփոփելով միտքը՝ անհրաժեշտ է նշել, որ հայ-հրեական առնչություններն ու կապերը հազարամյակների պատմություն ունեն, և ուշագրավ է, որ երկու ժողովուրդների հարաբերությունները թեպետ հնագույն՝ մինչքրիստոնեական շրջանում (երբ նրանք ունեին սեփական պետությունները) երբեմն ունեցել են ռազմա-քաղաքական դրսևորումներ, սակայն հիմնականում կրել են մշակութային և առևտրա-տնտեսական բնույթ:

ON THE ISSUE OF ARMENIAN-JEWISH RELATIONS (A HISTORICAL OVERVIEW)

(Summary)

VAHRAM GHARAKHANYAN

The Armenian and foreign sources witness on early contacts between the Armenian and Jewish peoples. The Armenian-Jewish relations have millennia-long history and it is noteworthy that the relations between the two peoples, although in their ancient, pre-Christian era (when they had their own states) sometimes had military and political manifestations, yet were mainly of cultural, commercial and economic character. It is noteworthy that Jewish communities have been formed in Armenia since ancient times. During the centuries, new Jewish immigrants from different countries appeared in Armenia. In 1840 there were two Jewish communities in the province of Yerevan: one of them was founded by European or Ashkenazi Jews, and the other was Iranian.

The history of Armenian-Jewish relations and contacts are not only historical, but also have politically important in the lives of two peoples.

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

պ.գ.թ., Ազգային ուսումնական
խորհրդի գործադիր տնօրեն, ԱՄՆ

Ամերիկեան պատմութեան յայտնի փաստ է, որ բնիկապաշտ (nativist) եւ ազգայնական ուժերու յարատեւ քարոզչութեան շնորհիւ, 1882-1924-ին ԱՄՆ-ու Գոնկրէսը շարք մը օրէնքներ կը վաւերացնէր, որոնք կը յանգէին օտարազգիներու ներգաղթի գրեթէ ամբողջական կասեցումին մինչեւ 1965: 1920-ական թուականներուն ընդունուած օրէնքները պէտք է հաշուի առնել Լատին Ամերիկայի հայկական համայնքներուն կազմաւորումը ուսումնասիրելու ընթացքին:

Սպանական կայսրութեան շրջանին հայ առեւտրականներու ներկայութիւնը արձանագրուած էր Պոլիվիոյ, Փերուի եւ Մեքսիքոյի մէջ: Սակայն, ԺԹ. դարու երկրորդ կէսին, երբ հարաւային ծայրամասի երկիրները (Արժանթին, Պրագիլ եւ Ուրուկուայ) եւրոպական գաղթականներ հրապուրելու քաղաքականութեան կը ձեռնարկէին, Լատին Ամերիկան ըստ էութեան դատարկ տարածք մըն էր հայերու համար: Արժանթինի 1876-ի գաղթականութեան օրէնքը հող կը պատրաստէր ու կը դիւրացնէր սկզբնական բնակեցումի գործընթացը: Թէեւ օրէնքը հիւսիսային Եւրոպայէն գաղթականներուն նախապատուութիւն կու տար, բայց այլ շրջաններէ եկող գաղթականները չէր սահմանափակէր: Պրագիլն ալ սահմանափակում-

ներ չէր դրած, բայց, ի տարբերութիւն Արժանթինի, անդրծովեան գաղթականութիւնը որոշակի վերապահութիւն կը ցուցաբերէր անոր հանդէպ, որուն զվսաւոր սյատճառները պէտք է սեպել ստրկատիրութիւնը (ջնջուած՝ 1888-ին), արեւադարձային կլիման եւ ճահճատենդը: 1880-ական թուականներուն, երբ Խարբերդի շրջանէն դէպի Ամերիկա գաղթելու ցանկութիւնը մեծապէս տարածուած էր, քանի մը տասնեակ խարբերդցիներ իրենց ճանապարհը շեղած էին դէպի հարաւ, Ուրուկուայ ու Պրագիլ հաստատուելով: Լատին Ամերիկայի կարգ մը երկիրներ հասնող առաջին հայերու ժամանակագրութիւնը, տակաւին վերջնական չըլլալով հանդերձ, հետեւեալ սլատկերը կը ներկայացնէ. 1835՝ Ուրուկուայ¹, 1850-ականներ՝ Պրագիլ², 1860՝ Արժանթին³, 1889-1890՝ Չիլէ⁴, 1894՝ Գուպա⁵, 1896՝ Մեքսիքո⁶: Ի. դարու սկզբնաւորութեան, մեր հաշուարկներով, հարաւային Ամերիկայի հայոց թիւը աննշան ծաւալ մը ունէր՝ շուրջ 100 հոգի, մինչ Միացեալ Նահանգներու հայկական համայնքը արդէն շուրջ 15.000-ի կը հասներ⁷:

¹ Alberto Douredjian y Daniel Karamanoukian, La inmigración armenia en el Uruguay, vol. 1, Montevideo, 1993, p. 79.

² Sarkis Armenio, Armenia, 10 de mayo de 1969 (Պուէնս Այրեսի Արմենիա օրաթերթի սպաներէն յատկում):

³ Irma Avdjian de Arias Duval, Juan Fernando Czetetz (1822-1904), general húngaro y coronel argentino, unti u Vartan Matiossian (խմբ.), Los armenios en América del Sur. Primeras Jornadas de Estudio, Buenos Aires, 1991, p. 19-32:

⁴ Narciso Binayan Carmona, Entre el pasado y el future: los armenios en la Argentina, Buenos Aires, 1996, p. 68-70.

⁵ Մ. Գ. Նիկոլեան, Հայ օրիորդի մը յաջողութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 27 Ապրիլ 1929:

⁶ Գրիգոր Մանուկեան, Լուրեր Մեքսիքոյէն, «Հայրենիք», Պոսթըն, 27 Փետրուար 1924:

⁷ Robert Mirak, Torn Between Two Lands: Arinenians in America 1890 to World War I, Boston, 1983, p. 248.

Մինչ այդ, գաղթականության դեմ զորաւոր հոսանք մը արդէն սկսած էր գոյանալ ԱՄՆ-ի մէջ, որուն հիմնական բաղադրիչները ցեղապաշտ գաղափարներու վրայ հիմնուած գերակայութեան դրսեւորումը եւ աշխատանքի մրցակիցներ ունենալու վախն էին: Այս հակազդեցութեան առաջին գործնական արդիւնքը կ'ըլլար 1882-ին Չինաստանէն գաղթին դրուած արգելքը եւ արդէն Միացեալ Նահանգներ գտնուող չինացիներուն ամերիկեան հպատակութեան մերժումը: Այնուհետեւ, լայնածաւալ բանավեճ մը կը սկսէր այն ժողովուրդներուն մասին, որոնց պատկանելութիւնը սպիտակ, սեւամորթ եւ դեղին ցեղերուն միջեւ կը համարուէր: Թե՛ժ բանավեճը անմիջականօրէն կ'առնչուէր հարստ-արեւելեան եւ արեւելեան Եւրոպայէն, ինչպէս եւ արեւելեան Միջերկրականի աւազանէն գաղթականութեան, որ կը ներառէր հայերը: ԺԹ. դարու վերջին կը սկսէր այդ գաղթականութեան ներհոսքը, որուն թիւը չորս անգամ միլիոնը կ'անցնէր 1901-1910 թուականներուն: Ամենէն բուռն քննադատներէն մէկը՝ ծերակուտական Հենրի Գապոթ Լոճ, 1891-ին կը գրէր, որ այդ գաղթականները կը պատկանէին այնպիսի ցեղերու, «որոնք ամբողջովին օտար են Միացեալ Նահանգներու ժողովուրդի մարմնին», եւ կու գային «այդ ցեղերու ամենէն ստորին ու անգրագէտ դասակարգերէն»¹: 1896-ին, Գաղթականութեան Սահմանափակումի Լիկայի քարտուղար Փրենքթը Հոլ հռետորական կերպով կը հարցնէր. ամերիկացիները արդեօք կ'ուզէին «այս երկիրը բնակեցնել բրիտանական, գերմանական եւ սկանտինաւեան ցեղերով, պատմակա-

¹ Henry Cabot Lodge, The Restriction of Immigration, North American Review, January 1891, p. 32 (սրտատպումը տե՛ս Speeches and Adresses, 1884-1909, Boston and New York, 1909, էջ 247):

նօրէն ազատ, ուժական եւ յառաջադէմ, թո՞ւ սլաւական, լատինական եւ ասիական ցեղերով, պատմականօրէն հալածուած, առհաւական (atavistic) եւ լճացած»¹: Հայերը յականէ յանուանէ յիշուած չէին այս մէջբերումներուն մէջ, որոնց ընդմէջէն կարմիր թելի նման անցնող միտումը ակնյայտ կը դառնար:

Ընթացքին, սահմանափակումները արդէն սկսած էին: Իւրաքանչիւր օտար ճամբորդէ կը գանձուէր գլխահարկ մը, որ յիսուն սենթէն (1882) կը բարձրանար չորս տոլարի (1907), եւ մուտքի արգելքներ կը դրուէին դատապարտեալներու, խենթերու, տկարամիտներու եւ հանրային բեռ դառնալու կոչուածներու (1882), պայմանագրային աշխատատէրներու (1885), աղքատներու, բազմամուսնացածներու եւ վարակիչ հիւանդութիւններ ունեցողներու (1891): Նման սահմանափակումները պիտի շարունակէին աւելնալ. 1903ին կարգիլուէին լուսնոտները, պոռնիկները, արհեստավարժ մուրացիկները, անիշխանականները եւ ահաբեկիչները, իսկ 1907-ին՝ մտային հիւանդները, թոքախտատուները եւ բարոյական յանցագործութեան հեղինակները:

Այս արգելքներէն որեւէ մէկը հայերու մուտքը պիտի չկասեցնէր, եթէ բացառենք թոքախտը, բայց մեր նիւթին հետ սերտ կապ ունեցող արգելքը պիտի հաստատուէր 1897-ին, երբ Գոնկրէսը «վարակիչ ու վտանգաւոր» կը պիտակէր աչքի հիւանդութիւն մը խշտուկը (trachoma), որմէ կը տառապէր թրքահայերու 40 առ հարիւրը եւ որ կուրութեան գլխաւոր պատճառն էր²: Նոյն տարին, Գոնկրէսը կը վաւերացնէր Լոճի նախագիծը՝ գրագիտու-

¹ Մէջբերումը տե՛ս Desmond King, *Making Americans: Immigration, Race, and the Origins of the Diverse Democracy*, Cambridge (Ma.) and London, 2000, էջ 53:

² Mirak, *Torn Between Two Lands*, p. 63-67.

թեան քննութիւն մը հաստատելու համար, որ կրնար նոյնպէս հայերու մուտքը արգելափակել: Սակայն, այդ օրէնքը նախագահ Կրովըր Գլիվլէնտի վերոյին կարծանանար:

Քսաներորդ դարասկիզբին սահմանափակումի միտումները պիտի սկսէին զլուխ ցցել հարաւային ու կեդրոնական Ամերիկայի մէջ: Անոնց յառաջացումին պատճառները տակաւին ուսումնասիրութեան կը կարօտին, թէեւ կարելի է կռահել, որ ցեղապաշտութիւնը, ազգայնականութիւնը եւ անգործութիւնը դեր ունեցած են: Այսպէս, 1890-ին Ուրուկուայ կարգիլէր ասիացիներու, ավրիկեցիներու եւ գնչուներու գաղթականութիւնը: Սակայն, 1906-ին բացառութիւն կընէր սուրիա-լիբանանցիներու պարագային¹, ինչ որ թերեւս պատճառ եղած ըլլայ, որ աւելի ուշ հայերու մուտքը արտօնուէր: 1897-ին, Գոստա Ռիքա կարգիլէր չինացիներու, արաբներու, թուրքերու, սուրիացիներու, հայերու եւ գնչուներու մուտքը այն պատճառաբանութեամբ, որ «վնասակար էին հանրապետութեան յառաջդիմութեան ու բարօրութեան», որովհետեւ «անոնց ցեղին, կեանքի սովորոյթներուն եւ վաշկատուն ոգիին պատճառով, որ անհամատեղելի է կարգ ու կանոնի եւ աշխատանքի միջավայրի մը հետ, անոնք բնախօսական այլասերումի եւ ծուլութեան ու անարդարացումի նպաստաւոր աղբիւր մը պիտի ըլլան երկրին համար»²: Սակայն, այս որոշումը 1910-ին յետս կը կոչուէր վերոյիշեալ բոլոր ժողովուրդներուն համար (գնչուներու բացառութեամբ), որոնց կարտօնուէր երկիր մուտքը երկու նախապայմաններով՝ «լաւ

¹ Luis Seguí González y Alejandro Rovira, Contribución al estudio del derecho migratorio uruguayo, Montevideo, 1939, p. 59.

² Steven Palmer, From Popular Medicine to Medical Populism: Doctors, Healers, and Public Power in Costa Rica, 1800-1940, Durham and London, 2003, p. 146.

դաստիարակութիւն» եւ դրամագլուխ մը¹: 1909-ին Կուաթեմալա կարգիլէր ասիացիներու մուտքը²:

Ապտիւլ Համիտի վարչակարգը արգիլած էր Օսմանեան կայսրութեան հայերու մէկնումը մինչեւ սահմանադրութեան հռչակումը (1908): Հետեւաբար, ով որ ձեռնարկէր երկրէն դուրս ելլել, բայց չկարողանար Միացեալ Նահանգներ մտնել, վերադարձի կարելիութենէն զուրկ կը մնար: Այս պատճառով, ոմանք կը գերադասէին հարաւային Ամերիկա երթալ, զիսաւորաբար Արժանթին, ապա՝ Պրագիլ եւ Ուրուկուայ: Արժանթինը դէպի Ամերիկա գաղթի զիսաւոր հասցէն էր Միացեալ Նահանգներէն ետք. 1869-1914 ժամանակաշրջանին, երկրի բնակչութեան օտարականներու համեմատութիւնը 12,1 առ հարիւրէն պիտի բարձրանար 30,3 առ հարիւրի: Մակայն, թէեւ 1876-ի գաղթականութեան օրէնքին նպատակը երկրագործներու ներգրաւումն էր, նոյն տարին վաւերացուած հողային օրէնքը թոյլ կու տար մինչեւ 80.000 քառակուսի մեթր վաճառել միւլենոյն անձին, ինչ որ երկրագործութեան զարգացումի արգելք պիտի հանդիսանար՝ հողատիրութեան սակաւաթիւ ձեռքերու մէջ կեդրոնացումով: 1914-ին Արժանթինի ազարակներու թիւը 66.000 էր, իսկ գրեթէ չորս անգամ աւելի մեծ Միացեալ Նահանգները գրեթէ հարիւր անգամ աւելի ազարակ ունէր (6.000.000)³: Այսուհանդերձ, արժանթինեան կառավարութիւնը աժան, դիւրա-

¹ Roberto Marín-Guzmán, *A Century of Palestinian Immigration into Central America: A Study of Their Economic and Cultural Contributions*, San José de Costa Rica, 2000, p. 62-63.

² Ignacio Klich, "Les sources concernant les libanais et autres Moyen-Orientaux en Argentine", տե՛ս Michel Nancy et Elisabeth Picard (խմբ.), *Les Arabes du Levant en Argentine*, Aix-en-Provence, 1998, p. 112:

³ Raúl Puigbó, *La identidad nacional argentina y la identidad latinoamericana*, Buenos Aires, 1998, p. 87, 100.

մատչելի ու առատ հունձք տուող հողերու մասին քարոզչութիւնը շարունակած է արտասահմանի մէջ մինչեւ 1920-ական թուականները: Նոյնիսկ այդ քարոզչութենէն հրապուրուած հայերը, սակայն, երբեք երկրագործ դարձած չեն: Այս երետոյթը կրկնուած է Ուրուկուայի եւ Պրագիլի մէջ՝ հողատիրութեան միեւնոյն աննսլաստ պայմաններուն բերումով:

Գաղթականութեան աւելի բարենպաստ պայմաններու կողքին, Արժանթինի առողջապահական օրէնքները նուազ խիստ էին, քան ԱՄՆ-ի պարագային: 1904-1913-ին, շուրջ 2.400.000 գաղթականներու ընդհանուր թիւէն միայն 56 արարներու Արժանթին մուտքը կ'արգիլուէր առողջապահական պատճառներով, մինչ Միացեալ Նահանգները միայն հայերու պարագային 577 հոգիի մուտքը կը մերժէր միեւնոյն պատճառներով՝ 1899-1915 թուականներուն¹: 1905-էն ետք, Արժանթինը լայնօրէն կը գերազանցէր Միացեալ Նահանգները միջինարեւելեան գաղթականութեան թիւով:

Առողջապահական պայմաններու տարբերութիւնը 1912-ին Պուէնոս Այրէսէն թղթակից մը կը մղէր գրելու պոլսահայ մամուլին մէջ. «Պուէնոս Այրէսն ալ, իբր երկրորդական գաղթավայր, կը սկսի Հայուն դառնալ Հիւսիսային Ամերիկայէն յետոյ, առժամանակեայ քաւարան անոնց համար՝ որ մեծ մեծ յոյսեր դնելով Հիւսիսային Ամերիկայի վրայ, ճամբայ կ'ելլեն՝ բայց “նօ պոնօ” ըլլալով կ'ես ճամբան, կուգան մեղքերնին քաւելու հոս, մինչեւ որ

¹ Ignacio Klich, “Criollos and Arabic Speakers in Argentina: An Uneasy Pas de Deux, 1888-1914”, տե՛ս Albert Hourani and Nadim Shehadi (խմբ.), *The Lebanese in the World: A Century of Emigration*, London, 1992, p. 272. Գայանէ Յակոբեան, Հայերի մուտքը ԱՄՆ, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երևան, 12, 1986, էջ 45:

ո եւ է կերպով չուեն դէպի Հիւսիս, դէպի Երկրային Արքայութիւնը...»¹:

Ըստ 1895-ի մարդահամարին, 876 «թուրք» կար Արժանթինի մէջ, իսկ անոնց թիւը յաջորդ մարդահամարին (1914) 64.369-ի կը հասնէր, գրաւելով հինգերորդ տեղը՝ սպանացիներէն, իտալացիներէն, ֆրանսացիներէն եւ «ռուսերէն» (= հրեաներ) ետք²: Հայերը կը կազմէին յիշեալ թիւին շուրջ 5 առ հարիւրը (2.000-3.000 հոգի)³, առիւծի բաժինը վերապահուած ըլլալով արաբներուն: Այդ ժամանակ բուն թուրքեր փաստօրէն չկային (եմիր Էմին Արսլանը՝ 1910-ին ժամանած օսմանեան առաջին դեսպանը Արժանթինի մէջ, լիբանանեան տիրոջի էր): Ինչպէս եւ լատինամերիկեան այլ երկիրներու մէջ, օսմանեան քաղաքացիները (արաբներ, հայեր, հրեաներ եւ ուրիշներ) «թուրք» անունով ծանօթ էին: Գումարելով Պրագիլ, Ուրուկուայ եւ Չիլէ ապրող շուրջ հազար հոգի, հայերը կը շարունակէին չնչին համեմատութիւն մը ներկայացնել ի բաղդատութիւն 1914-ին ԱՄՆ ապրող իրենց անլի բան 65.000 հայրենակիցներուն⁴, նոյնիսկ եթէ քառորդ դարու ընթացքին 30 անգամ բազմապատկուած էին:

Ա. Աշխարհամարտին սկիզբէն ետք, արժանթինեան տնտեսական տազնապին պատճառով, համայնքին կէտը զաղ-

¹ Կ. Պասօ [Պապոյեան], Հայը Պուէնոս Այրէսի մէջ, Ազատամարտ, 16/29 Մայիս 1912: «No bono» սպաներէն «no bueno» («ոչ լաւ») բառերուն աղաւաղուած ձեւն է:

² María Cristina Flores, La integración social de los inmigrantes. Los llamados turcos en la ciudad de Córdoba 1890-1930, Córdoba 1996, p. 28-29.

³ Ազգային լուրեր, Կոչնակ, 14 Ապրիլ 1914, էջ 166. Յ. Պ. Պօղոսեան, Հաճընի ընդհանուր պատմութիւն եւ շրջակայ Գօգան-Տադի հայ գիւղերը, Լոս Անճելըս, 1942, էջ 795:

⁴ Mirak, Torn Between Two Lands, p. 248.

թած կըլլայ Միացեալ Նահանգներ¹, ուր 3.620 հայերու ներգաղթը արձանագրուած է 1915-1918-ին, մինչդեռ նոյն ժամանակաշրջանին հայեր չեն մտած Արժանթին²: 1921-ին, ամերիկահայ համայնքը 90.000 հոգի կը հաշուէր, իսկ 1922-ի վերջերուն, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը 3.000 հայ կը հաշուէր հարաւային Ամերիկայի մէջ³:

1917-1924 եօթնամեակը սահմանափակումի գազաթնակէտը կը հանդիսանար Միացեալ Նահանգներու մէջ, սնելով ազգայնական ու մեկուսապաշտ (isolationist) միտումներէ, ինչպէս եւ 1890-ական թուականներէն ծաղկող ցեղապաշտութենէ: Առաջին բեկումնային պահը 1917-ի օրէնքի վաւերացումն էր, որ գրագիտութեան քննութեան պարտադրանքը կը դնէր բոլոր գաղթականներուն վրայ: Անոր հետեւող առաջին, ժամանակաւոր մասնաբաժնի («քոթա», անգլ. quota) օրէնքը 1921ին (իւրաքանչիւր ազգութեան կը յատկացուէր, ըստ 1910-ի մարդահամարին, համայնքի թիւին 3 առ հարիւրին համարժէք անձերու մուտքի արտօնութիւն) եւ երկրորդ «քոթա»-ի օրէնքը 1924ին (համայնքի թիւին 2 առ հարիւրը՝ ըստ 1890-ի մարդահամարին) կոչուած էին նուիրագործելու դռներու փակումը թխամորթ ու սեւահեր արեւելեան ու հարաւային եւրոպացի եւ արեւելեան միջերկրականցի գաղթականներու առջեւ (որոնց տեղաշարժը ամենէն աւելի հրատապ էր այդ օրերուն), եւ Միացեալ Նահանգները գլխաւորաբար վերապահելով սպիտակամորթ, խարտիշահեր հիւսիսային եւրոպացիներու

¹ Հայկ Մոսիօֆեան, Պուէնոս Այրէսի գաղութի նախապատմականը, «Հայ Կեդրոն», Յունուար 1933, էջ 6:

² Kim Hekmian, Armenian Immigration to Argentina: 1909-1938, Armenian Review, Spring 1990, p. 88.

³ Ազգային կէանք, «Հայաստանի Կոչնակ», Նիւ Եօրք, 20 Յունուար 1923, էջ 86:

մուտքին, ինչ որ բնիկապաշտներու աւելի քան երեսնամեայ ցանկութեան իրագործումն էր: Վերոյիշեալ գաղթականներու տարեկան չնչին թիւ մը կ'արտօնուէր: 1921-1924-ին Հայաստանի յատկացուած ամենամեայ թիւը 230-էն կ'իջնէր 124-ի, իսկ Թուրքիոյ թիւը՝ 2388-էն 100-ի¹:

1921-ի եւ 1924-ի օրէնքները կը գուգադիպէին Հայկական Հարցի քաղաքական փլուզումին եւ Մեծ Եղեռնի վերջին դրուագներուն հետ: Գաղթականները եւ տարագիրները Միացեալ Նահանգներ մուտք գործելու անկարելիութեան դէմ յանդիման կը գտնուէին: 1920-ականներուն ընթացքին, անոնց մէկ փոքր մասը Գուպան ու Մեքսիքոն իբրեւ առժամեայ հանգրուաններ կ'ընտրէր, սպասելով ԱՄՆ մտնելու առիթի մը, որ լաւագոյն պարագային պիտի իրականանար տարբեր կողմնակի միջոցներով, ինչպէս ամերիկահայերու հետ ամուսնութիւնը եւ Ֆլորիտայէն կամ ամերիկեան հարաւ-արեւմտեան նահանգներէն ապօրինի մուտքը: Գուպայի հայոց թիւը, ըստ գնահատումներու, 1925-1932-ին 1.500-էն կ'իջնէր մէկ երրորդի²: Բ. Աշխարհամարտէն ետք, Գուպայի հայերուն մեծ մասը Միացեալ Նահանգներ մտած է յատուկ երդմնագրերու (affidavit) շնորհիւ, ինչ որ առաջնորդած է համայնքի կազմալուծումին,³ մինչ Մեքսիքոյի հայերը (1.000 հոգի՝ 1926-ին⁴, 300 հոգի՝ 1947-ին)⁵ նման վերջնական տեղաշարժի դիմած չեն:

¹ Statistical Abstract of the United States 1931, Washington, D.C., 1931, p. 104.

² Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 577-578. Հայաստանի Ազգային Արխիւներ, ֆ. 400, ց. 1, գ. 3468 (ըստ Ամերիկայի հայոց թեմի վիճակագրութեան 1932-ին 430 հայ կար Գուպայի մայրաքաղաք Հաւանայի մէջ):

³ Ոսկա՝ Յովհաննէսեան, Արեան եւ պայքարի մէջէն, Նիւ Եորք, 1965, էջ 139:

⁴ Լ. Պօտոսեան, Նամակ Մեքսիկոյէն, «Հայրենիք», Պօլսթըն, 5 Փետրուար 1926:

Նոր Աշխարհ եկողներուն մեծ մասը արդէն ընտրած էր հարաւի կողմը: Պաշտօնական վիճակագրութիւններ տրամադրելի չեն 1920-1930 թուականներուն Արժանթին, Պրագիլ եւ Ուրուկուայ մտնող հայերու թիւին մասին: Սակայն, 1931-ին անոնց թիւը շուրջ 22.000 հոգիի կը հասներ (15.000՝ Արժանթին², 3.000՝ Պրագիլ³, 4.000՝ Ուրուկուայ)⁴: «Գաղթականութեան շղթան» (chain migration) իր դերը կատարած է այս երկիրներուն ընտրութեան մէջ. նախապէս ժամանած հարազատներ կամ միեւնոյն քաղաքէն կամ գիւղէն ընկերներ կամ ծանօթներ կանչած կամ հրապուրած են նորեկները: Երեք երկիրները տնտեսական բարգաւաճումի ժամանակաշրջան մը վայելած են մինչեւ 1929-1930-ի համաշխարհային տնտեսական տագնապը, երբ գաղթականութեան սահմանափակումները սկսած են: Արժանթինի եւ Ուրուկուայի կլիմայական ու տնտեսական պայմանները նման էին, եւ Արժանթինի կողմէ առողջապահական պատճառներով մերժուած կարգ մը հայեր պիտի ընդունուէին դրացի երկրին կողմէ:

Գուպայէն ու Մեքսիքոյն դուրս, որոնց ընտրութեան պատճառը ԱՄՆ-ի հետ կապուած էր, Լատին Ամերիկայի միւս երկիրները հայկական գաղթականութեան թիրախ չհանդիսացան: Գլխաւոր գործօններու շարքին էին արեւադարձային կլիման, տնտեսական ու ընկերային զարգացումի պակասը եւ քաղաքական անկայունութիւնը: Պէտք է հաշուի առնել նաեւ ցեղային հիմ-

¹ Մեքսիկոյի հայ գաղութը, «Հայրենիք տարեգիրք», Պոսթըն, 1947, էջ 248-250:

² Յովհաննէս քնյ. Ամիրքեց, Հարաւ. Ամերիկայի հայ գաղութը, «Ընդարձակ Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցի», Սթամպուլ, 1932, էջ 282:

³ Անդ, էջ 280:

⁴ Ն. Ա. [Նուպար Անարունեան], Մոնթեվիտէոյի հայ գաղութի վիճակագրութիւնը, Արմենիա, 7 Մայիս 1932:

քերով գաղթականութեան արգելք դնելու հրամանագրերը, որոնք յարիր էին 1930-ական թուականներու համաշխարհային միտումներուն, նոյնիսկ երբ այդ երկիրներուն բնակչութեան մեծամասնութիւնը ապիտակամորթ չէր: Առնուած միջոցները ցոյց կու տան, որ հայերը բոլոր անյայտ անուն մը չէին այդ հեռաւոր ավերտուն վրայ: Կարելի է պատկերացնել, որ յիշուելու պարագային, անոնք յիշուածներուն շարքին մաս պիտի կազմէին:

Այսպէս.

- 1929-ին, Էլ Սալվատոր միջին արեւելքցիները անցանկալի կը նկատէր, իսկ 1930-ին կը վճռէր, որ թուրքերը, պաղեստինցիները, արաբները, սուրիացիները եւ լիբանանցիները պէտք է ամենամեայ գրանցումի ենթարկուէին, իրատունք չունենալով իրենց անունները սպաներէնի թարգմանելու կամ սպանացնելու¹:

- 1929-ին, Հոնտուրաս արաբներէ, թուրքերէ, սուրիացիներէ, հայերէ, սեւամորթներէ եւ չինացիներէ 2.500 տոլարի հսկայական կանխավճար մը կը պահանջէր, իսկ 1934-ի գաղթականութեան օրէնքով, միայն երկրագործութեամբ զբաղելու նպատակ ունեցող արաբները, թուրքերը, սուրիացիները, հայերը, պաղեստինցիները, չեխերը, լիբանանցիները եւ լեհերը կրնային երկիրը մտնել²:

- 1930-ին, Նիքարակուա կարգիլէր չինացիներու, թուրքերու, արաբներու, սեւամորթներու եւ գնչուներու մուտքը: Գաղթա-

¹ Klich, "Les sources", p. 112.

² Darío Euraque, Formación nacional, mestizaje, y la inmigración árabe palestina a Honduras, 1880-1930, Estudios Migratorios Latinoamericanos, 26, 1994, p. 52.

կանութեան օրէնքին այս յօդուածը ի զօրու պիտի մնար մինչեւ 1982¹:

- 1935-ին Գոլոմպիա կը թոյլատրէր հինգ հայերու, հինգ պուկարացիներու, տասը լիբանանցիներու, տասը սուրիացիներու, տասը պաղեստինցիներու եւ նոյնքան թիւով կարգ մը ուրիշ ազգութիւններէ մարդոց տարեկան մուտքը²: 1937-ին, կարգիլուէր տասնհինգ ազգութիւններու ներգաղթը, ներառեալ եգիպտացիները, յոյները, պաղեստինցիները, պուկարացիները, ռումանացիները, ռուսերը, սուրիացիները եւ թուրքերը³: Հայերը յիշուած չէին այս ցուցակին մէջ, բայց 1968-ին Գանատա հրատարակուած տարեգիրք մը կը յայտարարէր, թէ «սեւամորթերն ու հայերն ալ սովորաբար չեն ընդունուիր»⁴:

- 1936-ին Կուաթեմալա օրէնքով կարգիլէր, որ թուրքերը, սուրիացիները, լիբանանցիները, արաբները, պաղեստինցիները, հայերը, եգիպտացիները, պարսիկները, աֆղանները, հնդիկները, լեհերը եւ ամերիկեցիները նոր գործարաններու, ամբարներու, խանութներու եւ առեւտրական կեդրոններու սեփականատէր կամ վարիչ ըլլային, կամ անոնց մասնաճիւղեր բանային⁵:

- 1938-ին, Փանամա կարգիլէր կարգ մը ժողովուրդներու ներգաղթը (չինացիներ, գնչուներ, հայեր, արաբներ, թուրքեր, հնդիկներ, սուրիա-լիբանանցիներ, պաղեստինցիներ, թրքական

¹ Rodolfo Sandino Argüello y Marvin Ortega, Aspectos jurídicos de las migraciones en Nicaragua, Managua, 1991, p. 8 (www.oim.web.cl/72.507-08).

² Pilar Vargas Arana y Luz Marina Suaza Vargas, Los árabes en Colombia: del rechazo a la integración, Bogotá, 2007, p. 54.

³ Klich, Les sources, p. 112.

⁴ The West Indies and Caribbean Yearbook, Toronto, 1968, p. 562.

⁵ Klich, Les sources, p. 112.

ծագումով հիւսիս-ափրիկեցիներ եւ ոչ-սպանախօս սեւամորթներ), իսկ 1941-ի սահմանադրութիւնը կը վերահաստատէր, որ «սեւամորթ ցեղը որուն բնիկ լեզուն սպաներէն չէ, դեղին ցեղը եւ Հնդկաստան, Փոքր Ասիա եւ Հիւսիսային Ափրիկէ ծագում ունեցող ցեղերը արգիւտած գաղթականութիւն են»¹:

Արժանթինի, Պրագիլի եւ Ուրուկուայի արդէն հաստատուն համայնքներու, ինչպէս եւ Չիլէի փոքրաթիւ խմբաւորումի մը ներկայութիւնը, պատճառ կը դառնար, որ 1946-1960-ին շուրջ 15.000 հայեր գաղթէին այդ երկիրները, որպէս հետեւանք Յունաստանի քաղաքացիական պատերազմին ու գնաճին, Ֆրանսայի անկայուն քաղաքական վիճակին, Պալքաններու համայնավար գրաւումին, արաբական ազգայնականութեան վերելքին, արաբ-իսրայէլեան 1948-ի պատերազմին եւ Սեպտեմբեր 1955-ի Թուրքիոյ յոյներու եւ հայերու դէմ պետականօրէն կազմակերպուած խռովութիւններուն: Նոր համայնք մը պիտի ստեղծուէր Վենեզուելայի մէջ՝ գլխաւորաբար Սուրիայէն գաղթականներով: Մակայն, լատինամերիկեան երկիրներուն տնտեսա-քաղաքական անկայունութիւնը պատճառ եղած է, որ Միացեալ Նահանգներու «քոթայի օրէնք»ի ջնջումէն ետք (1965), 1960-1980-ական թուականներու Միջին Արեւելքի, Իրանի եւ Խորհրդային Հայաստանի գաղթալիքները հիւսիս տանող հին ճանապարհին վերադառնային:

Ինչպէս ամբողջ հայաշխարհի տարածքին, Լատին Ամերիկայի հայերու թիւին մասին ստոյգ վիճակագրութիւն չկայ: Մեր մօտաւոր գնահատումով, անոնց թիւը կը հասնի 60.000-70.000-ի

¹ Los aspectos jurídicos e institucionales de las migraciones en la República de Panamá, Panamá. 1992, p. 10-13.

Արժանքինի մեջ, 20.000-25.000-ի՝ Պրագիլի մեջ, 15.000-ի՝ Ուրուկուայի մեջ, 4.000-ի՝ Վենեզուելայի մեջ, 2.000՝ Չիլեի մեջ, եւ 1.000՝ Մեքսիքոյի մեջ¹: Եթէ Միացեալ Նահանգներու զաղթականական քաղաքականութիւնը տարբեր ձեւաւորում մը ստացած ըլլար, հաւանաբար այս համայնքներուն պատմութիւնն ալ ուրիշ ձեւով պիտի գրուէր:

THE IMMIGRATION POLICY OF THE UNITED STATES AND THE FORMATION OF THE ARMENIAN COMMUNITIES IN LATIN AMERICA

(Summary)

VARTAN MATIOSSIAN

It is a well-known fact in American history that the relentless propaganda of nativist and nationalist groups contributed to the passing of a series of immigration laws by the U.S. Congress between 1882 and 1924. This legislation accomplished the main goal pursued by those groups: the almost complete ban of so-called undesirable foreign immigration to the United States, which was essentially enforced until 1965. The historical and political process that ended with the passage of the two "quota laws" approved in the 1920s should be analyzed in order to contextualize the formative years of the Armenian communities in Latin America from Argentina to Mexico.

¹ Հմմտ. Վարդան Մատթէոսեան, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005, էջ 325-333:

ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԸ XX-XXI ԴԴ. ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՔԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՄՆ-ի հայերի դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ (XX դ. սկիզբ)

ԱՄՆ-ի հայությունը, որոնց թիվն այդտեղ ստվարացել էր XIX դ. վերջին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված պարբերական ջարդերի (1894-1896 թթ., 1909 թ.) և Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) հետևանքով, անցյալ դարասկզբին ընդհանուր առմամբ ընդունել և շարունակել է հայ-ռուսական բարիացական և իրատեսական հարաբերությունները: Այն արտահայտվել է ինչպես Առաջին աշխարհամարտի (1914-1918 թթ.) տարիներին Կովկասյան կամավորական շարժմանն աջակցելու նպատակով նրանց ներգրավվածությամբ, այնպես և առանձին քաղաքական գործիչների դիրքորոշմամբ:

Այսպես, 1914 թ. նոյեմբերին Բոստոնում հրավիրված հայ ազգային չորս կուսակցությունների (Սոցիալ դեմոկրատ հնչակյան -- ՄԴՀԿ, Հայ հեղափոխական դաշնակցական -- ՀՅԴ, Վերակազմյալ հնչակյան -- ՎՀԿ, Հայ սահմանադրական ռամկավար -- ՀՍՌԿ) համատեղ գործունեության արդյունքում Միջկուսակցական խորհրդաժողովին հաջողվել էր ԱՄՆ-ի Կոնգրեսի աջակցությամբ Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպանի միջոցով ստանալ ցարական կառավարության համաձայնությունն ու հո-

վանավորությունը՝ Կովկասում ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստ ամերիկահայ երիտասարդ կամավորներ առաքելու և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ¹, ինչպես նաև ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպանի միջոցով զգալի նյութական միջոցներ փոխանցել Կովկաս՝ «մի միայն երկիր մեկնած կամ մեկնելիք Հայ կամավորներուն անխտիր»²:

Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական ցարական հրամանատարության ներքո Կովկասում ընթացող կամավորական շարժմանը (1914-1916 թթ.) մասնակցելու նպատակով ԱՄՆ-ից, Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Պարսկաստան և այլն) Կովկաս էր ժամանել աշխարհով մեկ ցրված շուրջ 3.000 հայ³: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարութիւն վեց վիլայեթներու և անոնց սնբաժան մասը կազմող Կիլիկիայի»⁴ Ռուսաստանի հզօր հովանավորութեան տակ»⁵:

¹ Ճիգմեճեան Մ. Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 198, 199: Համերաշխական բանակցութիւններ (1914-1915), Պոսթօն, 1916, էջ 5:

² Ճիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 202:

³ Դեմոյան Հ., Հայկական ազգային խորհրդանշաններ. Զինանշաններ, դրոշներ, պարգևներ, Երևան, 2012, էջ 266:

⁴ Նկատի ունի Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան Թուրքիայի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) հետևանքով ավելի քան 1,5 մլն կոտորված և բռնի տաղահանված, հրաշքով փրկված և աշխարհի տարբեր երկրներում հայտնված հայության արևմտահայ հատվածի պատմական բնօրրանը Արևմտյան Հայաստանն իր 6 վիլայեթներով (Էրզրում-Կարին, Վան, Բիթլիս-Քաղեշ, Դիարբեքիր-Ամիդ, Խարբերդ, Սեբաստիա) և Հայկական Կիլիկիայով:

⁵ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Երևան, 1965, էջ 187: Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 81:



ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպության
հիմնադիր-նախագահ Միհրան Սվազյանը (Սվազլը)

Ամերիկահայ քաղաքական գործիչներից հիշատակության է արժանի ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպության՝ Ամերիկայի հայ ազգային միության (1917-1922 թթ., Բոստոն) հիմնադիր, արևմուտքում ռուսում, կրթություն ստացած, բրիտանական և ամերիկյան քաղաքական շրջանների հետ սերտ գործակցած, արևմտական Միհրան Սվազյանը (Սվազլը)¹, որի հայացքները, սակայն, կտրուկ և համարժեք փոփոխության են ենթարկվել Լոզանի կոնֆերանսից (1923 թ.) հետո, երբ հոդս են ցնդել Արևմուտքի երկրների հետ կապված հայության բոլոր հույսերը: Լինելով արևմտյան հասարակության մեջ հասակ առած անձնա-

¹ Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Ավագյան Ք., Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2003, № 4, էջ 98-104:

վորություն, հետևաբար և արևմուտքի զաղափարների կրող, այդուհանդերձ, իրատես Մ. Սվազյանն իր հայացքն արևմուտքից ուղղել է դեպի Ռուսաստան, որի հետ փաստացի Արևելյան Հայաստանն արդեն իր հույսերը կապել էր դեռևս 1828 թվականից, և որի իրականացման համար բազմաթիվ հայ (ընդ որում՝ ինչպես արևելահայ, այնպես էլ՝ արևմտահայ) ռեալիստ-լուսավորիչներ, գրող-հրապարակախոսներ, հայագետ-մանկավարժներ, դեմոկրատ-մտավորականներ, հասարակական-քաղաքական, ազգային-ազատագրական շարժման գործիչներ վաղուց երազում էին, բարձրաձայնում և գործում էին այդ ուղղությամբ։ Հայ ժողովրդի ֆիզիկական ապահով գոյության և ազգային անվտանգության պահպանումը Ռուսաստանի հետ կապող հայազգի գործիչներից էին Իսրայել Օրին (1659-1711 թթ.), Հովսեփ Էմինը (1726-1809 թթ.), Խաչատուր Աբովյանը (1809-1848 թթ.), Միքայել Նալբանդյանը (1829-1866 թթ.), Գրիգոր Արծրունին (1845-1892 թթ.), Տիգրան Երկաթը (1870-1899 թթ.) և այլք։

Ահա թե ինչ է գրել Միհրան Սվազյանն իր «Մեր ուղղությունը» հոդվածում՝ իրատեսորեն գնահատելով անցյալի փորձառությունն ու պատմական իրողությունը.

«Եթե Աստուած գոյութիւն չունենար պէտք էր զայն ստեղծել, կ'ըսէր յաճախ 18-րդ դարու նշանաւոր փիլիսոփայ մը [Լեմբերտոն]։ Մենք Հայերս ալ կրնանք իւրացնել ուրիշ ասացուածք մը, «Եթե Ռուսիան գոյութիւն չունենար, պէտք էր զայն ստեղծել», քանզի զայս կը պահանջէ Հայութեան գերագոյն շահը, լինելու կամ չլինելու հարցը։ Բարեբախտաբար մեզ համար ստեղծելու պէտք չկար, քանզի Ռուսիան հոն էր, մեզ մօտ, մեզի դրացի եւ

որուն էութիւնը այնքան անհրաժեշտ էր մեզի համար որքան ջուրը գոր կը խմենք եւ օդը գոր կը շնչենք:

Քննադատութիւնը դիւրին է...: Անոնք որ կը քննադատեն Ռամկ. Ագատական Կուսակցութեան Ռուսական ուղղութիւնը եւ կամ *օրիէնտացիան* ... պետք է մեզի ըսեն թէ՝ ի՞նչ պիտի դնեն ատոր տեղը: Հայաստանի ժողովուրդը, եւ անոր ներկայ պետական առաջնորդները իւրացուցին զայն եւ գոհ են: Ժողովուրդը հանգիստ է, ապահով, ինքնօրէն կեանք մը կը վայելէ: Իր լեզուն, իր մշակոյթը կրնայ զարգացնել, իր ազգային եկեղեցին համեմատաբար ազատ է, եւ յառաջդիմութիւնը՝ ընդհանուր: Իրերը կրկնելու պէտք չկայ քանզի ամենուս ծանօթ է:

Բայց վերջապէս այս ուղղութիւնը նոր ալ չէ: Բաւական հին է: Միայն թէ չգտնուեցան պէտք եղած ազդակները զայն իրագործելու եւ ատկէ քաղելու համար լուր օգուտները գոր կարելի էր քաղել՝ լուրջ եւ հեռատես քաղաքականութեամբ մը: Իսրայէլ Օրիէն մինչեւ Գրիգոր Արծրունի այդ մեծ մարդոց նշանաբանը եղած է՝ «Ռուսիոյ կապել Հայութեան բախտը»: Երկուքն ալ հմուտ էին միջազգային խնդիրներու, երկուքն ալ, եւ դեռ ուրիշներ, հետեւած էին Ռուսիոյ յառաջխաղացութեան բոլոր փուլերուն եւ ըմբռնեցին թէ ի՞նչ օգուտներ կրնան ապահովել հայ ազգին ապագայ գոյութիւնն ու զարգացումը երաշխաւորելու համար»¹:

Այնուհետեւ Մ. Սվազլանը, անդրադառնալով Հայ Դատի սկզբնավորմանը, քաղաքական կողմնորոշման հարցում հայութեան տարբեր հատվածների միջև առկա մշտական հակասություններին և վերլուծելով ռուս ժողովրդի պատմա-կրոնա-հոգեբանա-

¹ Ի յիշատակ Միհրան Սվազլեանի. Նօթեր եւ տպաւորութիւններ, քաղաքական և ազգային տեսութիւններ, Պոստոն, 1944, էջ 5-6:

կան առանձնահատկությունները, բալկանյան և մերձավորարևելյան տարածաշրջաններում Ռուսաստանի ռազմական ուժի ազատարար նշանակությունն ու գերիշխանության անհրաժեշտությունը՝ եզրահանգել է. «...Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդներուն համար փրկութիւն չկայ մինչեւ որ Ռուսիա իր թաթը չդնէ Մերձաւոր Արեւելքի վրայ եւ շարունակէ իր աւանդական դերն ու գործը»:

Կրնայ ըսուիլ առանց չափազանցութեան թէ Պալքանեան ազգերու ազատագրութիւնը Ռուսիոյ միջամտութեամբ ձեռք բերուած է: Նոյն իսկ Յունաստան, որուն կէս-անկախութիւնը որոշուեցաւ 1827-ին Լոնտոնի բրթօթօլով – ստորագրուած ընդմէջ Անգղիոյ եւ Ռուսիոյ – պիտի չազատէր Թուրքիոյ ճիրաններէն, եթէ 1828-ին Ռուսիոյ բանակները չհասնէին Ադրինապօլիս եւ չստիպէին Սուլթանը հնազանդելու պետութեանց պահանջներուն: Պատմութիւնը անդառնալի է եւ կ'արժէ անդրադառնալ միշտ այս շահեկան նիւթին»¹:

Վերլուծելով Լոզանի կոնֆերանսից հետո հայության համար ստեղծված քաղաքական նոր իրավիճակը՝ Մ. Սվազյանը Հայաստանի և սփյուռքի հայությանը կոչ է անում սրբագրել անցյալի ու ներկայի ազգային բացթողումները և վերանորոգված հանձնառությամբ պատրաստ լինել դիմագրավել քաղաքական նոր մարտահրավերները.

«1890-էն մինչեւ Լոզան ուր «մեծ պետութիւնները» քաղաքակրթութեան իրաւունքները ոտնակոխ ըրին, ազգային որոշ քաղաքականութիւն մը պակսեցաւ Հայոց: ...Անստուգութիւն, անհեռատեսութիւն, ներքին պառակտումներ եւ խուճապ պատեցին

¹ Նոյն տեղում, էջ 7-8:

մեզ, եւ մեր ազգային նաւը, առանց ղեկի ծովու: Կէկոծեալ ակիքներէն տարուեցաւ հոս ու հոն: Բայց նաեւ եկաւ վերջապէս խարխախ նետեց ինչպէս Նոյեան Տապանը, որոշ տեղ մը եւ ժողովուրդին երկու երրորդը փրկուեցաւ:

Պէտք է գիտնալ արժէքը այս նոր կացութեան: Մեր յարաբերութիւնները Ռուսական ազդակին հետ հարկ է ամրապնդել: ...Լօգանը ռումբ մըն էր որ մեր մէջ նետուեցաւ. բայց վիճաբանութիւն կը շարունակուի եւ պիտի շարունակուի, այն լայն գիծերուն վրայ, զոր գծած է մեր կառավարութիւնը մինչեւ այն օրը երբ ցիրուցան Հայութիւնը պիտի գայ բոլորուիլ ներկայ ազատ Հայաստանի շուրջը եւ պիտի պատսպարուի ազատութեան ծառին թելերուն ներքեւ»¹:

Աշխարհաքաղաքական զարգացումները ցույց են տալիս, որ իրավաբան-դիվանագետ Միհրան Սվազլյանի խոսքերն ու գործերը, ինչպէս նաև հույսերն ու հուսախաբությունները, երազանքներն ու ակնկալիքները մինչև օրս էլ արդիական են, քանի որ հիմնված են պատմական ճակատագրի, գիտակցված ազգային նպատակի, սկզբունքի և գործնական հայրենասիրության վրա:

ԱՄՆ-ի հայերի երկակի դիրքորոշումը ՄՍՀՄ-ի և Ռուսաստանի նկատմամբ (1920 թ. - մինչև մեր օրերը)

Եթե նախկինում հայ-ռուսական դրական հարաբերությունները ուղիղ համեմատական էին սփյուռք-Հայաստան դրական հարաբերություններին, ապա XX դ. համաշխարհային ապարեզում, այդ թվում նաև Ռուսաստանում և Հայաստանում տեղի ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական գործընթացները (1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջում, 1920 թ. նո-

¹ Նոյն տեղում, էջ 8-9:

յեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացում, 1939-1945 թթ. Երկրորդ աշխարհամարտ, 1921-1936 թթ., 1946-1949 թթ., 1962-1982 թթ. հայրենադարձություն, 1946 թ.-ից Սառը պատերազմ, 1991 թ. ԽՍՀՄ փլուզում և Հայաստանի անկախացում, հետ-խորհրդային ճգնաժամ, արտագաղթ, գլոբալացում և այլն) քաղաքական անջրպետ են բացել Հայաստանի, հետևաբար և Ռուսաստանի նկատմամբ սփյուռսահայ, մասնավորապես՝ ամերիկահայ, առանձին կառույցների հարաբերություններում: Արդյունքում Հայաստանի, հետևաբար նաև՝ Ռուսաստանի նկատմամբ սփյուռքի երբեմնի բարիացական և իրատեսական գործակցությունը վերածվել է միջազգային քաղաքականությունից կախված գործունեության՝ մեծապես վնասելով ազգային, բազմավարական շահերին:

Այսպես, Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված աշխարհաքաղաքական նոր պայմաններում, տարբեր երկրներում սփռված հայության ազգային-հասարակական կյանքն ընթացել է երկու հակադիր գաղափարական ճակատների բուռն պայքարի պայմաններում, որն առավել խորացել է Երկրորդ աշխարհամարտից հետո: Անցյալ մեկ դարի ընթացքում միջազգային հարաբերություններում ՍՍՀՄ-ի նկատմամբ արևմուտքի երկրների, հատկապես՝ ԱՄՆ-ի թելադրած քաղաքական դիրքորոշման համեմատ երկփեղկվել է նաև սփյուռքի հայության, մասնավորապես՝ ամերիկահայության, դիրքորոշումը խորհրդային երկրի, հետևաբար և Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Գաղափարական մի թևը հիմնականում ներկայացնում էին Ռամկավար-ազատական կուսակցության (ՌԱԿ), Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՄԴՀԿ), Հայկական բարե-

գործական ընդհանուր միության (ՀԲԸՄ), անկուսակցական (չեզոք) և այլ հայաստանամետ-հայրենասեր ներկայացուցիչները, որոնք հայտնի էին առաջադիմականներ (*Հայաստանջի*¹) անունով, իսկ մյուս թևը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման փաստին ի հեճուկս, սփյուռքում «անհայրենիք պետություն» ստեղծելու գաղափարի կողմնակից Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունն էր:

Առաջին ուղղության ներկայացուցիչները, իրատեսորեն գնահատելով ստեղծված նոր հանգամանքները, Սովետական Հայաստանը համարում էին «ամենայն հայոց պետություն», իսկ տվյալ պահին հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման երաշխիքը՝ «ամենանպաստավորն ու տրամաբանականը ռուսական օրիանթափոխն» էին նկատում, ՍՍՀՄ կազմում²: Բնութագրական է ամերիկահայ հասարակական գործիչ, հրապարակախոս, խմբագիր Հրաչ Երվանդի տեսակետն այդ կապակցությամբ. «Մենք դեմ ենք համայնավար վարդապետության, բայց և կտեսնենք, թե հայ ժողովուրդը իր քաղաքական ապահովությունը և խաղաղ աշխատանքը կպարտի Հայաստանի վարչաձևին և մի-միայն անոր: Այս պատճառով, Հայաստանի համայնավար վարչաձևին հանդեպ մեր ընդդիմությունը ունի խաղաղ հանգամանք, վասնզի ամեն բանն առաջ և ամեն բանն վեր են երկրին խաղաղությունն ու բարօրությունը»³: Այդ ուղղության կողմնակիցները Խորհրդային Հայաստանի զարգացումն ու ամրապնդու-

¹ Սվազյան Գ., Հայրենիքիս համար, Երևան, 1965, էջ 106: «Հայաստանջի» – առաջադիմականների ժողովրդի մեջ տարածված անվանումը:

² Թովմազյան Հովհ., Եզիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 243:

³ Նույն տեղում:

մը համարում էին նաև արևմտահայության դատի լուծման գրավականը՝ «միակ կովանը», որը կարող էր, «երբ պայմանները ներեն, առանց նոր արյունահեղությանց տեր դարձնել հայ ազգը իր պատմական անժխտելի իրավունքներուն», ուստի և սփյուռքահայությանը կոչ էին անում «ոչ մեկ պայքար մղել խորհրդային իշխանության դեմ, կարելի ամեն միջոցներով ուժ տալ» Խորհրդային Հայաստանին և ներգաղթին¹:

Հակադիր ուղղության ներկայացուցիչը, որի կուսակցական ու պետական մի շարք գործիչներ Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920 թթ.) անկումից հետո հաստատվել էին արտերկրում, նաև՝ ԱՄՆ-ում, ընդհակառակը, պատմական գործընթացների արդյունքում Հայաստանում հաստատված սովետական կարգերը գնահատում էին որպես «ռուսական աշխարհակալություն», ցարական լուծը «գերազանցող բռնակալություն», որի տիրապետության ներքո հայ ժողովուրդը դատապարտված է դանդաղ մահվան «սովետական դժոխքում», «Հայաստան-վայաստանում»²: Ուստի արդեն 1920-ական թթ. սկզբից ամեն կերպ խոչընդոտել են ներգաղթին ու Հայրենիքի վերաշինության աջակցության ջանքերին՝ դրան հակադրելով համազգային կազմակերպություն՝ համազաղութային համագումար հրավիրելու գաղափարը, որն իր սեջ պիտի ներառեր սփյուռքի բոլոր քաղաքական ուժերին՝ դառնալով Սովետական Հայաստանին հակակշիռ գաղութահայ քաղաքական ուրույն միավոր, իրենց իսկ բնորոշմամբ՝ «հոգևոր հայրենիք», «...տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն, պետական ստորոգելիներ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում. էջ 243-244, 266:

րով, ազգային և միջազգային իրավական կարգերով»¹: Ըստ այդ տեսության գաղափարախոսների, «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմ պիտի դառնա որևէ հավաքականության ամբողջացման, պահպանման և իրավական գոյության», հայրենիքի դերը կարող է փոխարինել «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միևնույն ազգի պատկանելության զգացումը ունեն»²: Ուստի նրանց «...զլխավոր մտահոգությունը պիտի լինի յուրաքանչյուր գաղութի հայություն իբրև համայնք, իբրև մեկ ուրույն ազգային միավոր խմբել և համաձայն ժամանակակից պետական իրավունքի և ըմբռնումների օժտել նրան իր ներքին ազգային-կուլտուրական գործերը վարելու անհրաժեշտ իրավունքներով»³: Ընդամին, յուրաքանչյուր գաղութահայ հյուրընկալ երկրի նկատմամբ իր պարտականությունները պիտի կատարի «առանց երբեք իր որևէ քայլին ազգային (հայկական) կերպարանք տալու և իր պայքարը կապելու մայր հայրենիքի (Հայաստանի) ճակատագրին»⁴: Գաղութահայ բարձրագույն կազմակերպությունը պիտի ունենար իր ճյուղավորումները՝ գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված պիտի լինեին կենտրոնական խորհրդի սահմանադրությամբ⁵:

«Անհայրենիք պետություն ստեղծելու» ուղղությամբ սփյուռքում առկա գաղափարաքաղաքական խմորումներին մաս էր կազմում նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից «Ժամանակավորապես» Երուսաղեմ տե-

¹ Նույն տեղում, էջ 246, 249-250:

² Նույն տեղում, էջ 250:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 249-250:

ղափոխելու հարցը՝ նպատակ ունենալով Ազգային սահմանադրության անունով գրավել նաև արտասահմանյան թեմերը և ստեղծել «վերին մարմին»¹: Եվ քանի որ այդ «մեծ նպատակի» իրագործման համար ամեն միջոց արդարացվում էր, 1933 թ. դեկտեմբերի 24-ին Սուրբ Ծննդյան պատարագի ժամանակ վերոնշյալ գաղափարախոսության կրողները Նյու Յորքի Մանհատթան թաղամասի հարևանությամբ գտնվող հայ առաքելական Սուրբ Խաչ եկեղեցում իրականացրեցին ԱՄՆ-ի հայոց հոգևոր առաջնորդ հայաստանակենտրոն հայացքների տեր Ղևոնդ արք. Թուրյանի սպանությունը²: Արդյունքում, փաստացի պառակտում մտցնելով արտերկրի հայության շրջանում, ինչպես նաև սփյուռք-Հայաստան հարաբերություններում, 1957 թ. Անթիլիասում (Բեյրութ) Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հիմնումով վարչական ու իրավական առումով պառակտվել է նաև հայ եկեղեցին՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ենթակայությունից դուրս ստեղծելով արտասահմանյան կաթողիկոսությանը ենթակա սփյուռքյան առանձին թեմեր:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ ֆաշիզմը սպառնում էր ՍՍՀՄ-ին, հետևաբար Սովետական Հայաստանի գոյությունը ևս վտանգված էր, սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում Մայր Հայրենիքի համակիր առաջադիմական ուժերը համախմբվել են հակաֆաշիստական ազգային միասնական ճակատներում, Սովետական Հայաստանի բարեկամների միություններում և ընկերություններում, հայկական ազգային խորհուրդներում, որոնք նաև հանդես էին գալիս Թուրքիայի կողմից

¹ Նույն տեղում, էջ 255, 257:

² Leon Tourian, <https://en.wikipedia.org/wiki/Leon_Tourian>.

բոնագավթված հայկական պատմական տարածքները ՀՍՄՀ-ին վերադարձնելու արդար պահանջով, ինչն իրական հնարավորություն կստեղծեր աշխարհասփյուռ հայության Հայրենիքում համախմբվելու համար¹:

Սփյուռքահայ, այդ թվում նաև ամերիկահայ, առաջադիմական ուժերի միասնական ճակատները միավորել են կոմունիստներին, հնչակյաններին, ռամկավարներին, երիտասարդական միությունների անդամներին, ինչպես նաև անկուսակցականներին (չեզոք)², որոնք հանդես են եկել ՍՄՀՄ-ին բարոյապես ու նյութապես սատարելու կոչերով: 1941 թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ՍՄՀՄ կառավարությանն ուղղված դիմումում ամերիկահայերը դա հիմնավորել են հետևյալ կերպ. «Մենք, ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պաշտպանէ Կարմիր Բանակը, կզգանք, որ պարտաւոր ենք օգնելու Սովետ Միութեան, պայքարելու մինչև այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսէն կոչնչացուի ֆաշիզմը»³:

1943 թ. օգոստոսին Ստալինգրադյան ճակատամարտում խորհրդային երկրի տարած հաղթանակը մեծ բեկում մտցրեց նաև սփյուռքահայության զգալի մասի շրջանում ՍՄՀՄ-ի նկատմամբ դիրքորոշումը որոշակիացնելու հարցում:

Արդեն 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում ձևավորված Ամերիկահայ Ազգային Խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազ-

¹ Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 172:

² Նույն տեղում, էջ 322:

³ Ինչու համար կը կուխնք մենք հայերս, Նյու Յորք, 1942, էջ 74:

մակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՄԴՀԿ, Ամերիկահայ Առաջադիմական Միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական և այլ միությունների ներկայացուցիչներից), երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով, միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ Կարմիր բանակի¹։ Ամերիկահայ Ազգային Խորհրդի հայրենանվեր ջանքերի շնորհիվ 1944 թ. գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված ՍՍՀՄ ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլար արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Հայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղեն։ Բացի այդ, Ռուսաստանի Օգնության Կոմիտեի միջոցով Կարմիր Բանակի համար առաքվել է 50 հազար դոլար, ինչպես նաև 87 հազար դոլար արժողության դեղորայք։ Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող Ամերիկա-հայկական կոմիտեն մինչև 1943 թ. հանգանակել է Կարմիր Բանակի համար՝ շուրջ 56 հազար դոլար, կարիքավորների համար՝ 29 հազար դոլար, Հայաստանի համար՝ 11 հազար դոլար, ինչպես նաև 9 հազար դոլար արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղեն և այլն²։

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ Խորհրդային Միությանը և հեռավոր Մայր Հայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաև սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Սասունցի Դավիթ» տանկային շարաս-

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Երևան, 1970, էջ 154։

² Նույն տեղում։ Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ զաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 402։ Ամերիկեան Սովետ բարեկամություն, Նյու Եորք, 1943, էջ 48։

յան ստեղծման գործին: ԱՄՆ-ի հայերի կազմակերպված ջանքերի շնորհիվ 1943 թ. մարտից մինչև 1944 թ. մարտ ընկած ժամանակահատվածում այդ նպատակով ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազար դոլար՝ «Սասունցի Դավիթ» տանկային առաջին (նաև 173 հազար դոլար՝ Կարմիր Խաչի հիմնադրամին), ապա՝ 40 հազար դոլար երկրորդ շարասյունների կառուցման համար, որոնք, շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային երկրի ազատագրական հաղթարշավին: Իսկ 1945 թ. «Զորավար Բադրամյան» տանկային նոր շարասյան կառուցման համար սկսված հանգանակությունը դադարել է Հայրենական մեծ պատերազմի ավարտի հետ¹: Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյանի ջանքերով կազմակերպված Հայկական Հանձնախումբը մեկ տարվա ընթացքում ի նպաստ Կարմիր բանակի, Մայր Հայրենիքի և սփյուռքի հայրենակիցների հանգանակել է 120 հազար դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազար դոլար²:

Համայն հայությունը հուսադրվել էր, երբ նաև սփյուռքի գրեթե բոլոր կազմակերպությունների միաձայն (այդ թվում՝ ՀՅԴ-ի առանձին³) դիմումին ի պատասխան սովետական կողմը Թուրքիայի և Խորհրդային Միության միջև սահմանի վերանայման ու

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Երևան. 1970, էջ 158: Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ. էջ 403:

² Աշճեան Ա. Քենյ., «Ինձակացոյց եւ պատմութիւն առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Նիւ Յորք, 1949, էջ 45:

³ Ավելի մակրամասն տե՛ս Վիրաբյան Ա., Սփյուռքահայության դերը Հայկական հարցի վերաբարձրացման գործում 1945-1947 թթ.. «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր». Երևան. 2002, № 1, էջ 103:

կարգավորման, երբեմնի ցարական Ռուսաստանի մաս կազմող Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների, մասնավորապես՝ Կարսի, Արդահանի, Արդվիլի շրջանները ետ վերադարձնելու հարցը քննարկման առարկա դարձրեց ինչպես ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարությունների միջև 1945 թ. Անկարայում, ապա՝ Մոսկվայում, նույնպես և դաշնակից երեք մեծ տերությունների՝ ՍՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, ղեկավարների միջև Պոտսդամի կոնֆերանսում (1945 թ., հուլիսի 17 - օգոստոսի 2)¹:

Ի դեպ, բռնազավթված հայկական հողերը Թուրքիայից պահանջելու, հետևաբար և տարագիր հայության հայրենադարձությունը կազմակերպելու անհրաժեշտության հարցը սփյուռքահայությունը հավաքաբար սովետական կառավարությանն էր ներկայացրել դեռևս 1945 թ. ամռանը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու նպատակով գրեթե բոլոր համայնքներից Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ժամանած իր աշխարհիկ և հոգևոր պատգամավորների միջոցով²:

Բայց և այնպես, Պոտսդամի կոնֆերանսում ՍՍՀՄ ղեկավարության կողմից, առաջադրված ցարական Ռուսաստանի մաս կազմող հայկական տարածքների վերադարձի հարցը մերժվել էր արևմտյան տերությունների, այդ թվում և ԱՄՆ-ի կողմից:

Հայության արդար իրավունքները վերականգնելու հարցը սփյուռքահայությունը բարձրացրել է նաև 1947 թ. ապրիլին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսում, որին

¹Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны (1941-1945 гг.). Сборник документов. Т. 6, М., 1980, стр. 39-41:

² «Լրաբեր», Նիւ Եորք, 1946. 8-15 Յունուար. թիւ 73-76:

մասնակցում էին տարբեր համայնքների հասարակական-քաղաքական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք, քննարկվելով ներգաղթի և Հայաստանի վերաշինության շուրջ բոլոր հայ համայնքների միջև միության և համերաշխ գործակցության հաստատման հարցը, որոշել են գորացնել համայնքների և Մայր Հայրենիքի միջև հոգևոր-մշակութային կապը, միջազգային ասպարեզում հասարակական կարծիք ձևավորել հայկական հողային պահանջների արդարացիության նկատմամբ՝ հարցի քաղաքական լուծումը վերապահելով Միավորված ազգերի կազմակերպությանը: Հայկական համաշխարհային կոնգրեսի ավարտին Նյու Յորքում երեք հազար հայերի մասնակցությամբ կայացած զանգվածային մեծ հավաքում ընդունվել է բանաձև, որտեղ ամրագրվել է սփյուռքահայության գործնական խնդիրը՝ ՄԱԿ-ի միջոցով հասնել հայկական տարածքային պահանջների բավարարմանը, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել տարազիր հայության հայրենադարձությունը¹:

Բայց և այնպես, հայ սփյուռքի 22 երկրներից Հայկական համաշխարհային կոնգրեսի (Նյու Յորք, 1947 թ. ապրիլ 30 - մայիս 4) կողմից ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնին մայիսի 12-ին ներկայացրած հուշագրին (որով ամերիկյան կառավարությանը խնդրվում էր ՄԱԿ-ի օրակարգի մեջ մտցնել հայկական հողային պահանջների հարցը)² ԱՄՆ-ի ղեկավարությունն ընթացք չի տվել՝ պատճառաբանելով, թե այն հավասարազոր կլինեիր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հակառակորդ ՍՍՀՄ-ի ծավալամանն ու հզորացմանը:

¹ Սելիքսթյան Հ., նշվ. աշխ., էջ 174:

² Վիրսյան Ա., նշվ. աշխ., էջ 98-108:

Հակառակ որ Արևմուտքի երկրների կողմից հայության արդար պահանջներն անտեսվել են, ՄՍՀՄ կառավարության համաձայնությամբ 1946-1949 թթ. կազմակերպվել և իրակացացվել է աշխարհի 12 երկրներից ավելի քան 90 հազար հայերի զանգվածային հայրենադարձությունը Սովետական Հայաստան, ինչը արտերկրում ցրված հայության ազգային գենոֆոնդի պահպանմանն ուղղված, ինչպես նաև Հայաստանի համար քաղաքական-ռազմավարական, ընկերային-տնտեսական, մշակութային-բարոյական և բազմակողմանի նշանակություն ունեցող դարակսզգմիկ իրադարձություն էր (ԱՄՆ-ից ամենից քիչ թվով հայեր են ներգաղթել Սովետական Հայաստան. 1947 թ. ընդամենը 51 ամերիկահայ¹):

Այնպես որ, ժամանակաշրջանի պատմաքաղաքական, ընկերային-տնտեսական, ինչպես նաև միջազգային զարգացումների օբյեկտիվ հանգամանքների բերումով ՄՍՀՄ մաս կազմող Սովետական Հայաստանը դարձավ իր բռնազավթված երկրի տարածքները վերագտնելու հույսով ներշնչված արևմտահայության ներգաղթի փաստացի և իրական հանգրվանը, որտեղ պետք է համախմբվեր պատմական Հայրենիքը երբևէ միասնական տեսնելու նվիրական երազանքն արթուն պահող պանդուխտ հայությունը:

Այդուհանդերձ, «անհայրենիք պետության ստեղծելու» գաղափարախոսների և իրագործողների կողմից Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրկված և աշխարհի տարբեր երկրներում ապաստան գտած հայությանն իր պատմական հայրենիքի 1/10 հողատարածքի վրա Հայաստանի խորհրդայնացու-

¹ Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 228-229:

մով գոյատևած հայրենիքից հեռու պահելու և պարբերաբար ավելի հեռացնելու գործընթացն Երկրորդ աշխարհամարտի վերջում և հետագա տարիներին առավել թափ ստացավ՝ ՄՍՀՄ-Արևմուտք գաղափարառազմավարական և պատմաքաղաքական առճակատման խորացմանը և հաջորդած Մառը պատերազմին զուգընթաց:

Այսպես, Հայրենական մեծ պատերազմում հաղթանակած ՄՍՀՄ-ի հեղինակության սփյուռքահայության շրջանում բարձրացման պայմաններում դեպի վերաշինվող ու զարգացող Սովետական Հայաստան կազմակերպվող և իրականացվող զանգվածային (1946-1949 թթ.) և հետագա հայրենադարձություններին համակողմանի գաղափարաբարոյական, մարդկային և նյութական աջակցություն ցույց տալու փոխարեն արևմտյան որոշակի կառույցների հետ գործակցող վերոհիշյալ հակախորհրդային (հակառուսական), բայց և՛ հակահայաստանյան ուժերը նպատակադրված խոչընդոտել են (ինչը, ընդհանուր առմամբ, շարունակվում է նաև մինչև այսօր) դեպի Հայրենիք տունդարձը՝ կանխելու համար աշխարհաքաղաքական հետաքրքրություններ կայացնող Ռուսաստանի հարավում՝ Անդրկովկասի տարածաշրջանում, շարունակական ներգաղթի միջոցով բնիկ, քրիստոնյա տարրի, սովյալ դեպքում՝ հայերի ստվարացումը: Եվ ընդհակառակը, ամեն կերպ նպաստել են արտագաղթի խթանմանը:

Փաստորեն, ԱՄՆ-ի հայկական առանձին կառույցներ լծվել են արևմուտքի՝ ընդդեմ ՄՍՀՄ-ի սանձազերծած Մառը պատերազմի¹ քաղաքական մարտանիվին, նույնիսկ, երբ 1947 թ.

¹Մառը պատերազմը սկզբնավորվեց 1946 թ. փետրվարին «սովետական էքսպանսիայից Եվրոպայի փրկության» ԱՄՆ նախագահ Հարրի թրումենի Կոնգ-

մարտի 12-ին Միացյալ Նահանգները հրապարակել են «Թրումենի դոկտրինան», ըստ որի աշխարհով մեկ ՍՄՀՄ-ին «զսպելու» քաղաքականությունից բացի, հայտարարվել էր Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի կողմից, Թուրքիային սատարելու մասին: Նախատեսվում էր 1947-1948 թթ. Հունաստանին և Թուրքիային հատկացնել 400 մլն (համապատասխանաբար՝ 300 մլն և 100 մլն) դոլար օգնություն¹:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած Մառը պատերազմը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև հայ սփյուռքում «անհայրենիք պետության ստեղծելուն» միտված առանձին կառույցների գործնական քայլերի խորացման համար: Այսպես, 1947 թ. ամերիկյան կառավարության աջակցությամբ ստեղծվել է ԱՆՀԱ-ն (ANCHA – American National Committee to Aid Homeless Armenians, Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե, նախագահ՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկյան գործերի սննդամատակարարման գործը ղեկավարող Ջորջ Մարտիկյան, փոխնախագահ՝ փաստաբան Մուրեն Սարոյան) Եվրոպայում գտնվող տեղահանված (Displaced Person – DP) հայերին՝ նախկին խորհրդահայ ռազմագերիներին և այլ ճանապարհներով այդտեղ հայտնված քաղաքացիներին, ՍՄՀՄ իշխանությունների կողմից հայրենադարձություն իրականացնելու

րենսխն ուղղված ուղերձով, ինչպես նաև մարտի 5-ին Ֆուլտոնում (Միասորի նահանգ) Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի նախագահ Հ. Թրումենի ներկայությամբ հնչեցված կոչով, ըստ որի նախատեսվում էր կոմունիստական վտանգից պաշտպանվելու համար ստեղծել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դաշինք՝ ուղղված ՍՄՀՄ-ի և սոցիալիստական երկրների դեմ: Այդ նպատակով 1949 թ. ստեղծվել է ՆԱՏՕ-ն [Доктрина Трумэна, <https://ru.wikipedia.org/wiki/Доктрина_Трумэна>].

¹ Доктрина Трумэна, <https://ru.wikipedia.org/wiki/Доктрина_Трумэна>.

ջանքերին ի հեճուկս, ԱՄՆ և այլ երկրներ փոխադրելու նպատակով: Ընդհանուր առմամբ, ընդհուպ մինչև 1952 թ. ԱՆՉԱ-ն ԱՄՆ-ի տարբեր նահանգներում տարածված իր մասնաճյուղերի, Հայ Օգնության Միության և ազգային այլ կառույցների տրամադրած նյութական միջոցներով իրականացրել է պատերազմի տարիներին Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում հայտնված ավելի քան 4.500 տարագիր հայերի փոխադրումն ու բնակեցումը¹:



ԱՆՉԱ-ի նախագահ Ջորջ Մարտիկյանը

Եվրոպայում հայտնված հայ ռազմագերիների ՍՍՀՄ փոխադրվելու դեպքում նրանց սպասվող «ճակատագրով» մտախոգ

¹ Ավագյան Ք., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության զաղափարների դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2014, № 2 (641), էջ 53:

ԱՆՉԱ-ն ու նրա հովանավորները հետագա տարիներին ևս (ներառյալ 1956 թ. Սուեզի միջադեպ, 1975-1976 թթ. լիբանանյան քաղաքացիական պատերազմ, արաբ-իսրայելական պատերազմի ողջ ընթացքում) Բեյրութում, Միլանում, Աթենքում, Բրյուսելում, Ժնևում հաստատված կազմակերպության կենտրոնատեղիներով¹ շարունակել են նույն նպատակադրվածությամբ խթանել հայության, այդ թվում՝ նաև Սովետական Հայաստանից (1975 թ. օգոստոս 1-ին Հերսինկյան պակտի ստորագրումից հետո առանձնապես), նրանց հետագա տեղաշարժերին դեպի աշխարհի ամենահեռավոր անկյունները: Եվ դա այն դեպքում, երբ արդեն 1950-ական թվականներից տնտեսական ու քաղաքական, ինչպես նաև մշակութային առումով հետզհետե շատ ավելի բարենպաստ պայմաններում գտնվող Հայաստանին ամերիկահայ առանձին կառույցների կողմից նյութապես ու բարոյապես աջակցելը և այդտեղ աշխարհասփյուռ հայերի հայրենադարձի աստիճանական կազմակերպմանը համագործակցելն ու սատարելը շատ ավելի ազդանպաստ ու հայապահպան գործ կարող էր լինել, քան համաշխարհային կառույցների հետ համագործակցված աշխարհով մեկ (նույնիսկ ամենաանհավանական երկրներ՝ Վենեսուելա, Չիլի, Ավստրալիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Քենիա, Ջիբութի, Գանա, Լիբերիա և այլուր²) Հայոց ցեղասպանության հետևանքով արդեն իսկ հայրենագրված ու տարագիր դարձած

¹ Փիրումյան Ռ., Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հայ սփյուռք հանրագիտարան. Երևան, 2003, էջ 37:

² Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1945-1988 թվականներին. Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն. Երևան, 2016, էջ 53-54, 56, 68:

հայության և նրանց սերունդների հետագա ցրման ու փոշիացման գործընթացին հանցակցելը:

Այսպիսով, առանձին միջազգային կառույցների գործակցությամբ (ՄԱԿ, Համաշխարհային եկեղեցիների խորհուրդ, Վատիկան, Ավետարանական եկեղեցի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի, Թուրքիայի գաղտնի ծառայություններ, ԱՆՉԱ և այլն¹) Սառը պատերազմ հրահրող երկրները ամերիկահայ իրենց ենթակա կառույցների միջոցով լծվել են այդ թվում նաև Առաջին աշխարհամարտից հետո անավարտ մնացած Հայկական հարցի վերջնական լուծմանը՝ Հայոց ցեղասպանության վկա, հետևաբար և իրավահաջորդ-պահանջատեր հանդիսացող առավելապես՝ Մերձավոր և Միջին Արևելքի հայազաղութներում (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Իրան, Իրաք, Կիպրոս, Հունաստան և այլն) ապաստան գտած ցեղասպանությունը վերապրած հայերի և նրանց սերունդների ցրումն ու փոշիացումը համաշխարհայնացած կամ համաշխարհայնացող երկրներում (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Լատինական Ամերիկա, մասամբ նաև՝ Արևմտյան և Արևելյան Եվրոպա, անգամ՝ Աֆրիկա) իրականացնելու զլոբալ ծրագրին:

Ի դեպ, ԱՄՆ-ի կառավարությունը և որոշակի այլ երկրներ (կրկին սփյուռքահայ, մասնավորապես՝ ամերիկահայ, որոշակի կառույցների և անհատների միջնորդությամբ և գործակցությամբ) ԽՍՀՄ փլուզումից հետո ևս խորհրդային «գերիշխանությունից» ազատագրված նորանկախ Հայաստանից տարբեր ճանապարհներով, ապա նաև՝ Սիրիայի պատերազմը սկսվելուց մեկ տարի

¹ Նույն տեղում, էջ 59, 65, 73, 79, 87:

անց բացահայտորեն (2012 թ. նոյեմբերի 11¹) շարունակել և շարունակում են դյուրություններ շնորհել սիրիահայերի, այդ թվում նաև Հայաստան ներգաղթած սիրիահայերի արտագաղթը աշխարհի առանձին երկրներ (ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլուր) կազմակերպելու ուղղությամբ:

Վերոնշյալը հիմք է տալիս դեպի արևմուտք հայության պարբերաբար կազմակերպված տեղաշարժերը դիտարկել պատմաքաղաքական կրկնվող զարգացումների համատեքստում և թույլ է տալիս վեր հանել դրանց ընդհանրություններն ու քաղաքական հեռու գնացող միտումները՝ առանձնապես բնիկ, այդ թվում քրիստոնյա ժողովուրդների իր հարազատ բնակավայրերից վտարման պայմաններում, և հատկապես Ռուսաստանի համար ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածաշրջաններից (Անդրկովկաս, Մերձավոր, Միջին Արևելք և այլն), ինչպես դա տեղի ունեցավ անցյալ դարասկզբին՝ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությամբ, երբ հայերը և ռուսները դուրս մղվեցին Ռուսաստանի համար հենակետային հարավային՝ հայկական տարածքներից (Կարս, Արդահան, Էրզրում և այլն):

Մանավանդ որ, ներհայկական (տեղական, սփյուռքյան) առանձին կառույցներ (սկսած դեռևս XIX դ.-ից) միջազգային-քաղաքական կառույցների (Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդ / American Board of Commissioners for Foreign Missions - ABCFM՝ 1810-1914 թթ., Մերձա-

¹ U.S. Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U.S. Government to issue visa waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release, 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>.

վոր Արևելքի նպաստամատույց կոմիտե / Near East Relief - NER 1915-1930 թթ., ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն / United States Agency for International Development - USAID 1961 թվ.-ից և այլն) հետ գործակցած ու նրանց ձեռնառու տարբեր պատրվակներով (գաղափարական, կրոնական, մշակութային, լեզվական, ընկերային, տնտեսական, քաղաքական և այլն) արդեն մեկ դար է ինչ դիմում են հնարավոր բոլոր միջոցների դեպի աշխարհի համայնակույլ երկրներ հայության տեղափոխումն ու տարածումը կազմակերպելու և հայկական գենոֆոնդի պարբերաբար փոշիացումն իրականացնելու, ինչպես նաև սփյուռքը Հայաստանից նպատակադրված մեկուսացնելու և խորթացնելու միտումով: Այն էլ այն դեպքում, երբ տարածաշրջանային առանձնահատկություններից ելնելով, միջազգային-քաղաքական անդիմադրելի ճնշումների ու բարդությունների հետ անընդհատ առերեսվող Պատմական Հայրենիքի 1/10 հատվածը (Ժամանակին՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն – ՀՍՍՀ, այժմ՝ անկախ Հայաստանի Հանրապետություն – ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն – ԼՂՀ) մշտապես բնակեցման ու ստվարացման ռազմավարական օրախնդրի առաջ է կանգնած, ինչը պետք է, որ սփյուռքյան ազգային կառույցների մշտական մտահոգության առարկան լիներ:

Մերնդափոխության հեռանկարները սփյուռքում (մասնավորապես ԱՄՆ-ում) Հայաստանի և տարածաշրջանի ռազմավարական շահերի համատեքստում

Ազգային գենոֆոնդի վտանգման ռազմավարական օրախնդրի առաջ է կանգնած նաև հայ սփյուռքը, որը պարբերաբար սերնդափոխության հետևանքով աստիճանական ձուլման և անհետացման է դատապարտված: Այսպես, մարդկության պատ-

մության մեջ սերնդափոխությունն առնվազն 20 տարին մեկ տեղի ունեցող գործընթաց է: Այնպես որ, խնդրո առարկա ԱՄՆ-ի դասական հայ սփյուռքը, որպես Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրկված և աշխարհով մեկ սփռված հավաքականություն, արդեն 4-րդ և 5-րդ սերունդն է թևակոխել, որը, մասնավորապես՝ Արևմուտքի երկրներում, վերասերվում է առավելապես օտար ամուսնությունների հետևանքով ծնված խառնածին, հետևաբար և պարբերաբար փոխակերպվող (տրանսֆորմացիա) ու տարաշերտվող ինքնությամբ, օտարախոս, օտարացած հավաքականության՝ իր ազգային սլատկանելության սիմվոլիկ (խորհրդանշական), հաճախ՝ անորոշ կամ սոսկ հանրահաշվական ընկալմամբ (2/4-ով, 3/4-ով, 3/5-ով, 4/5-ով հայ և այլն):

Ներկայիս գլոբալ (համաշխարհային) միջավայրում գործող սփյուռքահայ զանգվածային լրատվության մեջ այդ փաստը թերևս չի շոշափվում, չի ահագանցվում, ցանկալի չէ, ընդհակառակը՝ ներհամայնքային օրախնդիր հարցերն այլևս ինքնահոսի են թողնված, փոխարենը նախընտրելի են դարձել ներհայաստանյան զարգացումների վրա գերազանցապես արևմտյան տերությունների դիտակետից, հետևաբար և՛ կողմնակալ անդրադարձներ կատարելը: Այդ ամենն անշուշտ նպատակ է հետապնդում արտերկրի հայության շրջանում սառեցնել, բթացնել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) նկատմամբ հայրենասիրական զգացումները, արտասահմանի հայությանը գաղափարապես անջրպետել հայրենի երկրից, հետևաբար և կանխել, բացառել սփյուռքը վերահաս ձուլումից փրկող թերևս միակ միջոցը՝ հնարավոր հայրենադարձությունը: Եվ կամ՝ նույնիսկ Սիրիայի երկարատև ու կործանա-

րար սլատերագվի պայմաններում անգամ ավերակված ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են(էին) հնչում՝ որդեգրած երկիրը («սիրիական հայրենիք») արժեքային առումով հաճախ Հայրենիքից գերազնահատելու միտումով:

Նույնիսկ այն պարագայում, երբ Քուվեյթը Իսլամական գթասիրական կոմիտեի (Committee for Islamic Charity) միջոցով նյութական զգալի՝ 100 հազար դոլար, աջակցություն է ցուցաբերել Հայաստանում հանգրվանած սիրիահայերին¹, քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, ցավոք, այսօր ևս սփյուռքի առանձին շրջաններին հեռու է պահում ամբողջովին միանալու և զորացնելու Սիրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու Հայաստանի ջանքերին, դրանով իսկ խոչընդոտելով սփյուռքը դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունից, նախապատվությունը տալով սատարել փախստական հայերի արտերկրում հաստատվելուն², հայության

¹ Kuwait to Allocate \$100,000 to Syrian Armenians in Armenia, 2012, November 29, <<http://news.am/eng/news/130510.html>>.

² Այսպես՝ 2012 թ. նոյեմբերի 11-ին, ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երեւելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» (Homeland Security) բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆՔՆՏ) (U.S. Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին ստակ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» (Temporary Protected Status - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավագրվության վիզա» (Visa Waivers) շնորհել [U.S. Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U.S. Government to issue visa waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release, 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>]: Շատ չանցած նրանց անհաշիվ բարեկամներն ու հարազատները ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Մինչդեռ հարկ էր, որ

իրարհաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ նորանոր «հայրենիքներ» «(վերա)կառուցելու» անհեռանկար և իմաստագուրկ գործընթացով զբաղեցնելուն, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, իր զավակների անսակարկ աջակցության կարիքն ունի:

Ցավոք, վիճակը նույնն է նաև այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ կամ այլ սցենարի չբացառվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը մնում է սակարկելի (աչքի առաջ է Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան)՝ նախընտրելով օտար եզերքներում հանգրվանելը, և կամ ազատ, անկախ և Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրենիքը՝ որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր դիտարկելը:

Այսինքն, քաղաքական սուբյեկտիվ դրդապատճառներից ելնելով՝ աստիճանաբար փորձ է արվում անտեսել, մոռացության մատնել նույնիսկ այն իրողությունը, թե պատմաքաղաքական ինչ հանգամանքների (ցեղասպանություն, հայրենագրկում) հետևանքով են սփյուռքի մեր հայրենակիցների նախնիները հայտնվել

սփյուռքահայությունը միասնականություն դրսևորել, որպեսզի տեղական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր հայրենակիցների տեղափոխումն ու բնակեցումն իրականանա ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ տեղական իշխանությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՝ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական զգալի աջակցություն ցուցաբերվել արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու համար:

¹ «Ազատ, անկախ և միացյալ Հայաստան»՝ 1919 թ. ՀՅԴ հռչակած քաղաքական հավատամբը [Անկախ և միացյալ Հայաստան, <https://hy.wikipedia.org/wiki/Անկախ_և_Միացյալ_Հայաստան>]:

օտայր այդ վայրերում: Ի վերջո՝ «Մենք սփիւռք մը ունենալու համար չէ, որ աշխարհի ամէն կողմը ցրուած ենք, այլ՝ բոնութիւնից ու հալածանքից ստիպուած» - գրել է հայրենադարձության գաղափարախոս, եգիպտահայ Գառնիկ Սվազլյանը (1904-1948 թթ.) իր «Ներգաղթի իմաստն ու արժեքը» հոդվածում¹:

Յավոք, «սիմվոլիկ»՝ զգացական հայի² վերածվելը, ապա և ազգային ինքնության հետզհետե կորուստը, հայ սփյուռքի ձուլման ռանհետացման անբաժանելի, անխուսափելի և պատմական բոլոր ժամանակներով փորձված անկասելի ու պարտադիր գործընթաց է, որը կախում ունի միայն ժամանակից՝ սերնդային աստիճանից և խառնամուսնությունների մակարդակից: Իսկ որ արդյունքը՝ ձուլումը, անշրջելի է հավասարապես բոլորի համար, դա ապացուցման կարիք չունեցող աբսիուս է³:

Հետևաբար, ժամանակի ընթացքում մշակութային ցնցում (culture shock), հուսահատություն ապրող, ուժացման փաստի հետ ամէն օր առերեսվող, Հայրենիքից հեռանալու համար հոգու խորքում գղջում ապրող և ժամանակի ընթացքում ինքնագիտակցության էկոլոգիան, ինչպես նաև ազգային, ընտանեկան, մշակութային և այլ արժեքների առումով դեռևս ոչ լրիվ աղճատված երբեմնի հայաստանցու, ինչպես նաև մահմեդական միջավայրի «շնորհիվ» տակավին հայապահպանված Մերձավոր և Միջին Արևելքի հայության համար հնարավորինս վաղ Հայրենիք վերադարձը (ինչին ավելի հաճախակի ենք ականատես լինում վերջին տարիներին

¹ Սվազլյան Գ., նշվ. աշխ., էջ 76:

² Bakalian A., Armenian-Americans: From Being to Feeling Armenian. New Brunswick, London, 1993, pp. 393-396.

³ Սվազլյան Գ., Մերնդափոխության հեռանկարները սփյուռքում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2015, № 2, էջ 124-137:

երկրում քաղաքական ու տնտեսական կյանքի աստիճանաբար կայունացմանը զուգընթաց, ինչպես նաև վերոհիշյալ տարածաշրջանում տիրող կործանարար պատերազմների արդյունքում) շատ ավելի իրատեսական և հեռանկարային կարող է լինել ընտանիքի, սերնդի պահպանման, ինչպես նաև՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմավարական շահերի տեսակետից: Անցյալի փորձը ցույց է տալիս, որ ժամանակին նույնպիսի իրավիճակում են հայտնվել նաև իրենց կամքից անկախ՝ պատմական ճակատագրի բերումով 20-րդ դարասկզբին աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների ու նրանց սերունդների մեծ մասը, որոնք, դեգերելով օտարության մեջ, թեպետ ընդհանուր առմամբ մշտապես փայփայել են երբևէ Հայրենիք վերադառնալու, հայրենիքին օգտակար լինելու հույսը, սակայն պատմաքաղաքական և այլ հանգամանքների բերումով պահը բաց թողնելով, այլևս նրանց սերունդները դատապարտվել են ուժացման:

Եվ քանի որ *«հայապահպանությունը»* սփյուռքում, և մասնավորապես՝ ԱՄՆ-ում, ընդհանուր առմամբ, աննպատակ է, այսինքն՝ նպատակային, իրատեսական, գործնական հայրենասիրության հենք չունի, տվյալ դեպքում՝ *Հայաստանակենտրոն* չէ, ընդհակառակը՝ *«անհայրենիք»*¹ է¹, հետևաբար, շատ ու շատ հայապահպանված, այսինքն՝ հիմնականում ծնող(ներ)ի դրդմամբ մեկօրյա կամ ամենօրյա հայկական դպրոց հաճախած և իր «պարտքը» ազգի նկատմամբ «մեծ գոհողությունների գնով» (ֆինանսական, հանգստի, ազատ ժամանակի հաշվին) իրականացրած երիտասարդ սերունդն ընդհանուր առմամբ իրեն ազա-

¹ Ավագյան Ք., «Անհայրենիք» հայապահպանության հեռանկարները սփյուռքում, «Նոր Գլաձոր», Երևան, 2013, էջ 287-300:

տագրված է զգում ազգային (էթնիկ) ծագման նկատմամբ պարտավորություններից և կարող է իրեն թույլ տալ կյանքի մնացած հատվածը ազատ իր ապրած միջավայրի համապատասխան տնօրինել (օտար բարձրագույն կրթություն, օտար աշխատատեղ, օտար ամուսնություն և այլն): Մինչև որ, օտար միջավայրում իր տեղը գտած, ինչպես նաև խառնամուսնության կամ լավագույն դեպքում ներազգային ամուսնության հետևանքով համապատասխանաբար խառնածին կամ անգամ ազգային գավակների ծնունդները կզան համոզելու, որ ազգի, իսկ, իրականում, ամենակարևորը՝ Հայաստանի ու նրա ռազմավարական շահերի համար, նրանք «անելիք չունեն»: Հայկական դպրոց, եկեղեցի, ակումբներ են հաճախել, համայնքային գործունեության մեջ ներգրավվել, որպես ինքնամխիթարություն և օտարության մեջ սոսկ *ինստիտուցիոնալ հայապահպանությամբ* ազգի նկատմամբ իրենց պարտքը որպես պարտականություն իրականացրած լինելու համար: Հետևաբար, ժամանակի ընթացքում (մանավանդ Հայաստանի անկախացումից հետո) հայրենադարձվելու, Հայրենիքում ապրելու և աշխատելու, հայրենի հողը պաշտպանելու համար վարժված չեն, պատրաստված չեն, հետևաբար և՛ պարտավորված չեն: Ուստի, գլոբալ քաղաքացի լինելն ամենահարմար գաղափարախոսական ծածկն է դառնում երբեմնի «հայապահպանված» հայերի այդ խմբի համար, ինչը և նրանք դյուրությամբ ընտրում են որպես ինքնություն:

Այնպես որ, ժամանակի ու տարածության մեջ դիտելով, ինչպես նաև հաշվի առնելով առանձին բացառությունները, հատկապես Արևմուտքի երկրների, և մասնավորապես՝ ԱՄՆ-ի, հետզհետե «սիմվոլիկացող» հայերը Հայաստանի, նրա ռազմավարա-

կան և խնդրահարույց տարածաշրջանից բխող իրական շահերի համար դառնում են գործնականում «ամորֆ», եթե չասենք՝ «վիճարկելի», հավաքականություն, մշտապես ենթակա, պատրաստ, պարտավոր ծառայելու իրենց ապրած երկրների քաղաքական շահերին ու դոկտրինաներին՝ որոշակի վտանգ ներկայացնելով Հայաստանի ազգային անվտանգության, առանձին դեպքերում՝ նաև նրա ռազմավարական գործընկեր երկիր Ռուսաստանի շահերին: Հանգամանք, որին անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բազմաթիվ անգամներ ականատես են եղել և լինում հասարակական-քաղաքական և այլ ասպարեզներում ներգրավված արտերկրի որոշ հայրենակիցների կողմից: Բացառությունները հաշվի առնելով՝ այս երևույթը նույնն է նաև առայժմ դեռ օտար ամուսնություն չկնքած, թե՛ արևմուտքի և թե՛ արևելքի երկրներում բնակվող, առավելապես ազգային կառույցների հետ առնչվող, այսպես կոչված՝ «հայապահպանված» (սփյուռքահայ, թե՛ նախկին հայաստանցի) հայության գերակշիռ մասի համար ևս, քանի որ ամենից առաջ և ամենից առավել նրանք իրենց երկրների քաղաքացիներն են՝ ուսում, կրթություն, աշխատանք, վարձատրություն են ստանում այնտեղ, դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով:

Թեև այսօր աշխարհում առկա է ավելի քան 10 միլիոնանոց հայ սփյուռք, և հակառակ այն բանին, որ 1985 թ.-ից հետո Սովետական Միությունում տեղի ունեցող ազատականացման գործընթացները, ապա 1991 թ. ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատագրումը պետք է, որ ոգևորեին նաև տասնամյակներ շարունակ «Կարմիր Հայրենիքից» պաղած

սփյուռքյան ազգային կառույցներին, այդուհանդերձ, *կանխակալ* հանգամանքներից ելնելով, համահամայնքային համակարգված հողապահպան՝ հայրենադարձության ծրագիր այդպես էլ չի գործում:

Մփյուռքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, մեր հայրենակիցների շրջանում հողապահպանության ձգտումների նվազումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, նույնպես և սուբյեկտիվ հանգամանքներով: Նախ՝ օտար միջավայրում սերնդափոխությանը զուգընթաց բնօրրանի գիտակցությունը *օբյեկտիվորեն* միտված է թուլացման, մանավանդ, եթե համայնքային կառույցների ազգային դաստիարակության գաղափարախոսական հենքը իրատեսական չէ: Տվյալ դեպքում Հայոց ցեղասպանությունից հետո հայ սփյուռքի մի զգալի հատվածի հայապահպան ջանքերը հանգրվանած երկրներում կրել են զգացական, խորհրդանշական, «անհայրենիք» բնույթ, քանի որ, պատմաքաղաքական հանգամանքների բերումով հայրենագրված հավաքականությունը տասնամյակներ շարունակ չի ունեցել որոշակի իրատեսական՝ հողապահպանության գաղափարախոսական հենք, հակառակ Սովետական Հայաստանի՝ որպես Մայր Հայրենիքի, փաստացի գոյության: Ընդհակառակը, առանձին դեպքերում, *սուբյեկտիվ* աշխարհաքաղաքական դրդապատճառներից ելնելով, արտերկրում փորձեր են արվել իրատեսական՝ հայաստանակենտրոն գաղափարախոսությանը հակադրել պասիվ ազգապահպանությունը:

Այսպիսով, արևմտյան՝ հակախորհրդային, իսկ ՄՍՀՄ փլուզումից հետո՝ հակառուսական, քաղաքականը տուրք տալը, բնական է, որ նպաստավոր պայմաններ է ստեղծել սփյուռքի մեր հայրենակիցների գերակշիռ մասի մոտ հատվածային, տեղային և

կամ՝ ընտրովի ինքնության ձևավորման ու արմատավորման համար:

Արդյունքում, երբեմնի, թեպետև, հայապահպանված, սակայն աստիճանաբար սերնդափոխվող և զլոբալացվող հայ սփյուռքի զգալի հատվածը (կուսակցական, եկեղեցական, կյոթական, լրագրող, համակիր և այլն) իր բոլոր շերտերով (Հայոց ցեղասպանությունից առաջ և հետո արտագաղթածներ, նախկին հայրենադարձ արտագաղթյալներ, սնկախ Հայաստանից արտագաղթածներ) և սերունդներով (հայ, ծագումով հայ) հանդերձ, անհաղորդ է մնում Հայաստանի հողապահպան ջանքերին, իսկ առանձին դեպքերում դառնում է Հայաստանի, ինչպես նաև նրա ռազմավարական գործընկեր երկրների շահերին հակադիր, միջազգային վերաբերական կառույցների կամակատար հավաքականություն¹:

Այդ ամենը հնարավոր դարձավ նաև ՄՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային երկրներ, այդ թվում նաև՝ Հայաստան, «դեմոկրատիայի», «բացախոսության», «մարդու իրավունքների» անվան տակ կյանքի գրեթե բոլոր ոլորտներ (քաղաքական, տնտեսական, հոգևոր, գիտական, կրթական, մշակութային և այլն) արտերկրից համաժամանակյա և հետևողական, քողարկված ու բացահայտ այլընտրանքային կեղծ «արևմտյան արժեքների» հետևողական ու նպատակադրված ներթափանցման, ներխուժման պայմաններում:

Այդ ամենը հնարավոր դարձավ նաև որպես հետևանք արտերկրում տասնամյակներ շարունակ սփյուռքի որոշակի կա-

¹ Ավագյան Ջ., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության..., էջ 41-57:

ռույցների ծավալած հակախորհրդային (հակառուսական) քա-
րոզչության և սփյուռքը Հայաստանից անջրպետելու ուղղությամբ
օտար կառույցների հովանավորչությամբ և սերտ գործակցությ-
ամբ իրականացրած հետևողական պառակտիչ գործունեությ-
ան¹, ինչն առանձին դեպքերում, այնուամենայնիվ, շարունակ-
վում է նաև ցայսօր:

Անշուշտ Արևմուտքի (իմա՝ ԱՄՆ, մասամբ՝ Եվրոպա) ծա-
վալստաշտական-գլոբալիստական շահերը մշտապես եղել և
շարունակում են մնալ այս տարածաշրջանի (Մերձավոր, Միջին
Արևելք, Ռուսաստան և այլն, բացառությամբ՝ հիմնականում
Թուրքիա, Իսրայել), նաև՝ Հայաստանի ռազմաքաղաքական շա-
հերին հակադիր: Հետևաբար, սփյուռքի և Հայաստանի հետ հա-
րաբերությունները մշտապես եղել և մնում են հենց այդ քաղաքա-
կան առաջնահերթությունների վրա խարսխված՝ դրանցից բխող
բոլոր հետևանքներով: Ահա թե ինչու, Հայաստանում քաղաքա-
կան կարգերի փոփոխությունը՝ խորհրդայինից դեպի անկախ
հասարակարգ, էական և շրջադարձային փոփոխություն չմտցրեց
Հայրենիքի նկատմամբ սփյուռքի մեր հայրենակիցների հավաքա-

¹ Նկատի ունի 1930-ական թվ. «անհայրենիք» պետության ստեղծման գաղա-
փարսխոսության սկզբնավորում, 1946 թվ. մեկնարկած Սառլ պատերազմ, 1947
թ. ԱՄՆ-ում Հայրենագուրկ Հայերի Օգնության Ամերիկյան Ազգային Կոմիտեի -
ԱՆՀԱ [American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA]
ստեղծումով ավելի քան 4.500 տարագիր հայերի փոխա-դրում ու բնակեցում
ամերիկյան հողում [Barsumian N., Stowaway to Heaven. Ohio, 1961, p. 151], 1933
թ. ԱՄՆ-ի հայոց հոգևոր առաջնորդ Ղևոնդ արք. Թուրյան սրբազանի սպա-
նությամբ և հետազայում՝ 1956 թ. Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո կաթողի-
կոսությամբ Հայ առաքելական եկեղեցու պառակտում, 1960-70-ական թվ.
ԱՆՀԱ-յի գործունեության վերականգնումով Մերձավոր և Միջին Արևելքի
երկրներից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից 18.500 հայերի
տեղափոխումը ԱՄՆ [Փիրումյան Ռ., Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 37] և այլն:

կան վերաբերմունքի մեջ, այլ՝ մնաց քաղաքականացված: Ընդհակառակը, եթե խորհրդային հասարակարգի օրոք պարզ էր, թե սփյուռքի որ հատվածն է կողմնորոշված դեպի Հայաստան (ՌԱԿ, ՄԴՀԿ, չեզոքներ և այլն), իսկ որը՝ ոչ (ՀՅԴ), ապա անկախ Հայաստանի պայմաններում սփյուռքահայ քաղաքական ուժերը և նրանց հովանավորության ներքո գործող համայնքային կառույցները (առանձին բացառիկ բացառություններով) գրեթե միատարր, միախոհ, միաբերան, եթե չասենք՝ հավաքական «դիրքորոշված» են Հայաստանի խնդիրների նկատմամբ: Դիրքորոշումներ, որոնք, ընդամեն, միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի և տարածաշրջանի նրա ռազմավարական գործընկեր երկրների տնտեսական, քաղաքական, ռազմաստրատեգիական շահերի առաջնահերթությունների հետ:

Նման պայմաններում անիմաստ, եթե չասենք, ի չիք է դառնում նաև, Հայ դատի պայքարն արթուն պահելու առաջնահերթությունից ելնելով, «սփյուռքը պահելու» արտերկրում պարբերաբար հնչեցվող տեսակետը և հանուն այդ նպատակի սփյուռքում նպատակային ու գործնական «հայապահպանություն» իրականացնելու արդյունավետությունը: Արդեն մեկ դար շարունակվող Հայ դատի պայքարն ընդհանուր առմամբ վերածվել է անվերջանալի, ժամանակատար և խիստ ծախսատար, արդյունքում՝ ինքնանպատակ լոբբիստական գործունեության (լավագույն դեպքում՝ պայքարելով, ճանաչել տալով այս կամ այն պետությանը Հայոց ցեղասպանության իրականացման, իսկ հիմա նաև՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության փաստերը), որը մեծ հաշվով, հարկ եղած դեպքում, քաղաքական, նույնիսկ իրավական առումներով, միևնույն է, ազգային պահանջատիրությո-

յան խնդիրների համար ցանկալի արդյունք չի տալիս և չի կարող
տալ, քանի որ կախված է միջազգային կառույցների «քաղաքա-
կան նպատակահարմարությունից» բխող սուբյեկտիվ դիրքորո-
շումից, հետևաբար և հակասում է նրանց համընդհանուր աշ-
խարհաքաղաքական ծրագրերին¹:

Կարծում ենք՝ իրական *հայաստանյանության* միակ սկե-
ռուն նպատակը բոլոր ժամանակներում պետք է լինի սփյուռքա-
հայ սերունդներին գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես
նախապատրաստել, ուղղորդել բացառապես Հայաստանի Հան-
րապետություն, այժմ նաև՝ ազատագրված Լեռնային Ղարաբաղի
Հանրապետություն (Արցախ), *անսկզբի գանգվածային հայրե-
նադարձի, վերադարձի*: Միաժամանակ, հարկ է ջանքեր գործադ-
րել՝ հասկանալու չափարտված պատերազմի մեջ գտնվող, ամե-
նօրյա արտաքին ու ներքին անասելի դժվարություններ դիմակա-
յող Հայրենի պետականությանն ու ժողովրդին, ընտելանալ, հար-
մարվել, մերվել հայրենի միջավայրին (ինչպես որ արտերկրի հա-

¹ Մինչդեռ, 2008 թ. փետրվարի 17-ին Կոստվայի ալբանական իշխանությունների կողմից երկրամասի Սերբիայից անկախացման փաստը առանց տևական լուրջստական գործունեության, անմիջապես ճանաչվել է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ինչպես նաև ՄԱԿ-ի անդամ 64 պետությունների կողմից: Մինչդեռ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանը և Չինաստանը, ընդհակառակը, իրենց համերաշխությունն են արտահայտել Սերբիային [Մարյան Սուրեն, Կոստվայի խնդրի վերաբերյալ, 24.09.2010, <http://www.noravank.am/arm/articles-detail.php?ELEMENT_ID=5041>]: Այդ գործարքը հնարավոր դարձավ, քանի որ գերազանցապես քրիստոնյա բնակչություն ունեցող Սերբիայի կազմում ալբանացի մահմեդականների կողմից անկասի վարչական միավորի ստեղծումն ու պաշտպանությունը ռազմավարական կարևորություն ներկայացնող տա-
րածքները քրիստոնեաբափելու միջազգային կառույցների «աշխարհաքա-
ղաքական նպատակահարմարության» առանցքային մասն է կազմում:

յությունը, ընդհանուր առմամբ, ինտեգրվում է օտար, այլալեզու, այլադավան, նույնիսկ՝ այլէթնիկ տարատեսակ հանրություններին, ամենաանսովոր բարքեր ունեցող երկրներում, և ինչպես որ, հայրենաբնակ հայությունն է, ընդհանուր առմամբ, հարազատորեն ընդունում, մերվում նրանց՝ շատ դեպքերում արտոնյալ պայմաններ ստեղծելով հայրենադարձների համար):

Եզրակացություն

Միջազգային ասպարեզում Ռուսաստանի հետզհետե արձանագրած քաղաքական ու ռազմական հաջողությունները, որպես քաղաքակրթության և խաղաղության պաշտպան նրա հեղինակության օրեցօր բարձրացումը, հայ-ռուսական զարգացող ու խորացող առևտրա-տնտեսական, ռազմա-քաղաքական համագործակցությունն իրենց բարենպաստ ազդեցությունը կարող են ունենալ նաև հայ սփյուռքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հայության շրջանում հայրենի երկրի՝ Հայաստանի, ինչպես նաև նրա ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի նկատմամբ մինչ օրս իրենց մոտ ձևավորված կաթճրատիպային հայացքների վերանայման, վստահության վերականգնման ու ամրապնդման, ինչպես նաև իրենց իսկ՝ սփյուռսահայության, ընդհանրապես քաղաքական հայացքների վերանայման ու արժևորման գործում:

Արդյունքում, Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար ապագայի և օրեցօր սպառնացող վտանգների, ինչպես նաև մարդկության ու քաղաքակրթության նկատմամբ ահագնացող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում՝ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, այժմ արդեն օտար ավերում նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգ-

նած, ինչպես նաև ուժացման ու այլասերման դատապարտված հայությանը, այդ թվում նաև ԱՄՆ-ի հայությանը հնարավոր կարող է լինել գաղափարապես ու բարոյափոխական առումով նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ, թափառական ու «անհայրենիք» *հայապահպանությունից դեպի գործնական հոդապահպանություն*՝ «Դեպի Երկիր» Հայրենադարձության: Հայրենադարձություն, որը ենթադրում է սփյուռքը գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես նախապատրաստել և ուղղորդել բացառապես Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև՝ հերոսների արյան գնով ազատագրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ Արցախ, անսակարկ զանգվածային Տունդարձի՝ ի շահ նաև Կովկասի ու տարածաշրջանի անվտանգության:

THE ARMENIANS OF USA IN THE CONTEXT OF THE XX-XXIth CENTURY ARMENIAN-RUSSIAN POLITICAL RELATIONS (Summary)

KNARIK AVAKIAN

1. If, in the past, the positive Armenian-Russian relations were directly proportional to the positive Diaspora-Armenia relations, then in the XXth century world arena the sweeping political and social-economic processes taking place in Russia and Armenia have created a political barrier between the relations of Armenia (consequently also of Russia) and some diasporan (particularly Armenian-American) organizations.

As a result of that situation, the one-time friendly and realistic collaboration between the Diaspora and Armenia (consequently also Russia)

has been converted into an activity depending on international policy, causing considerable damage to the national strategic interests. From this stand-point, a definite segment of the gradually globalizing Armenian Diaspora (party member, pedagogue, journalist, sympathizer, etc.) with all its strata (emigrated before and after the Armenian Genocide, former repatriate emigrants, emigrants from independent Armenia) and generations (Armenian, of Armenian origin), particularly, has become a collective executor of the will of the international super-state structures, opposed to the interests of Armenia and of its strategic partner countries.

2. In the international political arena, the gradual successes recorded by Russia, the Armenian-Russian progressing and deepening commercial-economic, military-political cooperation may have, among the Armenian diasporans (in particular, the Armenians of USA) a favorable influence upon the reestablishment and reinforcement of confidence, as well as the reconsideration and the evaluation of their (the diasporan Armenians') own political views with regard to the native country, Armenia, and its strategical ally, Russia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԼԵՒՈՆ ԶԷՔԵԱՆ - ՓՈՒՆՁ ՍԸ ԾԱՂԻԿ ՇԻՐՄԻՂ ՎՐԱՅ,
ՍԻՐԵԼԻ ՎԱԼՈՂԻԱ-----4
2. ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ - ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԾՆԴԱՎԱՅՐ՝ ԱՂՔՅՈՐՓԻ ԳՅՈՒՂԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ-----9
3. ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ - ԱՐՅԱԽԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱ-
ԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴԸ ՇԻՐՎԱՆԻ ԵՎ ԱՊՇԵՐՈՆԻ ՁԱՐԳԱՅ-
ՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)-----28
4. ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱ-
ՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ-----60
5. ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ - ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԻՑ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)-----70
6. ANNA SIRINIAN - TRE EPIGRAFI SEPOLCRALI ARMENO-
LATINE DEL XVIII SECOLO DA ALTRETTANTE CHIESE DI
ROMA-----97
7. ԱՐԾՎԻ ԲԱԽԶԻՅԱՆ - ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ
ՕՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ-----111
8. GERARS DEDEYAN - LES ARMENIENS ET LA CRETE (912-
1669): UN SURVOL-----131
9. CLAUDE MUTAFIAN - LES RELATIONS FRANCO-
ARMENIENNES A TRAVERS LES SIECLES-----152
10. CLAUDE MUTAFIAN - LA REINE MÉLISENDE (MORFIA,
SECONDE REINE DE JÉRUSALEM)-----163
11. ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ - ՄԱՐԿԻՁ ԳՐԵԳՈՐԻՈՂ ԴԱՂԴՈԼՈ
(1707-1789)-----168
12. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - ՀԱՅԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ
ՄԵՐԶԲԱԼԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԻ
ՓՈՒԼՈՒՄ-----187
13. ՍԵՂԱ ՕԶԱՆԵԱՆ - ՊԱՂՏԱՏԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔ-
ՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ
ԿԷՍԻՆ-----205

14. ՎԱԶԵ ՍԱՐԳՍՅԱՆ - ԶԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1991 Թ. ՄԱՐՏԻ 17-Ի ԽՍՀՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԿԱՏՄԱՍԲ (ՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)-----219
15. ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ - ՀԱՅ-ՀՐԵԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)-----229
16. ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ - ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆԵՐԳԱՂԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅԱՆՔՆԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ -----258
17. ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ - ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԸ XX-XXI ԴԴ. ՀԱՅՈՒՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱ-ՏԵՔՍՏՈՒՄ-----273
18. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ -----315

ՀՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ





Ակադ. Հ. Ավետիսյանի և Կ. Խուդավերդյանի հետ



Ժան Պիեռ Մահեի հետ



Հ. Անասյանի, Պ. Քառուի և Ա. Գասպարյանի հետ



Թեո Վան Լինդտի հետ. Սորբոնի համալսարան




Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հետ



Պ. Չոբանյանի, Ա. Բոգոյանի, Զ. Գևորգյանի և տիկնոջ հետ



Մայր Աթոռ Ս. Էջմիածին. Ս. Սահակ-Ս.Մեսրոպ շքանշանի
պարգևատրման օրը





Հայր Հարություն Պզտիկյանի հետ. Ս. Ղազար



Տիկնոջ հետ. Մխիթարյան մայրավանք



Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնում



Գևորգ Բրուստյանի և Լևոն Հախվերդյանի հետ



Վալենտինա Կալցուրիի հետ. Ժնև



Ժիրայր Դանիելյանի հետ



Սեն Արևշատյանի, Քնարիկ Տեր-Դավթյանի, Նիկոլայ
Հովհաննիսյանի և Ռուբեն Կարապետյանի հետ. Եզիպտոս,
Ալեքսանդրիայի զրադարանի վերաբացման արարողությունների
առիթով



Վեհարանում



Հրանտ Մաթևոսյանի հետ. Հորդանան



Ակադ. Մ.Գ. Ներսիսյանի և Ռ. Հովհաննիսյանի, Ն.Վ.
Դերոյանի հետ ՊԲՀ խմբագրությունում



Էդմոնդ Շյուցի, Պարույր Մուրադյանի, Գագիկ Սարգսյանի,
Զուստո Տրախնայի, Պավել Չոբանյանի և մի խումբ հայագետների
հետ



Գաբրիելա Ուլուիոջանի և Աննա Շիրինյանի հետ



Արամ Իսաբեկյանի հետ



Մի խումբ գիտնականների հետ



Մեն Արևշատյանի, Քնարիկ Տեր-Դավթյանի և տիկնոջ
Նեկտար Առաքելյանի հետ. Եգիպտոս



Գաբրիելա Ուլուիոջյանի, ակադեմիկոսներ Հրաչ
Բարթիկյանի, Սիմոն Կրկաշարյանի և Աշոտ Մելքոնյանի հետ



Ժերար Դեղեյանի հետ



Հայր Լևոն Զեքիանի հետ



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆԻ 90-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ղազարյանի
Համակարգչային շարվածքը՝ Գ. Շախկյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

A	$\frac{\pi}{106989}$
---	----------------------